

سنة ١٩٢٤

الجمهورية العراقية

ՆԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

من الحسين بن علي
الامام الاخير صلوات الله عليه
بعد حديث الاخوة من امم القري
الانتم ايكم لم يزلوا يذكرونكم
وتعالوا مني وعاشوا وبعثوا
وايامكم من الله صلواته واجيد
من الله صلواته واجيد

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵԿԱՆՔՈՎ
ՄԻՐԻԱՅՈՒՄ ՀԱՍՏԱՏԿԱԾ
ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱԿԻՃԱԿԸ ԵՎ
ՀԱՅ-ՄՐԱԲԱԿԱՆ ՓՈՒՆՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1915-1924թթ.)

سنة ١٩٢٤


الجمهورية العراقية



10866A
99807

ՆԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՆԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՏԵՎԱՆՔՈՎ
ՍԻՐԻԱՅՈՒՄ ՆԱՍՏԱՏՎԱԾ
ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ
ՆԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1915-1924թթ.)



**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՆԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՆԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

**ՆԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՏԵՎԱՆՔՈՎ
ՍԻՐԻԱՅՈՒՄ ՆԱՍՏԱՏՎԱԾ ..
ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ
ՆԱՅ-ԱՐԱՔԱԿԱՆ ՓՈԽՆԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1915-1924ԹԹ.)**

**REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
ARMENIAN GENOCIDE
MUSEUM - INSTITUTE**

NARINE MARGARYAN

**THE STATUS OF THE ARMENIAN DEPORTEES
SETTLED IN SYRIA AS A RESULT OF THE
ARMENIAN GENOCIDE AND THE ARMENIAN-ARAB
RELATIONS (1915-1924)**

70866
A99807

Yerevan 2013

ՆՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Ն) 52
Մ 350

Հրատարակվում է ՆՆ Գիտությունների ազգային ակադեմիայի Հայոց
ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գրախոս՝ պ. գ. դ. Հայկ Դեմոյան

Պատասխանատու խմբագիր՝ պ. գ. թ. Արաքս Փաշայան

Մարգարյան Ն.

Մ 350 Հայոց ցեղասպանության հերոսներով Սիրիայում հաստատված հայ
փարագիրների կարգավիճակը և հայ-արաբական փոխհարաբերությունները
(1915-1924թթ.) / Ն. Մարգարյան. - Եր.: Հայոց ցեղասպանության թանգա-
րան-ինստիտուտ, 2013- 180 էջ:

..

Աշխատությունն անդրադառնում է Հայոց ցեղասպանությունից հետո Սիրիայում
հանգրվանած հայ փարագիրներին առնչվող խնդիրներին՝ քննության կյուր դարձնե-
լով վերջիններիս նկատմամբ Սիրիայի արաբ բնակչության ունեցած դիրքորոշումն ու
կեցվածքը: Ներկայացվել է սկզբնական շրջանում հայ փարագիրների նկատմամբ տե-
ղի արաբ կառավարիչների, ցեղապետների դիրքորոշումը, այսուհետև Սիրիայում էմիր
Ֆեյսալի իշխանության /1918-1920 թթ./, ապա՝ ֆրանսիական մանդատի հաստատման
առաջին փուլերին /1920-1924 թթ./ իրականացված բաղաբաղանությունը, քննվել
եղված ժամանակահատվածում Սիրիայում հայ-արաբական հարաբերությունների
զարգացումները, վերլուծվել հայ-արաբական հարաբերությունների ընթացքը պայ-
մանավորող հիմնական գործոնները: Աշխատությունում ուսումնասիրվել է հայ փարա-
գիրների՝ Սիրիայի սոցիալական ու բաղաբաղան կյանքում ներ- գրավվելու հիմնական
միտոսները, ներկայացվել է սիրիահայ համայնքի աստիճանական վերածնաւորման
և կազմավորման գործընթացը:

Աշխատությունը հասցեագրված է պատմաբաններին, արևելագետներին, միջազ-
գայնագետներին, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակներին:

ՆՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Ն) 52

ISBN 978-9939-822-40-2

© Մարգարյան Նարինե, 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան	7
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	17
ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆՈՍՔԸ ՍԻՐԻԱ ԵՎ ԱՐԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ	17
1.1 Նայ փարագիրների առաջին խմբերը Սիրիայում.....	17
1.2 Որբահավաք աշխատանքները, կամանք ազատագրումն ու ապաստարանների հիմնումը Սիրիայում	29
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	44
ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱՐՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՎ ՄԵՔՔԱՅԻ ՇԵՐԻՖ, ԷՄԻՐ ԱԼ-ՆՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԱԼԻ ԻՒՂԵՐՉՆԵՐԸ	44
2.1 Մերքայի շերիֆ, էմիր Ալ-Նուսեյն իբն Ալիի ուղերձները. անդրադարձ հայ փարագիրներին.....	44
2.2 Սիրիայի արաբական ցեղախմբերի դիրքորոշումը հայ փարագիրների նկատմամբ	57
2.3 Արաբ գործիչների վերաբերմունքը հայ փարագիրների նկատմամբ.....	72
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	81
ՍԻՐԻԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԱՐԱՐ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ /1918-1920ԹԹ-/	81
3.1 Էմիր Ֆեյսալի քաղաքականությունը հայ փարագիրների նկատմամբ.....	81
3.2 1919 թ. փետրվարի 28-ի Նալեայի դեպքերը	102
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ	113
ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ /1920-1924 ԹԹ-/	113
4.1 Նայ փարագիրների սոցիալական վիճակի ասպիճանական բարելավումը	113
4.2 Նայ փարագիրների ներգրավվումը Սիրիայի քաղաքական կյանքում	139
Վերջարան	156
Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ	161
Անգլերեն համառոտագիր	170

ԱՌԱՋԱԲԱՆ

Օսմանյան կայսրությունում երիպթուրքական իշխանությունների կողմից XX դարի սկզբին ծրագրված և իրականացված Տայոց ցեղասպանության հեղուկացրած հարյուր հազարավոր հայեր բռնի տեղահանվեցին իրենց բնօրրանից: Սկզբնական փուլում զինաթափվեցին և ոչնչացվեցին թուրքական բանակ զորակոչված հայ տղամարդիկ: Այդ գործընթացը, ինչպես նաև Սիրիայի Դեյր էզ-Ջոր, Ռաբբա, Ռաս ուլ-Այն, Մեսքենե և այլ բնակավայրերի համակենտրոնացված ճամբարներում անգեն հայերի զանգվածային կոտորածներն անառարկելիորեն վկայում են հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից ծրագրված և իրականացված ցեղասպանության մասին:

Տայ տարագիրների պատմությունն այդ ժամանակահատվածում սերտորեն առնչվում է Սիրիայի արաբ ժողովրդի պատմության հետ: Արաբները հիմնականում փորձում էին աջակցել սիրիական անապատներում հայտնված հայ տարագիրներին: Այդ աջակցությունը էական դեր է կատարում տարագիր հայերի՝ դժվարությունների հաղթահարման ու Սիրիայի սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքում աստիճանական ներգրավման ու մասնակցության գործընթացում:

Տայ տարագիրների նկատմամբ արաբների դրական դիրքորոշման մեջ կարևոր դեր է խաղացել արաբական աշխարհի հոգևոր առաջնորդներից Մեքքայի շեյխֆ, էմիր Նուսեյն իբն Ալիի 1918թ. ուղերձը, որտեղ նա արաբ ժողովրդին պատգամեց օգնել ու աջակցել հայ տարագիրներին: Այդ ուղերձը, փաստորեն, պաշտոնական հիմքի վրա դրեց արաբների օգնությունը: Նուսեյն իբն Ալիի ուղերձի դրույթները Սիրիայում հետևողականորեն իրականացվել են սիրիական ազգային կառավարության կողմից՝ Նուսեյն իբն Ալիի որդի՝ էմիր Ֆեյսալի /1918-1920/ գլխավորությամբ: Ֆեյսալի կառավարության կողմից ընդունված անապատներում հայտնված հայ կանանց և երեխաներին հավաքագրելու, տարագիրներին սնունդ և անհրաժեշտ այլ պարագաներ տրամադրելու որոշումները, ինչպես նաև հայ հոգևոր և քաղաքական վերնախավի հետ հայ տարագիրների խնդիրների բնարկումները նպաստում են վերջիններիս վիճակի աստիճանական բարելավմանը, որբահավաք աշխատանքների աշխուժացմանն ու արդյունավետությանը:

Սիրիայում ֆրանսիական մանդատի սկզբնական փուլում /1920-1924թթ./ հայ տարագիրների ինտեգրումը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում ավելի արագ տեմպերով է սկսում իրականանալ: Նիմուվում են նոր հասարակական կազմակերպություններ, հայրենակցական միություններ, իսկ

առանձին կառույցներ վերսկսում են ցեղասպանության փարիներին ընդհարված գործունեությունը: Նայերը մենաշնորհներ են ձեռք բերում Կարեւորության մի շարք կարևոր ոլորտներում, աշխուժանում է քաղաքական կյանքը, ազգային կուսակցությունները փորձում են ներդրում ունենալ հայ համայնքի՝ տրիասարակությունում ինտեգրման ներգրավվելու գործընթացին:

Սույն մենագրության շրջանակներում ուսումնասիրվում և վերլուծվում է նշված ժամանակաշրջանում հայ փարագիդների դրությունը Սիրիայում, ներկայացվում է վերջիններիս նկատմամբ Կարեւորության, սիրիական կառավարության, ինչպես նաև Ֆրանսիական մանդատային իշխանությունների դիրքորոշումը: Նայրենական պարմագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվում ուսումնասիրել Սիրիայում հայտնված հայ փարագիդների հիմնախնդիրները հայ-արաբական հարաբերությունների համապետում, վերլուծվում են վերջինիս ընթացքը պայմանավորող հիմնական գործոնները, այդ լույսի ներքո քննության է ենթարկվում Սիրիայի հայ համայնքի վերածնակորման գործընթացը:

Աշխարհությունում վերլուծվել են Սիրիայում հայ փարագիդների ինտեգրման հիմնական միտումները, այդ համապետքաբար գնահատական է արվել Սիրիայի արաբական քաղաքական վերնախավի դերին հայ-արաբական փոխհարաբերությունների հետագա զարգացման գործում: Առդրադարձ է կարարվել հայ-արաբական հարաբերություններում առկա լարվածության դրսևորումներին՝ շեշտադրելով 1919թ. փետրվարի Նայնայի դեպետերը, վերլուծվել են դրա պարճատներն ու հետևանքները:

Աշխարհությունը ժամանակագրական առումով ներառում է 1915-1924թթ.՝ Նայոց ցեղասպանության հետևանքով փարագիդների՝ Սիրիայում հայտնվելուց մինչև 1924թ. հունիսին «Նանսենյան անձնագրերի», իսկ նույն թվականի օգոստոսին Սիրիայի քաղաքացիության ձեռք բերումը: Անրաձեշար է նշել, որ հետագոտության համար ընտրված ժամանակահարվածում՝ 1915-1924թթ., Սիրիա ետրոյթն ընդգրկել է ոչ միայն ներկայիս Սիրիայի Արաբական Նանրապետությունը (ՄԱՆ), այլ նաև ներկայիս Լիբանանի Նանրապետությունը և Նորդանանի թագավոտությունը, այսինքն՝ պարմա-աշխարհագրական Սիրիան (Բիլադ Աշ-Շամ): Մակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցեղասպանության և դրան հաշորոտ առաջին փարիներին հիմնական դեպետերն ու զարգացումները ճավալվել են ներկայիս ՄԱՆ-ում, նպարակահարմար ենք գրել սահմանափակել հետագոտության աշխարհագրությունը հենց այդ շրջանակում:

Թեմայի ուսումնասիրությունն ունի ինչպես քաղաքական, այնպես էլ գիտական կարևոր նշանակություն: Թեման արդիական է Նայոց ցեղասպա-

նության, Մերձավոր Արևելքի հայ համայնքների, մասնավորապես, սիրիահայ համայնքի նոր շրջանի պարմության փարքեր ասպեկտների ավելի համակողմանի ուսումնասիրման րեսանկյունից:

Թեմայի հետազոտությունը կարևոր է հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին նպաստող նորանոր փաստեր գիտական շրջանառության մեջ դնելու րեսանկյունից: Այդ գործընթացում խիստ արժեքավոր են արաբական վկայությունները, որոնց բնությունը կարող է նպաստել ոչ միայն հայոց ցեղասպանության մասին գիտական պատկերացումներն իսլամական, իսկ ավելի սրույզ՝ արաբական սկզբնաղբյուրներով սմրագրելուն, այլև դրանց ընդլայնմանը:

Մենագրության շարադրման ընթացքում օգտագործվել են մինչ այժմ գիտական շրջանառության մեջ չդրված արխիվային փաստաթղթեր, ինչպես նաև արաբական նոր և նորագույն շրջանի պարմագիտության կյուրթեր, արաբ հեղինակների՝ հայկական թեմաներին վերաբերող հիմնական աշխատանքներ, որոնց մի մասն առաջին անգամ են ներկայացվում հայերեն լեզվով:

Աշխատության աղբյուրագիտական հենքի շրջանակներում օգտագործվել են Սիրիա հասած հայ արագիրների՝ րվյալ դեպքում ակնատեսների մեծաթիվ վկայություններ, հուշագրություններ և օրագրեր,¹ որրելո անդրահարձ է կատարվել արաբների դիրքորոշմանը՝ դրական կամ բացասական կողմերով: Հուշագրություններում բացահայտվում են նոր պարմական անցքեր, իրադարձություններ, որոնք մինչ այժմ դուրս են մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: Նյութը լրացնելու են եկել հայ արագիրների իրական վիճակը ներկայացնող րարեցույցներն ու րարեգրքերը:²

Սույն մենագրության մեջ րելի արաբ ժողովրդի ու հայ արագիրների

¹ 1915. Ադեր և վերամոնղ, հասրեց՝ Փ. Պալեանը, Փարիզ, 1952; Տեր-Ջօր, Ադերեն վերաարողներ, կազմեց՝ Լեոն-Մետրալը, Փարիզ, 1955; Մուշեղ Մերոբեան, Դիպոմներ և դարոմներ, Էջեր օրագրես, Պէրոթ, 1932; Առնակ, Թորքերու ճանկին մեջ, 1916-1919, Երևան, 2007; Մարտիկեան Յ., Թրքական դոմիսից նացիական դոմիսք, Պէրոթ, 1973; Կիլիկյան Հ., Դեր Ջորի անապարներում, Երևան, 2006; Տոկիկեան Յ. Կիրակոս Ա. Կիլիկեցի/, Կեսերիս Յուշերը՝ 1900-1972, Պէրոթ, 2004; Սասունցի Մ., Մև օրագիր, Պէրոթ, 1957; Մարաֆյան Գ., Եիրարից Ռիո Դե Լա Պարս, Երևան, 2002; Արեկեան Գ., Յկեանս նահարակութիւն, Այնճար, 2005; Ասրոնյան Ա., Մեմ ոճիրը, Երևան, 1990; Գալֆանեան անազ բահանայ Կարապեր, Գիրք Ելից հայոց, Պէրոթ, 1955; Պոյաճյան Յ. Տ., Հայկական Լեզոնը /պարմական յուշագրութիւն/, Ուօթրթաուն, 1965; Նանարեան Մ., Յուշագիրք, 1918-1948, 30-ամեա ազգ. իրադարձություններ Սուրիոյ և Լիբանանի հայ կյանքին անուած, Պէրոթ, 1949; Տարբեան Վ., Դեսի անապար /իրկումս Էջեր օրագրե/, Նի Եորք, 1945:

² «Սուրիահայ րարեցույց», Գահիրե, 1924; «Սուրիահայ րարեցույց», Հայկ, 1925; «Տարթեւ», րարեցույց, կրոնա-բանասիրական-գրական, Բ րարի, 1926., «Գեղարդ», Հայկ, 1978, 1976-1978 միացյալ թիվ, հ. Բ, «Գեղարդ», Հայկ, 2002, հ. 6, /արաբերեն/, «Երթ», Բերիոյ հայոց թեմ. Սուրիահայ րարեգիրք, Հայկ, 2006, հ. 2:

հարաբերությունների հեր կապված հարցերի մեկնաբանման համար օգտագործել ենք նաև այդ ժամանակահատվածում Սիրիայում գործունեություն ծավալած քաղաքական, դիվանագիտական ծառայության մեջ գրնվող անձանց, միսիոներների, հասարակական գործիչների և ակաևաբես այլ մարդկանց հուշագրություններն ու եամակները:³ Իր կարևորությամբ հարկ է առանձնացնել դանիուհի միսիոներ Կ. Եփիեի գործունեությունը:⁴

Աղբյուրագիտական նշանակություն ունեն հայագգի հայտնի որբախույզ Ռուբեն Ներյանի անվանական ֆունդում եղած եամակները, դիմում-խնդրանքները, նրա կարարած որբահավաք գործունեությունն ամփոփող հաշվետվությունները:⁵ Մենագրության աղբյուրագիտական հենքի շրջանակում կարևորություն ունեն Կիլիկիո Տան Սահակ Բ կաթողիկոսի՝ Սիրիայում ծավալած գործունեության վերաբերյալ կյութերը,⁶ հարուկ ուշադրություն է դարձվել Նայասրանի ազգային արխիվում պահվող Սահակ կաթողիկոսի խնդրո առարկա հիմնահարցին առնչվող եամակներին ու րեղեկագրերին:⁷ Ոչ պակաս կարևոր է նաև Չիլիկիբեան Եղիշե եպիսկոպոսի հուշագրությունը:⁸ Նայեալի առաջնորդ Ա. արք. Սյուրմեյանն /1925-1940/ իր «Պարմութին Նայեալի Նայոց»⁹ եռահատոր աշխարության մեջ անդրադարձել է Սիրիայում ապաստանած հայ րարագիրների խնդիրներին: Աշխարության կյութը համարվել է նաև այդ թվականներին Նայեալում և Աղանայում լույս րեսնող պարբերական մամուլի հող-

³ Ambassador Morgenthau's Story, By Henry Morgenthau, NY, Garden City, Doubleday, Page & Company, 1918, Künzler Jakob, Im Lande des Blutes und der Tränen. Erlebnis in Mesopotamien während des Weltkrieges /1914-1918/, Herausgegeben von Hans-Lukas Kieser, 1921, Potsdam, 1999, Chronos Verlag, Zürich, 1999, Burt J., The People of Ararat, London, The Hogarth Press, 1926, The Horrors of Aleppo, Seen by a German eyewitness, London, Adelph: Terrace, 1917, Kaizer H., "At the Crossroads of Der Zor. Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915-1917" NJ, Gomidas Institut, Princeton, 2001.

⁴ Չոլաբեան Յ., Քարեն Եփիե, Նայ գողգոթային եւ վերածնունդին հեր, Նայեալ, 2001: Բախչինյան Ա., Նայությունը սկանդինավյան երկրներում / Նայ-սկանդինավյան պագմամշակութային առնչություններ, Երևան, 2010: Bjornlund M., Karen Jeppe, Age Meyer Benediclsen, and The Ottoman Armenians: National Survival in Imperial and Colonial Settings. Նայեալեան Նայագիտական Նաեղեա, Պկրոթ, 2008, հ. ԻԸ, էջ 9-43:

⁵ ՆԱԱ, ֆ. 420:

⁶ Եղիայեան Բ., Ժամանակակից պարմութին կաթողիկոսութեան Նայոց Կիլիկիոյ 1914-1972, Արթիլիաս, 1975: Տեմիրճյան կախկուպոս Վ., Գալագանագիրք Լիբանանի և Սուրիոյ հայոց թեմերո առաջնորդութեանց, Արթիլիաս, 1980, հ. Ա:

⁷ ՆԱԱ, ֆ. 420, ց. 9:

⁸ Չիլիկիբեան Եղիշե եպիսկ., Նկարագրութիւք Երուսաղեմի-Նայեալի-Ռամասկոսի գաղթականական եւ վանական գանագան դիպվաց եւ անցերո 1914-1918, Երուսաղեմ, Բ րպագրություն, 1927:

⁹ Սիւրմեյան արք. Ա., Պարմութին Նայեալի Նայոց, Նայեալ, 2002, հ. Ա, Սուրիա, Նայեալ, 2003, հ. Բ, հ. Գ, Փարիզ, 1950:

վածներով:¹⁰ Ցեղասպանությունը վերապրած հայերի խնդիրներին է անդրադարձել Ս. Վարժապետյանը,¹¹ վերջիններիս իրավական կարգավիճակի փոփոխություններն են ներկայացրել Շ. Գոյումճյանը,¹² Շ. Թորիզյանը¹³ և Ն. Նակոբյանը:¹⁴ Սիրիայում ապաստանած որբերի խնդիրներին առեւտրով կարելի էր կյոթ է պարունակում Լ. Ազարյանի եռահատոր ուսումնասիրությունը:¹⁵

Մեզ հետաքրքրող խնդրի լուսարանման ուղղությամբ մեծ ավանդ ունի պրոֆեսոր Ն. Նովհաննիսյանը,¹⁶ ով հայ պարմագիրության մեջ հիմք է դրել արաբական պարմագրության՝ Նայոց ցեղասպանության վերաբերյալ աշխարհայինների գիտական ուսումնասիրությանը:

Աղբյուրագիրական նշանակություն են ունեցել նաև նշված ժամանակահատվածում հայ ազգային քաղաքական կուսակցությունների ակտիվ գործիչների աշխարհայինները: Այս առումով կարևոր են Մ. Աղազարյանի,¹⁷ Ա. Կենճյանի,¹⁸ Ա. Նիկոլի,¹⁹ Վ. Նավասարդյանի²⁰ աշխարհայինները:

Մենագրության մեջ բարձրացվող հիմնախնդիրների լուսարանման փեսանկյունից հարուկ ուշադրություն է դարձվել Ն. Թոփուզյանի,²¹ Ն. Միգլիորինոյի²² և Ն. Գրինիշիլդսի աշխարհայիններին:²³ Աշխարհային մեջ ներառվել են նաև Սիրիայում ՎԲԸՄ-ի ծավալած գործունեությունն ամփո-

¹⁰ «Նայ ճայն», Նախա, 1918-1919: «Կիլիկիա», Ադանա, 1918-1919: «Արձագանգ Փարիզի», 10.06.1916: «Եփրատ», Նախա, 1927-1928:

¹¹ Վարժապետյան Ս. Յ., Նայերը Լիբանանի մեջ, հ. Բ, ՊԵՅՅՈՒԹ, 1981:

¹² Գոյումճյան Շ., Քննություն 1941-ի Կաթողիկոսության Նայոց Մեծի Տանն Կիլիկիոյ «Կանոնագրութան», ՊԵՅՅՈՒԹ, 1955:

¹³ Torigyan Sh., The Armenian Question and International Law, Beirut, Hamaskaine Press, 1973.

¹⁴ Նակոբյան Ն. Վ., Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պարմական և իրավական հիմքերը, Երևան, 2002:

¹⁵ Ազարյան Լ., Նայ որբերը Մեծ Եղևնի, Լուս Անճելու, 1995, հ. 1: 1999, հ. 2: 2002, հ. 3:

¹⁶ Նովհաննիսյան Ն., Նայոց ցեղասպանությունը արաբական պարմագրության քննական լոյսի ներքո, Երևան, 2004: Hovhannissyan N., The Armenian Genocide, Yerevan, 2009.

¹⁷ Աղազարյան Մ., Սսի վերջին արժույթը և իր մեղապարտ գաւառականը, ՊԵՅՅՈՒԹ, 1926:

¹⁸ Կենճյան Ա., Սոցիալ-դեմոկրատ Ննչակեան կուսակցութիւնը և Կիլիկեան ինքնավարութեան արթը 1919-1921, ՊԵՅՅՈՒԹ, 1958:

¹⁹ Նիկոլ Ա., Սուրիա և մեք, Գահիրէ, 1932:

²⁰ Նավասարդյան Վ., Դաշնակցութեան քաղաքական ուղի, Գահիրէ, 1925:

²¹ Թոփուզյան Ն., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթաբախների պարմություն /1841-1946/, Երևան, 1986:

²² Nicola Migliorino, (Re)constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis, Studies in Forced Migration, vol. 21, Oxford, Berghahn Books, 2008.

²³ Гриншайдс Х. Т., Поселение армянских беженцев в Сирии и Ливане в 1915-1939 гг., «Նախագիրությունը արրասահմանում» ՆՍՄԿ Գիրությունների Ակադեմիա, Երևան, 1982/2:

փող աշխարությունները:²⁴

Ներագոյության համար հարուստ փաստագրական նյութ են պարունակում Իվլյա ժամանակահատվածին վերաբերող զերմանական,²⁵ ամերիկյան,²⁶ ինչպես նաև Ազգերի իրգայի²⁷ փաստաթղթերի ժողովածուները:

Ներագոյության համար կարևոր նշանակություն են ունեցել ցեղասպանագիրական աշխարությունները, ինչպես օրինակ Վ. Դադրյանի,²⁸ Ռ. Մելսոնի,²⁹ Թ. Աբջամի,³⁰ Լ. Կուպերի³¹ Ա. Ավագյանի³² և ուրիշների գործերը: Սիրիայում հայ համայնքի վերածնաւորման և Կարագիրների կայացման խնդիրների ուսումնասիրության համար շահեկան են եղել Վ. Դյարլովի և Է. Մելքոնյանի,³³ Ս. Դյուֆոյի³⁴ և Գ. Շեֆֆերի³⁵ աշխարությունները:

Նայոց ցեղասպանությունից հետո Սիրիայում հայրենիքում հայ Կարագիրների խնդիրներն ուսումնասիրելու համար կարևոր են արարական սկզբնաղբյուրների, ինչպես նաև պարամբանների աշխարությունների վերլուծությունն ու ուսումնասիրությունը: Նարկ է նշել, որ, արաբ հերագոյողների՝ վերջին շրջանում լույս տեսած մի շարք աշխարություններում

²⁴ Ոսկեմարեան, Նայկական Բարեգործական Ընդհանուր Միության 1906-1931, Բարիզ, 1935; Դար մը պարմութին Նայ բարեգործական ընդհանուր միության, հ. 1, 1906-1940, Գահիրե-Փարիզ-Նի Եորթ, Նայկական բարեգործական ընդհանուր միություն, Գրիգոր Շահինեան, Արծրունի Շաղիկ, Դերն Սեդրակեան, 2006:

²⁵ Deutschland und Armenien. 1914-1918, Sammlung diplomatischer aktenstücke herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Bremen, Donat & Temmen Verlag, 1986; Նայ դարի ևլիդյալը, Ֆրիդրիխ Նանսեն, Փաստաթղթերի ժողովածու /1920-1930/, Երևան, 2005.

²⁶ United States official records on Armenian Genocide 1915-1917, compiled with an introduction by Ara Sarafyan, London, Gomidas Institut, Princeton, 2004.

²⁷ League of Nations, Scheme for the settlement of Armenian Refugees, General Survey and Principal Documents, Geneva, Publications of the League of Nations, 1927.

²⁸ Dadrian V., The History of the Armenian Genocide, Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, NY, Oxford, Berghahn Books, 1995.

²⁹ Melson R., Revolution and Genocide. On the Origins of the Armenian Genocide and the Holocaust, Chicago and London, Chicago and London, University of Chicago press, 1992.

³⁰ Akçam T., A Shameful Act, The Armenian Genocide and Question of Turkish Responsibility, London, Constable, 2007.

³¹ Kuper L., Genocide. Its Political Use in Twentieth Century, New Haven and London, Yale University Press, 1981.

³² Авакян А., Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений. Ереван, "Гитутюн", 1999.

³³ Дятлов В., Мелконян Э., Очерки социокультурной типологии. "Армянская диаспора", Ер., Институт Кавказа, 2009.

³⁴ Dufoix St., Diasporas, London, Berkeley and Los Angeles, University of California press, 2008.

³⁵ Sheffer G., Diaspora politics, At home Abroad, NY, Cambridge University Press, 2003.

հարակ ընդգծվում է հիմնահարցի նկատմամբ ցուցաբերվող առավել համակողմանի մոտեցման սկզբունքը:

Ժամանակագրական առումով կարելի է առանձնացնել փաստարան, Խարբերողի գավառներից մեկի կառավարիչ Ֆայեզ Ալ-Ղուսեյնի³⁶ հուշագրությունը՝ «Զարդերը Նայասպանում»:՝³⁷ Մյուս՝ «Բռնություններ Սիրիայում, Իրաքում և Տիջազում»³⁸ աշխարհությունում նա փալիս է Սիրիայում փրկող իրավիճակն Առաջին համաշխարհային պատերազմի փարիսներին ու կենտրոնանում է երիտթուրքերի՝ Սիրիայի արաբների նկատմամբ ունեցած դաժան վերաբերմունքի վրա:

Արժեքավոր փորձություններ կան դեպքերի ժամանակակից մի շարք արաբ գործիչների հուշագրություններում: Սիրիացի քաղաքական ու մշակութային գործիչ Մուհամմադ Բուրդ Ալիի³⁹ (1876-1953) իր հուշերում բացահայտում է պանթուրքիզմի քաղաքականությունը հայերի նկատմամբ: Նրա 4 հատորով լույս փետած «Նուշեր»⁴⁰ գրքում «Նայերը և նրանց փառագրությունը» խորագրի փակ հեղինակը ըննարկում է Նայոց ցեղասպանության հարցը: Իր մյուս՝ «Շամի փեղագրություն»⁴¹ վեց հատորանոց գրքի երրորդ հատորում մանրամասներ է հաղորդում հայերի փարագրության մասին:

Թեմայի ուսումնասիրության համար մեծ կարևորություն է սկզբնաղբյուրային նշանակություն են ունեցել Ա. Բեշիշյանի խմբագրությամբ «Նալեայի «Աթթակաղդում» թերթի վավերագիր էջերը հայերի և արաբների վիճակի մասին

³⁶ Ֆայեզ Ալ-Ղուսեյնը սերում էր Նսուրանի շրջանի արաբական Սուլուբ ցեղից: Երեք փարի Խարբերողում զբաղեցրել է կայմակամի պաշտոնը, որը նրան հնարավորություն է տվել մանրամասն ծանոթանալ դեպքերին ու ակամայից ակասապետ լինել հայերի դժբախտությանը: 1915թ. հրաման է սրացել մեկնել Էրզրում, սակայն Դիարբեքիցում մեկուկես ամիս ձերբակալված է մնացել:

³⁷ 1991. فائز العيصين، المذابح في أرمينيا، حلب: Ֆայեզ Ալ- Ղուսեյն, Զարդերը Նայասպանում, Նալեայ, 1988:

³⁸ 1918. فائز العيصين، المظالم في سوريا والعراق والحجاز العقبية، 1918: Ֆայեզ Ալ-Ղուսեյն, Բռնություններ Սիրիայում, Իրաքում և Տիջազում, 1918:

³⁹ 1920թ. արանձնել է Սիրիայի գիտությունների ակադեմիայի կառավարման գործը, հիմնել է Արաբական գիտությունների խորհուրդը՝ երկար փարիներ վարելով վերջինիս փեթենի պաշտոնը: 1908թ. Դամասկոսում սկսել է հրատարակել ու խմբագրել «Ալ-Մուքթաբաս» օրաթերթը, որտեղ փոպագրվել են հայերի փեղահամարությունների, Սիրիայում նրանց հասարակական և թվաքանակի հետ կապված նյութեր:

⁴⁰ محمد كرد علي، مذكريات، دمشق، الجزء الثالث، 1949. Մուհամմադ Բուրդ Ալի, Նուշեր, Դամասկոս, հ. 3, 1949:

⁴¹ محمد كرد علي، خطط الشام، دمشق، الجزء الثالث، 1983. Մուհամմադ Բուրդ Ալի, Շամի փեղագրությունը, Դամասկոս, 1983, հ. 3:

Օսմանյան պետության մեջ և Սիրիայում»⁴² և Ն. Արիսյանի խմբագրությամբ «Նայոց ցեղասպանության արձագանքները սիրիական մամուլում 1877-1930թթ.»⁴³ թերթերից կապարված ծաղկաբաղը: Առաջին ժողովածուի շրջանակներում ամփոփված են Նալեայի «Աթ-Թ-ակադդում» թերթի՝ Սիրիայում հայ տարագիրներին վերաբերող հոդվածները, իսկ երկրորդում ներկայացված է հայ տարագիրներին առնչվող ողջ մամուլի տեսությունը՝ սիրիական ու Սիրիայից դուրս տպագրված արաբական թերթերում:

Սկզբնաղբյուրային նշանակություն ունի նաև Ն. Արիսյանի մեկ այլ աշխատությունը՝ «Նայկական սարսափները սիրիական մրքում. սիրիացի մրավորականների դիրքորոշումը Նայոց ցեղասպանության հարցում»⁴⁴ գիրքը: Նեղինակը ներկայացրել է արաբ ակնասպետների, աշիրաթների առաջնորդների, նրանց հեղափոխողների հետ ունեցած իր հանդիպումների ու հարցազրույցների ընթացքում նրանց պարմած մանրամասները՝ հայ տարագիրներին արաբների ցուցաբերած օգնության և հայ-արաբական հարաբերությունների վերաբերյալ:

Նայոց ցեղասպանության պատմության համար կարևոր են նաև լիբանանցի պատմաբան Սալեհ Ջահիր Ադ-Դինի աշխատությունները, մասնավորապես, «Արաբների անկեղծությունն ու հայերի երախտագիտությունը»⁴⁵ ծավալուն աշխատությունը: Նեղինակն ուսումնասիրել է Նայոց ցեղասպանության պարճառները, անդրադարձել Սիրիայում և Լիբանանում հեղափոխականական շրջանում արաբ ժողովրդի ցուցաբերած օգնությանը: Ջահիր Ադ-Դինը հեղինակ է մի շարք այլ աշխատությունների, որոնցից առանձնապես են «Օսմանյան կառավարության քաղաքականությունն Արևմտյան Նայասպանում և մեծ տերությունների դիրքորոշումը»,⁴⁶ «Նայեր, ժողովուրդ

⁴² صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدولة العثمانية والبلدان الشامية، حلب، دار طلاس، 1992

Նալեայի «Աթ-Թ-ակադդում» թերթի վավերագիր էջերը հայերի և արաբների վիճակի մասին Օսմանյան պետության մեջ ու Սիրիայում, Նալեայ, 1992:

⁴³ أريسيان نورا، أصدا الأبداء الارمنية في الصحافة السورية 1877-1930، بيروت، 2004

Արիսյան Ն., Նայոց ցեղասպանության արձագանքները սիրիական մամուլում 1877-1930թթ., Բեյրութ, 2004:

⁴⁴ أريسيان نورا، غوائل الارمن في الفكر السوري، دمشق، 2002

Արիսյան Ն., Նայկական սարսափները սիրիական մրքում, սիրիացի մրավորականների դիրքորոշումը Նայոց ցեղասպանության հարցում, Դամասկոս, 2002:

⁴⁵ صالح زهر الدين، أصالة العرب والوفاء الارمني، بيروت، 2002

Սալեհ Ջահիր Ադ-Դին, Արաբների անկեղծությունն ու հայերի երախտագիտությունը, Բեյրութ, 2002:

⁴⁶ صالح زهر الدين، سياسة الحكومة العثمانية في أرمينيا الغربية، وموقف القوى الدولية منها، بيروت، 1996

Սալեհ Ջահիր Ադ-Դին, Օսմանյան կառավարության քաղաքականությունն Արևմտյան Նայասպանում և մեծ տերությունների դիրքորոշումը, Բեյրութ, 1996:

և հիմնականդիր»⁴⁷ մեկնագրությունները:

Ուշադրության է արժանի սիրիացի պարմարան Նայիմ Ալ-Յաֆիի աշխատությունները, որոնցից առավել հեղափոխական է: «Նայոց ցեղասպանությունն ու արաբական հասարակական կարծիքը»⁴⁸ աշխատությունը: Նեղինակի մյուս՝ «Արյունարբու Ջեմալ Փաշա»⁴⁹ աշխատությունը նույնպես կարևոր է, որպես հեղափոխված է Ջեմալ փաշայի քաղաքական գործունեությունը՝ հայկական և արաբական կողմերի տեսանկյունով: Նեղինակի մեկ այլ աշխատություն, որի համահեղինակն է Խալիլ Ալ-Մուսան, «Արաբների ու հայերի պայքարն ընդդեմ Օսմանյան գաղութարիքության»,⁵⁰ ևս վերաբերում է մեզ հեղափոխող թեմաներին:

Նայոց ցեղասպանության վերաբերյալ արաբական պարմարության մեջ իրենց կարևոր տեղն ունեն նաև սիրիացի պարմարաններ Օսման Աթ-Թուրքի «Էջեր հայ ժողովրդի պարմությունից»,⁵¹ Մարվան Ալ-Մուդաուարի «Նայերը պարմության ընթացքում»,⁵² սիրիացի գրող և հրապարակախոս Սամիր Արբաշի «Նայասարան, հող և ժողովուրդ»⁵³ աշխատությունները:

Նայոց ցեղասպանության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի Մուսա Պրենսի աշխատությունը:⁵⁴ Մ. Պրենսի հեր է կապված «արմենոցիդ»՝ «հայասպանություն» եզրի ներդրումը գիտական ոլորտ: Արմենոցիդը համակողմանիորեն արքայազուլում է: Նայոց ցեղասպանության բուն էությունն ու բնորոշ գծերը, ավելի հասկանալի է դարձնում խնդիրը միջազգային, գիտական, քաղաքական և այլ շրջանակներում:

⁴⁷ صالح زهر الدين، الامرن- شعب وقضية، بيروت، 1988

Սալեհ Չահր Ալ-Դին, Նայերը, ժողովուրդ և հիմնասխնդիր, Բեյրութ, 1988:

⁴⁸ نعيم اليافي، مجازر الامرن وموقف الراي العام العربي منها، اللائقية، 1992

Նայիմ Ալ-Յաֆի, Նայերի կորուսածները և արաբական հասարակական դիրքորոշումը, Լաթաքիա, 1992:

⁴⁹ نعيم اليافي، جمال باشا المسفاح، اللائقية، 1992

Նայիմ Ալ-Յաֆի, Արյունարբու Ջեմալ փաշա, Լաթաքիա, 1992:

⁵⁰ نعيم اليافي، خليل الموسى، فضال العرب و الامرن ضد الاستعمار العثماني، اللائقية، دار الحوار، 1995

Նայիմ Ալ-Յաֆի, Խալիլ Ալ-Մուսա, Արաբների ու հայերի պայքարն ընդդեմ Օսմանյան գաղութարիքության, Լաթաքիա, 1995:

⁵¹ عثمان الترك، صفحات من تاريخ الامة الارمنية، حلب، 1960

Օսման Աթ-Թուրք, Էջեր հայ ժողովրդի պարմությունից, Նալեպ, 1960:

⁵² مروان المنوار، الامرن عبر التاريخ، بيروت، دار الحياة، 1982

Մարուան Ալ-Մուդաուար, Նայերը պարմության ընթացքում, Բեյրութ, 1982:

⁵³ سمير عريش، أرمنيًا، أرض وشعب، بيروت، 1991

Սամիր Արբաշ, Նայասարան, հող և ժողովուրդ, Բեյրութ, 1991:

⁵⁴ موسى برنس، مجازر الامرن. جرائم ضد الانسانية، حلب، 1997

Մուսա Պրենս, Նայերի ցեղասպանությունը. ոճրագործություն և մարդկության դեմ, Նալեպ, 1997:

Նայոց ցեղասպանության պարմության ուսումնասիրության համար աղբյուրագիրական նշանակություն ունի «Արաբական աղբյուրները հայերի ցեղասպանության վերաբերյալ»⁵⁵ ժողովածուն, որտեղ ներառվել են Ֆայեզ Ալ-Ղուսեյնի, Ռալի Ադ-Դին Յարունի և ամենակարևորը՝ Մերքայի շերիֆ ու էմիր Նուսեյն իբն Ալիի ուղերձները: Մենագրության շրջանակներում Սիրիայի այդ ժամանակահատվածի պարմական դեպքերին առավել մանրամասն քննարկում համար օգտվել ենք Ա. Սաիդի,⁵⁶ Է. Թումայի,⁵⁷ Ս. Ալիի,⁵⁸ Դ. Փայպիսի,⁵⁹ Գ. Կոսաչի,⁶⁰ Մ. Լազարևի,⁶¹ Ն. Նովիաննիսյանի,⁶² Ա. Սանջյանի⁶³ աշխատություններից:

Այսպիսով, Նայոց ցեղասպանության, հայ քարագիրների մասին արարականարեանների, պարմաբանների կողմից քրված վկայություններն ու կարարված ուսումնասիրություններն անպայման իրենց նպաստը կրերեն Նայոց ցեղասպանությունը համակողմանի ուսումնասիրելու և իրականությունը բացահայտելու գործընթացին:

Մենագրության շրջանակներում բերված հայկական ու արաբական հավասարի աղբյուրներն ու նյութերը ճշմարտացի և իրական պարկերացում են քալիս Նայոց ցեղասպանության նկարմամբ արարների դիրքորոշման և նշված ժամանակահատվածում քարագիր հայերի ու Սիրիայի արարների փոխարարությունների վերաբերյալ:

⁵⁵ المصائر العربية حول جريمة إبادة الأرم، بيروت، 1988

Արարական աղբյուրները հայերի ցեղասպանության վերաբերյալ, Բկյուրթ, 1988:

⁵⁶ Саид А., Восстание арабов в XX в., Москва, Прогресс, 1964.

⁵⁷ Тума Э., Национально-освободительное движение и проблема арабского единства, Москва, АН СССР, Наука, 1977.

⁵⁸ 1996, على سلطان، تاريخ سورية، نهاية الحكم التركي، 1918 - 1908، دمشق،

Ալի Սուլթան, Սիրիայի պարմություն /1908-1918/, Դամասկոս, 1996:

1996, على سلطان، تاريخ سورية، حكم فيصل بن حسين، 1918 - 1920، دمشق،

Ալի Սուլթան, Սիրիայի պարմություն, Ֆեյսալ իբն Նուսեյնի իշխանությունը, /1918-1920/, Դամասկոս, 1996:

⁵⁹ Pipes D., Greater Syria. The History of an Ambition, NY, Oxford University Press, 1992.

⁶⁰ Косач Г., Красный флаг над Ближним Востоком? Компартии Египта, Палестины, Сирии и Ливана, Москва, Институт Стран Азии и Африки при Московском государственном университете им. М. В. Ломоносова, 2001.

⁶¹ Лазарев М.С., Крушение турецкого господства на Арабском востоке (1914-1918), Москва, Изд. вост. Лит. 1960.

⁶² Նովիաննիսյան Ն., Սարգսյան Ն., Սիրիան անկախության համար մղված պայքարում /1917-1946/, Երևան, 1975:

⁶³ Sanjian A., The Armanian Communities in Syria under Ottoman Dominion, Cambridge, Massachusetts, Harvard University Press, 1965.




Armenische Flüchtlingskinder aus Aleppo.

*Nach Hilf und Trost sie schauten aus,
Voll Leid war schon ihr junges Herz!
Nun tragen Dank sie in das Haus,
Das Tröstung sandte ihrem Schmerz.*

Dankeskarte der A. C. O.


Դանիական փոստային բացիկ
Նախապի փոստագիր հայ երեխաները





ԱՆՆՈՒՄԻ ՈՐՈՐԸՆ ԿԵՐՁՈՒ ԽՈՒՄԸ ԶԱԼԵՓԻ ԿԱՅԱՆԻՆ ՄԵՔ

Փոստային բացիկ, Անապարի հայ որբերի վերջին խումբը Կալեպի գաղթականացում



Դուն 1921-

Damas: école arménienne


Դամասկոսի հայկական դպրոցի սաները. /1924թ./



*Հայկական նոր թաղամասի բնակարանների կառուցում.
Հայկա, 1920-ականների սկիզբ*



*Հայկաի «Մեղան Ալ-Զարիր» հայկական թաղամասի կառուցումը,
որը 1930-ականներին անվանակոչվեց Նոր գյուղ*





LA CHAPELLE-ECOLE. — SORTIE DE LA MESSE

Cl. Zoulikian.

P. Mécérian.

Փոստային բացիկ, դպրոց-մատրոն. պատարագից հետո

LES FRANCISCAINES MISSIONNAIRES DE MARIE EN MISSION - Alep (Syrie)



LES OEUVRES POUR LA JEUNESSE - Les petites rescapées d'Arménie sur la terrasse de Ste. Odile.


Փոստային բացիկ, հայոց ցեղասպանությունից փրկված հայ փոքրիկները Սուրբ Օդիլի պարզգամքում հայելայ (Սիրիա)

المشرف
الذيوان


بسم الله الرحمن الرحيم
الحمد لله

من الحسين بن علي. مكة البلاد العربية الشريفه واميرها الى الامراء الاجلاء
الامامه الامير فضل والامير عبدالعزيز الجريا السلام ورحمة الله وبركاته اما
بعد صدرت الاحرف من ام القرى بتاريخ ١٨ جيب ١٤٤٦ هـ بحمد الله الذي لا اله
الا هو اليهم ثم نصن وسلم على نبيه واله وصحبه وسلم ونخبركم باننا والفتاواه تبارك
وتعالى بعمه وعاشه ونعمه من فضله ضافيه وافيه اسبل الله علينا والى علمه والى نعمه
وان المرغوب بتحريم المحافظه على كل من تخلف اطرائهم وجهاتكم وبين عشائركم
من الطائفة اليعقوبية الارمنية تا عدوهم على كل امورهم وما حافظون عليهم
كما حافظون على انفسكم واموالهم وابنائكم وتسهلون كل ما يحتاجون اليه في
لحظهم واقامتهم فالحمد اصل ذمة المسلمين والذين قال فيهم صلوات الله عليه
وسلامه من اخذ عليهم عقاب بعير كسنة مخصمه يوم القيامة وهذا من اهم
ما نفعكم به وتنتفع من نبيكم ورحمتكم والله يتولا نا واياكم بتوبتكم والسلم
عليكم ورحمة الله وبركاته





Դամասկոսի հայկական որբանոցի արհեստանոցը /1919թ./



*Դամասկոսի հայ երեխաների ու կանանց ապաստարան՝
ՖԸՄ հովանավորությամբ /1919թ./*



*Տայ պարագիրների ընդունման կենտր վերածված Հայկազի նախկին
թուրքական գորանոցը /1918թ./*




1924 - Չամազ (Բալ Գոսյան)

*Շամազյուսի հայ պարագիրների վրանարարարը
/Բար Շարքի, 1924թ./*



Տիգրազի թագավոր Հուսեյն իբն Ալիի այցը Ամման /1924թ./
/Ասիաց երկրորդը/



Հուսեյն թագավորի կամակն ուղղված Եղիշե կախկույսու
Չիլենկիյանին /1918թ./

ԳԼՈՒԽ ԱՌ-ԱԶԻՆ

ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆՈՍՔԸ ՍԻՐԻԱ ԵՎ ԱՐԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

1.1 ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԱՌ-ԱԶԻՆ ԽՄԲԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմը հնարավորություն ընձեռեց երիտթուրքական կառավարությանն իրականացնելու հայերի ցեղասպանության ծրագիրը: Ռ-ազմանակապին սահմանակից շրջաններից բնակչության փարհանման պատրվակով Օսմանյան կայսրության գրեթե բոլոր նահանգների հայ ազգաբնակչությունը ենթարկվեց կոտորածների և փարագրության: Տարագիրների քարավանների վերջին հանգրվանը սիրիական անապատներն էին, որտեղ և իրականացվում էր աքսորի ընթացքում վերապրածների վերջնական ոչնչացումը:

Օսմանյան կայսրության Ռ-ազմական նախարար Էնվերը՝ Ջեմալ փաշային ուղղված ապրիլի 24-ի հեռագրում փեղեկացնում է. «Անհրաժեշտություն է առաջացել հայ փարագիրներին փեղահանել Դյորթ-Յոլից, Նաճընից, Ջեյթունից, Սսից, ուստի փեղեկացնում ենք Ձեզ նրանց՝ Նալեպի վիլայեթի հարավ-արևելքում գրեկող Ջոր վայրը ուղարկելու մասին, որի հետք համաձայն է Գլխավոր հրամանադարը»:⁶⁴

1915թ. մայիսի 13-ին Ներքին գործերի նախարարությունը հրապարակում է հայերի փեղահանության մասին որոշումը: Մայիսի 18-ին Թ-ալեաթի հրամանով Էրզրոմի նահանգապետը հրաման է փալիս փարագրել հայերին Դեյր էզ-Ջոր, մայիսի 23-ին հայերի փարագրության վերաբերյալ մանրամասնորեն փեղեկացվում են Վանի և Բիթլիսի նահանգապետերը: Նշանառման վայրը նույնն էր՝ Դեյր էզ-Ջոր:⁶⁵

Մայիսի 26-ին Ներքին գործերի նախարարը դիմում է Մեծ վեզիրին՝ առաջարկելով կառավարությանն ընդունել փեղահանությունը թույլատրող հարուկ օրենք: Մայիսի 29-ին Մեծ վեզիրը հավանություն է փալիս նշված դիմումին, իսկ փվյալ հարցի վերաբերյալ կառավարությունը որոշում է ընդունում մայիսի 30-ին: Միննույն ժամանակ, արդեն մայիսի 27-ին մամուլում հրապարակվում է փեղահանության մասին ժամանակավոր օրենքի ընդունման լուրը:⁶⁶

⁶⁴ Авакян А., Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений, Ереван, МИГА, 1999, с. 42-43.

⁶⁵ Նշվ. աշխ., էջ 43-44:

⁶⁶ Dadrian V., The History of the Armenian Genocide, Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, NY, Oxford, Berghahn Books, 1995. p. 284.

Այսպիսով, հարկ է նշել, որ թեև փեղահանությունը թույլատրող օրենքը Օսմանյան կառավարության կողմից ընդունվել էր մայիսի 30-ին, բուն գործընթացը մեկնարկել էր դեռևս 1915թ. ապրիլին:

Թուրքական կառավարությունը սկսում է փուլային քաղաքականությամբ իրականացնել հայերի փեղահանությունն ու կոտորածները: Տեղահանություններն իրականացվում էին հեղուղականորեն և հստակ ժամանակացույցով:⁶⁷ Արևմտահայությունը բշտում է սիրիական անապարներ՝ առանց կյանքի ապահովության: Սիրիական անապարը՝ որպես 1915թ. հայերի փեղահանության վերջնակետ, իթթիհադական կառավարության կողմից ընտրվում է երկու պարճառով՝ առաջինը և հիմնականը հայ փարթի հնարավորինս հեռացումն էր Արևմտյան Հայաստանից, երկրորդ՝ անապարում ավելի հեշտ էր կազմակերպել մարդկային մեծ զանգվածի կուրակումն ու ոչնչացումը:

Սիրիացի քաղաքական ու մշակութային գործիչ Մուհամմադ Քուրդ Ալին այն կարծիքն է հայտնում, որ երիտթուրքական կառավարությունը ցանկանում էր արաբների մութ շահարկել իսլամի գործունը՝ դրդելով նրանց հայերի դեմ, որի արդյունքում պետք է արաբներն իրենց կիսաթողած գործն ավարտեին:⁶⁸

Մուհամմադ Քուրդ Ալիի այս դրույթը հանդիպում ենք նաև 1913-1916թթ. Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Ն. Մորգենթաուի հուշերում, ով ևս մեկ անգամ փաստում է, որ երիտթուրքական կառավարությունը 2 միլիոն հայությանը որոշում է փեղափոխել անապար՝ զիպակցելով, որ «հայ փարագլխների մեծ մասը սահմանված վայրը չէր կարող հասնել. ծարավից, քաղցից կմահանային կամ գոհ դառնային անապարների վայրենի մուսուլման ցեղերին»:⁶⁹

Դեռ ավելին, Մորգենթաուն նշում է, որ երիտթուրքերը հայերին փարագրում էին սիրիական անապար՝ «նվազագույն չափով անգամ մարտություն չունենալով հայերին այդ երկրում հաստատելու»:⁷⁰ Ի փարբերություն Արդուլ Համիդ II-ի, ով վախենում էր միջազգային հակազդեցությունից, երիտթուրքերի ձեռքերն ազար էին իրականացնելու հայերի կոտորածները, բանի որ «Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան կենաց մահու պարբերագմի մեջ էին, չէին կարող միջամտել Թուրքիայի գործերին, իսկ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան իր դաշնակիցներն էին»:⁷¹

⁶⁷ Kuper L., Genocide. Its Political Use in Twentieth Century, New Haven and London, 1981, p. 110.

⁶⁸ محمد كرد علي، خطط الشام، دمشق، الجزء الثالث، 1983، ص 163.
Մուհամմադ Քուրդ Ալի. Շամի փեղագրությունը. Դամասկոս, 1983, հ. 3, էջ 163:

⁶⁹ Ambassador Morgenthau's Story, NY, 1918, p. 309.

⁷⁰ Նույն փեղում:

⁷¹ فؤاد حسن حافظ، تاريخ الشعب الارمني منذ البداية حتى اليوم، القاهرة، 1986، ص 214.
Ֆուադ Հասան Հաֆեզ, Հայ ժողովրդի պարմությունը սկզբնավորումից մինչ մեր օրերը, Կահիրե, 1986, էջ 214:

Երիտրոբլական կառավարության նույն մտադրությանն է անդրադառնում Դամասկոսում գերմանական հյուպատոս Լ. Նարդեգը Կ. Պոլսի դեսպանին հասցեագրված նամակում, ուր նշվում է. «Նախկինում փրկակալված հայ գաղթականներին Մոսուլ և Դեր Էզ-Ջոր ուղարկելու նպատակը բեղվիներին նրանց որպես գոհ հանձնելն է»:⁷²

1915թ. մայիսի վերջերին Նախեպ են հասնում գեյթունցիների առաջին քարավանները:⁷³ Սկզբնական շրջանում նրանց հանգրվանը Նախեպն էր: Վերջինիս կարևորությունը Նայոց ցեղասպանության փարիներին էական էր մի քանի նկատարումներով. նախ հյուպատոսական նստավայրերի առկայությունը, ինչպես նաև Նախեպի հյուպատոսական իրավասությունների ընդարձակ լինելու հանգամանքը: Վերջիններս փարավովում էին նաև Ուրֆայի, Մարաշի, Ջեյթունի հայկական շրջանների վրա: Նյուպատոսարանների օլարերկրացի աշխարողներն ականատես էին լինում Նախեպում հայ փարագիրների կուրակմանն ու վերոնշյալ փարավներից նրանց փրկահանման ողջ գործընթացին: Ամերիկյան, գերմանական, իտալական, ավստրո-հունգարական հյուպատոսական ներկայացուցչությունների Նախեպում գրավելու փաստով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ այդպեղ ջարդեր չեն եղել: «Նախեպը փրկության քաղաք չէր վերապրողների համար, այլ կենտրոնացման ընդարձակ վայր, որտեղից հայ փարագիրները թշվում էին վերջնական կտրորածի ամայի կայաններ... Նարյուր հազարավոր հայեր լցվեցին Դեյր Էզ-Ջորի, Մեսքենեի, Ռաքքայի, Իսլահիեի, Ռաս ուլ-Այնի կենտրոնացման և մահվան ճամբարները»:⁷⁴ Ինչպես իրավագիտորեն նկատում է Լ. Կուպերը, փրկահանությունները ցեղասպանության իրականացման համար թողարկման ձև էին, ինչպես նաև կտրորածի նոր մեթոդ:⁷⁵

Նախեպում հայերի փարերային այս փրկահանությունների, ճամբարներում նրանց կենտրոնացնելու ժամանակ առաջ էին գալիս բազմաթիվ դժվարություններ՝ սկսած նրանց փրկափոխման խնդիրներից, որոնց ավելանում էին բազմաթիվ հիվանդությունները, սովը, կլիմայական ոչ բարենպաստ պայմանները: Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար, Սիրիայում

⁷² Deutschland und Armenien. 1914-1918, Sammlung diplomatischer aktenstücke herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Bremen, 1986, N 275, s. 272-273.

⁷³ Երիտրոբլական կառավարության կողմից իրականացված հայերի պարբերաբար ու հեփուղականորեն իրագործվող փրկահանությունները դեպի սիրիական անապատներ արարական աղբյուրներում հիշատակվում է «սաուկիյաթ»՝ թարգմանաբար գաղթ. փրկահանություն եզրով:

⁷⁴ .75 موسى برتنس، مجازر الارمن ...، ص 75

Մուսա Պրենս, Նայերի ցեղասպանությունը..., էջ 75:

⁷⁵ Kuper L., նշվ. աշխ., էջ 112:

Չորրորդ բանակի հրամանատար Ջենալ փաշային հանձնարարվել էր րե-դում վերահսկել և կազմակերպել հայերի րեդահանություններն ու կոտորած-ները: Վերջինիս ծավալած գործունեության, հայերի նկարմամբ վարած քա-ղաքականության վերաբերյալ կարծիքները շար ասկասական են:⁷⁶

Սիրիացի պարմաբան Նայիմ Ալ-Յաֆին, ով վերյուծել է Ջենալ փաշայի քաղաքական գործունեությունը՝ հայկական և արաբական կողմերի րեսա-կերից, եզրակացնում է, որ նա երբեք էլ հեղ չի կանգնել հայերի նկարմամբ ոչնչացման քաղաքականություն վարելուց, ուղղակի, երբեմն հայերին օգրա-գործել է արաբների դեմ⁷⁷ որպես գործիք:⁷⁸ Այսուհանդերձ, հարկ է էջել, որ րե-դահանման և ոչնչացման ճանապարհին գրևվող հայերի նկարմամբ ցուցա-բերած որոշակի դրական վերաբերմունքը թելադրված էր ոչ այնքան Ջենալ փաշայի մարդասիրական վերաբերմունքով, այլ պայմանավորված էր քաղա-քական հաշվարկով: Հայերին նա դիպում էր որպես Սիրիայում և Լիբանանում արաբներին հավասարակշռող րարը և հայ արհեստավորներին արաբական րարածքներում բնակեցնելով ձգրում էր լուծել երկու խնդիր՝ թուլացնել արա-բական րարը, արաբական ազգային-ազաբազրական շարժման միպումնե-րը և սրեղծել բանակի կարիքները հոգալու նոր հենարան: Այս րեսանկյու-նով միայն կարելի է բացատրել ժամանակ առ ժամանակ հայ րարագիրների նկարմամբ նրա ձեռնարկած քայլերը:

Տարավային Սիրիայում րարագիրների հանգրվանն էր Դամասկոս քաղաքը՝ իր արվարձաններով: Առաջին քարավանն այսրեղ հասել է 1915թ. օգոստոսի 12-ին: Քաղաքը հավաքակայան էր րարագիր այն հայերի համար, ովքեր Ջենալի հրահանգով Դամասկոս էին ուղարկվում: Վերջիններս հիմնականում արհեստավորներ էին, որոնց աշխարանքը պերք էր օսմանյան բանակին: Արբելայիսկոպոս Եղիշե Չիլինկիրյանը 1916թ. Դամասկոս կարարած այցի ընթացքում րեղեկացել է, որ 20 հա-

⁷⁶ Մի շարք բարձրասիճան իթթիհաղականեր իրենց հուշրում առանձնացնում են Ջե-մալի դիրքորոշումը հայերի րեդահանության հարցում և էշում, որ հակառակ Թավեթի հրահանգների՝ հայերի դրությունը բարելավելու և օգնություն ցուցաբերելու Ջենալի հրա-հանգների մասին. անգամ համաձայնություն է րվել բժիշկ Ասապոր Ալթունյանի դեկավա-րությունը հայ րարագիրներին խնամելու համար հիվանդանոց բացելու առաջարկին, միև-դեռ, իրականում, հայելավ օսմանյան գորքի անցնելու փաստն է նրան սրիպել նման քայլ ձեռնարկել: Տե՛ս Kaizer H., “At the Crossroads of Der Zor. Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915-1917”, NJ, 2001, p. 27.

⁷⁷ Տեղիական ընդգծում է այն փաստը, որ թուրքական կառավարությունը լուրջ մրադրու-թյուններ ուներ 1914թ. հայարարաված ջիհադի իրականացման գործում արաբների օգնությունը սրանալ:

⁷⁸ 114-112, ص 114-112، دار الحوار، اللاذقية، 1992، جمال باشا السفاح، اللباني، نعيم

Նայիմ Ալ-Յաֆի, Արյունարբու Ջենալ փաշա, Լաթակիա, 1992, էջ 112-114:

գարից ավելի հայեր կային Դամասկոսում, իսկ 1917թ. նրանց թիվը հասել էր 30 հազարի, որոնց մեծ մասն արդեն հարմարվել էր տեղական կյանքի պայմաններին այն աստիճան, որ Բար Թ-ումայի մեծ շուկան գրեթե ամբողջությամբ հայերի ձեռքն էր անցել:⁷⁹

Նայերի կենտրոնացման վայրերից էր նաև Նաուրանի շրջանը: Ազգությամբ թուրք Նասան Ամջան 1916թ. օգոստոսի 23-ին Ջեմալ փաշայի հստակ հանձնարարականով նշանակվում է: «Նայ տեղահանվածների տեսուչ»: Նա Նալեպից մեկնում է Նաուրան /կենտրոնն էր Դերան/, ուր կենտրոնացած էին մոտավորապես 20-30 հազար մուհաջիրներ՝ տարագիրներ՝ հերկյալ հանձնարարականով. «Ներկայիս թո պարտականությունը Նաուրանից այդ ընտանիքները կանոնակարգված կերպով մինչև անձրևները և ձմեռ տեղավորվելն է: Ներագայում կապահովես բնակչության կյանքի անվտանգությունն ու հասարակական բարեկամը»:⁸⁰ Բայց ներքին գործերի նախարարությունը այս գործընթացն արագ կանխել է՝ նորացնելով ուղարկված հեռագրերի բովանդակությունը, ըստ որի բանակի հրամանատարությունն իրավասու չէր այլևս միջամտել այդ խնդիրին:

1915-1916թթ. Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերից արսորը հիմնականում ավարտված էր, արևմտահայությունը՝ տեղահանված հայրենիքից: Արսորը վերապրածների մեծ մասը 1916թ. կենտրոնացած էր Նալեպ ու Դամասկոս քաղաքների և Եփրատ գետի միջև ընկած տարածքի ճամբարներում, ուր տիրում էր կենցաղային ծանր վիճակ. սովը, համաճարակն ամենուր հազարավոր մարդկանց կյանքեր էին խլում:

Նամակենտրոնացման ճամբարներ այցելած բազմաթիվ օտարերկրացիների նկարագրությունները հիմնականում համընկնում են, և բոլորն այդ ճամբարները որակում են մեծաթիվ զանգվածների միաժամանակ կամ աստիճանական ոչնչացման միջոց: Երբեմն նշվում է, որ ճամբարներում առաջանում էին գաղթականների այնպիսի կուրակումներ, որոնք դուրս էին գալիս անգամ թուրքական կողմի վերահսկողությունից:

Ամերիկացի Սյրյուարտ Դադը մանրամասն նկարագրում է վրանաբաղարների վիճակը. «Որք, որուհետև աստնք կարելի չէ բնակարան կոչել, շինուած էին որևէ բանէ. որ մարդոց ձեռք ինկած էր: Աստնք կը ներկայացնէին յուսահար սրեղծագործութիւն մարդ արարածին՝ մղուած ունենալու բնակարան մը վայրի մը մէջ, որ ոչինչ էր, քան աղբի կոյր»:⁸¹

⁷⁹ Չիլենկիբեան Եղիշէ: Եպիսկ., Նկարագրութիւնք Երուսաղէմի-Նալեպի-Դամասկոսի գաղթականական եւ վանական զանազան դիպվաց եւ անցքերու 1914-1918, Երուսաղէմ, 1927, էջ 29 և 42:

⁸⁰ Ամջա Նասան, Տեղահանություն և ոչնչացում, Երևան, ՀՅԹԻ, 2007, էջ 30:

⁸¹ Վարժապետեան Ս. Յ., Նայերը Լիբանանի մէջ, Պէյրութ, 1981, հ. Բ, էջ 40:

Ունենալով համապարասխան հրահանգ՝ Նալեայի գաղթականների ընդհանուր փրկությունն ամեն փրկական ջարդարարական գործողություններ սկսելու հնարավորություն էր ստանում: Մինչև 1915թ. հուլիսի վերջը Նալեայի նահանգում աքսորի հրամանը չի գործադրվում նահանգապետ Ջալալ բեյի՝ հայերի նկատմամբ ունեցած բարյացակամության շնորհիվ: Այս կապակցությամբ նա կրթուկ հայտարարել է. «Ես այս շրջանի կառավարիչն եմ և ոչ թե նրա դահիճը»:⁸² Քաղաքի ոստիկանության փնտրեն Ֆիքրի բեյը ևս համամիպ չէր հայերի ջարդերի իրականացմանը և փորձում էր ընդդիմանալ վերադասների հրահանգներին:

Ջալալ բեյն աջակցում էր Սահակ Բ Խալապյան կաթողիկոսին,⁸³ ով Նալեայ էր փրկափոխվել՝ անձամբ զբաղվելու փրկահանվածների հարցերով: Ջալալ բեյը Նալեայում գործող «Գաղթականների օգնության հանձնախումբի», հայ փարագիրների փրկավորման հարցերով զբաղվող այլ մարմինների գործունեության համար նպաստավոր պայմաններ էր ստեղծում: Սակայն շուտով նրան փրկափոխում են Կոնիա:

1915թ. սեպտեմբերի 9-ի Ներքին գործերի նախարար՝ Թալեաթի հեռագիր-հրահանգում, որն ուղղված էր Նալեայի կուսակալությանը, ասվում է. «Նանեցե՛ր հոնկե: բոլորին ես փրկի մի՛ փար որ զանոնք պաշտպանե: փրկի ժողովուրդը, որ փգիտութանը բերմունքով նիսթական շահերը իր հայրենասիրական զգացմունքներն բարձր կը դասե»:⁸⁴

Վերոհիշյալ հրամանը փաստում է, որ Սիրիայի արարները բարյացակամ են հայ փարագիրների նկատմամբ և թուրքական կառավարությունը քաջափրկյալ էր հայ փարագիրների նկատմամբ արար ժողովրդի դիպրորոշմանը:

⁸² 67 ص، 1992، اللاتقية، وموقف الأرمن وموقف الرأي العام العربي منها، ص 67

Նայիմ Ալ-Յաֆի, Նայերի կոտորածները և արարական հասարակական դրիթորոշումը, Լաթաքիա, 1992, էջ 67:

⁸³ 1915թ. հոկտեմբերի 21-ին Սահակ կաթողիկոսը թուրքական կառավարության հրամանով աքսորվել է Իլդիբ գյուղաքաղաք և մինչև 1915թ. հոկտեմբերի 27-ը եղել է Նալեայում, որտեղից կրկին կառավարության հրամանով մեկնել է Երուսաղեմ: 1915թ. հոկտեմբերի 31-ից մինչև 1917թ. նոյեմբերի 19-ը գտնվել է Երուսաղեմում, որ պաշտոնավարել է որպես Կաթողիկոս-պատրիարք Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի և Երուսաղեմի ու Կ. Պոլսի, երբ նորից պետության հրամանով իրեն ընկերակցող եկեղեցականներով աքսորվել է Դամասկոս: 1921թ. Կիլիկիայի հայաթափումից հետո Ադանայից փրկափոխվել է Նալեայ: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության վերականգնվողման համար 1929թ. Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի օրհնությամբ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը Բնյորոթի և Կիպրոսի թեմերի հետ Կիլիկիո աթոռին է փոխանցել նաև Դամասկոսի թեմը: 1929թ. աթոռանիստը փրկափոխվել է Անթիպիաս: Մանրամասն փնն Ա. Sanjian, The Armanian Communities in Syria under Ottoman Dominion, Cambridge, 1965, pp. 257-259.

⁸⁴ Աւրոնյան Ա., Մեծ ոճիրը, Երևան, 1990, էջ 35:

Թուրքական կառավարությունն ամեն ինչ անում էր արաբների կողմից հայերին օգնություն ցուցաբերելու յուրաքանչյուր նախաձեռնություն խստիվ արգելելու համար, գործում էր մահապարժի սպառնալիքը: Այնուամենայնիվ, անգամ նման իրավիճակում, արաբները ելքեր էին փնտրում հայերին օգնելու համար և դժվար կլիներ պարկեռացնել հայերի վիճակը, եթե չլիներ արաբների հանդուրժողական վերաբերմունքը: Նրանք հնարավորինս փորձում էին օգնության ձեռք մեկնել փարագիրներին: Թուրքական իշխանությունները խիստ հսկողություն էին սահմանում րեղի կառավարիչների, հարկապես, արաբների վրա, որպեսզի նրանք անշեղորեն կալրարեն Ն. Պոլսից եկող հրահանգները: Փոքր անհնազանդության դեպքում իսկ նրանք պաշտոնանկ էին արվում: Հայոց ցեղասպանության իրականացման փարիսներին Երրորդ բանակի հրամանապար Մահմուդ Քամիլն իր հեռագրում նախազգուշացնում է, որ յուրաքանչյուր արաբ, ով որևէ հայի օգնի, նրան կախաղանի մահապարժ էր սպասվում՝ իր իսկ փան դիմաց, որից հետո կայրվեր նաև նրա փունը:⁸⁵ Հարկանշական է, որ նման սպառնալիքների պայմաններում, րեղի արաբները շարունակել են հնարավոր միջոցներով օգնել հայ փարագիրներին, որի մասին վկայում են հայկական, արաբական և օտարալեզու այլ աղբյուրներ:

Հալեպի նահանգապետարանում Ն. Պոլսից սրացվող նախարարական հեռագրերի համաձայն Դամասկոսից, Հալեպից դուրս բերվող քարավաններն ուղարկվում էին Մեսքենե, Դեյր էզ-Ջոր, Ռաս ուլ-Այն, Ինթիլի, Ռաբբա: «Անապարտմ պեպը է իրականացվեր հայկական ողբերգության վերջին արարը»:⁸⁶ Թուրքական հակամարդկային քաղաքականության հեղևանքով փոժում էր նաև արաբ ժողովուրդը: Իզուր չէ, որ զաղթականների ընդհանուր րեսչության պետ Աբդուլահար Նուրի բեյն այդ կառավարությամբ հայտարարում է, որ թուրքական ապագայի համար հայերից ու արաբներից միանգամից պետք է ազարվել:⁸⁷

Փաստորեն, Հալեպից հայերին հեռացնելը բռնագաղթի երկրորդ փուլն էր, Հալեպում Գերմանիայի հյուպարոս Վ. Ռյուպերը /1910-1918թ. մայիսի 30/ գրում է, որ հայերին րեղափոխելն անվանում էին «րեղափոխում բնակության վայրեր»: Բռնագաղթի առաջին փուլում աքսորավայրեր էին սիրիական շրջանները՝ Համան, Հոմսը, Բաբը, Դամասկոսը, իսկ երկրորդ փուլում՝ Ռաբբան, Դեյր էզ-Ջորը, Արևմտյան Հաուրանը և Ռաս ուլ-Այնը:

⁸⁵ نعيم الياقي، خليل الموسى، نضال العرب و الأرمن ...، ص 88.

Նայիմ Ալ-Յաֆի, Խալիլ Ալ-Մուսա, Արաբների ու հայերի սպառարը..., էջ 88:

⁸⁶ موسى برنس، مجازر الأرمن. جرائم ضد الإنسانية، حلب، 1997، ص 75.

Մուսա Պրենս, Էզվ. աշխ., էջ 75:

⁸⁷ Ակրոնյան Ա., Էզվ. աշխ., էջ 25:

Չնայած թուրքական կառավարության հերևողական քաղաքականությանը, այնուամենայնիվ, չի հաջողվում Հալեպի նահանգը լրիվ մաքրել հայերից: 1916թ. հունիսին Ն. Վանգենհայմը⁸⁸ տեղեկացնում է, որ «Հալեպից բոլոր հայերն արքորվելու են, Հալեպում մնալու նախկինում փրված արտոնագրերը չեղյալ են համարվել և հունիսի 19-ից արքորվում են ոչ միայն քաղաքականապես կասկածելիները, այլև անգամ հալեպաբնակները»:⁸⁹ 1917թ. գարնանը Հալեպի, Դամասկոսի, Բեյրութի, Մոսուլի հյուպարոսարանները հանձնարարական են ստանում տեղի հայ տարագիրների վերաբերյալ մանրամասներ փալ՝ կապված վերջիններիս թվաքանակի, իրական վիճակի, կազմակերպվող մարդասիրական օգնությունների ու վերջիններիս հայթայթման աղբյուրների մասին: Այս հանձնարարականի պարասխան նամակում Ռյուսերը Հալեպի հայերի համար նշել է 45 հազար թիվը, որոնցից 35 հազարը ծայրահեղ կարիքավոր, իսկ Դամասկոսի հյուպարոսն իր նահանգի համար նշել է 30 հազար:⁹⁰

Հալեպում ամերիկյան հյուպարոս Ջ. Ջեքսոնի 1916թ. փետրվարի 3-ի զեկուցագրերից ակնհայտ է դառնում, որ Սիրիայի տարածք է տեղահանվել 486 հազար հայ:⁹¹

Հայ տարագիրներին Հալեպից բշում էին դեպի Մեսքենե, որտեղից էլ՝ Դեյր էզ-Ջոր: Բարը, Մամբուջը, Մաարան լրիվ հայաթափվել էին: Եփրատի այս գծի վրա գրավող հայերը հիմնականում Կ. Պոլսի, Ռոդոսթոյի, Նիկոմեդիայի, Կոնիայի, Պարտիզակի և Կիլիկիայի հայերն էին: Նրանք լիովին չէին թալանվել և ամեն միջոց ձեռնարկում էին՝ Մեսքենեից ներքև չիջնելու համար: Ռաս ուլ-Այնի արաբները վկայում էին, որ այնտեղ գրավող գրեթե բոլոր հայերը սպանված էին: Փաստորեն, սկսվել էր «Սիրիայից դեպի Սիրիա», «անապարից անապար» տարագրության փուլը, որտեղ, ինչպես վկայում են հայկական և արաբական աղբյուրները, կազմակերպվում են երեք ջարդեր. Ռաս ուլ-Այնում, Ինթիլիում և Դեյր էզ-Ջորում: Թեև երեք վայրերում էլ ջարդերն իրականացվում են ամենաաղածան կերպով, սակայն Դեյր էզ-Ջորը դառնում է հայ ժողովրդի «գերագույն սպանողանգ»:⁹²

⁸⁸ Ն. Վանգենհայմը 1912 թվականից մինչև 1915թ. նոյեմբեր ամիսը որոշ ընդմիջումներով Կայսերական Գերմանիայի դեսպանն էր Կ. Պոլսում:

⁸⁹ Deutschland und Armenien. 1914-1918, Sammlung diplomatischer aktenstücke herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Bremen, 1986, N 281, s. 276.

⁹⁰ Deutschland und Armenien. 1914-1918, N 330, s. 331, 334.

⁹¹ United States official records on Armenian Genocide 1915-1917, compiled with an introduction by Ara Sarafyan, London, 2004, p. 490.

⁹² Գրանտան Ն., Մեծ նաաբեկությունն էրք... տին «Յուշամարտան Մեծ եղևոսի», էջ 929:

Նալեպցի մարտնի Ժոզեֆ Թաուբելը,⁹³ ով դեպքերի բերումով 1916-1918թթ. եղել է Դեյր էզ-Ջորում, ականաբես է եղել հայերի սարսափներին: Նա նույնպես վկայում է, որ սկզբնական շրջանում Դեյր էզ-Ջորը խաղաղ էր՝ շտրոխիվ գավառի կառավարիչ Ջալալ բեյի /Ջելալ Ադ-Դին Ալ-Ջուբրան/, որի կառավարման փարիները՝ որոշակի ընդմիջումներով 1910-1916թթ./: «Վերջինս հասարար մնաց իր գաւառի բրիսարոնիաներուն հանդէպ ունեցած կեցուածքին վրայ... ազնուական մութասարեֆը հայ փարագիրներուն րեղաւորեց քաղարի արուարձաններն ու խաները եւ հրամայեց օգնել անոնց՝ իր կարողութեան սահմաններուն մէջ»:⁹⁴ 1916թ. հունիսին հայերին բնաջնջելու հասարակամութեամբ Դեյր էզ-Ջոր է եկել Ջեքի փաշան:

1916թ. ընթացքում Ջ. Ջեքսոնի զեկուցագրերից մեկից րեղեկանում ենք, որ Նալեպում և հարակից շրջաններում փարագիր հայերին գաղրի ճանապարհով բաշխվել է մարդասիրական օգնություն:⁹⁵ Այս փաստը պայմանավորված էր թուրքական իշխանությունների սահմանած հսկողությամբ: Բայց, չնայած դրան, րեղի հյուպարոսական անձնակազմերը և միսիոներները միջոցներ են փնարել այդ օգնությունն ամեն ձևով իրականացնելու համար: Այսրեղ հարկ է նշել երրորդ կարևոր կողմի դերն ու նշանակությունը՝ րեղարնակ հայերը, որոնք էլ սրեղձել էին իրենց բաշխման ցանցը:⁹⁶ Արարները նույնպես աջակցել են այդ գործընթացին: Թաուբելը համագործակցել է Ջ. Ջեքսոնի հետ, ով բարեգործական կազմակերպությունների նպաստներն ու օժանդակությունները հանձնում էր Թաուբելին, վերջինս էլ փոխանցում էր հայ գաղթականներին: Անգամ որոշ հայ փարագիրների Թաուբելն իր րանն է թաքցրել: «Բազմաթի մարդիկ, մանուկներ եւ կիներ կը թաքնուէին րանս մէջ եւ կը փրկուէին մահէ»:⁹⁷ Վերջինիս գործունեությունը պարճառ է դարձել նրա ձերբակալության: Նալեպում Ջեքսոնի հետ համագործակցել է պարվելի Նովհաննես քահանա Էսբիջանը, ով հայ փարագիրներին օգնություն բաշխելու ընդհարակցա ցանց էր սրեղձել: Վերջինս այցելել է Ջեքսոնին՝ դեսպանագրան միջոցով հայ փարագիրներին րրամաղրվող օգնությունն ընդայնելու խնդրանքով:⁹⁸

⁹³ Ժոզեֆ Թաուբելն իր րպավորությունները գրի է առել դեպքերից անմիջապես հետո որպես «սկսանաբես, վկա», ինչպես ինքն է իրեն բնութագրում: Նրա հուշերն առաջին անգամ լույս են րևակ Բեյրութի «Ալ-Մաշրեփ» հանդեսում, 20-րդ րարի, թիվ 6, հունիս, 1922, էջ 562-570:

⁹⁴ Տէր-Ջորի դեպքերը պարերագմի ժամանակ, «Ազդակ», Պկյութ, 24.04.2004, էջ 53:

⁹⁵ United States official records on Armenian Genocide 1915-1917, p. 489.

⁹⁶ Kaizer H., նշվ. աշխ., էջ 47:

⁹⁷ Տէր-Ջորի դեպքերը պարերագմի ժամանակ, րեն «Ազդակ», 24.04. 2004, էջ 56:

⁹⁸ Kaizer H., նշվ. աշխ., էջ 47:

Դեյր էգ-Ջորում Ջեքի փաշան ևույնպես մրադրություն ուներ արաբներին ներգրավել հայերին բնաջնջելու ծրագրերում: «Թեքական իշխանութիւնը ապուսը մաքրագործման յոյսը դրած էր Տէր-Ջորի արաբներուն վրայ»:⁹⁹ Տեղի արաբները մերժում են նրա առաջարկը. «Մեր խիղճը չենք կրնար բեռնաւորել անմեղներու արիւնով»:¹⁰⁰

Ուսս ու-Այնի կայմակամ Յուսուֆ Ջիյա բեյը պարբերաբար հեռագրեր էր ուղարկում Տայնայ՝ խնդրելով, որ այլևս գաղթականներ չուղարկեն, որովհետև չէր կարողանում հոգ փանել ու պատասխարել նրանց: Ջիյա բեյը հապաղում էր հայերին անապաք ուղարկել, սակայն 1916թ. փետրվարին այստեղ է ժամանում Վանի նախկին կուսակալ Ջնդեղ բեյը՝ «Բաշկալեի պայտարը», ով րեսնելով հայ գաղթականների բազմությունը, պաշտոնանկ է անում Ջիյա բեյին:

Ժողովրդին առանձին խմբերով հանում են Դեյր էգ-Ջորից Մոսուլ փանելու նպատակով, բայց նրանք չեն հասցնում Շադադիեն անցնել: Մինչև Շադադիեն Ջեքի փաշան ընտրում է Մարաթի և Սուվարի անապարները և քանի որ «կարելի չէր ամբողջ այդ բազմութիւնը սպաննելով հարցնել, սպեղծեց արհեստական սով մը»:¹⁰¹ Բնականաբար, նման իրավիճակն իր անմիջական ազդեցությունն էր ունենում փեղի արաբ ժողովրդի վրա: Ահմադ Ուսաֆի Ջաբարիան իր ուղևորական հուշերում, որոնք ամփոփված են «Հուշերս Եփրատի մասին, 1916թ.» և «Ուղևորություն դեպի Եփրատ» գրքերում, անդրադարձել է նաև հայերի բռնագաղթին և նշում է, որ արաբները պարերազմի փարիներին շփվելով Եփրատի ու Տիգրիսի հովիտներ թշված հայկական քարավանների հետ, փարբեր հիվանդություններով են վարակվել, «մանաւանդ երբ դիժուսէն փառապած մեռեալներու հագուստները կը հագնէին»:¹⁰²

Այնուամենայնիվ, ինչպես փաստում է սիրիացի պարմարան Օմար Սլեբին իր «Ջորի նահանգը օսմանյան ժամանակաշրջանում» աշխարհության մեջ. «Շրջանի բնակիչները դիմակայեցին քաղաքական կամայականութեանց, եւ պահպանեցին հայերը առանց գիտակցելու միջազգայնօրեն շրջանին դէմ լարուած քաղաքական խաղին»:¹⁰³

Ծնունդով դերգորցի, Սիրիայի Արաբական Նահրապետությունում Արաբ գրողների միության անդամ Ջաբիր Սուլթանը գրում է. «Տարագիր հայերին Դեյր էգ-Ջորի բնակիչները ընդունում էին մեծահոգությամբ ու բարությամբ:

⁹⁹ Տէր-Ջոր, Աղէրէն վերապրողներ, էջ 28:

¹⁰⁰ Նույն փեղում:

¹⁰¹ Անտոնյան Ա., նշվ. աշխ., էջ 109:

¹⁰² Արիսեան Ն., Տէր Ջոր մարտիրոսաց քաղաք, Տայնայ, 2010, էջ 90:

¹⁰³ Նշվ. աշխ., էջ 103:

Նրանք ամեն ինչ անում էին, որ խոչընդոտելին թուրքերին՝ հայերին ձերբակալել: Հիշում եմ մորս պարսպապանները, թե՛ Կարա՝ Արդ Ալ-Ալլահ Սիյասը թաքցրել է հայերին խոսքի դեպքերի մեջ: Իսկ թուրքերը փնտրում էին նրանց Դեյր էզ-Ջորում գրեթե ցամաքացած վայրեր: Տարիկա միակը չէր»:¹⁰⁴

Հայ Կարազգիւնների համակենտրոնացման գլխավոր վայրերից էր նաև Ռաքքան: 1915թ. Ռաքքան Հայկազից բաժանված ինքնուրույն շրջան էր ու վարչականորեն կապված էր Ուրֆայի մութասարիֆության հետ: 1915թ., երբ հայ գաղթականները հասնում են Ռաքքա, Կարազգի կառավարիչն էր հայկազի Ֆեհմին, ով Կարազգի գաղթականության հարցերով զբաղվող Արիբ աղայի հետ համագործակցելով՝ իրենց արտոնված քանակից 2-3 անգամ ավելի գաղթականներ էր ընդունում, ընդ որում, կաշառքով: 1916թ. Ֆեհմինին փոխարինում է Դեյի Ֆախրին, սեպտեմբերին՝ Ալի Էնմալը: «Ըստ քան եթե իր ազգաբարձրը ճանաչում է Ֆախրին, պիտի չի մոռնայ նաև անոր այս յաջորդը, որ նույնքան արիաքար պաշտպանեց Հայությունը և առիթները ստեղծելով ժողովուրդը Կարազգից անելի ապահով գոյությունը մեջ»:¹⁰⁵

1915թ. հունիսի 15-ին Ռաքքայի հայության թիվը կազմում էր շուրջ 30 հազար, 1916թ. կազմակերպված մարդահամարի ցուցակը հետևյալն էր՝ ընդհանուր առմամբ 4035:¹⁰⁶ Փաստորեն, մեկ Կարազգի ընթացքում 90 Կարազգի անկում էր գրանցվել:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ արաբները սկզբից ներքին շրջաններում կառավարությանը: Չնայած այն փաստին, որ նրանք բազմակողմանիորեն հրահրվում էին վերջիններիս կողմից, որին ավելանում էր Կարազգի պարսպապանական վիճակը, ծանր տնտեսական կացությունը, արաբները փորձում են աջակցել հայերին:

«Արաբների վերաբերմունքը հայերի ողբերգության նկատմամբ» գլխում պարսպապան Օսման Աթ-Թուրքը կարծես ամբողջացնում է արաբների դիրքորոշումը՝ նշելով, որ արաբները բարյացակամ են եղել հայերի նկատմամբ. «Բոլոր արաբները, հարկապես, սիրիացիները, պետք է նշել, որ մեծ ուշադրություն և բարյացակամություն ցուցաբերեցին հայերի նկատմամբ, ապաստան տվեցին իրենց տներում Կարազգիներին ու որբերին, և դա արաբներն արեցին անսպասելի իրենց խղճի ձայնին հակառակ կառավարությանը»:¹⁰⁷

¹⁰⁴ .101-98 ص، 2002، دمشق، غوازل الارمن في الفكر السوري،

Արիսյան Ն., Հայկական սարսափները սիրիական մարտում, սիրիացի մարավորականների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում, Դամասկոս, 2002, էջ 98-101:

¹⁰⁵ Գալֆանան առաջ քահանայ Կ., Գիրք Ելից հայոց, Պեյրոս, 1955, էջ 532:

¹⁰⁶ Նշվ. աշխ., էջ 262:

րության խիստ հսկողությանն ու սպառնալիքներին... նրանք իրենց օգնության ձեռքը մեկնեցին, փան դուռը բացեցին բոլոր հայերի առջև»:¹⁰⁷

Նայերն ու արաբները նշված ժամանակահատվածում որոշակի ընդհանրություններ ունեին: Դրանցից առաջնայինը թուրքական փիրապետությունից ազատվելու գաղափարն էր: Նայ և արաբ ժողովուրդներին երկար ժամանակ չպահանջվեց գիտակցելու, որ իրենց նկատմամբ փարավում էր «նույն քաղաքական գիծը՝ թրքացման քաղաքականությունը»:¹⁰⁸ Թուրքական կառավարությունը, որքան էլ հերևողական էր հսկողության հարցում, բայց նրա՝ «հայ ժողովրդին ոչնչացնելու արաբներին ուղղված սպառնալիքների քաղաքականությունը ճախողվում է»:¹⁰⁹ Նրան չի հաջողվում «շահել արաբների վարահությունը, որոնք Օսմանյան կայսրության ամենասրվար գանգվածն էին»:¹¹⁰

Այսպիսով, երիտթուրքական կառավարության՝ հայերի նկատմամբ վարած ոչնչացման քաղաքականության հերևանքով Սիրիա հասած հայ փարագիրներին փեղի արաբ ժողովուրդը սկզբից նեթ բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերում: Արաբների օգնությունը սկզբնական շրջանում հիմնականում անհատական բնույթ է կրել՝ թուրքական կառավարության կողմից արգելված լինելու պարճառով: Եվ քանի որ հայերի փարագրությունն էլ փարբերային ձևով է իրականացել, փեղի արաբ ժողովրդին ժամանակ էր հարկավոր հայերի՝ սիրիական անապարներում հայտնվելու պարճառները և դրանից առաջացած հերևանքներն ու բարդությունները գիտակցելու համար: Արաբների դրական վերաբերմունքը, մարդասիրիական բնույթից բացի, կարելի է բացատրել նաև արաբների այն մտավախությունով, որ իրենք նույնպես կանգնած էին թուրքական վրանցի առջև, ինչպես նաև հայկական կոտորածներին կարող էին հաջորդել արաբական կոտորածները: Արաբների դրական վերաբերմունքի պարճառներից էր այն գիտակցումը, որ օսմանյան փիրապետությունից ազատվելու հարցում հայերի ու արաբների ճանապարհն ընդհանուր է:

¹⁰⁷ عثمان الترك، صفحات من تاريخ الامة الارمنية، حلب، 1960، ص 247

Օսման Աթ-Թուրք, էջեր հայ ժողովրդի պարմությունից, Նախագ, 1960, էջ 247:

¹⁰⁸ مروان المنوار، الارمن عبر التاريخ، بيروت، 1982، ص 497

Մարուան Ալ-Մուդաուար, Նայերը պարմության ընթացքում, Բեյրութ, 1982, էջ 497:

¹⁰⁹ صالح زهر الدين، أصالة العرب والوفاء الارمني، بيروت، 2002، ص 243

Սալեհ Զահր Ադ-Դին, Արաբների անկեղծությունն ու հայերի երախարագիությունը, Բեյրութ, 2000, էջ 243:

¹¹⁰ موسى برنس، مجازر الارمن. جرائم ضد الانسانية، ص 75

Մուսա Դրենս, էջ 75: 75:

1.2 ՈՐԲԻՏԱՎԱՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, ԿԱՆԱՆՅ ԱԶՏԱՏԳՐՈՒՄՆ ՈՒ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՏԻՄՆՈՒՄԸ

Նայոց ցեղասպանությունից հետո Սիրիայում ապաստանած հայ փառագիյրների հոծ բազմության մեջ ամենամասերը թերևս հայ որբերի վիճակն էր: Տարագրության դաժան ճանապարհից, ծանր վերապրումներից հետո սիրիական անապարներում նրանց նոր դժվարություններ էին սպասում: Առկա էր կենդանի մնալու խնդիրը, բացի այդ, նրանք մշտապես կանգնած էին նաև ծուլման վրանցի առջև:

Երեխաների վերապրելու խնդիրն այս պարագայում հարուկ ուշադրության է արժանի: Երեխաների գործոնի կարևորությունը հարակ գիտակցում էր երիտթուրքական կառավարությունը: Դա են վկայում իրար հեղինակից Նալեայի կուսակալություն հասնող հեռագրերը՝ անհապաղ միջոցառումներ ձեռնարկելու և հայ երեխաների միջոցով հայերի ընդհանուր բնաջնջումն իրականացնելու համար:

Սիրիայի արաբները, անփութելով վրանցն ու կառավարության հսկողությունը, փորձել են օգնել փառագիյր երեխաներին: Թ-ալեաթի՝ 1915թ. սեպտեմբերի 9-ի հեռագրից պարզ է դառնում, որ տեղի արաբները փորձում են պաշտպանել հայերին: Փաստ, որը խիստ դժգոհություն էր առաջ բերում երիտթուրքական կառավարության շրջանում:

«Ո՛չ միայն բուն սուրիացի, արաբ փարրը որևէ կերպով Նայ ցեղի արեան ծարարը չունեցաւ, այլեւ զովելի հոգածութեամբ ու որբան կարելի էր, ամոքեց Նայոց թշուառութիւնը»:¹¹¹

Սրտեղծվել էր մի բարդ իրավիճակ, որտեղից պետք էր ամեն կերպ դուրս բերել հնարավորինս մեծ թվով երեխաներ: Նման իրավիճակում հայ որբերին աջակցելու համար փառագրության առաջին իսկ շրջանից սկսում են գործել ինչպես հայկական, այսպես էլ՝ միջազգային փարրեր բարեգործական կազմակերպություններ: Ամենուր փարվում էին որբահավաք աշխատանքներ: Նայ որբերի և կանանց ազատագրմամբ զբաղվում էին հայկական կամավորական փոքրաթիվ ջոկարներ, անհարներ, ուլթեր բեղվիմների անվան փակ շրջում էին հեռավոր գյուղերում՝ հայրնաբերում իրենց ազգակիցներին, ազատագրում ու փոխադրում էին հայաշար կենտրոններ: «Թուրքի մը, արաբի մը, քիւրտի մը թովէն հայ որբ մը կան կին մը փախցնելը պարտականութիւն կը համարուէր, իւրաքանչիւր Նայո: Պէտք չունէին հրամանի կամ հրահանգի սպասելու, այդ պարտականութիւնը կատարելու համար»:¹¹²

¹¹¹ Սիրմեան արք. Ա., Պարմութիւն Նալեայի Նայոց, Նալեպ, 2002, հ. Ա, էջ 452:

¹¹² Չորմիսեան Լ., Նամայնապարկեր Արևմտահայոց մէկ դարու պարմութեան, Պէյրութ, 1975, հ. Գ, էջ 527:

Անապարներում գործում էր մի կարգախոս՝ «Մեկ հայ, մեկ ոսկի»։ Զանի որ ազատագրման հիմնական միջոցներից էր թուրք, թուրդ կամ արաբ փրկների դրամական վարձաբրությունը կամ կաշառքը, փարբեր երկրներում կազմակերպվում էին հանգստակություններ՝ փրկագին ապահովելու համար։¹¹³

Նայ որբերին աջակցելու համար, ինչպես նշվել է, մեծածավալ աշխատանք են փարել հայկական, միջազգային ու հասարակական կազմակերպությունները։ Նրանց գործունեության մեջ մի բան շարի հարկանշական ու բնորոշ է. Սիրիայում հայ որբերի և, ընդհանրապես, հայ փարագիրներին փրկելու գործընթացում լինեն դրանք անհար մարդիկ, հայկական կամ միջազգային կազմակերպություններ, դժվար էր արդյունքի հասնել՝ առանց արաբական կողմի միջամտության ու օգնության։ Որպես կանոն, հիմնականում բոլորը համագործակցել են արաբների հետ։ Վերջիններս՝ աշիրաթների ցեղապետներից մինչև բեդվիններ, բարձր պաշտոնյաներից մինչև անհարներ, աջակցել են հայերին հնարավոր միջոցներով։ Արաբների օգնությունը հայ որբերին ու կանանց շարունակական բնույթ է կրել, հերցեղասպանական առաջին հարվածում նրանք գործել են մարդասիրական մղումներով, հերազայում Նուսեյն իբն Ալիի ու նրա որդու՝ Ֆեյսալի պարգամներից կենելով։ Արաբներն աջակցել են նաև հայահավաք աշխատանքներ իրականացնող անգլիական և ֆրանսիական իշխանություններին։ Իհարկե, եղել են բացառություններ, որոնք էլ ունեցել են իրենց պարճառներն ու բացաբրությունները, բայց մի բան հարակ է՝ արաբների օգնությունն ու բարյացակամ վերաբերմունքն այդ ժամանակահարվածում գերիշխող բնույթ են ունեցել։

Որբահավաք աշխատանքներին զուգահեռ սկսվում է որբանոցներ բացելու գործընթացը։ Նայ որբերին պարսպարելու առաջին քայլերն անում են փրկի հայերը։ Արդեն 1915թ. հուլիսի 15-ին Ահարոն Շիրաճյանը Նալեպի Ազապա թաղամասում որբանոց է բացում։ Պետր է նշել, որ 1916-1918թթ. Նալեպի հայկական որբանոցի¹¹⁴ աշխատանքները երեք անգամ ընդհարվել են և վերականգնվել են 1918թ.։ «1917թ. որբերի թիվը հասնում է 1008-ի, իսկ առելի նրբը՝ 1918թ. հոկտեմբերին՝ անգլիական բանակներու

¹¹³ Մեյրոնյան Է., Նայկական բարեգործական ընդհանուր միության պարմություն, Երևան, 2005, էջ 99։

¹¹⁴ 1921թ. սաների թիվը կազմում էր 900, որոնցից 614 հաճախում էր դպրոց, իսկ արհարանոցի սաների համար /190 րդա և 60 աղջիկ/ գործում էր գլխերային դպրոց։ Որբանոցն ուներ մոտ 200 հոգուց բաղկացած աշխարակազմ։ Որբանոցում որբերին արհարներ էին սովորեցնում, ուներ նաև կույրերի համար հարուկ երաժշտական դասընթաց։ Որբանոցը փակվել է 1924թ.։

մուրքը Սուրիա, հայ որբերի թիվը կը հասնէ 2000-ի»:¹¹⁵ 1920-ական թվականներին որբերի թիվը 1800-ից նվազել է 1350-ի:¹¹⁶ Անգլիական գորբերը 1918թ. Նախկին գրավելուց հետո սկսել են կյութական օժանդակություն ցուցաբերել որբանոցին:

«Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամարտոյցը»¹¹⁷ նույնպէս հայ փարագիրների օգնության մեծածավալ ձեռնարկումներ է իրականացրել: Նրա ջանքերով փրկված և որբանոցներում խնամված որբերի թիվը հասնում է մոտ 12 հազարի՝ Սիրիայի, Լիբանանի և Պաղեստինի շրջաններում: «Երբեք չէ խնայած Ամերիկեան Նպաստամարտոյցը իր պաշտօնեաները զրկելու այնպիսի վրանգաւոր րեղեր, ուրկէ կարելի էր որբեր հաւաքել»:¹¹⁸

Արաբների հետ համագործակցել են նաև Նախկին Օսնիկ և Արմեն Մազլումյան եղբայրները¹¹⁹, ուրբեր «փարագրութեան փարիներուն նախախնամական դեր մը խաղացին Նախկին և Լիբանան մէջ անհամար հայ փարագիրներու սրոյգ մահէ փրկելով»:¹²⁰ Նրանք օգտագործում էին փրկական իշխանությունների հետ իրենց կապերը՝ բազմաթիվ հայ փա-

¹¹⁵ ՀԱԱ, ֆ. 420, ց. 28, գ. 1, թ. 1:

¹¹⁶ ՀԱԱ, ֆ. 420, ց. 28, գ. 1, թ. 4:

¹¹⁷ «Մերձավոր Արևելքի նպաստամարտոյց» կազմակերպությունը սերնդով է թորքիայում հայերի ջարդերին սկանալեան եղած Ամերիկյան բոլեջների պարասխանարունների՝ հայերին օգնելու համար իրենց կառավարության ուղղված դիմումների հիման վրա: Սկզբում այս կազմակերպությունը կոչվել է Նայ նպաստամարտոյց հանձնախումբ /Armenian Relief Committee/ և սկսել է գործել 1915թ. հոկտեմբերի 1-ից: Դրանից մի քանի ամիս առաջ սերնդով էին «Սիրիայի և Պաղեստինի նպաստի հանձնախումբը» և «Պարսկական պարսերագմի նպաստի հիմնադրամը»: Այս երեքը միավորվում են 1915թ. նոյեմբերի 15-ին՝ կոչվելով «Նայ-սիրիական ամերիկյան նպաստամարտոյց հանձնախումբ»: Կոնգրեսի որոշումով այս հանձնախումբը վերջնականապէս կոչվել է «Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամարտոյց»: 1916թ. Ամերիկյան նպաստամարտոյցի գործունեությունը մեծ թափ է ստանում Նախկին: Սիրիայում Նպաստամարտոյցի օգնության գործը սկսվում է 1915թ., իսկ 1918թ. ընդլայնվում է՝ իր զագաթնակերպին հասնելով 1922-1923 թթ.: 1924թ. Բելիյութում և Նախկին հիմնադրվել է «Մերձավոր Արևելքի որբերի քնկերակցությունը» /իլգա/: Նախագայում բացվել են նաև Ալեքսանդրէպոլի և Դամասկոսի մասնաճյուղերը: Մանրամասն փնս՝ Կարծապետեան Ս. Յ., նշվ. աշխ., էջ 351-385, Ազարյան Լ., Նայ որբերը Մեծ Եղեռնի. Լոս Անճլիքս, 1995, հ. 1, էջ 154-170:

¹¹⁸ Կարծապետեան Ս. Յ., նշվ. աշխ., էջ 351:

¹¹⁹ Մազլումյան եղբայրները Նախկին մեծ հեղինակություն վայելող անձինք էին, որոնց պարկանում էր Նախկին հայերի «Օթև Բարոն» հյուրանոցը, որբի ժամանակին իջևանել են երկրի կարևոր գեմբերը: 1916թ. եղբայրներն իրենց որբահավաք աշխարանքների և բաղաբանական գործունեության համար անգամ որոշ ժամանակ ձերբակալվել են: Մանրամասն փնս՝ Թորանեան Թ., Պարմութին Նախկին «Օթև Պարոն»-ի և Արմեն Մազլումյանի (Պարոն) կամակամին, Պէլյութ, 1987:

¹²⁰ Ոսկնմարեան, Նայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, 1906-1931, Փարիզ, 1935, էջ 154:

րագիրների, հարկապես մտավորականների սիրիական անապարներից Նայեպ Կրեդափոխելով:¹²¹

Նախապես պատերազմի վերջին փուլերին արդեն կազմվել էին որբախնամ և այրիախնամ մարմիններ, որոնք չնայած սկզբնական շրջանում գործում էին առանց լուրջ կազմակերպության, բայց կարողանում են առաջին կարևոր քայլերն անել հայ որբերի ու կանանց հավաքագրման աշխատանքներում: 1918թ. վերջում ավելի է սպվարանում անապարներից քաղաք եկող հայ գաղթականների թիվը, այդ ժամանակ նոր թափ է ստանում բանակի սպաների և որբախույզ մարմինների աշխատանքները, նրանց որբանոցներում Կրեդափոխելու գործընթացը: «Բովանդակ Սուրիոյ շրջաններէն եւ հարկապէս Տէր Զորի անապարներէն որբանոց կը հասնէն զարհուրած դէմքերով խլեակները որբերուն, որոնց վրայ կու գան անելու թրքական հարձններէն փրկուած հայ ցեղին դժբաղդ որբնայիրները»:¹²²

Նշված ժամանակահատվածը Սիրիայի քաղաքական կյանքը բեկումնային էր: Անգլիական և ֆրանսիական իշխանությունները հավակնում էին Սիրիայում իրենց փորձակերությունը հաստատել: Նարկ է նշել, որ բրիտանական սպայակույրը, որը 1918թ. ռազմական գլխավոր ուժն էր Սիրիայի փարածքում, հասպտում էր աջակցել հայերի և արևմտյան կազմակերպությունների կողմից իրականացվող հայաստանի աշխատանքներին: Բրիտանացիների գլխավոր նպատակն էր մերձեցնում առաջացնել և համաձայնություն ստեղծել մի կողմից իրենց, մյուս կողմից էլ Սիրիայի արաբ մեծամասնության միջև: Այնպես որ, բրիտանացի պաշտոնակարարներն ընդհանրապես խուսափում էին դիմել այնպիսի գործողությունների, որոնք կարող էին Կրեդի արարների համար բրիտանացիներին ի նպաստ քայլեր համարվել: Բրիտանական այս կեցվածքին անդրադարձել է ՀԲԸՄ-ի ներկայացուցիչ Միքայել Նաթանյանը. «Չափազանց թույլ և կրատական մտքեցում մը կը ցուցաբերէին, երբ հարցը կը վերաբերէր Կրեդական իսլամ ընդհանրներու մօտ պահուող հայ երեխաները վերադարձնելուն»:¹²³

Չպէք է թերագնահատել նաև ֆրանսիական կողմի դերը, չնայած գիտադատարին հաջորդած առաջին ամիսներին ֆրանսիական զինվորների թիվը սահմանափակ էր, և դրան համապատասխան օժանդակությունը փառողունակ չէր: Զինվորականները փարագիրներին համախմբում էին գորա-

¹²¹ Դար մը պարմութին Նայ բարեգործական ընդհանուր միության, Եզվ. աշխ., էջ 62:

¹²² ՀԱԱ, ֆ. 420, ց. 28, գ. 1, թ. 1:

¹²³ Թաշնեան Վ., Վերակերպել ազգը հայ կիներու եւ որբերու ճամբով. գործն ու անոր հակամարտությունները, Կրեդա «Երթ», Բերիոյ Նայոց թեմ, Սուրիահայ փարեզիրք, Նայեպ, 2006, հ. 2, էջ 170:

նոցներում, որպեսզի նրանց փրամաղրվում էր սնունդ և բժշկական խնամք:

Որբախնամ գործունեություն ծավալեցին նաև «Գերմանական արևելյան առաքելությունը», «Դանիայի փոկնանց միությունը» և «Շվեյցարիայի հայասիրական ընկերությունը», որոնց միջոցներով որբանոցներ բացվեցին Սիրիայում: Նշանակալի է օտարերկրացի միսիոներներ Կ. Եփիեհի, Յ. Կյունցլերի, Կ. Պիսերսենի, Ն. Բյուլի և ուրիշների երախտիքը Սիրիայում որբանոցներ հիմնելու, հայ որբերին անհրաժեշտ օգնություն ցույց տալու գործում: Իրենց ծավալած գործունեությամբ կարելի է առանձնացնել դանիացի Կ. Եփիեհին, էստոնացի Ն. Բյուլին, շվեյցարացի Բ. Ռոհներին: Վերջինս 2 որբանոց է բացել Նախեպում: Նա հայերին աքսորից փրկելու համար անգամ համոզել է Ջեմալ փաշային Նախեպում զինվորների համար հազուապ ու անկողին արտադրել: Շուրջ 3000 աղջիկներ, 650 տղամարդիկ և երեխաներ աքսորից զերծ են մնացել այսպես աշխատելով:¹²⁴

Իր հայանպասք գործունեությամբ առանձնանում է նաև էստոնուհի Ն. Բյուլը¹²⁵, ով 1922թ. հայրենիքից մեկնում է 'Նախեպ' որպես «Քրիստոնեական առաքելություն Արևելքում»¹²⁶ մարդասիրական կազմակերպության անդամ: Այսպես նրա առաջին գործը հիվանդանոցի հիմնումն էր և բժշկական օգնության կազմակերպումը: Բյուլը կարողանում է ջուլիակագործական և ձեռագործական արհեստարաններ բացել և 500 կանանց ապահովել աշխատանքով:¹²⁷ Նրա նախաձեռնությամբ շուրջ 250 դպրոցականների համար կրթաթոշակներ են սահմանվում: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ սիրիահայությունը հնարավորություն է ստանում վերադառնալ Խորհրդային Նայաստան, նա նույնպես դիմում է Ներգաղթի կոմիտե, բայց նրան մերժում են և քանի որ Էստոնիա այլևս չէր կարող վերադառնալ, 1951թ. մեկնում է Եվրոպա:

¹²⁴ Ազատեան Լ., Տայ որբերը Մեծ Եղեռնի, Լոս Անճելըս, 1995, հ. 1, էջ 89-90:

¹²⁵ Էստոնացի միսիոներուհիին 1911թ. մեկնում է Կիլիկիա և աշխատանքի անցնում Վարաշի գերմանական որբանոցում: 1916թ. Մարաշից փրկավորվում է Նարուսիեի գերմանական որբանոցը: 1919թ. նա հարկադրաբար հեռանում է Էստոնիա, 1922թ. մեկնում է Նախեպ:

¹²⁶ Կազմակերպությունը հիմնադրվել է Ֆրանսիայի Սպրատուրգ քաղաքում 1922թ. դեկտեմբերի 6-ին: Կազմակերպության նպատակն էր մոստամանական շրջաններում օգնություն կազմակերպել Մերձավոր Արևելքի քրիստոնյաների համար: Կազմակերպությունը Նախեպում ստեղծել էր իր կայանը, որն էլ ուներ հայկական և արաբական մասնաճյուղեր:

¹²⁷ Գրիգորյան Վ., Նայությանը նվիրված կյանք, Երևան, 1996, էջ 31:

Մեծ է նաև Կ. Եփիեի¹²⁸ կապարած աշխատանքը, ով հայ որբերին ու կանանց հավաքագրման աշխատանքներում համագործակցում էր արաբ բեդվիհների, փրկական իշխանությունների ու անհատների հետ:

Նայ երեխաների մասին խոսելիս հնարավոր չէ չանդրադատնալ թրքացման խնդիրն: Այս գործով հերևողականորեն զբաղվում էին Նալիդե Էդիպը, Նիզյար Խանումը, ովքեր մեկնել էին Սիրիա՝ որբերին անձամբ վարժեցնելու թուրքական կենցաղին: Նաբուկ որբանոցներ բացելու ծրագիրը գործում էր համաձայն 1915թ. դեկտեմբերի 12-ի հեռագրի, որտեղ Թալեաթը պահանջում էր. «Նաաբեցլ:ք ե սուուցլ:ք միայն այն որբերը, որոնք չեն կրնար յիշել զուլումը, որուն ենթարկուեցան իրենց ծնողները»:¹²⁹ Խնայելով միայն 5-ից փոքր երեխաներին՝ նրանք թուրքական հաբուկ որբանոցներում պեպք է մեծանային ու հեպագայում ծառայելիս պատերազմի պատճառով թուրքերի ունեցած մարդկային կորուստը լրացնելուն: Նույնիսկ իսլամացած հայ երեխաների պարագայում թուրքերը նրանցից վրանգ էին զգում, մտածելով, որ նրանք կրկին իրենց հայրենակիցների մոտ կարող են վերադառնալ:

Արաբները զիպակցում էին, որ նույն թրքացումն ուղղված էր նաև իրենց դեմ: «Երիպթուրքերի թրքացման քաղաքականությունը փարածվում էր նաև ոչ թուրք մուսուլման ժողովուրդների՝ արաբների, պարսիկների, եգիպտացիների, հնդիկների վրա, դրոնց նրանք չէին վերաբերվում որպես հավասարների»:¹³⁰

Տեղահանության և կոտորածների ընթացքում թուրքերն աշխատում էին իսլամացնել հաբկապես Սիրիա փարագրված հայերին: Կրոնափոխ հայերին թուրքական կողմը կյանքի երաշխիք էր խոստանում: Բայց նման դեպքում էլ նրանց կյանքին վրանգ էր սպառնում: Արաբների վերաբեր-

¹²⁸ Դանիացի միսիոներուիի Կ. Եփիևն արդեն 1903թ. սրանձնել է Ուրֆայի որբանոցի 300-350 հայ որբերի խնամքը: 1915թ. փրկահանությունների ու կոտորածների ժամանակ նա ոչինչ չէր խնայում հայ փարագիրների ու օգնություն ցուցաբերելու համար: 1917թ. վարառողության պատճառով Եփիևն ստիպված էր հայրենիք վերադառնալ, որտեղ հողվածներով և դասախոսություններով, հայերի կոտորածների մասին իր վկայություններով փորձում է արևմտյան աշխարհին փրկյալ պահել կապարվող ոճրի մասին: 1920թ. Կ. Եփիևն նոր ծրագրերով մեկնում է Նալեպ՝ հայ գաղթականության զիպավոր կենտրոնաբեդի, իր հայանպասար գործունեությունն այդտեղ շարունակելու համար: 1922թ. Կարեն Եփիևն նշանակվել է Ազգերի լիգայի կողմից առևանգված հայ կանանց և որբերին ազատելու նպատակով ստեղծված հանձնախմբի լիագոր ներկայացուցիչ:

¹²⁹ Ակրոնյան Ա., նշվ. աշխ., էջ 187:

¹³⁰ عثمان الترك، صفحات من تاريخ الامة الارمنية، ص 236

Օսման Աթ- Թուրք, նշվ. աշխ., էջ 236:

և հող փրամադրվի՝ մահմեդական դառնալու պայմանով»:¹³⁷

Հարկ է նշել, որ հայ փարագիրների մի սրվար զանգված արաբացվել է: Հայերը համակերպվել էին բեդվիյների սովորություններին ու բարքերին ու հավկանշական է, որ «առանց բռնական միջոցներու»:¹³⁸ Հարկ է նշել, որ աստիճանաբար դժվարանում էր նրանց այդ միջավայրից հեռացնելը: Այս հանգամանքն ունի իր բացարությունը. արաբների կողմից որդեգրվելու, աշխատանքի կամ ծառայության անցնելը, որը փոխալ պարագայում իրենց համար ուղղակի փրկություն էր, և նրանց այն գիտակցումը, որ հայությունը ցեղասպանության հետևանքով լիովին ոչնչացվել է, հիմք են փալիս եզրակացնել, որ փարագրվածները հաշտվել էին հայկական ինքնությունը կորցրած լինելու փաստին և համակերպվել արաբական միջավայրին, կենցաղին ու սովորություններին:¹³⁹

Ասվածի ապացույցն է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին հասցեագրված նամակը:¹⁴⁰ Նամակի հեղինակ Ջ. Աբելյանը հավաստիացնում է, որ Սիրիայի Ջեզիրե¹⁴¹ նահանգում գոյություն ունի հայկական ցեղախումբ՝ իսլամացած հայերով՝ Աշիրաթ Արման Ալ-Շաթաթ՝ Հայոց սփյուռքի ցեղախումբ, որը 1998թ. փետրվարի 2-ին վերանվանվել է Աշիրաթ Արման Ալ-Մուալիմա՝ Հայոց իսլամական ցեղախումբ: Աշիրաթն ունի իր կանոնադրությունը, անդամների թիվն ըստ Միհրան Նովհաննես Նեքիմյանի և Եղիա Սիսոյանի որդի Արզալ Ահանման Մուհամմադի, հասնում է 25 հազարի, վերջիններս արաբների ու քրդերի մոտ մնացած հայորդիների հետնորդներն են: Մի մասն արաբացած են, մյուս մասը՝ քրդացած: Կրոնով իսլամ սուննի են, չնայած բոլորը հայփարարում են, որ իրենց երակներում հայի արյուն է: Ոմանք կրում են հայկական, ոմանք՝ իսլամական անուններ: «Բայց ասոնք լուսանցքի վրայ ապրող մարդիկ են. ոչ քիտրը կ'ընդունի զիրենք որպես իսլամ եւ քիտր, ոչ ալ հայր կ'ընդունի զիրենք որպէս հայ»:¹⁴² Ցեղախմբի կանոնադրության մեջ հստակ նշվում է, որ այն պեքը է հարի Կառավարությանն ու հեռու մնա քրդական քաղաքական-անջարողական շարժումներից: Ցեղախումբը սրբեղծվել է՝ հաշվի առնելով փարսաձառջանում փրկող ցեղախմբային դրությունը, երբ ցեղա-

¹³⁷ Ազատեան, Լ., նշվ. աշխ., 1999, էջ 29:

¹³⁸ Սիրմեան արք. Ա., Դարմութիւն ..., հ. Ա, էջ 507:

¹³⁹ Ազատեան Լ., նշվ. աշխ., հ. 2, էջ 228:

¹⁴⁰ ՀՀ ԳԱԱ ՀՅԹ-ի գիտական ֆոնդեր, բաժին 47, թպ. 12:

¹⁴¹ Ջազիրան գրկվում է Թորքիայի և Իրաքի սահմանում և այդպես է անվանվում Եփրատ և Տիգրիս գետերի միջև գրկվելու պարճառով: Վարչական կենտրոնն է Հասսաբեն /Հասիջեն/:

¹⁴² ՀՀ ԳԱԱ ՀՅԹ-ի գիտական ֆոնդեր, բաժին 47, թպ. 12, ք. 6:

խումբը պաշտպանում է իր անդամների իրավունքները:

Արաբները գիտակցում էին իրավիճակի բարդությունը և հասկանում էին, որ միայն Կրիստոսը ցուցաբերված օգնությամբ հազարավոր որբեր չեն կարող փրկվել, ապաստան ունենալ: Դրա համար պետք էր որբերին ցուցաբերվող օգնությունն առավել կազմակերպված լիներ և ֆինանսավորվեր: Եվրոպական երկրներին ուղղված իրենց նամակում թվագրված 26 հունվար, 1916թ., մի խումբ ազդեցիկ շեյխեր հերայալ կերպ են նկարագրել իրավիճակը. «...Անգամ Արաբ ճամփորդներու սիրտն ալ շարժած է և յաճախ այս անկրատութանց դէմ բողոքի մղած գիրենք: Անոնք կենդանի վկաներն են այս արարքներու, անկի սահմոկեցուցիչ պատմութիւններ կը պատմեն մեզի արցունքոյ աչքերով»:¹⁴³

Որբախնամ գործունեությանն աջակցել է նաև Դամասկոսի վալի Թահսին բեյը, ով բարյացակամ էր հայերի նկատմամբ: Ըստ Չիլինկիրյան եպիսկոպոսի՝ վալին նախաձեռնություն էր սրանձնել հայ որբերի համար որբանոց բացել, ինչպես նաև ապաստարան՝ հայ այրիների համար, Կրիստոսը ասեղնագործությամբ և գորգագործությամբ էին գրառվում: Եվ չնայած ձեռնարկված բոլոր միջոցառումներին՝ Եղիշե Չիլինկիրյանն, ով մինչև 1917թ. Նալեպում էր ապրել, նշում է, որ նրանք ապրում էին սարսափելի պայմաններում:¹⁴⁴

Սալեհ Զահր Ադ-Դինն իր «Արաբների անկեղծությունն ու հայերի երախտագիտությունը» աշխատության «Նայ-արաբական բարեկամություն» ենթագլխում հարուկ անդրադարձ է կատարում արաբ կանանց, ովքեր վերցրել ու խնամել են հայ որբերին. «Արաբ կանայք հայ որբերին աջակցելու հարցում մեծ ներդրում ունեն. նրանք փորձել են թեթևացնել որբերի ցավը և պարահական չէ, որ շատ հայ երեխաներ արաբ կանանց «մայրիկ» են անվանել»:¹⁴⁵

Նայ որբերի համար որբանոց է հիմնվել նաև արաբական կողմի ջանքերով. Սիրիայի կրոնավոր, շեյխ Աբդալլահ Մուսային չորս ամսվա ընթացքում ծնողագուրկ հայ երեխաների համար որբանոց է կառուցել Սիրիայի Նամա քաղաքում՝ իր վրա վերցնելով ծախսերի հետ կապված ողջ դժվարությունները:¹⁴⁶

¹⁴³ «Արձագանգ Փարիզի», 10.06.1916:

¹⁴⁴ Չիլինկիրյան Եղիշե, եպիսկ., նշվ. աշխ., էջ 32-33:

¹⁴⁵ صالح زهر الدين، أصالة العرب والوفاء الارمني، ص 246

Սալեհ Զահր Ադ-Դին, Արաբների անկեղծությունն ու..., էջ 246:

¹⁴⁶ Նշվ. աշխ., էջ 245:

Հայկ Թորոյեան¹⁴⁷ իր հուշերում անդրադարձել է արաբների ընդվզմանը. «Իրենց մեծամեծները ... բուռն կերպով բողոքեցին Հալեայի կառավարության եւ 70 մանուկներու ոճրագործը ձերբակալելով, յանձնեցին դափարան, որ այդ հրէշը կախաղան բարձրացուց Արաբներու սքիպումին վրայ»:¹⁴⁸ Այնպես որ, արաբները ոչ միայն օգնություն էին ցուցաբերում հայ փարագիրներին, այլ հարկ եղած դեպքում փորձում էին կանխել թուրքական դաժանությունները կամ էլ վերջիններիս պատասխանատվության ենթարկել:

Ներքեղասպանության ողջ ընթացքում արաբները բազմաթիվ անգամներ աջակցել են հայ փարագիրներին: Ասվածի ապացույցը արաբների կողմից փրկված երեխաներն էին:¹⁴⁹

Շվեյցարացի միսիոներ Յ. Կյունցլերը, ով Հալեայում հայանպասք գործունեություն է ծավալել, հիշատակում է իր կնոջ մուսուլման-արաբ ընկերուհիներին և գրում. «Նրանց մեջ կային մեծահոգի անձինք, ինչպես օրինակ մի արաբ, ով մի կույր մարդու և չորս երեխաների իր փանն էր պահում, որոնց կերակրելու գումարն ինքն էր վաստակում»: Բացի այդ նա Կրեդի կադիին¹⁵⁰ է օրինակ բերում ու ընդգծում. «Կադիի նման շար մուսուլմաններ կային, ովքեր զուր մարդկային կարեկցությունից ելնելով, փրկում էին հայերին»:¹⁵¹

Հարկ է նշել, որ հանդիպում են նաև արաբների բացասական վերաբերմունքը փաստող վկայություններ, որոնք թերևս սակավաթիվ են, բայց

¹⁴⁷ Հայկ Թորոյեանը հալեացի հայ զինվոր էր, ով գերմանացի սպա Հոլմանի հետ ծառայության բերումով ճամփորդել է Եփրատի երկայնքով՝ հասնելով Բաղդադ: Կարողացել է թուրքական բանակից փախչել Թեհրան, հետո Կովկաս: Նա 1916թ. Թիֆլիսի հայ թերթերի միջոցով Կրեդիկացրել է Թուրքահայաստանի նահանգների ողբերգության մանրամասները: Պատերազմի ավարտից հետո նա ծափված վերադարձել է Միջագետք՝ կազմակերպելու հայ փարագիրների փրկության գործը:

¹⁴⁸ 1915. Աղէր էս վերամունդ, էջ 60:

¹⁴⁹ Կարմուճցի Տովհաննես Մութաֆյանը պատմում է, որ Ահմեդ առուով արաբ մի ոստիկան Դեյր էզ-Ջորում հաճախ օգնել է հայերին փախչել քարավաններից, մի բանի անգամ նրանց փրկել է ավազակների հարձակումներից: Անգամ վաճառելու նպատակով բերված ցանկացած բան ոստիկանը վերցրել ու բաժանել է հայերին, փես՝ Տեր-Ջօր, նշվ. աշխ., էջ 84: Վերապրող Մարիամ Գաբրիկյանը պատմում է, որ Դեյր էզ-Ջորում արաբները երբեմն «հաց կամ կերակուր կը բերէին եւ կը բաժանէին իրենց մեռելներուն հոգու համար»: Տե՛ս նույն տեղում, էջ 192:

¹⁵⁰ Կադի՝ Շարիաթի դատավոր, ով Ղուրանի և Սուննայի ինքնուրույն մեկնաբանությունների հիման վրա ընդունում է որոշումներ: Իր կարգավիճակով նա համարվում է այդ բաղաբի կամ շրջանի գլխավոր մուսուլմանը:

¹⁵¹ Künzler J., Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges (1914-1918), Zürich, 1999, s. 110.

իրականություն:¹⁵²

Այժմ անդրադառնանք փարագիր կանանց խնդրին: Կանանց փրկելու խնդիրը ցեղասպանությունից հետո նույնպես բավականին լուրջ էր: Ի փարբերություն որբերի, որոնք վաղ հասակում հայրելվելով արաբական միջավայրում, աստիճանաբար համակերպվում էին իրենց նոր կենցաղին, գիրակցական մակարդակով չէր կատարվում, իսկ կանայք սովոր էին ընտանիքի գաղափարին, երբեմն ինքնակամ էին գնում դրան, երբեմն՝ բռնի կերպով:

Ժ. Թաութելն իր վկայություններում նշում է, որ փարագիրները չէին կարող երկար մնալ Դեյր էզ-Ջորի իսլամ բնակիչների փնտրում թուրքական իշխանությունների խիստ հսկողության պարճառով, որի հետևանքով «յիշեալ կիներուն մօր 4 հազարը փախուսար փուաւ եւ ապաստանեցաւ պերելիներու աշիրէթներուն»:¹⁵³

Չնայած հարկ է նշել, որ կանանց խնդրում երկիրթուրքական կառավարության հետևողականությունը մի քիչ թուլանում էր, քանի որ նրանց հետագա գործունեությունը հիմնականում կենտրոնանում է երեխաների վրա, իսկ կանայք պատերազմի փարիներին, հիմնականում, օգտագործվում էին որպես աշխատուժ:

Նայ ազգային ինքնությունը վերականգնելու խնդիրը բոլորվին այլ էր հայ կանանց ու աղջիկների պարագայում: Այդ կանայք չէին ցանկանում լքել իրենց արաբ ամուսիններին զանազան պարճառներով՝ որոշ կանայք ինչ-որ չափով բարվոք կյանք էին կարողացել ապահովել իրենց համար, մյուսներին արաբները փրկել էին թուրք ռաբիկանների ձեռքից, ոմանք իրենց արաբ ամուսիններից արդեն երեխաներ ունեին ու չէին ուզում նրանց լքել: Ինչպես որբերի, նույնպես և կանանց ազատագրման և ապաստան փնտրելու

¹⁵² Նպաստում գերմանական վարժարանի ավագ ուսուցիչ, ազգությամբ գերմանցի Մ. Նիպպգեն 1916թ. գրում է. «Որոշ արաբներ հայտարարում են, որ իրենք են սպանել հայկիկին՝ կառավարության հրամանով»: Տե՛ս The Horrors of Aleppo, Seen by a German eyewitness, London, 1917, p. 12. Դրան գուզահե՛տ կարևոր է նշել, որ Մ. Նիպպգենի վկայություններում կան արաբների բարյացակամ վերաբերմունքը փաստող վկայություններ. «...մուսուլման արաբները թափախարում էին իրենց գլուխներն ի նշան անհամաձայնության և չէին կարողանում զսպել իրենց արցունքները՝ փռանելով փարագիրների անցնող քարավանները»: Տե՛ս նույն փրկում, էջ 7-8: Արաբների կողմից հայ որբերի ու կանանց նկարմամբ մեծամասշտաբ, դաժան վերաբերմունքի եզակի օրինակներից է հայերի փարագրումն իրականացնող Արդալլահ Փաշա անունով արաբ պաշտոնյայի արարքը: Վերջինիս Դեյր էզ-Ջորում հանձնարարվել էր 1500 որբերի փրկափոխումը, որոնց ևս բշում է Մարաթի անապատը. մի մասին քարանձավում ծխախնդող է անում, մի մասին՝ պայթեցնում: Մնացածն էլ, որոնք փկար էին, հիվանդ, չոր խոտով ծածկում է ու խոտով այրում: Նայ որբերի այս բազմությունից կենդանի են մնում միայն Ռողոսթյոյի Օնիկն ու Շապին Կարահիսարի Աննան: Տե՛ս Ազատնան Լ., նշվ. աշխ., հ. 1, էջ 87:

¹⁵³ Տե՛ր-Ջորի դեպքերը պատերազմի ժամանակ. փնտ «Ազգակ», 24.04.2004, էջ 54:

հարցերում իրենց մեծ ներդրումն ունեն Հմիր Ֆեյսալն ու նրա կողմնակիցները, ովքեր փրկեցին համակարգում ու կազմակերպում էին հայ կանանց հավաքագրման աշխատանքները: 1918թ. Ֆեյսալը Հալեպի նահանգի ռազմական ոստիկան Ջաֆար Ալ-Աքբարիին կարգադրել էր հայերի ցուցումներով վերցնել բոլոր իսլամացածներին, նույնիսկ «նիքահով»՝ այսինքն պաշտոնական-կրոնական ամուսնությամբ արարների հետ ամուսնացած և երեխաներ ունեցող կանանց: Ֆեյսալի առաջարկով որոշվել էր նման կանանց հանձնել «չեզոք տներին»:¹⁵⁴ Սիրիայում նշված շրջանում գործում էին հարուկ նշանակության «չեզոք տներ»՝ երեխաների ու կանանց համար: Երեխային հանձնում էին վրլյակ շրջանի ֆրանսիացի կառավարչին: Եթե որևէ կասկած չէր լինում երեխայի քրիստոնյա ծագման հարցում, երեխան փրկվում էր որբանոցում, հակառակ պարագայում երեխան փարվում էր «չեզոք տուն», ուր մնում էր առավելագույնը մեկ շաբաթ:¹⁵⁵

Նշենք, որ 1919թ. սեպտեմբերին Դամասկոսում իսլամ ընդհանրության հավաքված կանայք ու երեխաները կազմում էին միայն 10 փոկոսը նույն փարածքում իսլամ ընդհանրությունը պահպողների թվի համեմատությամբ:¹⁵⁶ Արարներին շար հաճախ զայրացնում էր այն փաստը, որք ազատագրված այս կանայք իրենց իսլամ ամուսնություններից ծնված երեխաներին ուզում էին իրենց հետ փանել:

1919թ. փետրվարին Հալեպում նման կանանց համար ապաստարան է ստեղծվում, որի նյութական ապահովածությունը և ղեկավարությունը 1920թ. փետրվարից ստանձնում է ՀԲԸՄ-ը: Նմանօրինակ ապաստարան էր հիմնվել Դամասկոսում դեռևս 1919թ. հունվարին: Ապաստարանն ապահով վայր էր, ուր ընդունվող հայ կանայք վարահ էին, որ փրկի իսլամ ընդհանրությունը չէին կարող իրենց կրկին առևանգել: Բայց այսպեղ խնդիրը երկկողմանի էր, կարելի էր ասել նաև եռակողմ. կանանց դուրս բերումը իսլամական միջավայրից, կնոջ ցանկությունը հայությանը վերադառնալու և երրորդ ու ամենալուրջ խնդիրը՝ արդյոք համաձայն էր հայությունը նրան ընդունել: Եղև են բազմաթիվ օրինակներ, երբ հայ կանայք, չկարողանալով

¹⁵⁴ «Եփիկիսա», 27.06. 1919:

¹⁵⁵ Այս տան կառավարիչն ուներ հայ և թուրք օգնականներ: Եթե մեկ շաբաթվա ընթացքում երեխայի քրիստոնյա ինքնությունը չէր հաստատվում, նա հանձնվում էր իսլամ ընդհանրության: «Չեզոք տները» գործում էր նաև կանանց, հարկապես «նիքահով» ամուսնացածների համար: Որոշվել էր այդպիսիներին պահել «չեզոք տներ» 15 օրից մինչև մեկ ամիս, որից հետո նրանք պետք է հստակ որոշեին՝ ցանկանում են վերադառնալ իրենց հայրենակիցների մոտ, թե՛ ոչ:

¹⁵⁶ Թաշնեան Վ., Վերակերպել ազգը ..., փոխ «Երթ», հ. 2, էջ 168:

համակերպվել իրենց նոր կարգավիճակին և պայմաններին, որոշել են դուրս գալ ապաստարանից ու վերադառնալ իրենց իսկամտության մոտ:

Շար ու շար հայեր անպարվություն էին համարում նման կանանց հավաքագրել և, հարց էր ծագում, կարիք կար, որ այդ կանայք վերադառնան կամ ինչ դեր կարող էին նրանք ունենալ հայ ազգի վերակերպման հարցում: Կարելի է ենթադրել, որ կար այն համոզմունքը, որ բռնի ամուսնություններն այդ կանանցից խլել էին ազգային ինքնության ամեն մի զգացում: Ահա այսպես նկատում ենք որոշ սկզբունքային հակասություններ՝ հայ որբերին ու կանանց վերադարձնելու խնդրում: Այն առանձնաշնորհ վերաբերմունքը, որ փառվում էր որբերին վերադարձնելու համար, կանանց պարագայում վերապահությամբ էր կատարվում: Նույն փրամաքանությամբ նրանք համոզված էին, որ այն, ինչ հնարավոր է կերպել որբերի ճակատագրի, անհետք է հասնել հայ կանանց պարագայում: Այսպիսի մրաձեղակերպ նկատում ենք Մ. Նաթանյանի մոտ, ով 1919թ. հունիսի թվակիր նամակում ակորդադառնում է հայ կանանց հավաքագրման հարցին. «Աղջկանց մեծերը և կիները եթե կ'ուզեն գալ, խնդիր չկայ: Իսկ եթե չեն գար, խնդիր չկայ նորէն, աղեկ կ'ընեն փողերնին կրկին մնալով: Անոցմ: ալ օգուտ չկայ մեզ»:¹⁵⁷

Այս փեսակ կանանց նկատմամբ անհանդուրժող վերաբերմունք նկատում ենք նաև դանիացի միսիոներ Կ. Եփիմեի գործունեության ընթացքում: Նա նման փեսակեր է արքայապարտ Տալեայի առաջնորդ Ա. Սյուրմեյանին գրած նամակում. «Սրացայ ձեր նամակը Երանիկ կոչվող կնոջ մասին: Կը ցախմ Ձեզի յայտնելու, որ կարականապես կ'մերժեմ ընդունիլ իսլամ երեխաները... գուր հայկական փեսանկին: չեմ կրնար ընդունիլ այս խառնածին երեխաները»:¹⁵⁸

Կարեն Եփիմեն և նրա գաղափարակիցները մրավախություն ունեին, որ այդ երեխաների թուրք, արաբ և թուրք հայրերն ինչ-որ մի ժամանակ կպահանջեին իրենց զավակներին:

Կա ևս մեկ դեպք, երբ «կիրուամ երեսներով Նորիցան» արաբ ամուսնու մոտից փախչում է իր հարազատների մոտ՝ Քեսաբ, բայց «ասոր կիրուամները, շարժումները ահագին մեկնաբանութեանց և բաշքշուկի փողիք կու փային»: Տասարակության համար նա արդեն «կիրուամ երեսներով կին էր, պեղեմի աւելուցը»:¹⁵⁹ Նրա նման շարերը չեն կարողանում հեղ վերադառնալ հայությանը:

¹⁵⁷ Թաշճեան Վ., Վերակերպել ազգը ..., փն «Երթ», հ. 2, էջ 189:

¹⁵⁸ Նշվ. աշխ., էջ 190:

¹⁵⁹ Արվեստ Գ., Յկեանս նահապարակութիւն, Այնճար, 2005, էջ 174:

Տարկ ենք համարում նշել, որ չնայած սկզբնական դժվարություններին՝ հայ կանանց չհանձնելու, նրանց հայությանը վերադառնալու առաջարկի մերժմանը, շարերն են անցել այդ ճանապարհով, կարողացել են ինքնահաստատվել ու շարունակել իրենց կյանքը հայության մեջ:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ հայ Կարագիւրների մի զանգված, ապրելով արաբական միջավայրում, սովորում էր նրանց կենցաղին: Եղել են դեպքեր, երբ Սիրիայի կառավարության, հայկական, Ֆրանսիական կողմերի պահանջներով հայերին հանձնելու հրաման է փրվել, հայերն իրենք չեն ուզել կրկին վերադառնալ, անգամ փախչել են: Մնալով անապարներում, ոմանք կրոնաւիոխ են լինում: Նրանք ժամանակի ընթացքում համակերպվում են իրենց ներկային ու միգրացի վերադարձի պարագայում ապագայի անորոշությունից դրդված մնում են՝ գնահատելով արդեն իրենց ունեցած ձեռքբերումը: Նման հայ կանայք բազմիցս նշել են. «Չենք կրնար ուրանալ, մենք հայուհիներս որ մեծաւ մասամբ վայելեցինք արաբներու վեհանձնութիւնը եւ բարիքները...իբր գործուեայ փանորիկիներ արժանացանք իրենց գնահատականին»:¹⁶⁰

Արաբների կողմից հայերին փրկելն ազգային փեսանկյունից մի քանի մեկնաբանություն ունի: Բնականաբար, հայ ժողովրդի ինքնության պահպանման համար առավել ցանկալի փարբերակն այն էր, որ արաբները, փրկելով հայերին, որպես պարտադիր պայման նրանց հանձնելին, սակայն, որոշ դեպքեր ցույց են տալիս, որ նրանց միշտ չէ, որ վերադարձրել են, իսկ ցավալին այն է, որ հայերը իրենք չեն ցանկացել վերադառնալ: Այսպիսով, հայության այդ շերտը կորցրել է իր ազգային ինքնությունը՝ դադարելով պարկանել իր էթնիկ խմբին:

Արաբների կողմից որբահավաք կազմակերպելը, հայ երեխաներին օգնություն ցուցաբերելը մի քանի մակարդակներով էր իրականանում: Արաբները հաճախ օգնություն են ցուցաբերել հայ Կարագիւրներին՝ իրենց իսկ շահերից ելնելով: Որդեգրելով հայ երեխաներին ու կանանց՝ նոր աշխատող ձեռք էին ավելացնում. մյուս կողմից՝ կարող էին գումար վաստակել՝ հեղափոխում նրանց վաճառելով: Սակայն առավել համարարած բնույթ է ունեցել հայ որբերի ու կանանց հավաքագրման աշխատանքներում արաբների բարյացակամ վերաբերմունքը: Արաբ բնակչությունը և Ֆեյսալի կառավարությունը հերոնդական քաղաքակառույցն են վարել, ինչն ապահովել է հնարավորինս շար երեխաների ու կանանց վերադարձը հայկական միջավայր: Աշխատության շրջանակներում բերված արաբների օգնության բազմաթիվ փաստերն արժեւորում են արաբ ժողովրդի բարեկամական մոտեցումը հայերի նկատմամբ:

¹⁶⁰ ՏԼ-Զօր, Աղ.փէն վերապրողներ, էջ 146:

Այսպիսով, նշված ողջ ժամանակահատվածում արարների օգնությունը փիրապետող է եղել, իհարկե, գրանցվել են որոշակի վայրիվերումներ, որոնք պայմանավորված են եղել քաղաքական խնդիրներով: Մինչև 1918թ. փիրող սովի մթնոլորտն արաք ընդհանիքներին հնարավորություն չէր տալիս երկար ժամանակ հյուրընկալել գաղթականներին, բայց կար ավելի լուրջ պատճառ՝ իշխանությունների հավաքանքը, փորձերը խոչընդոտելու ցանկացած մարդասիրական նախաձեռնություն: Այնուհետև՝ Ֆեյսալի իշխանության փարիներին կառավարության կողմից ընդունված որոշումներն ու հերետոգականությունը պայմանավորում էին որբահավաք աշխատանքների հաջողությունները, իսկ Փրանսիական մանդատային իշխանությունների փարիներին կարծես անփոփոխում ու ի մի էին բերվում այդ աշխատանքները, շեշտը դրվում էր երեխաների փեղավորման ու որբանոցներում նրանց կյանքի ապահովության խնդիրների վրա:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՎ ՄԵՔՔԱՅԻ ՇԵՐԻՓ, ԷՄԻՐ ԱԼ-ՆՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԱԼԻ ՈՒՂԵՐՉՆԵՐԸ

2.1 ՄԵՔՔԱՅԻ ՇԵՐԻՓ, ԷՄԻՐ ԱԼ-ՆՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԱԼԻ ՈՒՂԵՐՉՆԵՐԸ. ԱՆԴՐԱԴԱՐՁ ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻՆ

Սիրիայի արաբ ժողովրդի օգնությունն ակնհայտ էր ցեղասպանության առաջին փուլներից կեսը, երբ հայ փարագիրները հասնում են սիրիական անապատները, ուր «նրանց անխուսափելի մահն էր սպասում»¹⁶¹ ու «մարդկային ուրվականների նման քայլում էին Միջագետքի անապատներով»:¹⁶² Նայ փարագիրները կարճ ժամանակում կարողանում են արաբների բարյացակամ վերաբերմունքին արժանանալ, որին նպաստում էր երկու ժողովուրդների՝ թուրքական քաղաքականության գոհը լինելու գիտակցությունը: Այս գաղափարը հանդիպում ենք մի շարք արաբ պատմաբանների աշխատանքներում, համաձայն որի՝ հայերն ու արաբները թրքացման ու կոտորածների զոհ են եղել:¹⁶³

Այս գլխում փորձ է կատարվում քննարկել Մեքքայի հոգևոր առաջնորդ շերիֆ Նուսեյն իբն Ալիի դիրքորոշումը հայ փարագիրների նկատմամբ: Որպես իսլամական հասարակություն՝ արաբների համար որոշիչ էր իրենց հոգևոր և աշխարհիկ առաջնորդի կարծիքը: Իսկ այս պարագայում վերջինս անմիջական ազդեցություն ուներ Սիրիայի արաբ ժողովրդի վրա՝ հաշվի առնելով ժամանակի քաղաքական անկայուն իրավիճակն ու նրա որդու՝ Ֆեյսալի, փվյալ փարամաշոջանում ունեցած դերակատարությունը:

Նշված ժամանակահատվածում արաբ ժողովրդի բարեկամական վերաբերմունքն ավելի հաստատվում է դառնում և նրանց օգնությունն ավելի պաշտոնական բնույթ է ստանում Մեքքայի շերիֆ ու էմիր Նուսեյն իբն

¹⁶¹ Санд А., Восстание арабов в XX веке, Москва, 1964, стр. 79.

¹⁶² . 66 . محمد رفعت الامام، القضية الارمنية في الدولة العثمانية 1878-1923، القاهرة، 2002، ص 66 .
Մուհամմադ Ռիֆաթ Ալ-Իմամ, Նայիական հարցը Օսմանյան կայսրությունում 1878-1923թթ., Կահիրե, 2002, էջ 66:

¹⁶³ صالح زهر الدين، أصالة العرب والوفاء الارمني، ص 245.

Սալեհ Զահր Ադ-Դին, Արաբների անկեղծությունն ու..., էջ 245:

نعيم اليافي، مجازر الارمن وموقف الرأي العام العربي منه، ص 76.

Նայիմ Ալ- Յաֆի, Նայերի ցեղասպանությունն ու..., էջ 76:

Ալիի 1916թ. հունիսի 26-ի և 1917թ. մարտի ուղերձներից հետո:¹⁶⁴ Բացի այս երկու ուղերձներից Շերիֆը 1918թ. ապրիլին /հիջրայով՝ Ռաջաբ 18, 1336թ./ հապուկ ուղերձ-հրովարպակ¹⁶⁵ է գրել Էմիր Ֆեյսալին և Աբդ Ալ-Ազիզ Ալ-Ջարբային, ուր պատգամել է օգնել ու աջակցել հայերին: Հարկապես վերջին ուղերձ-պատգամը հայ փարագիրների համար բացառիկ կարևորություն ունեցող փաստաթուղթ է, քանի որ այն իր ժամանակի համար օրենքի ուժ է ունեցել և հայ փարագիրների փրկության գործում մեծ դեր է կատարել:

Նշված ժամանակահարվածն ավելի հստակ պարկերացնելու համար հարկ է անդրադառնալ երկրորդբակյան քաղաքական վարքաբանությանը, որն իր ծրագրերի իրականացման համար չէր խորշում նաև կրոնական գործունի շահարկումից, չնայած արաբները միշտ իսլամն իրենց մենաշնորհն են համարել՝ հիմնվելով այն փաստի վրա, որ Մուհամմադին Ղուրանն արաբերենով է արվել՝ որպես Ալլահի հավերժական ու անփոփոխ խոսք: Հարկ է նշել նաև այն փաստը, որ գրեթե բոլոր արաբ պարմաբաններն իրենց աշխատություններում հստակ փանում են գաղափարական այն գիծը, թե իսլամն ու թուրանականությունն անհամարեղելի են: Արաբ մրավորականությունը համոզված էր, որ իսլամը մի ուղղություն է, իսկ թուրանականությունը՝ մեկ այլ, որն ամենևին կապ չունի իսլամի հետ:¹⁶⁶

Ֆայեզ Ալ-Ղուսեյնը «Ջարդերը Հայաստանում»¹⁶⁷ գրքի վերջաբանում գրում է. «Ես հաստատում եմ, որ հայերի հետ կատարվածը միայն «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարճառով է եղել: Նրանք այդպես են վարվել հայերի հետ՝ ելնելով իրենց ազգային ֆանատիզմից ու նրանց նկատմամբ արելությունից: Իսլամը չի արդարացնում նրանց գործողությունները»:¹⁶⁸ Նեղինակը կոչ է անում բոլոր մուսուլմանների ջրկուրել երկրորդբակյան կառավարությանը, այլապես նրանք էլ մաս-

¹⁶⁴ المصادر العربية حول جريمة ابيادة الارمن، بيروت، 1988، ص 11-26

Արաբական աղբյուրները հայերի ցեղասպանության վերաբերյալ. Բեյրութ, 1988. էջ 11-26:

¹⁶⁵ مروان المدوار، الارمن عبر التاريخ، بيروت، 1982، ص 657
Մարուան Ալ-Մուդաուար, նշվ. աշխ., էջ 657:

¹⁶⁶ نعيم اليافي، خليل الموسى، نضال العرب و، ص 67-68
Նայիմ ալ Յաֆի, Խալիլ ալ Մուսա, Արաբների ու հայերի պայքարն ..., էջ 67-68:

¹⁶⁷ 1991 فانز الغصين، المذابح في أرمينيا، حلب،
Գիրքն առաջին անգամ լույս է փոսել 1917թ. Կահիրեում: Գիրքը թարգմանվել և փոստգրվել է ֆրանսերեն, անգլերեն /Լյու-Յորք, 1918թ./, գերմաներեն /Յյուրիխ, 1918թ./ և հայերեն /Նոր Զոռղա, 1920/:

¹⁶⁸ فانز الغصين، المذابح في أرمينيا، ص 58.

Ֆայեզ Ալ-Ղուսեյն, Ջարդերը Հայաստանում, էջ 58:

նակիցը կդառնան այդ ոճագործությանը, որի հավասարը չկա պարմության մեջ: Ֆայեզ Ալ-Ղուսեյնը իր հուշերն ավարտում է հետևյալ մտքով. «Մի կառավարություն, որը գործում է նման ձևով, չի կարող իսլամական համարվել, ոչ էլ իրավունք ունի դրան հավակնելու»: ¹⁶⁹ Նրա կարծիքով երիտթուրքական կառավարության ոճագործությունները չեն կարող համարվել ոչ կրոնական ֆանատիզմի, ոչ էլ իսլամական արմատականության դրսևորման ձև:

Միաժամանակ հարկ է նշել, որ երիտթուրքական կուսակցության վերևախավի գերակշիռ հարվածն ամենևին կրոնականացված չէր: Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Ն. Մորգենթաուն Թալեթի հետ իր անձնական շփումների հիման վրա հավաստիացնում է. «Թալեթի համար լրիվ միևնույն էր իսլամը, քանի որ կուսակցության առաջնորդների մեծամասնությունը ծաղրում էր բոլոր կրոնները»: ¹⁷⁰ Այսինքն՝ երիտթուրքերը վկայակոչում և օգտագործում էին իսլամը, եթե դա համապարասխանում էր իրենց շահերին: Իրականում, աթեիստ լինելով հանդերձ, երիտթուրքերն «ընդհանրապես երկրի կառավարման ինստիտուցիոն իսլամի փարբերակը, և նրանց նման մտրեցումը բացառվում է նրանով, որ այս կերպ կարող էին իսլամը՝ որպես գործիք օգտագործել»: ¹⁷¹

Երիտթուրքերի կարարած գործողությունների ու իսլամի սկզբունքների հակասությանն անդրադառնում էին ժամանակի քաղաքական գործիչներ, պարմաբաններ, հրապարակումներ էին արվում մամուլում: «Օսմանյան կայսրությունը դուրս էր եկել անգամ թնկրատիայի սահմաններից: Նրա քաղաքականությունը հավասարապես ուղղված էր հավատացյալների ու անհավատների դեմ: Նրանք իշխում էին արելությանը, թշնամանքով ու դրանք ամբողջությամբ ճաշակեցին քրիստոնյաները, հարկապես, հայ ժողովուրդը»: ¹⁷²

«Ալ-Մուսթաբթալ» թերթի 1916թ. մարտ 17-ի համարում կարդում ենք. «Թուրքերը կեղծիքով ուզում են իսլամի մաս կազմել, իսլամը մեղավոր չէ նրանց գործերի համար. նրանք ուզում են իսլամն անպարվել նման ոճիրներով»: ¹⁷³

¹⁶⁹ فائز الغصين، المذابيح في أرمينيا، ص 62.

Ֆայեզ Ալ-Ղուսեյն, Ջարդերը Նայասրատում, էջ 62:

¹⁷⁰ Dadrian V., նշվ. աշխ., էջ 5:

¹⁷¹ Նույն տեղում:

¹⁷² حنا سعيد الحاج، العلاقات الاسلامية الارمنية منذ الفتح العربي حتى اليوم، بيروت، 1997، ص 224.

Նանեա Մալիդ Ալ-Տաջ, Նայ-իսլամական հարաբերություններն արաբական երկրներում և նրանց միջև մեր օրերը, Բեյրութ, 1996, էջ 224:

¹⁷³ أريسيان نورا، أصدأ الإبادة الارمنية في الصحافة السورية 1877-1930، بيروت، 2004، ص 288.

Արիսյան Ն., Նայոց ցեղասպանության արձագանքները..., էջ 288:

1914թ. նոյեմբերին Օսմանյան կայսրության սուլթան¹⁷⁴ Մեհմեդ V-ը սրբազան պարերազմի՝ ջիհադի¹⁷⁵ որոշում է կայացրել «անհավարենրի ու հավարի թշնամիների դեմ», իսկ Շեյխ ուլ-Իսլամ¹⁷⁶ Նայրի էֆենդին հինգ ֆեթվայով¹⁷⁷ հաստատել է Անրանրի պետությունների դեմ հայտարարված սրբազան պարերազմը:¹⁷⁸ Ջիհադի կոչն այս է. «Ամեն մահմեդական աշխարհի որ մասի մեջն ալ բնակվի, թող հանդիսավոր երդում ընէ, որ զինք շրջապարող բրիստոնյաներն պիտի սպանէ առնվազն երեք կամ չորս հար, քանզի անոնք Ալլահի թշնամիներն են: Թող ձեզմէ ամեն մէկը զիտնա, որ իր վարձքը պիտի կրկնապարկուի Աստուծոյ կողմէն»:¹⁷⁹ Մեհմեդ V-ի հրովարտակն ուղղակի կոչ էր անում պայքարելու «սրբկացված իսլամի ազարագրման համար և պաշտպանել վրանգի ենթարկված Օսմանյան կայսրությանը»:¹⁸⁰

Երիտթուրքական կառավարության կողմից կրոնական մոլեռանդությունը օգտագործվում էր «ընդդեմ բրիստոնյա հպարակների, և առաջին հերթին՝ ընդդեմ հայերի»:¹⁸¹ Երիտթուրքական կառավարությունը շահարկում էր կրոնի գործոնը, ընդ որում՝ պետական մակարդակով: Կայսրու-

¹⁷⁴ Սուլթան՝ Օսմանյան կայսրության բարձրագույն քաղաքական առաջնորդ, միաժամանակ կրել է Խալիֆի տիտղոսը՝ հանդիսանալով նաև կայսրության գերագույն հոգևոր առաջնորդը:

¹⁷⁵ Ջիհադ արաբերենից թարգմանաբար նշանակում է ջանք, եռանդ գործադրել: Սկզբնական շրջանում ջիհադ հասկացությունն ունեցել է միայն իսլամի համար պայքարելու և պարանելու իմաստ: Իսլամում գոյություն ունի վոքը ջիհադ, որ ենթադրում է ջանք գործադրել անհավարենրին ճշմարիտ հավարքին՝ իսլամին բերելուն: Փոքր ջիհադը ճանապարհ է հարթում մեծ ջիհադին հասնելու ճանապարհին: Վերջինս բարոյական ջանքն է և ենթադրում է յուրաքանչյուր մուսուլմանի ներքին հոգևոր պայքարը՝ ինքնամաքրվելու և Ալլահին ավելի մոտ լինելու համար:

¹⁷⁶ Շեյխ Ուլ-Իսլամ՝ երկրի բարձրագույն հոգևոր առաջնորդ: 16-դ դարի առաջին կեսերից Շեյխ ուլ-Իսլամը ոչ միայն հոգևոր առաջնորդն էր, այլ պետության երկրորդ կարևոր դեմքը, ով ֆեթվաների միջոցով մեկնաբանում էր Սուլթանի քաղաքական ու սոցիալական որոշումները:

¹⁷⁷ Ֆեթվա արաբերենից թարգմանաբար նշանակում է՝ բացատրություն: Մուսուլմանական կրոնա-իրավական համակարգում նշանակում է հոգևոր բարձրագույն անձի՝ Շեյխ Ուլ-Իսլամի վճիռ, որը գալիս է մեկնաբանելու կամ գործնական կիրառության մեջ դնելու Շարիաթի որևէ գրվածք: Օսմանյան կայսրությունում Սուլթան-խալիֆի բոլոր կարևոր որոշումները պետք է հաստատվեին Շեյխ Ուլ-Իսլամի կողմից: 1909թ. Շեյխ Ուլ-Իսլամը ֆեթվա էր հրատարակել 1909թ. Ադանայի կուրորածներն օրինական ճանաչելու մասին:

¹⁷⁸ Բայրուրդյան Վ., Օսմանյան կայսրության պայմություն, Երևան, 2011, էջ 649:

¹⁷⁹ Չարեռանդ, Միացեալ անկախ Թուրանիա, Պոսթրև, 1926, էջ 135-136:

¹⁸⁰ Hovhannisyann N., The Armenian Genocide, Yervan, 2009, p. 446.

¹⁸¹ . 301، ص 1986، القاهرة، اليوم، البداية حتى اليوم، 1986، ص 301:

Ֆուադ Հասան Նաֆեզ, նշվ. աշխ., էջ 301:

թյան ռազմական նախարար Էնվերի՝ 1914թ. հոկտեմբերի 9-ի հեռագրի բնագրում նշվում է. «Մարել երկիրը անբաղձալիներեն, անհաապներու արիւնը անարժէք է. արկէ: անէի բարի գործ չկայ»:¹⁸²

Իսլամական այն գաղափարը, որ մուսուլմանները հայերին սպանելով կարարում էին իրենց կրոնական պարտքը գուցե և որոշումներ ընդունողների մակարդակում շարժառիթ չէր, բայց կարևոր գործոն էր 1915թ. ցեղասպանություն իրագործողների համար:¹⁸³

Երիտթուրքական կառավարությունն այդ հարցում համագործակցում էր նաև կրոնական բարձրագույն իշխանությունների հետ: 1915թ. Նայրի էֆենդիին փոխարինած նոր Շեյխ ուլ-Իսլամը՝ նոր Ֆեթվա է հրապարակել աշխարհի բոլոր մուսուլմանների համար, որով իրավական հիմք էր ստեղծվում Օսմանյան կայսրությունում ու Արևմտյան Նայսարանում հայերի կոտորածների հարցում: Դրանում նշված էր. «հաշվի չեն առնվելու ժերունիները, երեխաները, կանայք, հաշմանդամներն ու տկարները. բոլորը սպանվելու կամ ոչնչացվելու են»: Նման դեպքերում ֆեթվայի ընդհանուր բանաձևն է. «Թույլատրվում է սպանել անհավաքներին ու փրկել նրանց ունեցվածքին»:¹⁸⁴

Նարկ է նշել, որ իսլամական սկզբունքների համաձայն Դար ուլ- Իսլամի փարաձքների նկատմամբ ցանկացած ոտնձգություն կամ հարձակում թույլ է տալիս մուսուլմաններին ջիհադ հայտարարել հարձակվողների դեմ:¹⁸⁵

Երիտթուրքական կառավարությունը կարողանում է ճիշտ պահին ու ճիշտ ձևով շահարկել իսլամի գործոնը՝ հասարակության լայն զանգվածներին ուղղորդելով իր ցանկացած ուղղությամբ, որի հետևանքով էլ իրականանում է Նայոց ցեղասպանությունը: Պրոֆեսոր Լեոնարդ Գլիկի կարծիքով անկախ թուրքերի կրոնական համոզմունքներից, թուրք ոճրագործներն իսլամը դիտարկում էին իրենց հավաքական ինքնության բաղկացուցիչ փարր, միաժամանակ թրիստրոնությունը հավասարաչափ կարևոր փարր էր նրանց գոհերի ինքնության մեջ: Նայկական հարցն ուներ կրոնական և էթնիկ հենք:¹⁸⁶

¹⁸² Ղազարյան Ն., Յեղասպան թուրքը, Պէյրուք, 1968, էջ 27:

¹⁸³ Akçam T., նշվ. աշխ., էջ 34-35:

¹⁸⁴ Гуайта Дж., Шейх Файез эль-Гусейн о геноциде армян, Ислам непричастен к их деяниям, Москва, ФАМ, 2007, с. 53.

¹⁸⁵ Lüdke T. Jihad made in Germany, Ottoman and German Propaganda and Intelligence Operations in the First World War, Münster, 2005, p. 33.

¹⁸⁶ Glick L. B., Religion and Genocide, The Widening Circle of Genocide. Genocide: A Critical Bibliographic Review, vol. 3, Edited by Israel W. Charnay, Transaction Publishers, USA, 1994, p. 54.

Փաստորեն, ջիհադի հիմնական նպատակը Ռուսական կայսրությունում բնակվող մուսուլմանների շրջանում հակառուսական հուզումների հրահրումն էր, որը պետք է հեշտացներ թուրքական բանակի առաջխաղացումը կովկասյան ռազմաճակատում, սակայն հռչակված ջիհադը հմրորեն օգտագործվում է նաև Նայոց ցեղասպանության իրականացման ընթացքում:

Ջիհադի հայտարարումն անմիջական կապ ուներ արաբների հետ՝ որպես մուսուլմանների: Երիտթուրքերի ղեկավարությունը հստակ գիտակցում էր, որ ջիհադը կարող է հաջողության հասնել, եթե դրան միանան նաև արաբները: Երիտթուրքական կառավարությունը հաշվարկներ ուներ նաև այս ուղղությամբ. կրոնական փեսանկյունից դրդել արաբներին սիրիական անապատներում վերջնական լուծում փայ հայկական հարցին: Բայց այսպեղ նրանց հաշվարկները լիովին չեն իրականանում, քանի որ արաբական կողմը՝ Նուսեյն իբն Ալիի գլխավորությամբ այլ քաղաքական ծրագրեր ուներ:

Նաբկ է կշել, որ դեռևս 1914թ. նոյեմբերից Նուսեյնը մի քանի անգամ մերժել էր թուրքական կառավարության՝ ջիհադ հայտարարելու պահանջները, հակառակ Օսմանյան կայսրության Շեյխ Ուլ-Իսլամի՝ ջիհադի վերաբերյալ փրված համաձայնության: Դրանից հետո թուրքական կառավարությունը մզկիթների և մամուլի միջոցով հայտարարել էր, թե իբր Նուսեյնն օրհնել է ջիհադը:¹⁸⁷ Նուսեյնի՝ շերիֆի պատվավոր փորձը,¹⁸⁸ նրան ուղղված ջիհադ հայտարարելու պահանջը վկայում են նրա հոգևոր և քաղաքական հեղինակության մասին:

Նշված ժամանակահատվածում բարդ էր Սիրիայի և, ընդհանրապես, Օսմանյան կայսրության փրապետության փակ գրնվող արաբների իրավիճակը: Սկսված Առաջին համաշխարհային պատերազմը, ջիհադի հայտարարումը, Սիրիայում Ջեմալ փաշայի վարած քաղաքականությունն աստիճանաբար ժողովրդի մոտ ընդվզելու փրամադրություն էին առաջացնում: Վերջինիս համար արաբ գործիչ Ասադ Մուֆլահ

¹⁸⁷ Лазарев М. С., Крушение турецкого господства на Арабском востоке 1914-1918. Москва, 1960, с. 96-97.

¹⁸⁸ Նուսեյնը կրում էր շերիֆ փորձը, քանի որ Նաշիմյան ցեղից էր սերում ու համարվում էր Մուհամմադ մարգարեի անմիջական ժառանգներից: Երիտթուրքական կառավարությունը, նպատակ ունենալով նրան օգտագործել իր ծրագրերի իրականացման համար, 1908թ. Նուսեյնին նշանակել է Նիջազի՝ մուսուլմանների համար կարևոր այդ նահանգի կառավարիչ՝ էմիր: Նախքան այդ արաբական աշխարհում հոգևոր հարգանք վայելող առաջնորդը, Մուլթան Աբդուլ Նամիդ II-ի հրամանով, իր չորս որդիների հետ միասին, սրիաված էր բնակվել Կ.Պոլսում:

Դադիրը¹⁸⁹ բերում է երկու պարճա՝ կրոնական և ազգային:¹⁹⁰

Արաբների ապստամբության գաղափարի ամրապնդմանը նպաստում է Ջեմալ փաշայի վարած քաղաքականությունը: Դեպքերի ականաբես և մասնակից Ֆայեզ Ալ-Ղուսեյն իր «Բռնություններ Սիրիայում, Իրաքում և Նիջազում» գրքի «Սիրիացիների կախաղանները և նրանց ոչնչացումը» գլխում գրում է. «Թուրքական կառավարության որոշումը՝ ժխտել ցանկացած ազգային զգացմունք, ոչ թուրք ժողովուրդների մեջ փաբբեր ձևերով է իր դրսևորումները ստանում: Նայերին ֆիզիկական ոչնչացմամբ, արաբների պարագայում նրանք ոճի բազմազանությունը հիմք ընդունեցին»:¹⁹¹ Թուրքական կառավարությունն արաբ զինվորներին հնարավորինս հեռու փեղեր էր զորակոչում, ժողովրդին սովի էր մատնում, հայրենի ու անվանի ընդհանրություններին Անապոլիայի խորքերն էր ուղարկում: Սովի մատնելով Սիրիայի և Լիբանանի բնակչությանը, Ջեմալ փաշան հայտարարել է մամուլում. «Չկա սով Սիրիայում», իսկ Կ. Պոլիս կատարած իր վերջին այցի ժամանակ հայտարարել է. «ով բողոքի, թե Սիրիայում ուրելիքի պակաս կա, նա սրախոս է, և քանի դեռ իրենց որդիներին չեն ուտում, ուրեմն լավ կացության մեջ են»:¹⁹²

Իսկ ավելի դաժան է նա վարվում արաբ ազգային-ազատագրական գործիչների հեղձ վերջիններիս 1916թ. մայիսին Դամասկոսի և Բեյրութի հրապարակներում կախաղան բարձրացնելով:¹⁹³ «Ջեմալ փաշան... կախաղան բարձրացուց քանի մը փասնյակ հայրենասերներու: Արիկա կարծես ազդանշան եղա Նիսեյի կողմէ՛ ծրագրուած ապստամբութեան»:¹⁹⁴

Առաջին համաշխարհային պատերազմի փարիներին Նուսեյնը, ակընկալելով Մեծ Բրիտանիայի ռազմական օգնությունը, նամակագրական կապ է հաստատում Կահիրեում Բրիտանական գլխավոր հանձնակատար և Եգիպտոսի փաստացի կառավարիչ Քիթցինների, իսկ 1915թ. նրան

¹⁸⁹ Ասադ Մուֆլահ Դադիրը եղել է օսմանյան փրիապետության դեմ ուղղված արաբական ազատագրական շարժման ակտիվ մասնակից: Նրա «Արաբների ապստամբությունը» ուսումնասիրությունն առաջին անգամ լույս է փնտել Եգիպտոսում, 1916թ.: Այս աշխատության մեջ մեծ փեղ է հատկացված նաև Նայկակյան հարցին:

¹⁹⁰ 188-189, ص 188-189, حلب، 1989، ثورة العرب، حلتب، 1989،

Ասադ Մուֆլահ Դադիր, Արաբների հեղափոխությունը, Նայկա, 1989, էջ 188-189:

¹⁹¹ فائز الغصين، المظالم في سوريا والعراق والحجاز، العقبة، 1918، ص 41.

Ֆայեզ Ալ-Ղուսեյն, Բռնություններ Սիրիայում, Իրաքում և Նիջազում, 1918, էջ 41:

¹⁹² Ֆայեզ Ալ-Ղուսեյն, Բռնություններ Սիրիայում, Իրաքում և ..., էջ 81:

¹⁹³ Նշվ. աշխ., էջ 50-51:

¹⁹⁴ Աղպաշեան Յովհաննես, Արաբական ազգային ազատագրական զարթոնքը, Պեյ-րուք, 1959, էջ 25:

փոխարինած Մակ-Մահունի հետ:¹⁹⁵ Մինչդեռ Բրիտանիան, Նուսեյնի հետ բանակցելուց բացի, գրեթե միաժամանակ բանակցում էր Բեյրութում ֆրանսերական գլխավոր հյուպարոս Ժորժ Պիկոյի հետ /1915թ. նոյեմբերից մինչև 1916թ. փետրվար/՝ նախապարբաստելով Անտանտի երկրների միջև արաբական երկրների բաժանման ծրագիրը:

Տեղյակ չլինելով Սալթա-Պիկոյի պայմանագրի¹⁹⁶ մասին, որը բացահայտ հակասում էր արաբներին փրված Անգլիայի խոստումներին, անգամ վերջիններիս կողմից չստանալով որևէ փաստաթուղթ՝ Նուսեյնը 1916թ. հունիսի 5-ին գիտված ապստամբության կոչ է անում՝ հայտարարելով. «Ապստամբության նպատակը ոչ թե մի փրկապետության փոխարինումն է մյուսով, այլ արաբական երկրների ազատագրումը, արաբ կառավարության սրբեղծումը, որը կվերականգնի մեր նախնիների փառքը»:¹⁹⁷

Այդ օրը Նուսեյնի որդիներ Ալին ու Ֆեյսալը Մեդինայի մուր Նուսեյնի անունից հռչակում են արաբների անկախությունը: Ապստամբները սրբեղծում են երեք բանակ՝ Ֆեյսալի, Աբդալլահի ու Ալիի գլխավորությամբ, և համագործակցելով անգլիական զորքի հետ, ստիպում թուրքերին 1916թ. երկրորդ կեսից բոլոր ճակատներում անցնել պաշտպանության: 1916թ. հունիսի 27-ին պաշտոնապես արաբական տարածքներն անկախ են հռչակվում: «Բարեգույք ու գթասիրտ Ասրծո անունով հայտարարում ենք, որ նա է մեզ առիթ շնորհել ապստամբելու, իր իշխանությամբ ու հզորությամբ օգնել անկախություն ձեռք բերել և նրա ջանքերը պսակվեցին կապարյալ հաղթանակով»:¹⁹⁸

¹⁹⁵ Վերջինս Լոնդոնից սրացված հանձնարարականի վրա հրապարակայնորեն հաստատում է, որ Մեծ Բրիտանիան պարբաստ է ճանաչել Արաբական թերակղզին որպես անկախ պետություն՝ Մերքայի և Մեդինայի վրա տարածվող ինքնիշխանությամբ: Նուսեյն թագավորը համաձայնում է արաբական երկրների անկախության ձեռք բերման ու արաբական խալիֆայության վերստեղծման պայմանով համագործակցել անգլիացիների հետ՝ Օսմանյան կայսրության դեմ նրանց մղած պայքարում:

¹⁹⁶ Սալթա-Պիկոյի պայմանագրի /մայիս, 1916թ./ համաձայն արաբական երկրները բաժանվում էին մի քանի գոտիների: «Ա» գոտին, որի մեջ մտնում էր Արևելյան Սիրիան և Նյուսահայի Իրաքը, համարվում էր Ֆրանսիայի ազդեցության գոտի: Այստեղ, ինչպես նաև «Բ» գոտրում Անգլիան և Ֆրանսիան պարբաստ էին ճանաչել և պաշտպանել արաբական «անկախ» պետությունը կամ պետությունների կոնֆեդերացիան, որը չէր կարող դուրս գալ նրանց ազդեցության ոլորտից: «Կապույտ գոտր» մեջ մտնում էր Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Մարդինը, Ուրֆան, Բերեջիկը, Դիրաբեքիքը և Նաբաթին, որն անցնում էր Ֆրանսիայի լիիրավ փրկապետության տակ: Մանրամասն տե՛ս Նովիանիսիայան Ն., Մարգայան Ն., Սիրիան անկախության համար մղված պայքարում, /1917-1946/, Երևան, 1975, էջ 24:

¹⁹⁷ Саид А., укз. соч., с. 61.

¹⁹⁸ المصائر العربية حول جريمة ابادة الارمن، ص 21

Արաբական աղբյուրները... էջ 21:

Նուսեյն իբն Ալին՝ իր առաջին՝ 1916թ. հունիսի 27-ի ուղերձում, հիմնավորել է իսլամի և երիտթուրքերի գործողությունների հակասությունների փեսակերը՝ բազմիցս հիշատակելով. «Նրանց կառավարությանը մթությունն է պարել», «ոչնչացնելով անմեղ ժողովրդին՝ նրանք չեն վախենում պարժից» կամ «նման վարչակարգն իսլամական հասարակության մեջ չի ունեցել իր նախադեպը»:¹⁹⁹ Ուղերձներում շեշտը դրվում էր իսլամական գործոնի վրա: Նշվում էր, որ թուրքերը լրիվ շեղվել են ճշմարիտ իսլամից, հեղհարար, նրանց գործողությունները չեն համապատասխանում իսլամի սկզբունքներին: Իսկ երբ բրիտանացիների աջակցությամբ արաբները սկսում են ապստամբությունը, պարզ է դառնում, որ «պանիսլամական դոկտրինն այլևս արժեք չունի»:²⁰⁰

Խոսելով թուրքական կառավարության քաղաքականության մասին, Նուսեյն իբն Ալին անդրադառնում է Միջագետքի անապատներ հասած անօգնական հայ ժողովրդին. «Նրանք իրականացրեցին հայ փղամարդկանց, կանանց, երեխաների ոչնչացումը՝ կենդանի թողելով նրանց մեկ փասներորդ մասը: Աստուծո Մարգարենն ասում է. «Ով ցավ պարճառի մուսուլմանների հովանավորության փակ գրկովող զինմիներին»,²⁰¹ ես նրա թշնամին կդառնամ»:²⁰² «...Ահեղ Դ-ապաստանի օրը նրանք պարասխան կրան մուսուլմանների ու զինմիների սպանությունների համար՝ առանց կողմնակի դատի ու դատավորների»:²⁰³

Նուսեյնը, հայերի հեղ պատահածը որպես նախադեպ ընդունելով, զգուշացնում էր արաբներին՝ խուսափել նույն ճակատագրից. «Նրանց արելությունը մեզ է հասել»:²⁰⁴ Որպես կռվան բերվում էր 1915թ. մայիսի 6-ին արաբ ազ-

¹⁹⁹ المصادر العربية حول جريمة ابادة الارمن، ص 12-13

Արաբական աղբյուրները....., էջ 12-13:

²⁰⁰ Melson R., նշվ. աշխ., էջ 164:

²⁰¹ Ահլ ալ-գիմմա՝ թարգմանաբար նշանակում է հովանավորյալներ: Դրանք այն այլադավաններն էին, ովքեր ընդունել էին մուսուլմանների իշխանությունը և ջիզյև /զլխահարկ/ վճարել, վերջինիս դիմաց ստանալով մուսուլմանների հովանավորությունը՝ թշնամիներից պաշտպանվելու, անձի և գույքի անձեռնմխելիության հարցերում: Ջիմմիների վերաբերյալ Մուհամմադ մարգարեն ասել է. «Ով նրանցից թեկուզ մի պարան վերցնի, ես նրա հակառակորդը կլինեմ Դ-ապաստանի օրը»: Ջիմմի համարվող համայնքներին թույլատրվում էր կարգավորել իրենց սոցիալական և կրոնական կյանքը, սակայն թրեական խնդիրներում պարտավոր էին ենթարկվել իսլամական կանոններին: Օսմանյան կայսրությունում մուսուլման և ոչ մուսուլման ժողովուրդների հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս նաև Akçam T., A Shameful Act, p. 7-8.

²⁰² المصادر العربية حول جريمة ابادة الارمن، ص 14.

Արաբական աղբյուրները....., էջ 14:

²⁰³ Նշվ. աշխ., էջ 13:

²⁰⁴ Նշվ. աշխ., էջ 18:

գային գործիչներին մահապատժի ենթարկելու փաստը: «Անխիղճ մարդիկ չէին կարող թույլ տալ կործանել այսքան կյանք մի հարվածով, եթե անգամ նրանք գազաններ լինեին»:²⁰⁵ Նշանավոր ցեղասպանագետ Ռ. Մելտոնի կարծիքով արաբների անջատումը հարվածում էր Օսմանյան կայսրության հեղինակությանն ու հզորությունը, մինչդեռ «Նայասփանի անջատումը Թուրքիայի համար կործանում /մահ/ էր նշանակում»:²⁰⁶

Բացի Ջուսեյնի վերոնշյալ ուղերձներից, որտեղ անդրադարձ է կատարվել հայ փարագիրներին, առավել կարևոր է 1918թ. ապրիլի Ջուսեյն իբն Ալիի պատգամը, որը սիրիական անապատներում հայ փարագիրների վերապրելու կարևոր գրավականն է համարվում: Այս փաստաթուղթն արդեն պաշտոնական հիմքի վրա է դնում արաբ ժողովրդի օգնությունը: Նա կոչ է անում մուսուլման աշխարհին բարյացակամ ու հոգաբար լինել հայ ազգի նկատմամբ, հաստատարելով, որ արաբական փեղակալական իշխանավորներից իրենց նահանգներում հայտնված հայ փարագիրներին պաշտպանել, հովանավորել և ամեն տեսակ մարդկային օգնություն ցույց տալ: Մեքքայի առաջնորդն իր ուղերձում Էմիր Ֆեյսալին ու Ալ-Ջազաիրիին հստակ պատգամել է. «Խնդրում ենք Ձեզ՝ պաշտպանել և հոգ տանել ձեր փարաձքների սահմաններում և ցեղերի մեջ ապրող Նալոբիկյան»²⁰⁷ հայ համայնքի յուրաքանչյուր անդամի. օգնել նրանց իրենց բոլոր գործերում և պաշտպանել նրանց այնպես, ինչպես կանեք ինքներդ ձեզ, ձեր ունեցվածքի ու երեխաների համար, քանի որ նրանց մուսուլմանների պաշտպանության տակ են գտնվում, զիմի են համարվում:²⁰⁸ Սա ամենակարևորն է, որ խնդրում ենք անել և հուսով ենք, որ կանեք՝ նկատի ունենալով Ձեր վեհանձնությունն ու հաստատարվածությունը»:²⁰⁹

Շերիֆի այս ուղերձն առաջին հերթին հայ փարագիրներին պաշտպանելու և օգնություն ցուցաբերելու կոչ էր, իսկ մյուս կողմից իր մեջ ուներ

²⁰⁵ المصادرات العربية حول جريمة ابادة الارمن، ص 15-16

Արաբական աղբյուրները..., էջ 15-16:

²⁰⁶ Melson R., նշվ. աշխ., էջ 11:

²⁰⁷ Նալոբիկյան անվանաձևը, հավանաբար, գալիս է Երուսաղեմի Սուրբ Նալոբ վանքի արաբերեն Տեր Յակոբ անվանումից:

²⁰⁸ Նաբլ է նշել, որ հայերը, Ալի ալ-գիմմա լինելուց բացի, համարվում էին նաև Ալի ալ-բիթար՝ այսինքն՝ Սուրբ Գիորգ ունեցող ժողովուրդ, որի մեջ մտնում էին քրիստոնյաներն ու հրեաները: Այս երկու պարագայում էլ հայերը մուսուլման ժողովուրդների կողմից իլամի սկզբունքներից ելնելով հովանավորյալ ժողովուրդ էին համարվում:

²⁰⁹ نعيم اليافي، مجازر الارمن وموقف الراي العام العربي منها، ص 68.

Նայիմ Ալ-Յաֆի, Նայերի կոտորածները..., էջ 68:

ներքին կոչ՝ Օսմանյան կայսրության դեմ պայքարի դուրս գալու, քանի որ նրանք, ըստ Շերիֆի, իսլամի անվան Կրակ ոճրագործություններ էին կատարում: Չնայած Հիջազի կառավարիչը նշել էր, որ ինքը թուրքերի դեմ պատերազմ է հայտարարել «ոչ միայն արաբներուն, այլև նաև Հայ ազգին համար ալ»,²¹⁰ բայց մի փաստ անհերքելի է, որ արաբների կողմից հայերին պաշտպանելու պարճառներից մեկն այն էր, որ արաբները, ի դեմս հայերի, դաշնակից էին Կրակում ընդհանուր թշնամու՝ թուրքական բռնապետության դեմ մղվող պայքարում:

Այնուամենայնիվ, այս փաստը որևէ կերպ չի խանգարում ըստ արժանվույն գնահատել Շերիֆ Նուսեյնի հայաստան գործը: Նա չի զլանում մարդասիրական մտրեցում ցուցաբերել հայ ազգի փարագիր զավակներին, երբեք չի անրեսում նրանց ազգային արժանիքները, քանի որ նրա մոտ «մարդկային գործունը բարձր էր կանգնած ցանկացած սոցիալական կարգի»:²¹¹

Նման բարդ իրավիճակում ինչ դիրքորոշում պետք է ունենային հայերը: Այդ ժամանակ հայ փարագիրների սոցիալական ծանր վիճակին գոմարվում էին նաև քաղաքական բարդությունները: Այսպես իրար էին բախվում արաբների, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի շահերը, քանի որ յուրաքանչյուրը ցանկանում էր իր դիրքերն ամրապնդել փարսաձաշրջանում: Ֆրանսիան ու Բրիտանիան մրցում էին Սիրիայում իրենց դիրքի ամրապնդման համար, Թուրքիան պատերազմում նահանջում էր, Նուսեյնը, հիմնվելով Բրիտանիայի Կրակ խոստումների վրա, ազատագրական պայքարի կոչ էր անում, մինչդեռ արաբները լիովին համախմբված չէին ապստամբության հարցում: Կային շարք արաբական ցեղախմբեր, որոնք իրենց դիրքերն անսասան պահելու համար կախօրոք պայմանավորվածություն էին ձեռք բերել անգլիական և Ֆրանսիական զինվորական բարձրատիճան անձանց հետ՝ նրանց աջակցելու պայմանով: Ահա այս բարդ քաղաքական իրադրության մեջ թուրքական կառավարության քաղաքականության հետևանքով հայ փարագիրները հայտնվում են բարդ իրականության մեջ. «Մեր միլիոններու դիակների մեջէն չէինք կրնար մեր դահիճ Թուրքերու ձեռքը սեղմել, իսկ Շերիֆը՝ թեպէտ չփորձուած բաղդ, սակայն կրնար մեզի օգտակար դառնալ, քանի որ նախ իր Կրակն էինք, երկրորդ՝ Շերիֆի ետեղ կար «մեր դարի պաշտպան -Բրիտանիայ» Անգլիան, երրորդ, բոլորովին նոր փորձանքի մը առջև էինք, այլևս հայ-քրիստոնէական չէինք, այլ «իսլամացած հայեր», հե-

²¹⁰ «Հայ ձայն», 29.11.1918:

²¹¹ صالح زهر الدين، أصالة العرب والوفاء الأرميني، ص 255

Սալեհ Զահր Ադ-Դին, Արաբների անկեղծություններ..., էջ 255:

լրեաբար մենք մեզմբ: մեկուսացած և մեր միջավայրին անհարազար»:²¹²

Տայեթի մեծամասնությունը, որն արդեն ականաարես էր եղել արաբների դրական վերաբերմունքին, ավելի հակված էր արաբական կողմի հեղհամագործակցելուն:

Նուսեյն թագավորի ուղերձը լայն արձագանք է գրել արաբական աշխարհում: Տեղի կառավարիչները, աշիրաթների առաջնորդները, սրանալով Նուսեյնի ուղերձը, օգնության ձեռք են մեկնել հայերին: Արաբական «Ալ-Աֆթար» թերթն անդրադարձել է արաբների ցուցաբերած օգնությանը և 1918թ. հունիսի 22-ի «Տայերը խաղաղությամբ են ապրում Սիրիայում» խորագրում գրում է. «Թուրքերը հալածել են հայ ազգի շար գավակների, ջարդել են ում պարահի. շարերը փախել են անապարներում բնակվող բեդվինների մոտ: Աերջիններս նրանց ազարել են թուրքերի ճիրաններից ու ապաստան րվել»:²¹³

1918թ. հոկտեմբերի 16-ին Սիրիայի բոլոր ազգերի հոգևոր առաջնորդների ու ավագանու ստորագրությամբ ու կնիքով Նուսեյն թագավորին ուղերձ է ուղարկվում, ուր հայրնում են, որ րեղի ժողովուրդը հավաարարիմ ու պարրասար է կարարելու քաղաքացիական բոլոր պարարականությունները: Այս ուղերձի րակ որպես հայկական կողմի ներկայացուցիչ ստորագրել է նաև արք. Ե. Չիլինկիրյանը:²¹⁴

Նուսեյնը նամակագրական կապ է պահպանել արք. Չիլինկիրյանի հեղ. հերաբթթրվել հայ րարագիրների դրությամբ: 1918թ. Նուսեյնը հեղյեյալ նամակն է ուղարկել Չիլինկիրյանին. «Աուքինի Տայրապել. Յեր ողջունի յայր աունևմ զարացումն գրութեան Ձերոյ. ես թէ: ազնիս զզացմուևք ցուցեալ ի նմա՝ մաս մի եևևթ են շևորհաց Ձերոց. մինչ Դուք աուսելոք օժրեալ զըրանիք» /10 շաարան, 1342, Ամմաս/:²¹⁵

Ներազայում՝ 1924թ. հունվարին, Նուսեյնն այցելել է Ամմաս, որրեղ կրկին հանդիպումներ է ունեցել արք. Չիլինկիրյանի և Տ. Աշող Վարդապելի, ասորի և դպրի եկեղեցականների հեղ: Նանդիպման ժամանակ Շերիֆը մեկ անզամ նս իր համակրանքն է հայրնել հայ ժողովրդի նկարմամբ: Նուսեյնն, ի նշան գոհունակության, անկախության երկրորդ ասրիճան է շևորհել արք. Չիլինկիրյանին, իսկ Տայր Աշողին՝ ջորրորդ: Այս իրաղարձության մասին գրել են նաև արաբական թերթերը:²¹⁶

²¹² Գալֆանան քահ. Կ., նշվ. աշխ., էջ 419:

²¹³ أريسيان نورا، أصدأ الإبادة الارمنية في الصحافة السورية، ص 269-270: Արիայան Ն., Տայոց ցեղասպանության արձագանքները... 269-270:

²¹⁴ Չիլինկիրեան Եղիշէ: Եպիսկ., նշվ. աշխ., էջ 66:

²¹⁵ Նույն րեղում:

²¹⁶ Նշվ. աշխ., էջ 69:

Նուսեյն թագավորի ուղերձի դրույթները հայերին պաշտպանելու վերաբերյալ Սիրիայում սկսել է իրականացնել նրա որդի Ֆեյսալն՝ ամենայն պատրաստանալովությամբ և հեղուկակամությամբ վերաբերվել հայ քաղաքացիների փրկության և վերապրելու խնդրին: Վերջինիս կարարած աշխատանքը հանգամանալի կներկայացվի հաջորդ գլխում:

Այսպիսով, Նուսեյն իբն Ալիի գլխավորած ապստամբության արդյունքում 1918թ. Սիրիայի ձեռքբերված անկախությունը մի կողմից նշանակում էր Սիրիայում և Լիբանանում օսմանյան դարավոր տիրապետության վախճանը, մյուս կողմից արաբների համար սկզբնավորվում էր պայքարի մի նոր և նույնքան լարված շրջան: Այդ նոր իրադրության մեջ էին դասավորվելու հայ-արաբական հարաբերությունները, վճռվելու էր հայ քաղաքացիների հեղափոխական պայքարը: Այս պարագայում, Նուսեյն իբն Ալիի ուղերձները, նրա հատուկ պատգամը եզակի ու շատ կարևոր փաստաթուղթ են հայ քաղաքացիների վերապրելու խնդրում: Սա ևս մեկ վկայություն է հայ-արաբական հարաբերությունների կայացած ու բարիդրացիական փաստն արձանագրելու համար: Անգամ եթե Նուսեյնը քաղաքական որոշակի դիրավորություններ ունենար հայերի նկատմամբ, միևնույն է, դա ևս բխում էր հայ քաղաքացիների շահերից: Այնպես որ, հայ քաղաքացիների վերապրելու հարցում Նուսեյն իբն Ալիի դերը բավականաչափ մեծ է:

2.2 ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՅԵՂԱՆՄԲԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՆՅՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԱԲ

Սիրիայում հայ փարագիրներին օգնություն ցուցաբերելու խնդրին անդրադառնալիս պետք է հարուկ ուշադրություն դարձնել արաբական ցեղախմբերի՝ աշիրաթների ունեցած դիրքորոշմանը, քանի որ 1915-1916թթ. առաջինը նրանց հեղ շփվում են անապարաբնակ արաբները:

Նայ փարագիրներին իրենց հնարավոր օգնությունն են ցուցաբերել Կեդի բեդվիներն ու նրանց ցեղապետերը: Արաբական անապարային աշխարհը մտավորականություն չունեք, գրագիրությունը երկու անձի մենաշնորհն էր՝ շեյխի ու ցեղապետի: Ցեղի ոգին, միասնականության բարձր գիպակ-ցությունը, մեծահոգությունը, երախտագիպությունը և հպարտությունը, շար բարձր էին գնահատվում արաբական աշիրաթներում:²¹⁷

Սկզբնական շրջանում հայերի նկատմամբ թուրքերի իրականացրած գործողությունները փարակուսանք էին առաջ բերում արաբների մոտ: Նաուրանի շրջանի արաբական Սալթի ցեղախմբի ազդեցիկ ներկայացուցիչ Մեյֆ Ադ-Դինը փարակուսում է. «Եթե վաղը պատերազմը վերջանայ, Թուրքիա իր այսքան զուլումներուն համար ի՛նչ պատասխան պիտի փայ»:²¹⁸

Կարճ ժամանակ անց արաբ ցեղապետերը, զիպակցելով իրավիճակի բարդությունը և հայերին համարելով ինչ-որ չափով բախարակիցներ, հստակեցրել են իրենց դիրքորոշումը վերջիններիս նկատմամբ: Այսպես, իհարկե, շար կարևոր է արաբական աշիրաթներում հոգևոր հեղինակություն վայելող Նուսեյն իբն Ալիի ուղերձները, որոնք արաբ ցեղապետերի համար պարզամիջ առավել էին:

Սիրիական ցեղախմբերում չէին համարձակվում հայերին սպանել, չընայած թուրքական կառավարության հսկողությանը և սպառնալիքներին: Ցեղախմբերում հայփարաբվել էր. «Նանուն իսլամի, հանուն իսլաֆայության, հայասպանության համար նրանք կգրկվեն Աստուծո ողորմածությունից»:²¹⁹ Արևմտահայ գրող Ե. Օրյանը, արաբական միջավայրում

²¹⁷ نورس مرعي حسن، منطقة اللجاة الوعرة، دراسة تاريخية اثرية 2005، ص 128.

Նաուրաս Մորրի Նասան, Լաջաթի անջրդի փարամաշրջանը, 2005, էջ 128:

²¹⁸ «Սուրիահայ փարեցոյց», Գահիրէ, Ա փարի, 1924, էջ 288:

²¹⁹ هاني خليل، سوسيولوجيا العلاقات العربية السورية - الأرمينية، ص 207

أراراط، عدد خاص، مجازر الأرمن، صرخة دائمة في وجه الضمير العالمي، بيروت، 1995

Նանի Խալիլ, Արաբա-սիրիական-հայկական հարաբերությունների սոցիոլոգիան, էջ 207, փրն «Արարատ. բացառիկ», Նայոց ցեղասպանություն. հավերժական կոչ՝ ուղղված համաշխարհային խղճին, Բեյրութ, 1995:

ապրելով, անապարարենակ արաբների մասին գրում է. «Գիւրէի՝ ամենքն ալ աազակ էին, բայց մարդ չէին սպաննէր. թէ իրենց վրանը գացողը կը հիւրընկալէին. կը կերակրէին»:²²⁰

Ուշագրավ է Սիրիայի հյուսիս-արևելյան շրջանների ցեղապետների վերաբերմունքը հայ փարագիրների նկատմամբ: Ելնելով իրենց ունեցած ազդեցությունից և հեղինակությունից, վայելելով րվյալ գյուղի կամ շրջանի բնակչության հարգանքը՝ նրանք կարողացել են փրկել հայերին վերահաս կոտորածներից ու ապաստան փոխել: 1918թ. Մեքքայի էմիր ու շերիֆ Հուսեյն իբն Ալիի ուղերձը ստացել են Ալ-Ջարբա ցեղի առաջնորդները: Նրանց հրահանգվել էր օգնել փարագիր հայերին: Նրանց առաջնորդն էր Դահիան Ալ-Նադին: Սիրիահայ պարմաբան Ն. Արիսյանն անձամբ հանդիպել ու հարցազրույց է ունեցել նրա որդի՝ Նամիդ Ալ-Ջարբայի հետ, ով լավատրեղյակ լինելով րեղի ունեցած դեպքերին՝ մանրամասներ է հաղորդել իրենց աշիրաթում հայ փարագիրներին ցուցաբերված օգնության վերաբերյալ: «Նայրս նեղացել էր, որ Հուսեյն թագավորը նամակ է ուղարկել հայերին օգնելու համար: Մենք գիտենք մեր պարտականությունները, այնպես որ մեզ հանձնարարելու կարիք չկար: Նա, ով հարձակվեր հայերի վրա, մեր դատաստանից չէր կարող փախչել, ով ուզում էր լինել արաբ, թուրք»:²²¹ Նա նշում է, որ հայերի ջարդերի ժամանակ Սիրիայի հյուսիսային շրջանում բոլոր աշիրաթներն օգնել են հայերին, ինչով կարողացել են: Այդ աշիրաթներում յուրահատուկ մեխանիզմ էր մշակվել հայ փարագիրներին օգնություն ցուցաբերելու համար. «Զանի որ մենք մոտ էինք սահմանին և հզոր իշխանություն ունեինք, այն հայերը, որոնք մեր սահմանում հայտնվեցին, փրկվեցին անխուսափելի մահից: Նայերի մեծ մասը գալիս էր Մերդինից...Նայրս նրանց բաժանում էր ընտանիքների մեջ, որոնց տրվում էր ապահով բնակավայր և ապրուստ»:²²²

Շեյխ Նամիդ Ալ-Ջարբան հաստատում է, որ Կամիշլիի և սահմանակից փարաձքի բոլոր ցեղերը՝ Տայ, Ալ-Ջարբուր, Ալ-Բակկաթա և այլնպես փրկել են հայերին, առաջարկել են իրենց օգնությունը:

Կեսարիացի Միսակ Մարտիրոսյանին 8 փարեկանում փրկել են արաբները, դրանից հետո նա ապրել է բեդվինների վրանի տակ Նաթալա կոչվող անապարային գյուղում:²²³

Նկարագրողական է նաև Արամ Բեքրիկյանի դեպքը: Նա փրկվել է բեդ-

²²⁰ Օրեան Ե., նշվ. աշխ., էջ 300:

²²¹ أريسيان ثورا، غوائل الارمن في الفكر السوري، ص 91.

Արիսյան Ն., Նայկական սարսափները սիրիական մարտում..., էջ 91:

²²² Նշվ. աշխ., էջ 92:

²²³ ՏԼր-Չօր, Աղեբուն վերապրողներ, էջ 214:

վիճակների կողմից՝ վերանվանվելով Մալման Ալ-Դրբո, հերազայում դարձել է առաջապարտ Նամրա գյուղի աշիրաթապետ, որը գրվելու էր Նասաբեի շրջանում:²²⁴

Ալ-Ջարուր²²⁵ ցեղախմբից շարերն են հերևել իրենց առաջնորդի հրամաններին: Արուշ Մութաֆյանին, ում Կվել էին արաբական Խալաֆ անունը, որպեսզի է Ջարուր ցեղի արաբ մի կին: Ներազայում, երբ հայտնվել է նրա իսկական հայ մայրը, նա շար դժվարությամբ է թողել արաբ մորը: Նա պարմում է, որ պարերազմը վերջանալուց հետո անգլիացիները սկսում են հայերին վերցնել արաբների մոտից և նրան հանձնում են իր մորը և չնայած հայ մոր վերաբերմունքին, նա փորձ է արել կրկին փախչել անապարներում բնակվելու: «Վրանաբնակի ազար կեանքին վարժուած Կրան մէջ չէի ուզեր բնակուիլ և ... մեր ցեղախումբէն արաբներու հետ հասայ արաբ մօրս բով...»,²²⁶ բայց կրկին պահանջել են իրեն հանձնել: Ալ-Ջարուր ցեղի արաբների վերաբերյալ դեպքերի անատուն ականապետս²²⁷ իր վկայություններում նշում է. «Ջարուր ցեղի մարդիկ բարեհամբույր էին, պայքարում էին հայերին սպանել ցանկացողների դեմ, օգնում փախուստի դիմել, Խարուր գետն անցնել»:²²⁸

Նայերի նկարմամբ բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերել Ռաբբայի Ջարիթ աշիրաթի առաջնորդ շեյխ Ֆադի Ալ-Ֆաուադը: Նրա որդին՝ Մուհամմադ Ամին Ֆաուադն իր հոր մասին Ն. Արիսյանի հետ հարցազրույցում պարմել է, որ ցեղասպանության փորձներին հայրը փարագրյալների հարցերով զբաղվող պաշտոնյա էր՝ «աքսորի հսկիչ»: Նա իր վրա է վերցրել հայերին պաշտպանելու պարտախանապետությունը, խոչընդոտել է թուրքական կառավարությանն իրականացնել իր դաժան գործողությունները՝ օգրագործելով Ռաբբայի կայմակամների հետ ունեցած կապերը: «Երբ հայերը մեր Կրանն էին, ոչ-ոք չէր համարձակվում նրանց նեղություն Կրալ: Մահվան ճիբաններից փրկվածները մեզ մոտ մնում էին ամիսներ, անգամ Կրախներ շարունակ, այնուհետև անցնում Նալեպ, Բեյրութ, բայց երեխաները, հար-

²²⁴ Աբելան Գ., նշվ. աշխ., էջ 11:

²²⁵ Ցեղախումբի բնակավայրը Ֆեթղամն էր, ցեղապետը՝ Շեյխ Մուսալաթը:

²²⁶ Տէր-Ջօր, Աղլ.Կրէն վերապրողներ, էջ 108-109:

²²⁷ «Քրիստոնյաների աղերների ամփոփումը, /ականապետի վկայություններ/» գրքի հեղինակը ծնունդով Մարդիկից է, քաղղիացի կրոնավոր: Անցնելով փարագրության ճանապարհը՝ նա իր 1914-1919թթ. հուշերը մանրամասն գրի է առել, որը Կրալաբով է ամենայն հավանակությամբ մինչև 1925 թվականը: Նեղիկակը Իսհակ Արմալեն է. սակայն անունը գրքի վրա նշված չէ:

²²⁸ 365 ան, عيان، بقلم شاهد عيان، 1919-1914، نكبات النصاري

Քրիստոնյաների աղերների ամփոփումը, 1914-1919, /ականապետի վկայություններ/, էջ 365:

կապես, աղջիկները մնում էին մեզ մոտ, ոմանք փոխում էին կրոնը. եղել են դեպքեր, երբ վերադարձել են հայերի մոտ»:²²⁹ Միայն իր փան շրջակայքում 50 որբ հայ երեխաներ են ապաստանել: Այսպիսով, նա հսկայական ջանք էր գործադրում՝ պաշտպանելու փարագիրներին կտրորածներից ու ջարդերից:²³⁰

Սաբահ Ադ-Դին Ալ-Բաքջաջին հայերի նկարմամբ իր հոր ունեցած վերաբերմունքի մասին պատմում է. «Մով էր, երբ եկան հայ գաղթականները: Նայրս Սաբխա փարաձաշրջանի կառավարիչն էր: Նա իր փնտրիչության շրջանում օգոստոս ամսին արգելեց որևէ բռնություն թե՛ բնակչության, թե՛ փեղի բեղվիների կամ գորբի կողմից: Բացի իրենից եղան Եփրատի շրջանի շար բնակիչներ, որոնք հայերին բարյացակամ վերաբերմունք ցուցաբերեցին»:²³¹ Հիշում է, որ ջարդերի ժամանակ հայրն արգելել էր հարձակումներ գործել հայերի վրա, չնայած թուրքական իշխանությունների կողմից հրաման էր ստացել նվազեցնել վերջիններին թիվը:

Սաադ Ջադլու Ալ-Զաուաբիբին²³² հիշում է, որ իր պապը՝ շեյխ Աբդ Ալ-Նամիդ Ալ-Ջաբարին, Լյուսի անունով մի օրիորդի էր ապաստան փոխել փանը և Նալեպում սրեղծված համապատասխան կոմիտեի միջոցով նրա ճնողների հետ կապվելուց հետո միայն նրան թույլ է փոխել Ամերիկա մեկնել:²³³ Աբրահամ Ղուրբոջյանը, ով հերպագայում եղել է Թել Ալ-Բրաբի՝ Վարի գյուղի գյուղապետը, փրկվել է արաբական խաթուն ցեղի արաբների շնորհիվ:²³⁴

Ինչ վերաբերում է Ռաբբայի շրջանում բնակվող Ալ-Աջեյլի ընտանիքին, նրանք նույնպես բարյացակամ են եղել հայ փարագրյալների նկարմամբ: Այուաշ Աջեյլին այդ երկրամասի կառավարիչն էր և փարագիրների հսկիչը. Աբդ Աս-Սալամ Ալ-Աջեյլին իր «Ռաբբան և նրա հասարակական կյանքը» գրքում կշռում է. «Բազմաթիվ հայեր 1915թ. Ռաբբա եկան՝ փախչելով հալածանքից, ջարդերից, որոնք թուրքերն էին կազմակերպել: Աջեյլիների ընտանիքի հովանավորության փակ անցավ մոտ 150 ընտանիք»:²³⁵ Այդ մեծ ընտանիքի որդիներից շարերն ամուսնացան հայերի հետ: Նրանք բարձր

²²⁹ .144 غوائل الارمن في الفكر السوري ، ص

Արիսյան Ն., Նայիական սարսափները սիրիական մարքում..., էջ 144:

²³⁰ Նույն փեղում:

²³¹ Նշվ. աշխ., էջ 112-113:

²³² «Նալեպի հնագիտական ընկերության» կազմակերպության գլխավոր քարտուղար, գրող, բանասեր, դատավոր:

²³³ صالح زهر الدين، أصالة العرب والوفاء الارمني ، ص 402.

Մալեհ Ջահր Ադ-Դին, Արաբների անկեղծություն..., էջ 402:

²³⁴ Ճղյան Ն., Սրվերում մնացած կյանք, Երևան, 1991, էջ 60:

են պահում Ալ-Աջեյլիի անունը և Ալ-Ալուաշ Ալ-Աջեյլիի հիշատակը:²³⁵

Արաբական ցեղախմբերի դրական դիրքորոշումն է փաստել նաև Ֆալեզ Ալ-Ղուսեյնը. «...երբ մուսուլմանները հարձակվեցին, եղա մի քանի արաբական ցեղախմբերում ու րեսա, որ այնքան շատ հայ կանայք, երեխաներ ու տղամարդիկ կան, և արաբները բարյացակամ են նրանց նկատմամբ, չնայած կառավարությունն այսօր զգուշացրել էր հայերին սպանելու իրենց պարսկականության մասին, բայց ես երբեք չլսեցի, որ արաբական ցեղերում որևէ հայի են սպանել»:²³⁶ «Արաբական աշիրաթները և հայերը» ենթադրյալում գրում է. «Անգամ մի քանի արաբներ հայերին հանել էին ջրհորներից, բժշկել ու այսպիսով փրկել»:²³⁷

Մեծ հեղափոխություն է ներկայացնում Փարիզի «Արձագանգ» թերթում մի խումբ արաբ շեյխերի՝ 1916թ. հունվարի նամակն՝ ուղղված քրիստոնյա աշխարհին, որտեղ նկարագրում են Միջագետքի անապատներում հայերի իրական վիճակը. «...կը րեղեկագրենք այս կողմերու Նայոց սուկալի կացութեան մասին հերևյալ աչքառու խնդիրները: Կը գրենք Ձեզի, իբրև Բրիտանաց Զաղաքակիրթ ներկայացուցչի մը... Կը րարակուսինք, թե անոնք կրնան ապրիլ այս կացութեան մեջ, օգնեցէք անոնց, եթե ոչ անոնք կորսուած են, ... պատմութիւնը պիտ արձանագրէ: Ձեր անունը ոսկի րատերով»:

Նամակը վերջանում է հերևյալ կերպ.. «Մենք կը հասրարենք վերոհիշեալ գրութիւնների ճշմարտութիւնը և կը ստորագրենք իբրև Շեյխները ... նահանգի և գերատիրի շեյխ...», Փոխհրամանաւարար ուրիկան գորաց շեյխ...»:²³⁸

Անունները եշված չեն, կարելի է ենթադրել միայն, որ վերոնշյալ արաբ շեյխները բավականին ազդեցիկ են եղել՝ հաշվի առնելով այն փաստը, որ նրանց նամակը րեղ է հասել, դեռ ավելին՝ րպագրվել մամուլում 1916թ. հունիսին:

Արաբ բեդվինները հայերին օգնել են հնարավոր ամեն ձևով՝ հագուար են րվել, սնունդ, թաքցրել են իրենց վրաններում: Այդ ամենն ամփոփված է արաբների և հայերի կողմից գրված հուշագրություններում և վկայություններում: Իհարկե, այս գործընթացում շատ են եղել դժվարությունները, թուրքական իշխանությունների կողմից հայրենաբերվելու և պարծվելու մրավախությունը:

Այսպիսով, Միրիայի հյուսիսարևելյան շրջաններում, նաև Ռաբբայում

²³⁵ .121. أريسيان نورا، غوائل الارمن في الفكر السوري ، ص

Արիսյան Ն., Նայկական սարսափները սիրիական մրքում..., էջ 121:

²³⁶ .88. فائز الغصين، المذابح في أرمينيا ، ص

Ֆայեզ Ալ- Ղուսեյն, Զարդերը Նայսարսում, էջ 88:

²³⁷ Նշվ. աշխ., էջ 55:

²³⁸ «Արձագանգ Փարիզի» 10.06.1916:

ապրող արաբական ցեղերը, նրանց առաջնորդները, կարողացել են հայերին փրկել կոտորածներից: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ցեղապետների ազդեցիկ ու հեղինակավոր լինելու փաստը հաշվի առնելով, թուրք զինվորները չեն համարձակվել մուրեհալ նրանց մոտ ապաստանած հայերին:

Նայիմ Ալ-Յաֆին մեջբերում է հեյերյալ փաստը: Երբ Ջուդեյա փաշան 1916թ. փետրվարին՝ իր Դեյր էզ-Ջոր կապարած այցի ընթացքում արաբներից պահանջում է, որ արաբական աշիրաթները զրադվեն հայերի ոչնչացմամբ, արաբները «մերժում են նրան. անգամ իրենց մուրակայքում հայերին բնակության փոխել են փախիս»:²³⁹

Շար են վկայություններն ու փաստերն այն մասին, որ հայ փարագիրների ամենաստվար զանգվածն ապաստանել է Անազե և Շամմար ցեղախմբերի մոտ:²⁴⁰

Ցեղասպանությունը վերապրած ու անազե ցեղախմբի արաբների մոտ ապաստանած հայերի հուշերում կարդում ենք. «Թուրքական կառավարության կողմից հեթանոսական թրիստոնյա հայերի ու մեզ հովանավորող մուսուլման արաբների մեջ կար փոխադարձ համակրանք: Հարկ եղած դեպքում ներկայանում էինք նրանց անուններով ու սպրում ինչպես եղբայրներ»:²⁴¹ Վկայությունները փաստում են, որ անապարի ցեղերում, հատկապես Անազե և Շամմար ցեղախմբերում, առնվազը 5 հազար հայ բեղվիներ են եղել:²⁴²

Փաստորեն, հայ փարագիրները հաճախ արաբական աշիրաթներում էին հայրենվում իրենց իսկ կամքով, քանի որ այլընտրանք չունեին, որի արդյունքում նրանք արագ էին համակերպվում, ինքնզգրվում արաբական կենցաղին: Չնայած եղել են նաև այնպիսիները, որոնց համար դժվար էր համակերպվել վրանաբնակների օրենքներին: Դժգոհները, հիմնականում, փղաներ էին, քանի որ նրանց աշխատանքն ավելի ծանր էր ու իրենց փարիքին ոչ այնքան համապատասխան: Այնուհետև այդ փղաները, որոնք հեթանոսային որբանոցներում էին հայրենվում, ամեն փոքր աշխատանքից, անգամ՝ ծանրագույն, չէին խուսափում: Չնայած դրան զուգահեռ «ասպեդականությունը՝ իր անապարային առումով, մասնա որբերու մեջ դիրտած շարքայուն յարկանիշ մըն էր»:²⁴³

Աղջիկների պարագայում բեղվիների հետ ամուսնության փաստը

²³⁹ نعيم اليافي، مجازر الارمن وموقف الرأي العام العربي منها، ص 76.

Նայիմ Ալ-Յաֆի, Հայերի ցեղասպանությունը և ..., էջ 76:

²⁴⁰ Սիրմեկան արք. Ա., Պարմություն..., հ. Ա, էջ 501:

²⁴¹ Մարաֆյան Գ..., Եփրարից Ռիո Դե Լա Պլատա, Երևան, 2002, էջ 18:

²⁴² Տէր-Ջօր, Աղեփեն վերապրողներ, էջ 29:

²⁴³ Սիրմեկան արք. Ա., Պարմություն..., հ. Ա, էջ 506:

նպաստում էր, որպեսզի նրանք ավելի հեշտ հարմարվեն վերջիններիս կենցաղին: Մուշեղ Սերոբյանն ականապեսի իր հուշերում անդրադարձել է Անազև ցեղախմբի շեյխ Ֆեհեդի հետ իրենց ունեցած հանդիպմանը, որի նպատակը եղել է հայ կանանց ու աղջիկներին վերադարձնելը: Ննգօրյա բանակցություններից հետո շեյխը ներկայացրել է միայն հինգ կանանց, ընդ որում, միայն նրանց, ում նկատմամբ բացարձակ վարահույություն է ունեցել, որ պիտի մերժեն իրենց հայրենակիցների առաջարկը: Նայկական կողմին աջակցող անգլիական զինվորներն իրենց հարաբերություններն արաբների հետ չսրելու նպատակով չեն խուզարկել վրանները: Նեղինակը գրում է. «Կը պեսակցինք անոնց հետ, բայց կ'ուրանան հայ ըլլալին... պահ մը կը համոզուին, յեպոյ կը դրժեն»:²⁴⁴

Նման դեպքերին ականապես լինելուց հետո ավելի պարզառաբանված է թվում հայ և օտարերկրյա որբահավաք մարմինների՝ արաբների հետ ամուսնացած հայ կանանց վերադարձի խնդրին խիստ մուրեցում ցուցաբերելը: Շարտերը չեն վերադառնում բեդվինների վրաններից, և նրանց հարակ թիվը հնարավոր չէ ճշտել: Ցեղասպանությունը վերապրած Փառանձեն Պայանը գրում է. «Միայն Տէր Զօր քաղաքին մէջ արաբներու հետ ամուսնացած մօտ հազար հայ կանայք կային»:²⁴⁵ Իսկ Դեյր էզ-Զորի արաբ մի ոսրիկան, ում մայրը հայ է, հայտնել է. «Մեր նման 750 ընդամենիք հաշուած ենք»:²⁴⁶

1924թ. Աշխարանքի միջազգային գրասենյակը 1916թ. ջարդերից փրկված երեխաների վերաբերյալ կարարված ուսումնասիրության մեջ երկու եզրակացության է հանգել: Ըստ առաջինի՝ երեխաների թիվը Զազիրեի Ռ-աս ուլ-Այնի ցեղախմբերում 2000-ից ավելի էր, և երկրորդ, որ մեծ դժվարություններ ու բարդություններ էին գրանցվում այդ ցեղախմբերում որդեգրված երեխաներին վերադարձնելու ժամանակ, մանավանդ, երբ նրանք արդեն ժամանակի ընթացքում չափահաս էին դարձել, շարերն արդեն ամուսնացել ու երեխաներ ունեին: Անգամ նշվում է, որ նրանք շրջակա միջավայրին այնքան էին ադապտացվել, որ դժվար էր նրանց արաբներից փարբերելը:²⁴⁷

Արաբները համագործակցել են հայահավաք աշխատանքներ իրականացնող հայկական և միջազգային կազմակերպության ներկայացուցիչների հետ: Արդյունավետ համագործակցության օրինակ է հայ փարազիրների փրկավորման ու օգնության հարցերով զբաղվող դանիացի միսիոներ Կա-

²⁴⁴ Սերոբյան Մ., Դիպոմներ և դաբոմներ, Էջմի թրագրես, Պուրյութ, 1932, էջ 115:

²⁴⁵ Տէր-Զօր, Աղեպեն վերապրողներ, էջ 29:

²⁴⁶ Նույն փրկում:

²⁴⁷ جان شرف، القضية الارمنية في السلطنة العثمانية، بيروت، 1997، ص 211-212:

Շարիք Ջան, Նայկական հարցը Օսմանյան կայսրությունում, Բեյրութ, 1997, էջ 211-212:

րեն Եփիեի օրինակը: Նա հայասիավաք աշխարհաբաններն իրականացնում էր՝ համագործակցելով «Նայերի դանիացի բարեկամներ», «Դանիացի տիկնանց միություն» և «Գերմանական արևելյան առաքելություն» կազմակերպությունների, ինչպես նաև սիրիական իշխանությունների, արաբ ցեղապետների և շեյխերի հետ:

Արաբ ցեղապետների հետ ծանոթանալու և նրանց հետ կապ հաստատելու և համագործակցելու դժվարին գործը սրանձնել էր Եփիեի որդեգիր Միսակը: Նրա առաջին հանդիպումը Նալեայի մզկիթի շեյխի հետ էր, ով իր հերթին մի շաբթ այլ շեյխերի անուններ էր տալիս՝ խոստանալով անձամբ բարեխոսել նրանց հետ՝ «այս ասարվածահաճո գործն անարգել շարունակելու համար»:²⁴⁸ Նշվածների թվում էին նաև Նազրմ, Մըջեհմ, Նաջեմ²⁴⁹ փաշաները: 1921թ. Նյուսիսային Սիրիայի ցեղախմբի գլխավոր շեյխ Նազրմը համաձայնում էր օգտակար լինել և իր աջակցությունը բերել հայասիավաք գործին:

Նյուսիսային Սիրիայի Նադիդի, Բակկարա և Անազե ցեղախմբերի առաջնորդները նույնպես բարյացակամ էին տրամադրված այս գործին, «առանց անոնց կամեցողութեան եւ գործակցութեան ազատագրման գործը դժուարին ըլլալով մէկտեղ առաւել վրանգատոր պիտի ըլլար»:²⁵⁰ Ծանոթանալով հուշագրություններին ու վկայություններին՝ կարելի է փաստել, որ նրանք սպրտել են բարիդրացիական հարաբերություններով, իհարկե, պետք է նշել, որ հայ տարագիրները եղել են ցեղապետների ուշադրության, երբեմն էլ՝ հսկողության տակ:

Միսակն ամեն կերպ սիրաշահում էր Նաջեմ և Մըջեհմ փաշաներին, տեղական և ֆրանսիական իշխանության ներկայացուցիչներին՝ վրանախըմբերում խուզարկություններ էր կազմակերպում, հայտնաբերում արաբների, բրդերի մոտ գտնվող հայ երեխաներին և խոսքով, սպառնալիքով կամ դրամով վերադարձնում նրանց:

Նայերի տեղավորումն, ըստ Եփիեի վկայության, իրականանում էր սիրիական իշխանության նպատարավոր կեցվածքի շնորհիվ, որը «տեղատրաման եւ զարգացման նեցուկ եղաւ: Բայց առանց Նաջեմ պեյի ներկայութեան երբեք իրականացած պիտի չըլլար, ինչ որ հիմա գոյութիւն ունի»:²⁵¹ Նա իր ցեղակիցներին հայտարարում էր, որ հայերին վնաս չհասցնեն, նրանց կենդանիներին չսպանեն:

²⁴⁸ Չոլաքեան Յ., Բարեն Եփիե: հայ գողգոթային եւ վերածնունդին հետ, Նալեպ, 2001, էջ 53:

²⁴⁹ Որոշ հեղինակների մոտ հանդիպում ենք նաև Նաջեմ գրկաձևին:

²⁵⁰ Չոլաքեան Յ., նշվ. աշխ., էջ 53:

²⁵¹ Նշվ. աշխ., էջ 124:

Կ. Եփիեն կողմնակից էր հայ փարագիրներին գյուղական վայրերում վերաբնակեցնելու ծրագրին, քանի որ կարծում էր, որ քաղաքներում բնակվելը կհանգեցնի նրանց դեգրադացիային, մշակույթի և կրոնի կորստին:²⁵²

Անգլիացի Յոզեֆ Բարթեն²⁵³ իր շրջագայության ժամանակ եղել է Կ. Եփիենի ջանքերով հիմնադրված Թեյ Ալ-Արման և Թեյ Աս-Սիմեն գյուղերում, ուր բնակվել են շուրջ 270 հայեր, որոնք զբաղվել են երկրագործությամբ, անգամ ամբարտակ են կառուցել, որն այդ ժամանակներում անապարներում հազվադեպ հանդիպող երևույթ էր: Ամբարտակի շինության համար Նաջեմ փաշան որոշակի գումար է տրամադրել:

«Նաջեմ փաշայի բարի կամքը, արարների բարեկամությունը, հայերի երկրագործական հմտությունները, որին ավելանում էին Եփիենի նախաձեռնությունները և ֆրանսիական իշխանությունների դրական վերաբերմունքը, այս ամենը միասին դառնում էին «Նայասարանի» վերականգնման բարոյ խնդրի լուսավոր կերպերը»:²⁵⁴

Այսպեղ պեք է հաշվի առնել այն հանգամանքը, որ հայերի հաստատումը Նաջեմ և Մըջիեմ զարմիկների փարածքներում երկուստեք շահավետ էր, քանի որ վերջիններս փոխհատուցում էին իրենց հողերի և անասնաբուծության սուվորեցնելով բնակչության թիվն ավելացնել, ի դեմս հայերի հուսալի հենարան ունենալ և, ինչու չէ, նաև արարներին էլ երկրագործություն սովորեցնել: Եփիեն և Նաջեմ փաշան հայ փարագիրների մեջ տեսնում էին այն ներուժը, որը կնպաստեր արարների շրջանում նորամուծություններ հաստատելուն, անապարի արարներին նստակյաց կյանքին սովորեցնելուն:²⁵⁵

²⁵² Bjornlund M., Karen Jeppe, Age Meyer Benedictsens, and The Ottoman Armenians: National survival in Imperial and colonial Settings. Տե՛ս «Նայակազան Նայագիսրական Նանդև», հ. ԻԸ, Պեյրոթ, 2008, էջ 30:

²⁵³ Յոզեֆ Բարթեն բիրյանական "Friends of Armenia" հայանպասք կազմակերպության հանձնարարականով հեղափոխություն է իրականացրել հայաբնակ կենտրոններում՝ վերջիններիս մասին համապարփակ գեկույց կազմելու համար: Այդ նպատակով նա 1920-ականների սկզբներին իր շրջագայությունը սկսել է Աթենքից, այնուհետք եղել Մադրիդում, Կ.Պոլսում, Ջնյուռնիայում, Կիպրոսում, Լիբանանում, Սիրիայում ու Երուսաղեմում: Ալանսարեաի իր հուշերում նա կարևոր փաստեր և թվական տվյալներ է հաղորդում նաև Սիրիայի հայ փարագիրների վերաբերյալ:

²⁵⁴ Burt J., նշվ. աշխ., էջ 117:

²⁵⁵ Bjornlund M., նշվ. աշխ., էջ. 30:

Կ. Եփփեն պատրաստ էր աշխարհը ցանկացած վարչակարգի ու անհայրի հեղափոխության, որն իրեն թույլ կտար շարունակել իր գործունեությունը հայերի շրջանում:²⁵⁶

Այսպիսով, շարժումը հայ կանայք ու երեխաներ կարողացել են վերադառնալ իրենց հայրենակիցների մոտ, ինչը որոշ դեպքերում հնարավոր է դարձել արաբների բարի կամքի դրսևորման, որոշ դեպքերում՝ փրկագնի շնորհիվ, իսկ որոշ դեպքերում էլ՝ ուժի կիրառմամբ: «Նալեայի Դանիական ընկերության» Կոնստանդուպոլիսի համաձայնագրով 50 տոկոսը, եթե ոչ ավելին, Անազե և Շամմար ցեղախմբերից են եղել: Կարեն Եփփենի պարագայում հայահավաք գործին առանձնակի նպաստել է նրա համագործակցությունն արաբական ցեղերի առաջնորդների հետ, որին եկել է լրացնելու նրա՝ Ազգերի լիգայում ունեցած լիազոր ներկայացուցչի պաշտոնը, որով Եփփեն ձեռք է բերել գործելու ազատություն, նյութական միջոցներ և բաղաժանանք կշիռ: Դրան գումարվել է նաև նրա նվիրվածությունն ու փրկագին սահմանված մեկ օսմանյան ոսկին: Այս ամենն ամբողջապես օգտագործվել է ի նպաստ Սիրիայում ապստամբության: Չնայած նման մեծածավալ գործունեությանը, 1923թ. սեպտեմբերին Բրյուսելի համալսարանում Կ. Եփփեն բանախոսել է «Քրիստոնյա կնոջ դրությունն իսլամ Արևելքում» թեմայով՝ հայերնելով, որ իրեն հաջողվել է հարեմներից փրկել 400 հայուհու, ինչպես նաև նշել է, որ դեռևս հազարավորները շարունակում են ապրել անապատներում: Եփփենի ջանքերով փրկված կանանց թիվը հասնում է մոտ երկու հազարի:²⁵⁷

Արաբների հեղափոխությունը համագործակցում էին նաև անհայր հայեր, ովքեր անապատներում որբահավաք աշխատանքներով էին զբաղվում: Որբահավաք գործունեություն ծավալող հայերից կարելի է առանձնացնել Ռուբեն Ներյանին, ով արաբների շրջանում հայերի էր որպես Մուֆաթեշ Ալ-Արման /հայերի հերախույզ/:

Նայաստանի Ազգային Արխիվում Ռ. Ներյանի անվանական ֆոնդում պահպանվել են նրա՝ Դեյր էզ-Ջորից գրված ձեռագիր ևամակները, իրեն ուղղված ևամակները, Դեյր էզ-Ջորի շրջանում հայ երեխաների, հիմնականում, աղջիկների ու կանանց ցուցակները, որպեսզի նշված են երեխայի փարիքը, անունը, արաբական անունը, և ամենակարևորը՝ ցեղի և այն անձի անունը, ում մոտ գրնվում էր երեխան: Օրինակ՝ «Խաբուրի Պաարա գյուղում՝ Նամմեղ Ալ-Նեֆիի մոտ է գրնվում 8 փարեկան աղջիկ, Մուհամմադ Ալ-Նաջիի մոտ՝ 19 փարեկան աղջիկ, Աբդ Ալ-Շակիթի մոտ՝ 8

²⁵⁶ Bjørnlund M., նշվ. աշխ., էջ 33:

²⁵⁷ Բախչեկյան Ա., Նայությունը սկանդինավյան երկրներում /Նայ-սկանդինավյան պատմաձևավորման առնչություններ/, Երևան, 2010, էջ 160:

տարեկան, Մազհար Ալ-Մխթարի մութ՝ 16 րասրեկան» և այսպես ցուցակը շարունակվում է:²⁵⁸

Նա Միջազգային հայ տարագիրների «Պաշտպան մարմնի» անդամ էր և նույն ժամանակ նշանակվել էր Ռբբահավաք խմբի պատասխանատու: 1919թ. հուլիսի 19-ին Դեյր էզ-Ջորից գրել է. «...ոճրագործ քաղաքը կը գտնուիմ... հոս շար գործ կա, փակաին հարիւրաուր որբեր կան արարներու մօտ և ատուց ազատուիլը, ըստ իս ամենայն մեծ աշխատասիրութիւնն է»: ²⁵⁹ Նա գործում էր գաղտնի, հայտնաբերած երեխաներին միանգամից չէր բացահայտում՝ հաշվի առնելով այն փաստը, որ միանգամից վերջիններիս արարներից պահանջելը կարող էր վրանց սրեղծել երեխաների համար: «... ծրագիրս շար խոշոր է... պիտի ջանամ բոլոր աշիրաթները պրտել և հաւաքել ինչքան կարելի ըլլայ... չնայած օղը շար փաթ է, բայց նպատակը անչափ բարձր է»: ²⁶⁰

1919թ. նոյեմբերի 22-ին ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչությունը Ռ. Ներյանին ուղղված նամակում գրում է. «Անապատի հարեմներու մեջէն ազատելու նպատակաւ հայ որբեր, աղջիկներ, կիներ, և Կեղը. Վարչ. ժողովականները նկատելով, որ դուք կը զբաղուիք այնքան անձնուիրութեամբ, որոշեց ձեր փրամադրութեան փակ դնել 250 եգիպտական ոսկի»: ²⁶¹

Նրան Կ. Պոլսի Ազգային խնամատարության կենտրոնական վարչությունից հուլիսի 11-ին նամակ է հասցեագրված՝ «հարգելի որբախոյզ» դիմելաձևով, և նամակում ներկայացված են Նալեայի, Մոսուլի և Դեյր էզ-Ջորի շրջաններում գրավող 20 որբերի հասցեներ՝ նրանց փրկելու և հայտնաբերելու վերադարձնելու ակնկալիքով: ²⁶²

Նալեայի հայ որբահավաք հանձնախմբի կողմից Ռ. Ներյանին էին հասցեագրվում գրություններ, որտեղ անուն, ազգանուններով ներկայացվում են որոնման մեջ գրավող տարագիր հայերի ցուցակները: Նարազատները դիմում-խնդրանքներով դիմում են Ներյանին՝ իրենց հարազատներին գտնելու համար կամ խնդրում են փրկելություններ հայտնել նրանց մասին»: ²⁶³ Երբեմն հայտնվում էին նրանց անունները, գրավելու վայրը: Օրինակ՝ 1919թ. դեկտեմբերի 8-ին Ներյանին հայտնում են, որ 13-ամյա Թափոսի Մասիայանը գտնվում է Դեյր էզ-Ջորի փաստաբան Նուրի Էֆենդիի

²⁵⁸ ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 35, թ. 7:

²⁵⁹ ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 2, թ. 20:

²⁶⁰ Նույն տեղում:

²⁶¹ ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 33, թ. 1:

²⁶² Նույն տեղում:

²⁶³ ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 35, թ. 3:

դանը:²⁶⁴ Այսպեղից ենթադրվում է, որ արաբների մուր նա հեղինակություն ուներ. այս պարագայում միայն նա կարող էր արաբների՝ Կվյալ դեպքում՝ փաստաբանի մուրից վերցնել երեխային: Նրա ջանքերով մուր 800 արաբացած որբեր են փրկվել:

Եղել են անհապններ, որոնք շրջել են անապարներով ու գրանցել հայ երեխաներին: Զեյթունցի վերապրող Փառնակ Շիշիկյանը՝ Ահմեդ Ալ-Ջազգա անունը ժառանգել է իրեն պահող արաբ ընտանիքից, որը հայրնի ընտանիք է եղել: Այդ աշիրաթում նա ամենագրագետ մարդն էր համարվում և ցեղախմբի բոլոր անդամները կարդալու, գրելու հարցերով միշտ նրան էին դիմում:

Փառնակը՝ որպես ուղտերի հովիվ հաճախ է հանդիպել փարբեր վայրերի արաբների հետ, առանձնահատուկ ձիրք է ունեցել հայերին փարբերակելու: Նրա ցուցակագրած հայերի թիվը հասել է մի քանի հարյուրի: Այդ ցուցակներն ու աշիրաթների հավանական բնակավայրերի քարտեզներն ուղարկել է Նալեայ, որպեղ Ազգային միության և Սիրիայի կառավարության միացյալ հանձնաժողով է ստեղծվել, որն անմիջապես գործի է անցել:²⁶⁵ Նայ որբերի որոնման հանձնաժողովի նիստում որոշվել է ցուցակում եղած անուն-ազգանունների ցուցակը բազմացնել և փակցնել եկեղեցիների, հայկական թաղամասերի, հայկական հիմնարկների դռներին: Նաջորդ օրն իսկ սրացվել են բազմաթիվ դիմում-խնդրանքներ. «Մենք պահանջում ենք մեր հարազատներին, պարրասր ենք ամեն ինչով ապահովել նրանց: Կվճարենք հանձնաժողովի կարարած բոլոր ծախսերը, կանենք նվիրավորություններ»:²⁶⁶

Փառնակի ցուցակներով Նալեայի ազգային խորհրդի և կառավարության միացյալ հանձնաժողովը սկսել են աշխատել անապարներում՝ արաբ ցեղապետներին ևս մասնակից դարձնելով որբերի հավաքագրմանը: Արաբների մուր օրենք էր, որ որբերի դիմաց վճարեն այսպես կոչված կաթի փող. ամեն անձի համար 5 ոսկի: Սա այդ ժամանակներում բավականին մեծ գումար էր, բայց Նալեայի ազգային ֆոնդը զգալի միջոցներ էր ձեռք բերել հանգանակությունների և նվիրավորությունների շնորհիվ: Յեղի մարդը, ով սրանում էր այդ գումարը, մեկ ոսկին պետք է տար իր ցեղապետին: Բացի այդ հանձնախումբն իր հերթին երկու ոսկի էլ պետք է վճարեր ցեղապետին:

Վրանաբնակ արաբների մուր ապարանսած կանանց ու աղջիկների մասին խոսելիս պետք է անդրադառնալ այն փարբերակիչ նշանին, որով հայ կանայք ու աղջիկները առանձնանում էին մյուսներից: Նամաձայն «Դանիական ընկերության» փրկելիությունների՝ վրանաբնակների մուրից

²⁶⁴ ՆԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 35, թ. 3:

²⁶⁵ Ազարեան Լ., նշվ. աշխ., հ. 1, էջ 150:

²⁶⁶ Ճղյան Ն., նշվ. աշխ., էջ 22:

հեղ քերված հայերի 60 րոկոսը փղաներ էին, 40 րոկոսն աղջիկներ ու կանաչք, ուլքեր, գրեթե առանց բացառության դաջվածքներ են ունեցել դեմքին, ձեռքերին, ականամ կրծքին: Տղա երեխաների քթի ծայրերին ու աջ ձեռքերին նույնպես եղել է այդ կապույտ նշանը:²⁶⁷

«Թշվառության բոլոր վիճակները փեսուող այս պեպեվիացած հայերով ու մանաւանդ հայուհիներով լեցուն է Նախալը ու այդ զարհուրելի կապույտը այլևս դարակնիք մըն է կարծեք անջնջելի, իրենց ցեղին վիճակուած եղեռնին ու անոնք պիտի մնան ու ապրին այսպէս, մինչև որ մահը օր մը ջնջի այդ անավոր դարակնիքը»:²⁶⁸

Արաբական ցեղախմբերում հայերին ցուցաբերված օգնության մասին խոսելիս, հարկ է նշել, որ դրան զուգահեռ՝ հանդիպում ենք այնպիսի վկայություններ, որոնք հակառակն են հաստատում. արաբները հարձակվել են հայ փարագիրների վրա, կողոպտել են նրանց, առնանգել կանանց, ավելի հազվադեպ՝ եղել են դեպքեր, երբ արաբները սպանել են հայ փարագիրներին:²⁶⁹

Վերապրող Նովհաննես Սարաֆյանը վկայում է. «Արաբներն ալ կը կողոպտեին մեզ... եւ այս փառապանքներուն ենթարկուողները միայն մենք չէինք, այլ մեր նախորդ եւ յաջորդ կարաւաններն ալ միեւնոյն վիճակին ենթարկուած էին»:²⁷⁰

Մեսքենեի մոտակայքում ընդհարում են ունեցել Անագն ցեղի մարդկանց հեղ, որոնք ցանկացել են նրանց կողոպտել, բայց ժանդարմների՝ կրակ բացելուց հետո փախուստի են դիմել:²⁷¹

Դէյր էզ-Ջոր հասած Նակոբ Սիմոնյանը պատմում է, որ Դէյր էզ-Ջորի անապարներում՝ Անագն անապարի մեջ, «ուր ժողովուրդը կը քալէ անընդհար...յանկարծ արաբները կը յարձակին, կը կողոպտեն, կը մերկացնեն, երեխաները կը յափշտակեն»:²⁷²

Նայ փարագիրների նկատմամբ արաբների բացասական վերաբերմունքի փաստերն ուսումնասիրելիս մի շարք դեպքերի ենք հանդիպում: Ցեղասպա-

²⁶⁷ Կապույտ դաջվածքը արաբական հասարակության մեջ դեռևս նախախալանական ժամանակաշրջանից եկող սովորություն է, երբ բնդվիներն իրենց երեխային ծնվելուց առնվազն մեկ փարվա ընթացքում նրան դրոշմում էին՝ մահվան և չար աչքի դեմ: Իհարկե հայ երեխաների ու կանանց դաջումը բնավ էլ չէր արվում այդ նպատակով: Այսպեղ այլ միտում էր նկատվում՝ հերազայում նրանց փարբերակելու համար:

²⁶⁸ Սիրմեհան արք. Ա., Պատմութիւն..., հ. Ա, էջ 506:

²⁶⁹ Տէր-Ջօր, Աղերէն վերապրողներ, էջ 362:

²⁷⁰ Նույն փոդում, էջ 114:

²⁷¹ Տոնիկեան Կ., /Կ. Կիլիկեցի/, Կեանքիս Յուշերը՝ 1900 -1972, Պէյրուք, 2004, էջ 41:

²⁷² 1915. Աղեր եւ վերածնունդ, էջ 255-256:

նությունը վերապրած, հերազայում բեղվին արաբ դարձած Շուքրին ականարես է եղել, թե ինչպես են բեղվիները հարձակվել մահացածների վրա, պատռել նրանց փորոքիքը՝ ոսկյա իրեր գրնելու մրա-դրությամբ: Այի Աբդուլ Ռահման անունով մի արաբ փրկել է նրան մի ուրիշ արաբի հարձակումից ու որդեգրել:²⁷³

Վերապրող Մարտիրոս Սասունցին իր հուշերում գրում է, որ արաբների կողմից ենթարկվել է բռնությունների, անգամ կոչ է արել իր հայրենակիցներին՝ արաբներից պաշտպանել իրենց աղջիկներին:²⁷⁴ Վերոնշյալ դեպքերը հերաքքրական են. նույն անապարաբնակների կողմից նրանք մի անգամ կողոպտվել, հարձակման են ենթարկվել, իսկ մեկ ուրիշ անգամ արաբների բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ փրկվել են թուրքերի հերապնդումներից:²⁷⁵ Կարելի է եզրակացնել, որ բռնությունների կիրառման դեպքեր եղել են, սակայն, հիմնականում դրանք ունեցել են մասնավոր բնույթ:

Մի ուշագրավ դեպք նույնպես: Վերապրող Վ. Տարրյանը, փարագրության սկզբնական ժամանակահատվածի համար արաբների՝ հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին իր հուշերում գրում է. «Ամեն Նայու հեպ, որ կը Կեսնուինք, կ'իմանաք նոյն գանգալը՝ Կրեղացի ժողովուրդին Նայոց հանդեպ ցոյց Կուամ թշնամական վերաբերմունքին մասին, վերաբերմունք մը, որ արդարևնալի եւ ոչ մէկ հիմք ունի»:²⁷⁶ Արդեն 1916թ. սեպտեմբերի համար հեղինակն արձանագրում է. «Նրանք, որ ամիս մը առաջ մեր գիւղէն մեր հեռացումը կը պահանջէին, միևնչեւ ալ մեր կը զգան թէ վրանգը կը սպառնայ իրենց ինչքին ու կենսքին, կ'ընդունին թէ հայերն ալ կարևոր են՝ ընդհանուր ազգաբնակչութեան պաշտպանութեան Կեսակէտէն»:²⁷⁷ Այնուհետև նշում է, որ Ճերեշում, որը «պզփիկ գյուղ մըն էր ցածր ու փլուած Կներով», հայ Կարագիւրների գալուց հետո այն վերածվում է վաճառաշահ գյուղաքաղաքի. հեռավոր գյուղերից այստեղ էին գալիս հարյուրավոր Փէլահներ ու պէտրուներ: Նայերն այստեղ կառուցում են ջրաղացներ, սրեղծում բանջարանոցներ, բացում մոր քառասուն խանութներ, արհեստանոցներ:²⁷⁸

Արաբների նման վերաբերմունքը կարելի է բացատրել նաև այն հանգա-

²⁷³ Ազարեան Լ., նշվ. աշխ., հ. 3, էջ 128:

²⁷⁴ Սասունցի Մ., նշվ. աշխ., էջ 193:

²⁷⁵ Նշվ. աշխ., էջ 202:

²⁷⁶ Տարրեան Վ., Դէպի անապար /փրկումը էջեր օրագրէս/, Նյու Եորք, 1945, էջ 164:

²⁷⁷ Նշվ. աշխ. էջ 224:

²⁷⁸ Տարրեան Վ., նշվ. աշխ. էջ 165:

մանքով, որ երկիրթուրքական իշխանությունները փորձել են արաբ բնակչության որոշակի հատվածի մոտ առաջացնել հակահայկական տրամադրություններ՝ շահարկելով վերջիններիս կրոնական զգացմունքները, իսկ այս պարագայում վկայակոչելով նաև հայտարարված ջիհադը:

Մինչդեռ երկիրթուրքերի ծրագրերի ձախողման մասին է փաստում անապարներում վերապրող հայ տարագիրների սրվար զանգվածը: Ցեղասպանությունը վերապրող Բ. Ջամբազյանն, ով տարագրության ճանապարհին մի քանի անգամ ականատես է եղել արաբների բարեկամական վերաբերմունքին, վկայում է. «Արաբները թուրքին նման զազան ըլլային, մեկ հայ չէր կրնար վերադառնալ անապարեն»:²⁷⁹

Այսպիսով, հայ տարագիրների՝ Սիրիայում հայտնվելու առաջին փուլը կապված է սիրիական անապարների հետ, ուր արաբ բեդվինները փորձում էին օգնել հայերին: Արաբական ցեղապետերի և, ընդհանրապես, անապարարենակ արաբների աջակցությունը հայ տարագիրների փրկության հարցում պետք է դիտարկել երկու համարեքստում: Առաջինն, ինչպես նշվեց, անմիջական օգնությունն էր՝ ցեղապետի հրամանով նրանք փրկել են հայերին վերահաս մահվանից, ապաստան ու սնունդ տվել: Երկրորդ՝ միջնորդավորված տարբերակը, երբ արաբ բեդվինները, տեղյակ լինելով տեղանքին ու հայ տարագիրների գտնվելու վայրերին, օգնում էին այն մարդկանց, ովքեր զբաղվում էին հայ տարագիրներին հայտնաբերելու ու հայկական միջավայր վերադարձնելու գործով: Բացի այդ, արաբները համագործակցել են նաև այդ աշխատարաններով զբաղվող հայկական և միսիոներական կազմակերպությունների ու անհատների հետ:

²⁷⁹ Տե՛ր-Ջօր, Աղեպեն վերապրողներ, էջ 363:

2.3 ԱՐԱՔ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հայոց ցեղասպանության հեղափոխությունը Սիրիայում հասարակարկում հայերի հերթադա գործունեությունը կապվում է արաբների հերթա հերթադա հարաբերությունների հասարակարկում և դրանց զարգացման խնդրի հերթ: Բազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ «թուրքերը որոշակի հույսեր ունեին, որ արաբները կսպանեն կենդանի մնացածներին, բայց նրանք սխալվեցին, քանի որ արաբները մեծ համակրանք դրսևորեցին հայերի հանդեպ»:²⁸⁰

Սիրիայի տարբեր քաղաքներում և շրջաններում բազմաթիվ արաբ քաղաքացիներ, զինվորներ, պաշտոնյաներ օգնության ձեռք են մեկնել հայ գաղթականներին՝ շարք հաճախ վրանգելով իրենց կյանքը:

Այս ենթագլխում փորձ է արվում ամբողջական պատկերացում տալ Սիրիայում ապաստանած հայ տարագիրների և փնդի արաբ ժողովրդի փոխհարաբերությունների մասին, վերջիններիս ցուցաբերած հսկայածավալ աջակցության մասին, որի արդյունքում աստիճանաբար դրական փոփոխություններ են կատարվում հայ տարագիրների սոցիալական կարգավիճակում: Առանձնակի շեշտադրում է կատարվում անհատ գործիչների հայանախար գործունեության վրա, դիտարկվում են նաև Ֆեյսալի իշխանության փոփոխություններին հայերի նկատմամբ տարված քաղաքականության առանձնահատկությունները: Հարկ է նշել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում քաղաքական փոփոխություններն իրենք էին պայմանավորում ցուցաբերվող օգնության իրականացման ձևերը, չափերն ու մեթոդները:

Արաբ պատմաբան Նայիմ Ալ-Յաֆին հայերի նկատմամբ արաբների դիրքորոշման մասին խոսելիս վերջինս բաժանում է երկու մակարդակի՝ արաբական կառավարական և ժողովրդական:²⁸¹ Առաջինի համար հեղինակը փայլա է հեղափոխությունը. «Պայքարի մթնոլորտ էր փրկում, որին հայերն ակամայից են ներգրավվում»:²⁸²

Տեղինակը կարևորում է նաև ժողովրդական մակարդակը, քանի որ այս համապատասխանում են իրականանում նույն իշխանությունների որոշումները, այս մակարդակում է, որ օգնությունը դրվում է իրական հիմքի վրա և գործնական

²⁸⁰ Պողոսյան Ա., Պողոսյան Կ., Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության պատմության, Երևան, 2002, հ. 2, գ. 4, էջ 350:

²⁸¹ . 65 . نعيم الياقي، مجاز الازمن وموقف الرأي العام العربي منها، ص

Նայիմ Ալ-Յաֆին, Հայերի ցեղասպանությունը և..., էջ 65:

²⁸² Նույն փնդում:

կիրառում ստանում:²⁸³ Անդրադառնալով արաբ հասարակության դիրքորոշման այս երկու մակարդակներին, կարող ենք փաստել, որ Ֆեյսալի օրոք շարունակվում է հայերի նկատմամբ ցուցաբերվող օգնությունը, որը Հունեյն իբն Ալիի պարզամտներից հեկո դրվում է պաշտոնական հիմքի վրա:

Իհարկե, փարագրության վայրերում, փեղահանության ճանապարհներին հայերին օգնության փորձեր են նախաձեռնել նաև փեղի կառավարիչները, աքսորի հսկիչները, անգամ Հայկալի նահանգապետը, բայց դրանք կարճաժամկետ բնույթ են կրել: Բացի այդ, թուրքական կառավարությունը, հաշվի առնելով արաբ պաշտոնյաների, կառավարիչների՝ հայ փարագիրներին օգնելու հետ կապված բազմաթիվ փաստեր, խուսափում էր արաբներին պաշտոններ տրամադրել՝ որպես կանոն փեղերում նշանակելով թուրքերի: Ամեն դեպքում բացառություններ լինում էին, բայց թուրքական կառավարությունը շար արագ ուղղում էր իր «սխալները»:

Հայ փարագիրներին օգնություն ցույց տված արաբ պաշտոնյաներից հարկ է հիշատակել Դեյր էզ-Ջորի կառավարիչ Ալի Սուայդ բեյին, ով չի իրականացրել Հայկալից դեպի Ռաս ուլ-Այն գաղթականների փոխադրման հրահանգը և Թ-պետաթ փաշային ուղղված պարասխան նամակում գրում է: «Բոլորին փեղահանելու համար փոխադրության միջոցները չեն բավականացնում, իսկ եթե Ձեր հեղափոխված նպատակը նրանց սպանելն է, ապա այդ բանը չեմ կարողանա անել, ոչ էլ կարող եմ անել փալ»:²⁸⁴ Դեռ ավելին, նա աքսորված փասնյակ հազարավոր հայերի օգնության ձեռք է մեկնել՝ աշխատելու հնարավորություն տալով: 1000 հայ որբ մանուկների ապաստան է տվել հենց այդ նպատակով կառուցված շենքում:

Սուայդ բեյը հայերին վրաններ է տրամադրել պարսպարկելու համար և կարճ ժամանակ անց հայերի աքսորավայրը վերածվել էր մեծ վրանաբաղաթի՝ կոչվելով վերջինիս անունով «սուայդիյա»,²⁸⁵ որտեղ հայերը բացել էին դերձակի, կոշիկակարի, նպարավաճառի խանութներ և փոեր:²⁸⁶ Ալի Սուայդ բեյի բարյացակամ վերաբերմունքը հայերի հանդեպ դառնում է նրա պաշտոնակության պարճառը: Վերջինիս փոխարինած Ջերի բեյն անվերապահորեն կողմնակից էր հայերի բնաջնջմանը և ջանք չէր խնայում նրանց Դեյր էզ-Ջորում կոտորելու համար:

²⁸³ .74 نعيم الياقي، مجاز الازمن وموقف الرأي العام العربي منها، ص

Նայիմ Ալ-Յաֆֆիի, Հայերի ցեղասպանությունը և...., էջ 74:

²⁸⁴ .408 مروان المدوار، الازمن عبر التاريخ، ص

Մարուան Ալ-Մուդաուար, նշվ. աշխ., էջ 408:

²⁸⁵ بامبوكيان ي، شهادة الازمن، انطلياس 1985، ص 32.

Փամբուկյան Ե., Հայերի մարտիրոսությունը, Աթիլիսա, 1985, էջ 32:

²⁸⁶ Անրոնյան Ա., նշվ. աշխ., էջ 60:

Թիկունքի հրամանապար, արար գինվորական Սայիդ Նամիդ բեյի ջանքերով Դեյր էզ-Ջորում գինվորական աշխատանոց էր հիմնվել, որը «ճշմարիտ բարիք մըն էր 400-ի մօտ Նայ կիներու և այրերու համար»:²⁸⁷ Նա ցանկացած հայ երեխայի խնդրանք՝ Աշխատանոցում տեղավորելու հարցում չէր մերժում: «Տեր Ջորի մեջ հայերը երբեք դժգոհության պատճառ մը չունեցան իրմէ. միշտ անոր պաշտպանութիւնը վայելեցին»:²⁸⁸

Դամասկոսի վալի Թահսին բեյը նույնպես բարյացակամ էր հայերի նկատմամբ: «Բովանդակ կուսակալութեան մեջ հայութիւնը կ'օրհնէր գԹահսին պէյ»: Եղիշէ Չիլիսկիրյանի շնորհակալական խոսքերին ևս պարասխանել է, որ «խղճի ձայնին անսալով մարդասիրական պարպականութիւնը ևեթ կը կարարէ»:²⁸⁹

Նամայում հայերի նկատմամբ բռնությունները որոշ չափով սահմանափակվում են տեղի քաղաքապետ Նաջմ Ադ-Դինի շնորհիվ: Վերջինս թուրք ոսրիկանների հետապնդումներից ազատում է Ռուբեն անունով մի հայի, ում թարգմանչի պաշտոնն է վարահում քաղաքապետարանում: Աշխատանքի ընթացքում Ռուբենն ականատես է լինում քաղաքապետի գործերին. «Նրանք փրկեցին բազմաթիվ հայ երիտասարդների: Նաջմ Ադ-Դին բեյի նախաձեռնությամբ քաղաքում կազմված բարեգործական միությունը մեծապես օգնել է սովամահ լինելուն դատապարտված հարյուրավոր հայ աքսորյալների»:²⁹⁰

Նամայի Տեր Ներսես քահանա Թավոզճյանը նամակ է գրել «Նայ ձայն»-ի խմբագրություն՝ տեղեկացնելով, որ այնտեղ կազմվել է «Նայկական միություն» և ի նպաստ գաղթականների 150 ոսկի է հավաքվել: Նա միության գործունեության համար կարևորում է. «Միութիւնը կը վայելէ տեղական կառավարութեան համակրանքը»:²⁹¹

Ինչ վերաբերում է տեղի արար բնակչությանը, ապա նրանք գրեթե միշտ օգնել են հայ տարագիրներին, որի մասին վկայում են հայկական, արաբական, անգլիական, գերմանական և այլ աղբյուրներ:

Նամա քաղաքի արևելյան կողմում գրնվող Սալամիյե ավանի արար բնակչությունն արտակարգ հոգածություն է ցուցաբերել հայ տարագիրների նկատմամբ: Նովիանես Ջարիկյանը բռնագաղթի տարիներին ընտանի-

²⁸⁷ Օրենան Ե., նշվ. աշխ., էջ 334:

²⁸⁸ Նշվ. աշխ., էջ 386:

²⁸⁹ Չիլիսկիրյան Եղիշէ, Լպիսկ., նշվ. աշխ., էջ 25:

²⁹⁰ Կիգարտ, المؤلف روبرت جيه جيان، حلب، الكتاب السادس، 2002، ص 63:

«Գեղարդ», Նալեպ, 2002, h. 6, էջ 63:

²⁹¹ «Նայ ձայն», 02.12.1918:

քով փեղսահանվում է Այնթափից և հասնում Համա, որպեղից հինգ հայկական ընդհանրիկների հետ՝ Մալամիյե: Արաբներին այստեղ արտակարգ ընդունելություն են ցուցաբերում. «Մեզ շրջապարեցին եւ ամեն կերպ ջանացին օգնել ու փեղաորել: Այնուհետեւ Սեյեմիէ հասան ուրիշ հայ փարագիրներ, բոլորն ալ արժանացան եղբայրական նոյն ջերմ վերաբերմունքին»:²⁹²

Հալեպահայ հայրերի բժիշկ Ռ. Ճեպեճյանի հորաքրոջ և հորեղբոր ընդհանրիկները նույնպես նույն ճակատագրին են արժանացել: Նրա զարմիկ Լևոնը միշտ գովասանքով էր խոսում Մալամիեի արաբների մասին. «Անոնք մեզ դիմաորեցին արտակարգ համակրանքով: Կերակրեցին եւ հոգացին... մեր կեցութեան ընթացքին մեզ հետ վարուեցան որպէս պահապան հրեշտակներ... Մեր կեանքը կը պարտինք իրենց»:²⁹³

Հայ փարագիրները գաղթակայանից թաքուն դուրս էին գալիս, փարբեր միջոցներով ուրելիք ձեռք բերելով, կրկին հավաքակայան մտնում: Այս պարագայում նույնպես արաբներն օգնում էին հայերին. «Ապերախություն կլինէր չհիշարակել արաբների ազնվությունն այս հարցում, չնայած կախաղանի սպառնալիքով արգելված էր գաղթակայանների հետ շփումը, մեզ հետ առևտուր անող ոչ մի արաբի կողմից մեզ մարտնչու փորձ կամ դեպք փեղի չունեցալ, իմանալով հանդերձ, որ նրանք նույնպես մեզ հետ հավասարաչափ վրանգում էին իրենց կյանքը»:²⁹⁴

Հայ փարագիրների նկատմամբ բարոյացակամ վերաբերմունք է փաճել Աբդուլ Ղանի Ալ-Ջուդդի: Նա պարերագմից առաջ վարել է Հալեպի կրթական հարցերով զբաղվող կառույցի փեղի պաշտոնը, Առաջին համաշխարհային պարերագմի փարիսներին ծառայել է օսմանյան բանակում՝ որպես սպա: Նրան էր հանձնարարվել սիրիական անապատում հայ գաղթականների քարավաններից մեկի բնաջնջելու գործը: Նրա օգնությամբ է փրկվել արևմտահայ գրող Երվանդ Օսյանը: Հակառակ իրեն փրկված հրահանգի՝ Ջուդդին փարագիր հայերից շարտերին ուղարկել է Մալամիյե, մյուսներին էլ հանձնել Դեյր էզ-Ջորի արաբ ցեղախմբերին:²⁹⁵ Իր հուշերում՝ «Ալ-Բիթաբ Ալ-Ֆիդդա» /«Արժաթյա գիրք»/ վերնագրով, մանրամասն նկարագրել է թուրքական զինվորականների կարարած դաժանությունները:

Հայաստկասար գործունեություն է ծավալել Մուսրաֆա Ջալափի: Նա Կ. Դոլտում բժշկական կրթություն սրանալուց հետո վերադառնում է Հալեպ և

²⁹² Ազարևան Լ., նշվ. աշխ., հ. 2, էջ 224:

²⁹³ Նույն փեղում:

²⁹⁴ Դիշոլիյան Ն., Դեյր Ջորի անապատներում, Երևան, 2006, էջ 72:

²⁹⁵ 42 ڪيغارت ، المؤلف روبيرت جبه جيان، حلب، الكتاب السادس ، ص 42

«Գեղարդ», կազմող՝ Ռ. Ճեպեճյան, Հալեպ, 2002, հ. 6, էջ 42:

աշխատում Խան Ջարրայում՝ որպես ակնաբույժ: 1914թ. սլավերազմն սլսելուն պես գորակոչվել է օսմանյան բանակ որպես սպա և նշանակվել Բիթլիսի զինվորական հիվանդանոցի պետ: Տեսնելով Բիթլիսի բնակչության նկարմամբ իրականացվող դաժանությունները՝ նա հավաքում է քաղաքի փողոցներից իրեն հանդիպած մոտ 40 հայ որբ աղջիկների և դեռապի կանանց և աշխատանք րալիս հիվանդանոցում: 1916թ., երբ ռուսները Բիթլիս են մտնում, նրան թուրքական համազգեստով րեսնելով ցանկանում են սպանել, բայց իր փրկած աղջիկներն ընդդիմանում են: Իր հայանպասք գործի համար Ջորավար Անդրանիկից նա հարուկ պարվոզիր է սրացել:²⁹⁶

Ջամիլ Զեննեն Առաջին համաշխարհային պատերազմի րարիներին եղել է Եփրատի մակույկաշինության բանակային ձեռնարկության վերակացուն: Այս գործարանը ներգրավված էր օսմանյան Տիեզերորդ բանակի մարակառարման գործում: Տակառակ թուրքական իշխանությունների սպառնալիքներին՝ նա հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկում էր հայ րարագիրների վիճակը բարելավելու համար: Ջամիլ Զեննեն գաղթականներին ընդունում էր իր ձեռնարկությունում՝ որպես վարպետներ և աշխատավորներ, իսկ Կարմիր խաչի նպաստներից պարեն, դեղորայք էր հարկացնում կանանց, երեխաներին և ձերերին: Նա օգնում է փախստական հայ զինվորներին ու գերիներին: Բազմաթիվ աղբյուրներ են վկայում, որ արաբ բանվորները պարբաստրականություն են դրսնորել. հայերին օգնելու գործում նրանցից ոմանք՝ հայ րագիրների հետ կիսել են իրենց սննդի բաժինը:²⁹⁷

Շաֆա Աբու Ռիշահը գաղթի րարիներին եղել է Մամբուջ և Խալիլ գյուղերի կայմակամը: Չնայած ունեցած պաշտոնին, նա միշտ ընդդիմացել է Օսմանյան կառավարության՝ հպատակ ժողովուրդների նկարմամբ ցուցաբերած ճնշիչ միջոցառումներին: Տայ րարագիրներին օգնելու համար, ի վերջո, ամբաստանվել է և Ջիլլե աքսորվել: Նրա դուստրը հոր մասին պարմում է. «Նա բարայրների մեջ ապաստանած հայ գաղթականներին գաղտնի օգնություն և ուրելիք էր ուղարկում: Ամեն ինչ անում էր հայ գաղթականներին ի վնաս րրված հրահանգները շրջանցելու համար, ապահովել է շար գաղթականների երկարթուղով րեղափոխումը, թուրք զինվորների ձեռքից իլել է հայ գաղթականներից կողոպտված թանկարժեք իրերը և հայերին վերաղարձրել»:²⁹⁸

²⁹⁶ Կեգարտ, րալթ րոբիրտ Ջե Ջիան, Հոնբ, աաաա սանս, Վ ս 38

«Գեղարդ», կազմող՝ Ռ. Ճնակճյան, Տալեա, 2002, հ. 6, էջ 42: էջ 38:

²⁹⁷ Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Տայկական Տարցի և..., հ. 2, գ. 4, էջ 283:

²⁹⁸ Կեգարտ, րալթ րոբիրտ Ջե Ջիան, Հոնբ, աաաա սանս, Վ ս 58-59

«Գեղարդ», Տալեա, 2002, հ. 6, էջ 58-59:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արուաշես Պողիկյանը²⁹⁹ /1890-1954/ սրանձնել էր Երկրորդ, Երրորդ, Չորրորդ բանակների մարակարարման հարցերը: Օգտագործելով իր պաշտոնը՝ նա կարողացել է փրկել 1500 հայ երիտասարդների՝ նրանց զգալի մասին տեղավորելով արաբական գյուղերում: Նա պատերազմի ընթացքում կարողացել է պեղական պաշտոնյաների հետ ունեցած կապերի շնորհիվ փրկել իր հայրենակիցներից շարերին՝ փախվել նրանց կեցության հնարավորություն, թեթևացրել է գաղթի հետ կապված որոշ դժվարություններ: Նա համագործակցել է շեյխ Ահմադ բեյ Ռաֆայի և Շեյխ Ռիզաբի հետ, ովքեր Բաբի մուրակայքում՝ Նալեպի հյուսիսում, իրենց գյուղերը փրամադրել են հայ տարագիրներին և աջակցել նրանց աշխատանք և սնունդ հայթայթելու գործում:³⁰⁰

Պատերազմից հետո նա առաջիններից էր, ով սկսում է գործել ազգային ոլորտում: «Ալ-Ջումհուր Ալ-Արաբի» թերթն իր 1954թ. սեպտեմբերի 13-ի համարում նրա մասին գրել է. «Նա միջնորդ է եղել Սիրիայի տեղի բնակչության և իր հայրենակիցների միջև ծագած հարցերն ու հակասությունները հարթելու գործում»:³⁰¹

Ցեղասպանությունը վերապորոզներից շարերն իրենց հուշերում գնահատել են արաբների ցուցաբերած օգնությունը: Ռաքքայում բոլոր հետ դեզերող Ն. Դիշդիշյանը մեծ երախտագիրությամբ է հիշում արաբ կնոջը, ով անվարձահատույց, երկար ժամանակ հաց է տվել նրանց: Ականատեսն իր հիշողություններում գրում է. «Շատ անգամներ եմ վերլուծել այդ կնոջ վերաբերմունքը մեր նկատմամբ, և հետագայում, տասնյակ անգամ ավելի բարի գործերի ականատեսը լինելով, եկել եմ այն եզրակացության, որ իր ազգի բացառիկ գավալը չէր այդ կինը, նրա նման շարերը կային և կարող եմ ասել, Միջագետքի ժողովուրդներին բնորոշ էին բարի գործերը, օգնությունը, մարդկայնությունը»:³⁰²

Դեյր էզ-Ջորի մուրակայքի ճամբարներում եղել են հսկիչ արաբ պաշտոնյաներ, որոնց մասին տարագիրները շատ դրական են արտահայտվել: Չնայած սպառնալիքներին, նրանք թույլ են տվել արաբներին ուրելիք բերել տարագիրների համար. «Բոլորն օրհնում էին արաբ ազգին՝ մեզ՝ պատասպաններիս, անսպասելի օգնություն ցուցաբերելու համար, չնայած

²⁹⁹ Արուաշես Պողիկյանը 1925թ. մասնակցել է նաև Սիրիական մեծ հեղափոխությանը: Եղել է սիրիացի ազգային հերոս Իբրահիմ Նանանոյի օգնականն ու համախոհը: 1937թ. ընկրվել է պարզամալոր:

³⁰⁰ Նշվ. աշխ., էջ 151:

³⁰¹ Նշվ. աշխ., էջ 154:

³⁰² Դիշդիշյան Ն., նշվ. աշխ., էջ 40:

այն հանգամանքին, որ շարաքների փարբերությամբ նրանք մահվան դատապարտված ունեին ոճրագործ թուրքական կառավարության գազանացած խմբակի կողմից»:³⁰³

Արաբ շար գործիչների և անհարկների ծավալած հայանապատ գործունեությունն արտահայտվում էր ոչ միայն հայ փարագիրներին վերապրելու հնարավորություն, նաև ապաստան, սնունդ փրամադրելով, այլ՝ հասարակական գործունեությամբ: Այս համարներստում առանձնանում է Սելիմ Չեմբերթը,³⁰⁴ ով պաշտպանել է «Սուրիոյ հիւրընկալ ափերուն վրայ ազար շունջ առնող Տայ գաղթականներուն»:³⁰⁵ Լավ փորապետելով Կոնստանդնուպոլսի իրավիճակին՝ իր հողվածներում նա փաստում է, որ հայերը երկրի Կոնստանդնուպոլսում դրական փոփոխություններ են կատարել և դա հասարակել է վիճակագրական փյուլյաներով. «Տիսիսի գանազան երկրներէ եկող գաղթականները այս քաղաքի Կոնստանդնուպոլս կենանքին մէջ, հոգ, նեղութիւն և դժվարութիւններ սրեղծած չեն»:³⁰⁶

Նարկ է նշել, որ արաբների դիվանագիտական պատմության մեջ է անցել այն փաստը, որ Արգենտինայում իթթիհաղական Թուրքիայի դեսպանը՝ ազգությամբ արաբ Արսլան Ամինը, ով նախկինում թուրքական հյուպարոս է եղել Ֆրանսիայում և Բելգիայում, դատապարտում է հայերի կոտորածները և հեռանում իր պաշտոնից:³⁰⁷

Տայ փարագիրների իրական վիճակի,՝ նրանց նկատմամբ թուրքական կառավարության վարած քաղաքականության մասին հողվածներ են փոխադրվել Տայեայի «Աթ-Թակադդում» թերթում, որի խմբագիր Շուքրի Ռիզկալլահ Քենդեթերն իր անկողմնակալ հողվածների համար ենթարկվել է ճնշումների: Նա Կոնստանդնուպոլսում ու ֆրանսիական իշխանությունների շրջանում մեծ հարգանք ուներ: Խմբագիրը միշտ պաշտպանել է հայերի իրավունքները, որի համար ֆրանսիական իշխանությունների կողմից ստացել է «Օֆֆիսե դ'Ակադեմի» շքանշանը: Նաև իրեն ուղղված շտրիակալություններին պատասխանել է. «Շարերը իմ գրած յօղվածներէս եզրա-

³⁰³ Դիշոյի Տ., նշվ. աշխ., էջ 49:

³⁰⁴ Նա 1911թ. նշանակվել է Տայեայի Առաջնական սենյակի խորհրդական-անդամ, հետո ընտրվել է փոխնախագահ: 1919թ. Սելիմ Չեմբերթը՝ որպես Տայեայի պարզամտ Սիրիայի առաջին կոնֆերանսին մասնակցել է որպես նախագահի օգնական: 1923թ. վերստին ընտրվել է պարզամտ Սիրիայի Դաշնային Խորհրդի անդամ, 1924թ. գրադեցրել է Տայեայի փրբերության ներկայացուցչական ժողովի փոխնախագահի պաշտոնը:

³⁰⁵ «Սուրիահայ փարբերոյց», Տայեայ, Բ փարի, 1925, էջ 76:

³⁰⁶ Նշվ. աշխ., էջ 78:

³⁰⁷ Ազարյան Լ., նշվ. աշխ., հ. 2, էջ 174:

կացնելով, կը կարծեն, թե ես հայ եմ, կը սխալին, հայը պաշտպանելով ճշմարտությունը, արդարությունը հրապարակած կ'ըլլամ»:³⁰⁸

Նայ փարագիրները Սիրիայում կարողանում են հաղթահարել առաջին դժվարությունները և ինտելեկտուալ փորձեր են կատարում, որն, իհարկե, միակողմանի չէր կարող դրական արդյունքներ գրանցել: Արաբներն իրենց աջակցությամբ նպաստում էին այդ գործընթացին: Սիրիայի «Պարմական հուշարձաններ» կազմակերպության նախագահ Մուհամմադ Կաջան՝ հայ-արաբական համարեղ և արդյունավետ գործունեության համար բերում է Նալեպի օրինակը, որը դարձել է երկու ժողովուրդների քաղաքակրթությունների միավորման մի վայր, որտեղ նրանք հնարավորություն են ունեցել ապրել միասին՝ ներդաշնակության, փոխհասկացողության և ապագայի նկատմամբ միևնույն տեսակետն ու հեռանկարն ունենալով»:³⁰⁹ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում սիրիացիներն ընդունում են հայերին: Նայերն էլ իրենց հերթին փորձում են բարեկամական հարաբերություններ հաստատել տեղի քաղաքացիների հետ և ամեն ինչ անում էին համակեցության համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծել: Մուհամմադ Կաջան կոչ է անում. «Այն փոխըմբռնումը, միասնական ոգին, հանդուրժողականությունը, որը ցուցաբերեց Նալեպը, պետք է օրինակ դառնա մնացած բոլոր այն քաղաքների համար, ուր ապրում են փարբեր մշակույթ ունեցող մարդիկ»:³¹⁰

Նարկ է նշել, որ հայ փարագիրներին օգնություն ցուցաբերելու արաբական միասնական դիրքորոշումը բացատրվում է նաև նրանց՝ իսլամական համայնքի՝ ումմայի որոշ հատկություններով. «... նրանց խորթ էին կապիտալիզմի շար ու շար չարիքները, իսկ առանձին վար արարքներ նրա անդամների կողմից արժանանում էին համայնքի պարսավանքին այն չափով, որ նմանները, հարկադրված լքելով հարազատներին, հեռանում էին հեռավոր տեղեր»:³¹¹

«Տառապանքի եղբայրներ եղանք և ենք փարիներ: Ի վեր... Ընդհանուր պատերազմի արհալիրքները զմեզ ներքցին Սուրիոյ Արաբ ազնի ազգին գիրկը, ուր գրանք ամեն տեսակ ասպնջականությունն եւ հիորդնակություն»:³¹²

³⁰⁸ «Մուրիական փարեցույց», Նալեպ, 1925, էջ 118:

³⁰⁹ صالح زهر الدين، أصالة العرب والوفاء الارمني، ص 402

Մալեհ Զահր Ադ-Դին, Արաբների անկեղծությունն ու... էջ 402:

³¹⁰ Նշվ. աշխ., էջ 403:

³¹¹ Դիշոյիշյան Ն., նշվ. աշխ., էջ 40:

³¹² «Եփրատ», 25.06.1928:

Փաստորեն, հայ-արաբական վոխսհարաբերություններն, ըստ էության, շրջանցում են երկրորդ քաղաքական կառավարության ծրագրերի սահմանները և ընթանում այլ ուղղությամբ: Նայ և արաբ ժողովուրդներին միավորում են նրանց ազգային ընդհանրությունները. երկուսն էլ ունեն պարմություն, քաղաքակրթություն, ազգային պարկանելություն, հայրենիք, մինչդեռ նշվածներից և ոչ մեկը թուրքական կողմը չի ունեցել: Այս պարմական ընդհանրությունները թույլ են տալիս հայ տարագիրներին արարների աջակցությամբ համարել ինտեգրվել Սիրիայի կյանքում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍԻՐԻԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԱՐԱՐ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԸ ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ /1918-1920 ԹԹ/

3.1 ԷՄԻՐ ՖԵՅՍԱԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Սիրիայի քաղաքական կյանքում բեկումնային էր 1918 թվականը, երբ վերջ է դրվում Օսմանյան փրկապետությանը: Սիրիայում րեղի ունեցող իրադարձություններն անմիջական ազդեցություն էին ունենում րեղի հայ քարազիրների վրա:

Սիրիայի պարմության այդ ժամանակահատվածի իրադարձություններում Նուսեյնի որդի Ֆեյսալը զգալի դերակատարում է ունենում: Նրա հեղի է կապվում առաջին հերթին Սիրիայի ազատագրումը, նրա դերը մեծ էր նաև հայ քարազիրների վիճակի բարելավման, կայացման խնդիրներում:

Սիրիայի՝ որպես պետություն, կազմավորման փաստը շարք քաղաքական գործիչներ այդ ժամանակի համար անհավանական էին համարում. «Անհնար է սրբեղծել մաքուր սիրիական թագավորություն՝ նույնիսկ երևակայական. բազմաթիվ ազգությունների բաժանված Սիրիան քաղաքական րեսանկյունից նման է փոշու»:³¹³ Այնուամենայնիվ, չնայած դժվարություններին ու Սիրիայի պետության կարճատև գոյություն փաստին, այն կայանում է: 1918թ. սեպտեմբերի 30-ին Մերձավոր Արևելքում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար Ալլենբիի և Էմիր Ֆեյսալի գործը մտնում է Դամասկոս, հոկտեմբերի 6-ին հայկական 3-րդ գումարտակի մասնակցությամբ Ֆեյսալն ազատագրում է Բեյրութը, այնուհետև Նոմսը, Նաման և Նալեսը: 1918թ. հոկտեմբերի 5-ին Էմիր Ֆեյսալը կազմում է առաջին անկախ կառավարությունը: Այդ կապակցությամբ Ֆեյսալը հայտարարում է. «Իմ րեր Նուսեյն իբն Ալիի կողմից հայտարարում են Սիրիայում բացարձակ անկախ սահմանադրական արարական կառավարության սրեղծման մասին, որն ընդգրկում է ողջ Սիրիան»:³¹⁴ Սրբեղծվում է օրենսդրական խորհուրդ, հիմնվում են դատարաններ, նշանակվում են նահանգապետեր:

³¹³ Pipes D., Greater Syria. The History of an Ambition, NY, 1992, p. 20.

³¹⁴ Նշվ. աղխ., էջ 23:

Թուրքական բանակի կապիտան Սարգիս Թորոսյան,³¹⁵ ով իր վեց-հազարանոց արաբական զորքով մասնակցել է Դամասկոսի գրավմանը, իր հուշերում գրում է. «Շերիֆ էմիր Ֆեյսալը քաղաք մտավ ոչ որպես զավթիչ, այլ զուսպ, արժանապատիվ մի մարդ. նա ուղղվեց դեպի այն հրապարակը, որտեղ թուրք զեներալ Ջեմալ փաշան առանց ռազմական ադյուսանի ձևականությունների կախաղան էր բարձրացրել գերված ազնվական արաբ առաջնորդներին»:³¹⁶

Օսմանյան կայսրության փրկավերությունից ազատագրվելու գործընթացում արաբական կողմում ակտիվ մասնակցություն է ունեցել հայ տարազիրներից կազմված Արևելյան լեգեոնը, որի գործունեությունը հարկ ենք համարում համառոտ անդրադառնալ մինչ Ֆեյսալի և իր համախոհների՝ հայ տարազիրների նկատմամբ վարած քաղաքականությանն անցնելը: Արևելյան լեգեոնի գործունեությունը կարելի է համարել հայ-արաբական համագործակցության արդյունավետ դրսևորում:

1916թ. նոյեմբերին³¹⁷ սրելովում է Արևելյան լեգեոնը:³¹⁸ Լեգեոնի կազմավորման և կամավորագրության պայմանները Ֆրանսիայի ԱԳՆ-ի կողմից հրապարակվել են դեկտեմբերի 5-ին, ըստ որի Արևելյան լեգեոնին կամավորագրվելու էին օսմանահայաբաղկազմ հայերն ու սիրիացիները, որոնք

³¹⁵ Սարգիս Թորոսյանը եղել է թուրքական բանակի հերարանային կապիտան և վերահսկիչ սպա: Դարդանեի պատերազմի ընթացքում ցուցաբերած խիզախության և Կայսերական բանակին բերած հաղթանակի համար արժանացել է Բանակի երախտագիտությանն ու 1915թ. դեկտեմբերի 6-ին սրացել է կապիտանի կոչում, ինչպես նաև պարգևատրվել է Օսմանյան կայսերական բանակի Պատերազմի շքանշանով: Իր հայրենակիցների, մասնավորապես, հարազատների նկատմամբ թուրքական իշխանությունների դաժան քաղաքականությունը նրան դրդում են լքել թուրքական բանակն ու միանալ Նուրի Յուսուֆի հրամանատարությամբ կռիվը արաբներին: Դամասկոսի գրավման ժամանակ նա եղել է վեցհազարանոց արաբական հեծելազորի ու դաշնակցային զորքի հրամանատար: Եղել է նաև Կիլիկիայում ֆրանսիացիների հրամանատարությամբ գործող Հայկական լեգեոնի սպա: Մանրամասն տես՝ Torossian Sarkis, *From Dardanelles to Palestine. A true story of five battle fronts of Turkey and her allies and a harem romance*, Boston, Meador Publishing Co., 1947.

³¹⁶ Torossian Sarkis, նշվ. աշխ., էջ 197:

³¹⁷ Պատմագրության մեջ լեգեոնի կազմավորման հանգամանքների վերաբերյալ գոյություն ունեն փարբեր տեսակետներ: Մանրամասն տես՝ Ս. Պողոսյան, Հայկական /Արևելյան/ լեգեոնի 1916-1920 թթ. կազմավորման պատմությունից, «Պատմություն», Երևան, 2002, հ. 1, էջ 116-126:

³¹⁸ 1916թ. նոյեմբերի 15-ին Ֆրանսիայի ռազմական նախարարի թիվ 7549-9/11 հրամանով կազմավորվում է Արևելյան լեգեոնը, որի կանոնադրությունը նախարարը հաստատում է նոյեմբերի 26-ի թիվ 7966-9/11 հրամանագրով: Լեգեոնն Արևելյան է կոչվում հայկական կողմի պահանջով՝ թուրքերի ուշադրությունը շեղելու համար: Սիրիացիների թիվը չէր գերազանցում լեգեոնի ընդհանուր թվակազմի 1/5-ը: Արևելյան լեգեոնի կորիզը կազմում են Պորտ Սաիդում հաստատված 600 մուսուլման երիտասարդները:

առանձին խմբերի մեջ էին դասավորվելու ըստ ցեղի և կրոնի: Լեզոնի ծախսերը հոգսն էր Ֆրանսիան, Լեզոնը հասպարակելու էր Կիպրոսում և դեկավարվելու էր Ֆրանսիացի սպաների կողմից: Տայկական և սիրիական կոմիւրեները սրանձնելու էին կամավորներ հավաքագրելու գործը՝ առանց Ֆրանսիական դիվանագետների միջամտության, ծայրահեղ զգուշությամբ և առանց հրապարակային որևէ արտահայտության, որպեսզի խուսափեն թուրքերի ուշադրությունից և վրեժխնդրական արարքներից՝ ընդդեմ հայերի ու սիրիացիների:³¹⁹ Տայերին անգամ արգոնվում էր իրենց դրոշն ունենալ՝ ուղղաձիգ կարմիր, սպիտակ, կապույտ գույներով, վրան գրված՝ «Տէր, կեցոյ զհայս»:³²⁰

1917թ. Ֆրանսիական գեներալ Բայոն փեսչական այց է կատարել Արևելյան լեզոն և առաջարկել է վերջինիս օգտագործել Պաղեստինի ուղղությամբ հարձակման ընթացքում: 1918թ. սեպտեմբերի 19-ին Արաբայի ուղղությամբ ընդհանուր հարձակման ժամանակ Ռաֆայի բարձունքում հայ լեզոնականներին հաջողվում է թուրքերին դուրս շարժել բոլոր դիրքերից: Այսրեդից հայ լեզոնականները շարժվել են հյուսիս՝ Ֆեյսալի գործերի հետ գրավելով Դամասկոսը, Բեյրութը, Տալեպը՝ վերջ դնելով Օսմանյան 400 տարվա տիրապետությանը: Արաբ պարամարան Սալեհ Զահր Ալ-Դինը հայ լեզոնականների մասին գրում է. «Երբ թուրքական կառավարությունը մերածում էր, որ նրանք գաղթականներ են, նրանք վերածվեցին կազմավորված զորքի... այդ զորքը պահպանեց իր արժանապարկությունը և հասարակաց, որ կյանքն արժանի է իրեն, և որ «մահ և ոչնչացում» բառերը գոյություն չունեն իրենց բառարանում»:³²¹ Արաբ գրեթե բոլոր պարամարանները մեծ գովեստով ու հիացմունքով են խոսել Արևելյան լեզոնի հայ գիւղիկների վերաբերյալ:

Ֆեյսալն ի սկզբանե հայ փարագիւրների նկատմամբ դրական էր տրամադրված և հայանպասար քաղաքականությունն իրականացնելու համար իր աջակիցների թվում ունեցել է մի շարք ազդեցիկ դեմքեր, ովքեր հետամուր էին լինում հայ փարագիւրների խնդիրների լուծմանը:

Դեռևս 1908թ. Օսմանյան խորհրդարանում արաբական թերակղզու Զիդդա և Մեքքա բնակավայրերը ներկայացնող Ֆեյսալն ու իր եղբայր Աբդալլահը հակված էին թուրքահպարակ հայերի բարենորոգչական ծրագրերի իրականացմանը, որի շնորհիվ էլ Ֆեյսալն «արժանացավ Օսմանյան պառլամենտի

³¹⁹ Պոյանևան Տ., Տայկական Լեզոնը, Ռոթերթաուն, 1965, էջ 14:

³²⁰ Տայկական լեզոնը 1916-1920, փն «Յուշամարեստ Տայ յեղափոխական դաշնակցութեան արոմ-արլաս 1914-1925», Լոս Անճելես, 2001, էջ 190:

³²¹ . 243 صالح زهر الدين، أصالة العرب والوفاء الارمني، ص

Սալեհ Զահր Ալ-Դին, Արաբների անկեղծությունն ու... էջ 243:

հայ երեսփոխանների համակրանքին»:³²² Մինչև Սիրիայում հայ քարազիրների հայրենակերը՝ 1913թ. հունիսին, Փարիզի արաբական կուզբեաում ընդունված բանաձևի 8-րդ կետում Ֆեյսալն ու իր կողմնակիցները նշում են. «Կուզբեսը հավանություն է տալիս և իր համակրանքն է արտահայտում Թուրքիայի հայերի պահանջներին, որոնք հիմնված են ապակենտրոնացման սկզբունքի վրա»:³²³

Ֆեյսալին հայանպասք քաղաքականությունն իրականացնելու գործում աջակցում էին խորհրդականներ՝ կրթության նախարար Սալեհ Ալ-Նուսրին, Ֆեյսալի անձնական քարտուղար, փաստաբան Ֆայեզ Ալ-Ղուսեյնը, Նալեպի շրջանի կառավարիչ նշանակված Շուքրի Ալ-Այուբին, Դամասկոսում հեղինակություն վայելող քաղաքական գործիչ Նաշիմ Ալ-Աբասին,³²⁴ Օմար Ֆախուրին, ով Ֆեյսալի կողմից «Ալ-Ասիմա» պաշտոնաթերթի խմբագրման համար Բեյրութից հրավիրվելով Դամասկոս, այդ և ուրիշ թերթերում /հարկապես «Ալ-Նակիկա»/ հաճախ է հանդես եկել «Դեմոկրատիկամ» ծածկանունով՝ հայ գաղթականությանը սրտապնդող և արարների նկատմամբ հայության բարեկամությունը ամրապնդող հոդվածներով:

Նայ ժողովրդի ճակարագրի նկատմամբ հեղուղական է եղել Օսմանյան պարզամավոր Ֆարես Ալ-Խուրին:³²⁵ Նրա դուստրը՝ Բուլեթ Ալ-Խուրին հոր մասին գրում է. «Օսմանյան պառլամենտում նա հեղեղ է Նայկական հարցին»:³²⁶ Վերջինս հերաբրթովել է հայ պարզամավորներ՝ Ջոհրաբի, Վարդգեսի ճակարագրով և այդ մասին հարցրել է անգամ Ջեմալ փաշային: Նա իր հուշերը գրի է առել «Ֆարես Ալ-Խուրին ղեկավար կացության մեջ է դնում օսմանյան պարզամավորներին» վերնագրի տակ:³²⁷ Ֆարես Խուրին փորձել է պարզել նրանց անհերացման պարճառները, սակայն «նրան սպառնացել են ու արգելել Ազգային ժողովի հաջորդ նիստին մաս-

³²² Աղպաշևան Յովհաննես, նշվ. աշխ., էջ 14:

³²³ .176, 196, 1996, دمشق, 1908 - 1918, نفاية الحكم التركي، تاريخ سورية، علي سلطان، تاريخ سلطان،

Ալի Սուլթան, Սիրիայի պարմություն /1908-1918/, Դամասկոս, 1996, էջ 176:

³²⁴ Նաշիմ Ալ-Աբասին մինչև պարերագմը Նաճնի կայմակամի պաշտոնում և պարերագմի տարիներին՝ Պուրտուրի մութասարիֆի պաշտոնում հաճախ է ընդդիմացել հակահայ գործողություններ իրականացնող երիտթուրքական կարգադրություններին:

³²⁵ 1914թ. ընտրվել է Օսմանյան խորհրդարանում Դամասկոսի պարզամավոր: Մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը պերական ղավադրության համար ձերբակալվել է, հետո արդարացվել: Դասախոսել է իրավունքի ինստիտուտում: 1919թ. ընտրվել է Արաբական գիտությունների ակադեմիայի անդամ, ֆինանսների նախարար, 1926թ. եղել կրթության նախարար:

³²⁶ .136, 196, 1996, دمشق، غوائل الأزمن في الفكر السوري، أريسيان نورا،

Արիսյան Ն., Նայկական սարսափները սիրիական մարում, էջ 136:

³²⁷ صالح زهر الدين، أصالة العرب والوفاء الأرميني، ص 327.

Սալեհ Զահր Ադ-Դին, Արաբների անկեղծությունն ու..., էջ 327:

նակցել»:³²⁸ Նա այն մարդկանցից էր, ով Ֆեյսալի հետ միասին հիմք է դրել Սիրիական պետությանը:³²⁹

Էմիր Ֆեյսալը դեռևս 1917թ. հունիսի սկզբներին Շոբեքում հանդիպել է հայ նրիպասարդների հետ: Կարապետ ավագ քահանա Գալֆայանը, ով անցել է փարագրության ողջ ճանապարհը, գրում է. «Ամենքս գացինք, համբուրեցինք իր փեշերը: Անակնկալ ընդունելություն մը ըրավ մեզի և ըսավ. «Գիպեմ, որ հայերը ուղիղ կերպով կրնան գնահատել մեր այս շարժումը, որովհետև անոնք ալ մեզի պես Թ-ուրք բռնակալութեան դառն լուծը կրած են եւ հիմա իրենց փունէն գրկուած՝ մաքնուած են սովի եւ քաղցի, ուստի ես կը խոստանամ պաշտպանել հայերը իբրև ազապասեր ժողովուրդ մը եւ կը հրաւիրեմ գիրենք գործակցութեան»:³³⁰

Պաղեստինից, Դրուզների լեռներից, Նաուրանից և այլ վայրերից եկող գաղթականները երախտագիտական զգացումով էին պարմում Ֆեյսալի՝ հայերին ցուցաբերած կյութական, դրամական, բարոյական օգնության մասին: Ֆեյսալը Կասիին մեկնող մի խումբ հայերի առաջարկել է Դամասկոս գնալ իր հետ: «... թե որ փառօք մտայ քաղաք, դուք ալ ինձ հետ փառօք կը մտնէք»:³³¹

1916թ. հունիսից Նալեպում ձերբակալվել էր Առաջնորդական փոխանորդ Տեր Նարություն ավագ քահանա Եսայանը:³³² Քաղաքական հանցանքի մեղադրանքով նրան և 60-ից ավելի հայերի կախաղանի էին դատապարտել: 1918թ. Ֆեյսալի՝ Նալեպը գրավելուց հետո քահանա Եսայանը, հայ բանփարկյալների հետ ազատվում է: Այդ կապակցությամբ Սահակ կաթողիկոսին նա գրում է. «...բանարարկեալքս ամբողջովին ազաբ արձակուեցանք: Վերածնութեան մտնողոր մը, ... 25-30 հազար հայ գաղթականությունը ազաբ շունչ մ'առնել է շնորհիվ արդարաւէր Արաբ կառավարութեանը»:³³³

Փարիզի Նայ ազգային պարվիրականության նախագահ Պողոս Նուբար փաշան Ֆեյսալին ուղղված նամակում բարձր է գնահատում վերջինիս գործունեությունը. «Սիրիայի հարավում գրեմով Ձեր խիզախ զինվորների ջանքերի շնորհիվ մեզ մոտ են հասել մեր ազգի փարագրյալ գավակները:

³²⁸ .136-137 غوائل الارمن في الفكر السوري , اريسيان نورا,

Արիսյան Ն., Նայկական սարսափները սիրիական մարքում, էջ 136-137:

³²⁹ .327 صالح زهر النين، أصالة العرب والوفاء الارمني، ص

Սալեհ Չահր Ադ-Դին, Արաբների անկեղծությունն ու..., էջ 327:

³³⁰ Գալֆանան քահ. Կ., նշվ. աշխ., էջ էջ 421:

³³¹ Չիլիկեյիքեան Եղիշէ, կպիսկ., նշվ աշխ., էջ 47:

³³² Նրա ջանքերով էր հիմնվել Գաղթականների օգնության վարչությունը, որը գրադվում էր որբեր քնդունելով և Նալեպ հասած փարագիրներին օքնան փրամադրելով:

³³³ Եղիայեան Բ., Ժամանակակից պարմութին կաթողիկոսութեան Նայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիպաս, 1975, էջ 80:

Մենք աղոթում ենք Ասրծուն, որ նա օրհնի Ձեր գործը և Ձեր հաղթանակը հարաբեր դարձնի: Ձեր զինվորներն ավելացնում են արաբների փառքն ու պարիվը: Ցանկացած հայ, ուր էլ որ լինի, արաբների կողմնակիցն է: Ձեր նպատակի արդարացիությունը և ազնիվ մտադրությունն ակնհայտ է»:³³⁴ Պողոս Նուբար փառալուծի նամակին պատասխանել է: Շերիֆ Հուսեյն իբն Ալին. «Էմիր Ֆեյսալին հղած Ձեր նամակը բարյացակամության և սիրո պարզ ապացույց է ... Իրոք, էմիր Ֆեյսալի՝ փարագիրներին ցուցաբերած օգնությունը յուրաքանչյուր արաբի կրոնական պարտականություն է ... հայ և նրա վիճակում գրեմբող մյուս բոլոր ժողովուրդները մեր համախոհներն են ուրախության և տխրության պահին: Ամենից առաջ Ասրծուց հայցում ենք, որ ուժ րա՝ օգնության ձեռք մեկնելու փարագիրներին մինչև ողջ աշխարհին հասանելի լինեն մուսուլմանների իսկական զգացմունքները»:³³⁵

Հայ փարագիրներին օգնելու մի նոր փուլ է սկսվում Ֆեյսալի իշխանության գալուց հետո, երբ հայ փարագիրներին ցուցաբերվող աջակցությունը դրվում է ամուր հենքի վրա և կարարվում օրենքի և պաշտոնական հրամանների շրջանակներում: 1918թ. հոկտեմբերի 18-ին Դամասկոսի գլխավոր խմբագրատարանը Ֆեյսալը մեծ ընդունելություն է կազմակերպել արաբների անկախության փաստը նշելու համար, որին ներկա են եղել Երուսաղեմի Սրբոց Ցակոբեանց միաբանության անդամ Եղիշեն եպսկ. Չիլինկիրյանն ու Հալեպի առաջնորդական փոխանորդ Տեր Հարություն քահանա Եսայանը՝ արժանանալով հատուկ հարգանքի և ուշադրության:³³⁶

Ֆեյսալն այսպեղ հայտարարել է, որ նորահասարար արաբական իշխանությունը դեռ մի շարք թերություններ ունի, սակայն նրանք կարող են հերզհերբ բարեկարգել երկիրը. «Անգլիացոց պես կամաց-կամաց գործենք, որ կարողանանք լա հասարարել կառավարական վարչութիւնը և ամրացնել վարչական կազմը»:³³⁷

1918թ. հոկտեմբերին Սահակ կաթողիկոսը նույնպես հանդիպում է ունեցել Ֆեյսալի հետ՝ նրանից հավաստիացումներ ստանալով հայ փարագիրների հարցում արաբական կողմի հայանպասար դիրքորոշման վերաբերյալ և «ուրախութիւնը ունեցած է այդ հովանիին ծանուցումը լսելով Արաբիոյ թե թագավորի և թե ալ վարիչ իշխանութեանց կողմն»:³³⁸

³³⁴ Ուշագրավ է, որ այս և հաջորդ նամակները փոխադրվել են սիրիական մամուլում, «Ալ-Աֆ-թար», 14.11.1918թ. փոսն 271-272 ص 271-272 في الصحافة السورية، أصدأ الايادا الارمنية في الصحافة السورية، ص 271-272: Արիսյան Ն., Հայոց ցեղասպանության արձագանքները..., էջ 271-272:

³³⁵ Նույն փոխում:

³³⁶ Չիլինկիրեան Եղիշէ: եպիսկ., նշվ. աշխ., էջ 47:

³³⁷ Նշվ. աշխ., էջ 67:

³³⁸ Եղիսյեան Բ., նշվ. աշխ., էջ 95:

Սահակ կաթողիկոսը հեփազայում ևս երեք կամ չորս հանդիպում է ունեցել Ֆեյսալի հետ, որին որպես թարգմանիչ մասնակցել է Ե. Չիլինկիրյանը: Նանդիպումներից մեկի ժամանակ Լմիր Ֆեյսալը պարմել է, որ 19 փարի Կ. Պոլսում ապրելով «հիացած է Նայոց հանճարին և զարգացումին ու ամեն գործի և արհեստի մեջ անուց ունեցած ընդունակութեանց վրայ: Իրեն նախընտրած անկեղծ բարեկամները Նայերը եղած էին Պոլսոյ մեջ: Նոյն իսկ մի անգամ Պոլսէն խուսափելով երբ կը մեկնէր դէպի Մերքէ, ճանապարհին հեփապնդումէ: մը ազափուելու համար Նայու մը փուն ապաստանամ էր»:³³⁹

«Աթ-Թակադդում» թերթում հայերը շնորհակալություն են հայտնել արար ժողովրդին. «Օգրագործելով առիթը՝ շնորհակալություն ենք հայտնում Նալեայի բնակիչներին և արաբ ազնվաբարո ժողովրդին, որոնք ամենուրեք բարեգութ վերաբերմունք են ցուցաբերում, չեն մերժում եկած փարագիյրներին, այլ օգնում են նրանց՝ դրանով փաստելով իրենց բարոյական արժանիքները: Այսբանից հեփո մեր կողմից լուրջությունը լավության ժխտում կլինի»:³⁴⁰

1918թ. նոյեմբերի 11-ին Ֆեյսալն այցելել է Նալեայ, հանդիպել քաղաքի պաշտոնավար անձանց ու փարբեր համայնքների ներկայացուցիչների հետ: Նանդիպման ընթացքում նա կարևորել է արաբական միասնության խնդիրը, որի հիմքում պետք է դրվեր ազգային և ոչ թև կրոնական սկզբունքը:

1918թ. դեկտեմբերի 4-ին Նալեայում կայացել է ցեղասպանությունը վերապրած հայ փարագիյրների հանրահավաքը, որին մասնակցել են մոտ 50 հազար հայեր: Վերջիններս յոթ կերպից բաղկացած պահանջագիր են կազմել՝ թուրքական կողմին պարժելու և հայ ժողովրդի նկատմամբ պարմական արդարությունը վերականգնելու ակնկալությամբ:³⁴¹ Պահանջագիրը ներկայացվել է Նայ ազգային պարավիրակությանը: Այստեղ կարևոր է այն փաստը, որ հայ փարագիյրները կարողացել են համախմբվել. դա արդեն դրական երևույթ էր, որը խոսում է նրանց կազմակերպվածության մասին և երկրորդ՝ առանց արաբական կողմի թույլտվության հայերը հազիվ թե կարողանային նման հանրահավաք կազմակերպել. ինչը խոսում է արաբական իշխանությունների դրական վերաբերմունքի մասին:

Ֆեյսալ իբն Հուսեյնի աջակիցներից Լմիր Ալի Նասերը, նշանակվելով Նյուսիսային Սիրիայի արաբական գորբերի ընդհանուր հրամանավար,

³³⁹ Չիլինկիրյան Եղիշ: Այիսկ., նշվ. աշխ., էջ 49:

³⁴⁰ 181-182 صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية، ص 181-182: Նալեայի «Աթ-Թակադդում» թերթի վավերագիր էջերը...

³⁴¹ Առավել հանգամանորեն տե՛ս «Նայ ձայն», 06.12.1918:

իր սայայակույրի պետ Ալի Ջևդերի³⁴² ընկերակցությամբ, 1918թ. դեկտեմբերին մեկնում է իր նոր պաշտոնատեղին՝ Նալեպ, ուր կազմակերպում է հայ տարագիրներին նյութական միջոցներ տրամադրելու գործը:

Մամբուջի հայության ներկայացուցիչ Եզնիկ բահանա Աշճյանն ու Եղիսե բահ. Այվազյանը տեղի հայ զաղթականության անունից այցելել են Ալի Նասերին. «Խիստ բարեացակամ ընդունելութեունէն մը ետք յայտարարեց՝ ... Նայ Գաղթականները Արաբ կառավարութեան օթօմոպիլներով պիտի հասարօին և փոխադրուին Նալեպ»:³⁴³ Մամբուջի կառավարիչ Նայդար բեյը տեղի հայ տարագիրներին հացահատիկով ապահովելու հրաման է տվել:

Երկրի հյուսիսում տիրող իրավիճակի լրջությամբ և Ֆեյսալի կարգադրությունների խստությամբ պետք է բացատրել այն հանգամանքը, որ Նալեպի ընդհանուր կառավարիչ Ալի Ռիզա Առ-Ռիկարին 1918թ. վերջերին և 1919թ. սկզբներին քննարկումների ընթացքում պարբերաբար անդրադառնում էր նաև հայ տարագիրների դրությունը: 1918թ. դեկտեմբերի 20-21-ին Ալի Ռիզան հանդիպումներ է ունեցել հայ համայնքի առաջնորդի հետ և հավաստել, որ արաբ ժողովուրդը, ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ այժմ կշարունակի օգնություն տրամադրել հայ ժողովրդին:

Շուրթի բեյն ու Ալի Ռիզան Նարություն Եսայանի հետ հանդիպման ժամանակ ընդգծել են. «Մենք համոզուած ըլլալով, թէ հայը իրաւամբ իրաւունք ունի ապրելու, չգլանանք, ամէն եղբայրական պարտականութիւն»: Կուսակալն անգամ խոստացել է. «Անկին ընել, երբ առիթը ներէ»:³⁴⁴

1919թ. հունվարի սկզբին Ալի Ռեզան նորից է հանդիպել հալեպահայ գործիչների հետ: Եղիշե Չիլինկիրյանը գրությամբ դիմել է նրան, որպեսզի հայերենով նույնպես դիմումներ ընդունվեն: Նրա այդ առաջարկը դրական լուծում է ստացել:³⁴⁵

1919թ. հունվարին էմիր Ֆեյսալը Փարիզում հանդիպել է Պողոս Նուբար փաշային՝ նրա հետ քննարկելով Սիրիայի, Լիբանանի և Պաղեստինի հայ զաղթականության վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումները և հայ-արաբական հարաբերությունների հետ կապված որոշ հարցեր: Փարիզի Նայոց ազգային պարավիթակությունը Ֆեյսալին է հանձնել Մանչեստրի և Մարսելի հայ համայնքների նվիրատվությունները՝ ավելի քան

³⁴² Ալի Ջևդերը հայ-արաբական համագործակցությունն անբավեղելու նպատակով Կահիրեում ստեղծված «Նայ և արաբ եղբայրություն» բեկերության հիմնադիրներից մեկն է եղել՝ Մուշեղ եպիսկ. Սերոբյանի և Առաքել Նուբարի հետ: Ալի Նասերը նրան կշանակել է Նալեպի արաբական կայագրի հրամանատարը:

³⁴³ «Նայ ծայն», 16.12.1918:

³⁴⁴ «Նայ ծայն», 23.12.1918:

³⁴⁵ Չիլինկիրեան Եղիշե: Եպիսկ., Եշվ. աշխ., էջ 66:

150 կգ ոսկին, որպեսզի սիրիական իշխանություններն այն օգտագործեն Դամասկոսի, Նախալի, Բեյրութի հայ փարագիրներին սնունդ և բուժօգնություն փրամադրելու համար:

Տարածաշրջանում սրեղծված այս բարդ իրավիճակում Սիրիայում ընդունվում են կառավարական մի շարք որոշումներ, որոնք իրենց նպաստն են բերում հայ փարագիրների փրկության և հայկական միջավայր վերադառնալու գործին: Դրանց թվում է 1919թ. հունվարին Ֆեյսալի հրապարակած հրամանը, որը փայագրվել է նաև Նախալի «Աթ-Ռ-ակադդում» թերթում. «Նորին գերագանցություն Էմիր Ֆեյսալի հրամանը հայ կանանց և նրանց երեխաներին վերադարձնելու կապակցությամբ» խորագրի փակ, ուր ասվում է. «Այսօր մենք գրել ենք Նախալի ռազմական ղեկավար Զաֆար փաշային, որ ես հնարավոր միջոցներ ձեռնարկի, թերթերում հայփարություն փա, որ բոլոր նրանք, ովքեր իրենց մոտ պահում են հայ կանանց, երեխաների, աղջիկների, թաքցնում են նրանց ու չեն վերադարձնում իրենց հարազատներին կամ կառավարությանը, անմիջապես կենթարկվեն դաժան պարծի: Այս հրահանգի նպատակը նրանց զրկվելու վայրը պարզելն է: Նրանց վերադարձողները կարժանանան իմ հարգանքին»:³⁴⁶ Այս հրամանի մասին Ֆեյսալը նամակով փողեկացրել է նաև Նարություն քին. Եսայանին:

Նախալի շրջանի ռազմական ղեկավար Զաֆար Ալ-Ասքարին, ի պարասխան Ֆեյսալի հրամանի, ուղարկել է հեռեկյալ գրությունը. «Պարիվ ունեցա փողեկանալու Նորին մեծություն Ֆեյսալի հրահանգին՝ հայ երեխաներին, կանանց, աղջիկներին վերադարձնելու վերաբերյալ: Այդ մասին փողեկացվել են թերթերը, որոնք էլ կգրողվեն հրահանգի փարամամբ»:³⁴⁷

Արար պաշտոնյաներն աշխատում էին կատարել Ֆեյսալի՝ Փարիզից ուղարկած ցուցումները:³⁴⁸ Մեկ այլ հեռագրում ես կարգադրում է Զաֆար փաշային «հայրնաբերիլ արարների մոտ և աշիրաթներում գրկվող հայ որբերին, աղջիկներին ու կանանց և հանձնել հայկական ներկայացուցական մարմիններին»:³⁴⁹

Ֆեյսալի այս հրամանից հետո լայն թափ են ստանում անապատներից հայ փարագիրների հավաքագրման աշխատանքները: Ֆեյսալի հատուկ

³⁴⁶ 324. صفحات و وثائقية من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدولة ...، ص 324. Նախալի «Աթ-Ռ-ակադդում» թերթի վավերագիր էջերը...، էջ 324:

³⁴⁷ Նույն փողում:

³⁴⁸ Էմիր Ֆեյսալը 1918թ. նոյեմբերի 21-ին մեկնել էր Եվրոպա, ուր մնացել է մինչև 1919թ. ապրիլի 30-ը:

³⁴⁹ 321. صفحات و وثائقية من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدولة العثمانية، ص 321. Նախալի «Աթ-Ռ-ակադդում» թերթի վավերագիր էջերը...، էջ 321:

հրամանով Լևոն Յոթնեղբայրյանը սիրիական իշխանությունների կողմից պաշտոնապես լիազորվել էր ընդունելու Նաուրանի հայերին և նրանց երկաթուղով փեղափոխել Դամասկոս և Դերա: Ֆեյսալի աջակցությունը մեծապես հեշտացնում է գերեվարված կանանց և երեխաների որոնումները: Նալեալի և Դամասկոսի կառավարիչները խիստ հրահանգներ էին ստանում՝ հնարավորության դեպքում օժանդակել այս գործն իրականացնող խմբերին: Ֆեյսալի հրամանին են անդրադարձել ժամանակի գրեթե բոլոր հայկական և արաբական պարբերականները: «Կլիկկիա» թերթն անդրադառնում է այդ հարցին. «Նկարելով, որ որոշում է վերադարձնել հայերը, անոնք, որոնք իրենց փան մէջ հայ գաղթականներ կան, պարտաւոր են անոնց մասին լուր փալ բաղարային ուրիկանութիւն, որպէսզի յարուկ ցուցակի մեջ արձանգրուի անոնց անունները: Անոնք, որոնք այս ազդարարութենէն յետք իրենց մօտ կը պահեն գաղթականներէն մէկը պիտի ենթարկուին օրինական հետապնդութեան»:³⁵⁰

Նայ փարագիրների վիճակը վոքք-ինչ բարելավվում է հայ փեղահանվածներին ամսականներ և սնունդ փալու մասին կառավարության որոշումը. «Նախորդ կառավարության ճնշումների հետևանքով դուրս թշված 48 հազար գաղթականների համար հնարավոր չէ բյուջեից որևէ հատկացում անել, սակայն կարիքավորների համար հարկավոր է կիրառել ուրելիք բաժանելու որոշումը և նրանց փրամադրել անհրաժեշտ ամեն ինչ»:³⁵¹

Նայ փարագիրներին սնունդ և ամսականներ փրամադրելուց բացի վերջիններին սոցիալական վիճակի բարելավման էր ուղղված Ֆեյսալի՝ Նալեալի հայ վաճառականների պարտքերի հետաձգման մասին 1919թ. մարտի 26-ի որոշումը,³⁵² որը վավերացվում է «Շուրայի խորհրդում» /Խորհրդարանում/:

1. Նայերից պահանջված բոլոր պարտքերն ու պահանջները հետաձգվում են մինչև 1919թ. փարեվերջ և այդ թվականից հետո հարկավոր է վճարումներ անել չորս մասնաբաժիններով:

2. Եթե պարտավոր հայերից մեկը ցանկություն ունի այլ երկիր փեղափոխվել, պարտավորն իրավունք ունի պահանջել երաշխավորագիր, որը չենրկայացնելու դեպքում փեղափոխությունն արգելվում է:

³⁵⁰ «Կլիկկիա», 23.5.1919:

³⁵¹ Կառավարության սույն որոշումը փայտգրվել է սիրիական կառավարության պաշտոնական պարբերաթերթ «Ալ-Ասիմա»-յի 1919թ. փետրվարի 27-ի համարում:

أريسيان نورا، أصدا أ الابادة الارمنية في الصحافة السورية، ص 354
Արիսյան Ն., Նայոց ցեղասպանության արձագանքները..., էջ 354:

³⁵² Խորհրդարանի սույն որոշումը փայտգրվել է «Ալ-Ասիմա»-յի 1919թ. ապրիլի 8-ի համարում. փոսն 356- 358 ص، أصدا أ الابادة الارمنية في الصحافة السورية، ص 356-358:

Արիսյան Ն., Նայոց ցեղասպանության արձագանքները..., էջ 356-358:

Սույն հրամանագիրը ստորագրել են նաև Շուրայի խորհրդի նախագահ Ալա Ադ-Դինը, նախարարների խորհրդի նախագահ Ալի Ռիզա Առ-Ռիկաբին և այլ նախարարներ:

Քրաբ ժողովրդի համդեպ հայերի երախտագիտությունը դրսևորվել է հայ հոգևորականների կողմից արված հեղեյալ հայտարարության մեջ. «...Մենք՝ ներքուստրագրյալներս՝ հոգևոր առաջնորդներս, որոշել ենք հեղեյալը. քանի որ սիրիացի ազգը համաձայն է Ղուսեյն թագավորի որդի Ֆեյսալին համձնել Սիրիան՝ իր բնական սահմաններով, մենք Դամասկոսի քաղաքապետարան ենք եկել հավասարելու մեր հավատարմությունը»:³⁵³

Այս նամակը ստորագրել են մի շարք հոգևորականներ, այդ թվում նաև Դամասկոսի հոգևոր հովիվ Ասատուր Սարգսյանը, հայ կաթոլիկների առաջնորդ Զիրջիսը:

Ֆեյսալն, ինչպես նշեցինք, ազգային փոքրամասնությունների նկատմամբ հարուկ քաղաքականություն է սկսում վարել, իսկ հայերին աջակցելը դարձնում դրա կարևոր կերպրից մեկը: 1919թ. մայիսի 9-ին, Դամասկոսի կառավարական փրանն արված պաշտոնական հայտարարությունում նա անդրադառնում է փոքրամասնությունների հեղ հարաբերություններին.³⁵⁴ «...Սիրիայի կառավարման ժամանակ պեպրք է ավելի շար ուշադրություն դարձնել փոքրամասնությունների իրավունքներին ու պահանջներին, որպեսզի վերստա արելությունը և կրոնական թշնամանքը, որ սրեղծել էին թուրքերը»:³⁵⁵

Հանդիպմանը Ֆեյսալը դրել է մինչև Կոնգրեսի գումարումն իր քաղաքականությանը վստահություն փարու հարցը: Ներկա գրնվողները բոլորը փվել են իրենց միահամուռ համաձայնությունը:³⁵⁶

Այնուհերև, Ֆեյսալը, դիմելով ներկաներին՝ կոչ է արել. «...պարտավոր ենք ցույց փրաղ զաշնակիցներին, որ մենք մեր անկախությանը ձգտող ազգ ենք, որ մենք պաշտպանում ենք մեր մերձավորներին և փրարագիւրներին, օգնում ենք ձերներին և երիտասարդներին, հարգում ենք նրանց, ուլքեր գալիս են մեր պապենական հարագար այս հողում աշխատելու մեզ համար... Ձեզ են դիմում միավորվելու հարուկ խնդրանքով, սա մեր բոլորի պարտական

³⁵³ أريسيان نورا، أصد الأباداة الارمنية في الصحافة السورية، ص 357.

Արիսյան Ն., Հայոց ցեղասպանության արձագանքները..., էջ 357:

³⁵⁴ Ալի Սուլթանը Ֆեյսալի հանդիպման համար հիշատակում է մայիսի 5-ը: Տեքստն ամբողջությամբ փրն . 431-442, ص 1920 - 1918, حكم فيصل بن حسين, تاريخ سورية، علي سلطان، تاريخ سورية، ص 431-442:

³⁵⁵ Նշվ. աշխ., էջ 437:

³⁵⁶ Հովհաննիսյան Ն., Սարգսյան Հ., էջվ աշխ., էջ 61:

նությունն է և մեր ապագա ձեռնարկումների միակ հիմնաքարը»:³⁵⁷ Ելույթ է ունեցել նաև հայ եպիսկոպոսը. «Շնորհակալություն եմ հայտնում արարների՝ պատերազմի չորս փարիկների ընթացքում ցուցաբերած օգնության և մարդասիրության համար: Մեր պատմությունն արարների անունը կգրի ոսկե փառերով»:³⁵⁸

Ֆեյսալի այս ելույթը հայ փարագիրների համար բավականին կարևոր փաստ էր, քանի որ դրանում մի քանի առումներով անդրադարձ է կատարվում հայ փարագիրներին՝ որպես ազգային փոքրամասնություն, գաղթականներ, կրոնական փոքրամասնություն և բոլոր դեպքերում խուսվում է ի օգուտ հայերի: Ֆեյսալն անմիջականորեն ուղղորդում էր փեղական ղեկավարության՝ հայերի հետ ունեցած հարաբերությունները:

Ֆեյսալը, Նալեպի շրջանի ռազմական կառավարիչ Ջաֆար Ալ-Ասքարիի ընկերակցությամբ այցելել է նաև Նալեպի հայոց առաջնորդարան:³⁵⁹ Այսպես նրան Սահակ կաթողիկոսը սինոդականներով ու բազմաթիվ քահանաներով «փառատոր ընդունելության մը ըրա»:³⁶⁰

Ֆեյսալը կրկին անդրադարձել է հայ փարագիրների խնդրին: Ներկա գրվածքները հափուկ խնդրանքով դիմել են Ֆեյսալին՝ «բազմաթիվ կիներ, սղջիկներ ու մանչեր կը գրնուին Սուրիոյ և Իրաքի քաղաքաբնակ և վաչկաբուն արարների քով... անոնց դարձը ազգին անհրաժեշտ պեպք մըն է, մարդկային պարտականութիւն ու անվիճելի իրավունք»:³⁶¹ Նրանք խնդրել են Նուսեյն Ալիի ուղերձն ընդհանրացնել ու համակարգված միջոցառումներ ձեռնարկել. «...Կը խնդրենք, որ այս խնդիրն վերջնականապես լուծէք ու այդպէսով յանրժացնէք ձեր յիշարակը Ձեր բազմաթիւ բարիքներու մէջ»:³⁶² Ֆեյսալը հանդիպում է ունեցել դեռևս 1918թ. դեկտեմբերի 12-ին Նալեպում սրեղծված Հայ ազգային միության ղեկավարների հետ, որի արենապետ Գաբրիել վրդ. Գասպարյանն արարներնով ելույթ է ունեցել ու հաստատել. «ամէն գույումի, խժոժութեան Հայ ու Արաբ փարքը ձեռք-

³⁵⁷ علی سلطان، تاریخ سوریه، حکم فیصل بن حسین، 1918 - 1920، ص 441-442

Ալի Սուլթան, Սիրիայի պատմություն /1918-1920/, էջ 441-442 :

³⁵⁸ . 440، ص علی سلطان، تاریخ سوریه، حکم فیصل بن حسین، 1918 - 1920،

Ալի Սուլթան, Սիրիայի պատմություն, /1918-1920/, էջ 440:

³⁵⁹ Նալեպի կամ Բերիո թեմը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության երկրորդ մեծ ու հնագույն թեմն էր, առաջնորդանիստը՝ Նալեպի Ս. Քառասուն մանկուկ եկեղեցին: 1920-ական թվականներին Նալեպը եղել է Կիլիկիո կաթողիկոսության վարչական և հոգևոր կենտրոնը:

³⁶⁰ Չիլիսկիրեան Եղիշ: Լայսկ., նշվ. աշխ., էջ 49:

³⁶¹ «Կիլիկիա» 27.06.1919:

³⁶² Նույն փնդում:

ձեռքի փուսձ կողք-կողքի կրուցցին թշնամու դէմ»:³⁶³ Անդրադարձ է կատարվում նաև 1919թ. փետրվարի 28-ի Նալեայի դեպքերին՝ թուրքական գործակալների հերպագա խժոժությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու առաջարկով: Այցի ընթացքում Ֆեյսալն այցելել է Նալեայի հայկական որբանոց, որի մասին «Աթ-Թ-ակադդում» թերթը գրում է. «Նորին շնորհակալություն ենք հայտնում Նորին գերագուցություն Էմիր Ֆեյսալին՝ հայ որբանոց կատարած այցելության համար (Ռ-ամի թաղամասում): Նա ընթշորեն շոյեց որբերին, գրուցեց մի քանիսի հեր: Երախարագիւրություն ենք հայտնում նրա դրամական օգնության համար»:³⁶⁴

Ինչպես նշել ենք, սիրիական կառավարությունը արեղծվել էր դեկրետով, որը ստորագրել էր Ֆեյսալն՝ իր հոր Նուսեյն իբն Ալիի անունից: Փաստորեն այն չունեի որևէ ներկայացուցչական մարմին և սահմանադրական հիմք: 1919թ. մայիսին անցկացվում են Սիրիական գլխավոր կոնգրեսի /Մութամար Աս-Սուրի Ալ-Ամմ/ ընտրությունները: Նուսեյն 2-ին կոնգրեսն ընդունում է «Ռ-ամասկուսի ծրագիրը», որով ազգային-ազատագրական ուժերը պահանջում էին Սիրիայի «բացարձակ քաղաքական անկախությունը»: Տարածքային առումով Սիրիայի պետությունը պետք է ընդգրկեր ժամանակակից ողջ Սիրիան, Պաղեստինը, Հորդանանը և Լիբանանը: Այս պետությունը պետք է լիներ սահմանադրական միապետություն, որպես թագավոր առաջարկվում էր Ֆեյսալի թեկնածությունը: Հայ փարագիրների համար ամենակարևորը թերևս այն կետն էր, ըստ որի այդ պետության սահմաններում պետք է ապահովվեին ազգային ու կրոնական փոքրամասնությունների իրավունքները:

Ֆեյսալը և նրա կողմնակիցները ցանկանում էին հայ փարագիրների նկատմամբ արարների դրական վերաբերմունքն էլ ավելի հարակեցնել՝ հայ փարագիրների զանգվածն արաբական ազգային ծրագրին հենարան դարձնելու համար, ինչպես նաև ձգչում էին հայ փարագիրներին հեռու պահել Փրանսիական ազդեցությունից: Այս քաղաքականության նպատակն էր նաև հայ-արաբական հարաբերությունների մերձեցման շնորհիվ հսկողություն հաստատել այն ոլորտներում, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի վերջում հայերի ձեռքում էին գրավում: Նշենք, որ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան էլ իրենց հերթին էին փորձում օգտագործել հայ փարագիրներին:

Հարկ է նշել, որ հերպատերազմյան մի կարճ ժամանակահատվածում

³⁶³ «Ալիլիկիա» 27.06.1919:

³⁶⁴ صفحات و وثائقية من جريدة التقدم الحلبية ... ص 323.

Նալեայի «Աթ-Թ-ակադդում» թերթի վավերագիր էջերը... էջ 323:

փոքրամասնությունների գործոնը հիմնական նշանակություն է ձեռք բերում բրիտանացիների և ֆրանսիացիների՝ փարաձաշրջանային ռազմավարության մեջ: Այսպես, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան աշխատում էին սիրաշահել նախկին կայսրության մաս կազմող մի շարք կրոնական և ազգային փոքրամասնությունների՝ վերջիններիս իրենց նպատակների համար օգտագործելու մտադրությամբ: Բացի այդ, փոքրամասնություններին պաշտպանելու ռազմավարությունը նպատակ ուներ իրար դեմ դուրս բերելու փարաձաշրջանի ժողովուրդներին:

Դամասկոսի գրավումից հետո արաբական զինվորական իշխանությունները սկսում են թուրքական զինվորական զեռիների փարագրության գործընթացը, բայց շուտով Ֆեյսալի հստակ հրամանով նրանց թույլատրվում է մնալ երկրում: Այս իրավիճակում հայերին թուրքերից փարբերելու համար իշխանությունն արաբերեն հստակ փաստաթուղթ /վասիթա/ էր փալիս հանելին, որպեսզի նշվում էր անձի անունը, ազգանունը, հայրանունն ու ծննդավայրը: Առաջնորդարանն այդ փաստաթուղթը կնքում էր ու ստորագրում: Փաստաթուղթը պարտադիր պետք է նկար ունենար, ինչն ինքնությունը հաստատելու մի յուրաքանչյուր ձև էր հայ տարագիրների համար:

Թուրքերի ներկայությունը գրկում էր հայերին անվտանգության գիպակցությունից: Անգամ, Նալեյի ռազմական ընդհանուր կառավարիչ Շուքրին, անդրադառնալով այդ խնդրին, գրել է. «Արևը Ազապ կառավարությունն իր թշնամիներուն ներսւմ է և Նալեյ գրեւորոջ թրքաց իր արդարութեան շուքի փակ ապրելուն որոշած էր՝ մոռնալով անուց չարիքները ... մինչդեռ իրենց սովորած խաբէբայութիւնները և խոսքմնազանցութիւնը շարունակելու վրայ են»:³⁶⁵ Կարճ ժամանակ անց արաբները նույնպես համոզվում են, որ հայերի մրավայտությունները րեդին էին: Շուքրի փաշան նոր հրաման է փալիս, ըստ որի թուրքերին պարտադրվում էր ցուցակագրվել րեդի ոստիկանաւորներում ու պարտաւար լինել՝ նոր հրահանգի դեպքում երկրից հեռանալու համար:³⁶⁶

Ոգևորված Ֆեյսալի՝ ազապ մամուլի քաղաքականությամբ³⁶⁷, հայերը

³⁶⁵ «Նայ ծայն», 29.11.1918:

³⁶⁶ «Նայ ծայն», 12.02.1919:

³⁶⁷ 1919թ. փետրվարի 17-ին «Այ-Ասիմա» թերթը հռչակվել է սիրիական կառավարության պաշտոնաթերթ: Այսպեսզի փակագրվել են կառավարական օրենքները, պաշտոնական հայտարարությունները: Թերթի խմբագիրը հայրենի թղթակից Մուսիյ Այ-Դին Այ-Խապիրեն էր, ով սկսել է ընդհանուր կարծիք ստեղծել սահմանադրական ղեկավարման մասին՝ առաջ քաշելով արաբական միասնության պահանջները: «Այ-Ասիմա»-ն ունեցել է ներքին ու արտաքին լուրերի բաժին, որը հաճախ անդրադարձել է հայերի թեմային:

խնդրանքով դիմել են Շուքրի Ալ-Այուբիին, ով աջակցել է կիլիկիահայերի՝ թերթ հրատարակելնու նախաձեռնությանը: «Նայ ծայն» լրագիրն իր առաջին համարում գրում է: «Մեր անհուն շնորհակալությունը և երախտագրական զգացումները նորահասարակ Արաբական կառավարությանը: Ցայսնում ենք մեր անկեղծ շնորհակալությունը Կեղևական կառավարության պաշտոնյաներուն, որոնք մեծէն մինչև փոքր շար սիրալի վերաբերմունք մը ունեցան լրագրին հրատարակութեան հանդէպ հարկ եղած ամէն դիւրութիւն ընծայեցին»:³⁶⁸

Թերթն իր գլխավոր նպատակներից էր համարում. «Միշտ համակիր Արաբ կառավարութեան՝ զօրացնելու աշխարհի մեր Արաբ եղբայրներուն և հայերու միջև եղած բարեկամական յարաբերությունները և համերաշխ ոգի, միշտ հաւարարիմ մնալ իր անունին «Նայու Չայնի» ճշմարիտ արձագանգը ըլլալ»:³⁶⁹

Նույն համարում Շուքրի Ալ-Այուբիին իր փոխադարձ շնորհակալությունն է հայտնել հայերին՝ արաբների նկարմամբ նման դիրքորոշման համար:

Ֆեյսալի և նրա համախոհների աջակցությանը զուգահեռ հայ փարագիրների վիճակի բարելավումն իրականացվում էր նաև ազգային, բարեգործական և միսիոներական կազմակերպությունների գործունեության շնորհիվ: Այս ժամանակահատվածում վերակազմվում են արդեն գործող որբահավաք հանձնաժողովները, սրբեղծվում են նորերը, որոնք սկսում են ավելի կենտրոնացած ու արդյունավետ գործել՝ դուրս գալով ընդհարակցա գործունեությունից:

Նայ ազգային միությանը հաջողվում է փարագիրների համախմբման և նրանց նկարմամբ ցուցաբերած օգնության հարցերում հաջողությունների հասնել: Միության համար կարևոր էր միության կազմավորման համար առաջին ու կարևոր պայմանը. «Որևէ կուսակցական ու որևէ յարանունական անձնատրություն, կը մոռնայ իր պարկանած կուսակցությունը կամ յարանունությունը, երբ կը մտնէ Ազգային Միութեան ժողովասրահէն ներս ... Կուսակցական հակառակություն և գաղափարային փարակարծություն ունեցողները՝ հոն գլուխ-գլխի փուած, ընդհանուրի, Ազգին շահը կը մտածեն»:³⁷⁰ Արդեն ակրիվացած ազգային կուսակցությունների գործունեությունը փարագիրների շրջանում երկպառակությունների միտումներ էր առաջ բերում, ուստի շար կարևոր էր համախմբված գործելը:

ՏԲԸՄ-ի գործունեությունը Սիրիայում հսկայածավալ էր: Վերջինիս ջանք չէր խնայում իրականացնելու «... անապարհին խորքերը բռնագրա-

³⁶⁸ «Նայ ծայն», 9.11.1918:

³⁶⁹ Նույն տեղում:

³⁷⁰ «Նայ ծայն», 12.01.1919:

լամ կամ թափառական որբերուն ազապագրումի և միաժամանակ դեռափի հայուհիներու հարեմներէն ձերբազապումի կենսական ծրագիրը»:³⁷¹ 1920թ. սեպտեմբերի 14-ին ՆԲԸՄ-ի կենտրոնական գրասենյակից Ռ. Ներյանին նամակով փեղեկացնում են. «Ժողովս որոշած է ձեզի լրջորէն ևս դրականապէս գորավիզ կանգնիլ հայուհիներու ևս որբերու ազապագրումի գործի մէջ ևս այդ մրահոգութեամբ Նալեպի մէջ կը հասարաբ: ազապագրեալներու համար յարուկ Ապասարարան-Աշխարանոց: Եթէ միջոց ունիք զբաղուիլ այդ հարցով, անշուշտ մեծապէս պիտի դիրացնէք Նալեպի Մասնաժողովին աշխատութիւնը ձեր օգրակար թելադրութիւններով»:³⁷²

Որբահավաք աշխարանքների իրականացման հարցում պետք է կարևորել նաև հայրենակցական միությունների ծավալած գործունեությունը: Վերջիններս վերակազմավորվում են ցեղասպանությունից կարճ ժամանակահատված անց: Այսպես, բազմաթիվ կանայք ու երեխաներ հանձնըվում էին նույն գյուղի, սվանի կամ քաղաքի իրենց հայրենակցական միության հոգաժողովանը: Ներագայում, երբ 1919թ. սկսած դաշնակից ուժերը կազմակերպում են հայրենադարձություն դեպի Կիլիկիա, փեսնում ենք, որ որդեգրված այս անձիք իրենց հայրենակիցների հետ վերադառնում են իրենց բնակավայրերը: Զաղաքային կամ գյուղական յուրաքանչյուր համայնք հոգ էր փանում իր որբերի ու այրիների մասին:³⁷³

Նայ փարագիրների վիճակի բպրելավման համար սրելովել էր «Աշխարանքի փուն» մասնավոր գրասենյակը, որը «վարչական խորհրդով օժրում քաղաքային հայաշար կեդրոն էր»:³⁷⁴ Այս գրասենյակը գրանցում էր բոլոր գործազուրկներին, որոնց հնարավորության դեպքում աշխարանքի էին փեղավորում: Անգլիական գիւնկորական իշխանությունը պաշտոնական կապ է հասարաբում «Աշխարանքի փուն» հետ, որի արդյուքում մուր ութ հարյուր մարդ աշխարանք է գրնում: «Աշխարանքի փունը նախախնամական դեր կարարեց վերապրող հայ գործաւոր դասակարգին համար այդ շրջաւում»:³⁷⁵

1920-ական թվականներին մեծ փերությունների դիրքորոշումների փոփոխությունները նոր իրարանցումների պարճառ են դառնում Սիրիայի հայ փարագիրների շրջաւում: Ոգևորված Ֆրանսիայի փված խոսպումներով՝ Կիլիկիայում նորանկախ պերություն հիմնելու վերաբերյալ, հայ փարագիր-

³⁷¹ Մեկրոնյան է., նշվ. աշխ., էջ 99:

³⁷² ՆԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 33, թ. 2:

³⁷³ Թաշճեան Վ., Վերակերպել ազգը ..., փնս «Երթ», հ. 2, էջ 165:

³⁷⁴ Նաճարան Մ., Յուշագիրք..., էջ 23:

³⁷⁵ Նույն փեղում:

ները սկսում են վերադառնալ Կիլիկիա: 1919թ. փետրվարի 1-ին գնդապետ Բրեմոնը ժամանում է Ադանա և հայրաբարում. «Մեր ցանկությունն է, որ հայերը տեր դառնան իրենց երկրին: Մենք կառաջնորդենք զիրենք, որ աճին, մեծանան, և սկսին ինքնզինքը կառավարելու գործին մեջ հաջողիլ»:³⁷⁶ Գեներալ Ժ. Պիկոն ևս հայրաբարել է. «Կիլիկիան հայերու դարավոր հայրենիքն է... Կիլիկիան հայուն պիպի ըլլայ»:³⁷⁷ Նավարարով այս հայրաբարություններին՝ բազմահազար հայեր Սիրիայի փարթեր տեղերից գալիս էին Նալեպ, այնուհետև՝ տեղավիժվում Կիլիկիա: Տիմնականում Նայկական լեզեռնի³⁷⁸ պաշտպանության ներքո հայերը վերադառնում են Կիլիկիա: Նալեպում Նայկական լեզեռնում կամավորագրվելու համար դիմում են 2 հազար երիտասարդներ, որոնցից 750-ը ուրբով անցնում են Ադանա, սակայն գենը չեն ստանում:

1919թ. դեկտեմբերի 17-ի հասրուկ հրամանով Ֆրանսիական ռազմական նախարարն առաջարկում է Լեզեռնում բողնել միայն երկու հայկական գումարարակ՝ փոխարենը մեծացնելով սիրիականը:³⁷⁹ 1920թ. ապրիլի 22-ին Արևելքի բանակի հրամանարարը հեռագրում է Կիլիկիայի շրջանի հրամանարարին՝ երկու գումարարակները մեկի վերածել, իսկ մայիսի 1-ին հրահանգ է լինում սկսել Նայկական լեզեռնի վերջին գումարարակի լուծարումը:

Այսպիսով, հայ-արաբական համագործակցությունն՝ ի դեմ Արևելյան լեզեռնի, դրական արդյունքներ է գրանցում 1918 թվականին: Ռազմական համարեղ հաջողությունները պայմանավորված էին նրանց ընդհանուր շահերով: «Անոնց միացումը մեկ դասավորումի, մեկ խմբաորումի մեջ եղած է անոր համար որ երկունքն ալ ուզած են թթապիել նոյն լուծը: Այդ պարհաուր գոյութին ունենալ: դադրած է»:³⁸⁰ Ֆեյսալի իշխանության հաստատումով վերջ է դրվում Սիրիայում Օսմանյան կայսրության փիրապետությանը, հեղտվարար, Արևելյան լեզեռնն իր սկզբնավորման բուն նայարակին արդեն հասել էր և կարծես սպառել էր իրեն. փոխվել էին Արևելյան լեզեռնի սրեղծման

³⁷⁶ Թուրուպյան Ն., նշվ. աշխ., էջ 162:

³⁷⁷ Նույն տեղում:

³⁷⁸ 1918թ. Մուդրոսի զինադադարից հետո Արևելյան լեզեռնի հայ սպաների և Նուբար փաշայի կողմից դիմումներ են լինում լեզեռնը կոչելու Նայկական և վերանայելու կանոնադրությունը: Նոսեվարի 18-ին Ֆրանսիայի ռազմական նախարարի թիվ 546-9/11 հրամանով կազմավորվում է Նայկական լեզեռնը: Բաժանումից առաջ լեզեռնն ուներ հեղտյալ պարկերը՝ հայկական 4 գումարարակ՝ 4124 և սիրիական մեկ գումարարակ՝ 698 զինվորներով: Տե՛ս Գարամանուկյան Ա., Նայկական Լեզեռնը պարսկական, իրական և քաղաքական հարցերու լոյսին տակ և վաներագրեր, Նայկազեան Նայագիպական Նանդև, Պեյրուք, 1974, հ. Ե, էջ 83:

³⁷⁹ Նշվ. աշխ., էջ 85:

³⁸⁰ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 175:

հիմքում դրված քաղաքական և զինվորական պայմանները: Արաբները հասել էին իրենց անկախությանը, մինչդեռ հայերի «համախմբումը ինքնավար Նայկական Լեզեռնի մը մեջ՝ իրենց ամենէն անհրաժեշտ կարիքը կը համարեն»:³⁸¹ Ի վերջո, 1920թ. օգոստոսի 19-ին ֆրանսիացիները, վերջնականապես, լուծարեցին Նայկական լեզեռնը, որովհետև այն կարող էր խանգարել Թուրքիայի հետ մերձեցման քաղաքականությանը: Փաստորեն, Լեզեռնը լուծարվում է այն վճռական պահին, երբ Կիլիկիայի հայությունը վերջինիս կարիքը շար ուներ:

Սույն ժամակահարվածում Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան աստիճանաբար իրականացնում էին Սալբս-Պիկոյի համաձայնագրի դրույթները: 1919թ. նոյեմբերի 1-ից Արևմտյան Սիրիայում³⁸² բրիտանական զորքերն աստիճանաբար փոխարինվում էին ֆրանսիական զորքերով: Անգլիական ու ֆրանսիական մրցակցությունը երկար չի տևում, Անգլիան տեղի է տալիս, որի կապակցությամբ Մեծ Բրիտանիայի վարչապետ Լոյդ Ջորջը հայտարարել է, որ չի ցանկանում փչացնել հարաբերությունները, քանի որ «իր համար Ֆրանսիայի հետ հարաբերությունները փասը Սիրիա արժեն»:³⁸³

Այս իրադարձություններին զուգահեռ Սիրիական կոնգրեսը կոչ էր անում ժողովրդին դիմադրել ֆրանսիական զորքերին ու ամեն ինչ անել ձախողելու նրանց գաղութարիտական ծրագրերի իրագործումը:³⁸⁴ 1919թ. դեկտեմբերի 21-ին օրենք է հրապարակվում զինապարտության մասին,³⁸⁵ որը նախատեսում էր զորակոչել 20-40 տարեկան բոլոր տղամարդկանց:

Սույն օրենքը նոր անհանգստություն է առաջ բերում հայ տարագիրների շրջանում: 1920թ. Սահակ կաթողիկոսը Դամասկոսից և Նալեպից դիմումներ է սրանում այն մասին, որ նորակազմ արաբական կառավարությունն իր զինվորագրական ընդհանուր ծրագրի մեջ հրահանգել է զինակոչել նաև հայերին: Վերջինս 1920թ. փետրվարի 7-ին հատուկ նամակով խնդրում է Ֆեյսալին հայերի նկատմամբ այդ ծրագրի իրագործումը հետաձգելու մասին, մինչև

³⁸¹ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 175:

³⁸² 1918թ. Դամասկոսում թեև հաստատվում է Ֆեյսալի սիրիական կառավարությունը, սակայն Մեծ Բրիտանիան, «Սիրիան» /պարմա-աշխարհագրական այդ տերմինի մեջ միավորվում էին Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը և Ադրիոփոլանակը/ «թշնամու օկուպացված տարածք» է հռչակում. Մերձավոր Արևելքում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար Ալլենբիև «Սիրիան» բաժանում է երեք գոտիների, հարավային՝ ընդգրկում էր Պաղեստինն ու Ադրիոփոլանակի մեծ մասը, որը դրվել էր անգլիական ռազմական կառավարման ներքո, արևմտյան՝ ընդգրկում էր Լիբանանն ու Լաթաքիայի շրջանը, որը դրվել էր ֆրանսիական ռազմական կառավարման ներքո և արևելյան՝ ընդգրկում էր Դամասկոսը, Նալեպը, Ջերեկ Դրուզն ու Ադրիոփոլանակի մի մասը, որը դրվում է Ֆեյսալի կառավարման ներքո:

³⁸³ Pipes D., նշվ. աշխ., էջ 29:

³⁸⁴ Նովիաննիսյան Ն., Սարգսյան Ն., նշվ. աշխ., էջ 75:

³⁸⁵ Санд А., укз. соч., с. 86.

կայն ապրիլի 25-ին Սան-Ռեմոյի կոնֆերանսում Սիրիայի մանդատը հանձնվում է Ֆրանսիային: 1920թ. հուլիսի 14-ին Դամասկոսին ֆրանսիական կառավարությունը վերջնագիր է ներկայացնում, որով Ֆեյսալից պահանջվում էր ճանաչել ֆրանսիական մանդատը, պարփո սահմանել հակաֆրանսիական գործունեություն ծավալողների նկարգմամբ:³⁹⁰ Հուլիսի 19-ին Սիրիական կոնգրեսը կրկին հաստատում է Սիրիայի անկախ ու սուվերեն պետություն լինելու փաստը և անօրինական է համարում ցանկացած օտարերկրյա միջամտություն:³⁹¹ 1920թ. հուլիսի 24-ին Մայսալունի ճակատամարտն ավարտվում է ֆրանսիական կողմի հաղթանակով:³⁹²

Ֆրանսիան դեռևս 1919թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսին հանդես էր գալիս Սիրիայի ամբողջականության օգտին: Ֆրանսիայի Արքաթին գործերի նախարար Կլեմանսոն 1919թ. հոկտեմբերին հաստատել է այն գաղափարը, որ հերպապերագմական կարգավորումը չպետք է հանգեցնի Սիրիայի բաժանմանը: Այսպիսով, Ֆրանսիան ցանկանում էր Սիրիան՝ ամբողջական և իր իշխանության փակ, որն իրականություն է դառնում որոշակի վերապահումներով Սան-Ռեմոյի կոնֆերանսում:³⁹³

Սիրիական թագավորությունը կարճ կյանք է ունենում, և Ֆրանսիան կարողանում է հասնել իր ծրագրերի իրագործմանը՝ Սիրիան դարձնելով մանդատային գոյի:³⁹⁴ Փաստորեն, Ֆեյսալի վարարումով վերջ է դրվում Սիրիայում Նաշիմյան ժամանակաշրջանին, որը որակվում է որպես «կանգառ՝ թուրքական իշխանություններից անգլիական և ֆրանսիական իշ-

³⁹⁰ علي سلطان ، تاريخ سورية، حكم فيصل بن حسين، 1918- 1920 ، ص 356

Ալի Սուլթան, Սիրիայի պարմություն, /1918-1920/, էջ 356:

³⁹¹ Հովհաննիսյան Ն., Սարգսյան Ն., նշվ. աշխ., էջ 99:

³⁹² Ֆրանսիական զորքը Դամասկոս է մտնել հուլիսի 25-ին: Ֆեյսալն Ալա Ադ-Դին Ադ-Դրուբիին նշանակել է սիրիական նոր կառավարության ղեկավար, ով հերպապյան ընդունում է Ֆրանսիայի՝ Ֆեյսալին գահընկեց անելու, սիրիական բանակը ցրելու և այլ պահանջները: Ֆեյսալը հուլիսի 28-ին հեռանում է Դամասկոսից, իսկ օգոստոսի 1-ին՝ Սիրիայից:

³⁹³ Pipes D., նշվ. աշխ., էջ 24:

³⁹⁴ Ֆրանսիական մանդատային տարածքը մինչև 1923թ. մարտ բաժանված էր վեց կազմավորումների՝ Լիբանան, Դամասկոսի նահանգ, Նախլայի տերություն, Լաթակիայի մարզ, Ջեբել Դրուզի ինքնավար մարզ ու Ալեքսանդրիերի նահանգ, և Եփրատ գետի Ջազիրայի նահանգն առանձին ղեկավարվում էր ֆրանսիական զինվորական կառավարությունների կողմից: Այս բաժանումները հստակ նպատակ ունեին՝ շահարկել էրևիկական տարբերությունները: Լիբանանը 1926թ. անկախ հանրապետություն է դառնում, Ալեքսանդրիերը՝ 1939թ. հանձնվում է Թուրքիային, իսկ մյուս տարածքները 1925թ. կազմում են Սիրիայի ներկայիս տարածքը, որին 1942թ. հունիսին միանում է Լաթաքիան, 1944թ. դեկտեմբերին Ջեբել Դրուզը, որտեղից վերջին ֆրանսիական զինվորը դուրս է գալիս 1946թ. ապրիլի 15-ին: Տե՛ս Pipes D., նշվ. աշխ., էջ 29:

խանություններին անցում կատարելու համար»:³⁹⁵

Այսպիսով, չնայած Ֆեյսալի արտաքին քաղաքականությունը մի շարք փոփոխություններ է կրում, սակայն հայ փարագիւրների հարցում Ֆեյսալն ունեցել է մեկ դիրքորոշում՝ հնարավոր միջոցներով օգնել հայ փարագիւրներին:

Բնականաբար, երկրում տեղի ունեցող քաղաքական փոփոխություններն անմիջականորեն անդրադառնում են հայ փարագիւրների վրա: 1919թ. փետրվարի Նալբայի հայկական կոորդատները, որոնց մասին առավել մանրամասն կանրադառնանք հաջորդ ենթադրյալում, որոշակի լարվածություն են մրցնում հայ-արաբական փոխհարաբերություններում, դանդաղեցնում են որբերի ու կանանց հավաքագրման աշխատանքները, բայց հակասություններն աստիճանաբար հարթվում են:

Նարկ է եղել, որ հայ-արաբական փոխհարաբերություններն այդ փափիններին հարթ չեն ընթացել: Երկու ժողովուրդների միջև առկա անվստահությունն ուներ իր օբյեկտիվ պատճառները: Երիտթուրքերի իրականացրած ցեղասպանությունից հետո հայերն իսլամական միջավայրում զգուշավորություն էին ցուցաբերում: Քաղաքական նկատառումներից ելնելով՝ Սիրիայի արաբներն իրենց հերթին զգուշանում էին հայկական համայնքից: Նայերը ֆրանսիական իշխանությունների կողմից կարող էին օգտագործվել արաբների դեմ՝ վերջիններիս ազգային-ազատագրական պայքարի ժամանակ: Բայց նման թշնամանքը համապարած բնույթ չէր կրում՝ հաշվի առնելով Սիրիայի արաբների բազմափարթությունը: Նակահայկական գործողությունները անհատական ու մարզինալ բնույթ են կրել, որոնք թեև իրողություն են, բայց չեն սպվերում արաբ ժողովրդի, նրա ղեկավարների դրական վերաբերմունքն ու հայ փարագիւրներին վերահաս վրանգներից փրկվելու հնարավորության ընձեռումը:

Այսպիսով, չնայած քաղաքական, կրոնական, լեզվական և այլ խոչընդոտող հանգամանքներին, դարասկզբին Սիրիայում հայտնված հայ փարագիւրները կարողանում են համագործակցել սիրիացի արաբների հետ՝ աստիճանաբար բարելավելով իրենց վիճակը: Եթե 1915-1917 թթ. սիրիացի արաբների օգնությունը հայերին հիմնականում անհատական բնույթ ուներ, ապա սկսած 1918թ. Ֆեյսալի կառավարության փարիսներից անհատ արաբների ցուցաբերող օգնությանը զուգահեռ փարագիւրներին աջակցություն է կրամադրվում նաև պաշտոնական մակարդակով:

³⁹⁵ Է. Ա. Սուլթան, «تاريخ سورية، حكم فيصل بن حسين، 1918-1920»، ص 407.

Ալի Սուլթան, Սիրիայի պատմություն, /1918-1920/, էջ 407:

3.2 1919 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ՆԱԿԵՊԻ ԴԵՊՐԵՏԸ

Էմիր Ֆեյսալը հայ-արաբական հարաբերությունները բարելավելու քաղաքականություն էր վարում, սակայն այս գործընթացում առաջ եկան նաև որոշ խոչընդոտներ: «Նալեպի կոորդամ», «Նալեպի ջարդ», «Նալեպի դեպք»։ այսպես են որակվում 1919թ. փետրվարի 28-ին Նալեպում տեղի ունեցած կոորդամները, երբ փարագիր հայերը ենթարկվել են մուսուլմանների հարձակմանը: «Թուրք ջարդարարները, առաջնորդելով մուրեցված մի խումբ արաբների, փարածվում են քաղաքով մեկ՝ Ջումասա բազար, Ագապե, Բաբ Ալ-Ջնեյնի, Բասթալ Նարամի, Բաբ Ալ-Նասր, հարձակվում են հայերի որբանոցի, դպրոցների, նախկին զորանոցի վրա»:³⁹⁶

Սահակ կաթողիկոսը հերեյյալ կերպ է արտահայտվում դեպքերի կապակցությամբ. «Տխուր դեպք մը մթազևամ էր հայ և արաբ յարաբերութիւնները... Նալեպի մէջ 1919թ. փետրուար 28-ին ... այդ հակաքրիստոնէական շարժումը, ինչպես կը յայտնէ գեղապետ Պոնմոնը, ընդհանուր շարժում մըն էր՝ գրգռուած Սիւրիոյ մէջ ու նոյնպէս ծրագրուած Արանայի մէջ, իր կազմակերպութեան կեդրոնը ունենալով Պոլսոյ մէջ: Ամեն տեղ գրգռութիւն յառաջուցած էր ինկող Թուրք Կառավարութիւնը»:³⁹⁷

Ըստ արաբ որոշ ակնամարտների՝ ընդհարման համար պատրվակ է ծառայել Ալ-Ջումասա շուկայում հայերի կողմից կատարված գողությունը: Այս լուրը փարածվում է ողջ քաղաքով, մինչև «անգլիական և ֆրանսիական շրջանակները շարժվեցան և թույլ չտուին, որ ջարդն ավելի ծավալի»:³⁹⁸ Իհարկե, Նալեպի դեպքերի ենթադրյալ պատճառների թվում այս պատճառն առավել անհավանականն է:

Փետրվարի 28-ի իրադարձությունների հերևանքով սպանվածների և վիրավորների մասին բերվում են հակասական տեղեկություններ: «Կիլիկիա» թերթը /1919թ. մարտի 12 և 14/ նշում է, որ սպանվել են 51, վիրավորվել շուրջ 100 և անհետ կորել 20-30 հայեր: Ֆրանսիական մամուլը նույնպես անդրադարձել է այս դեպքերին, նշելով, որ հայերն ունեցել են 50 զոհ և 150 վիրավոր՝ մեկ ժամից էլ պակաս ժամանակահատվածում: 1800 բռնաբանների ֆրանսիական կողմը տեղափոխել է հիվանդանոց:³⁹⁹

Ընդառաջելով հայոց առաջնորդարանի դիմումներին՝ բրիտանա-

³⁹⁶ Նաջարյան Ե., Հայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայում /1918 հոկտեմբեր-1919 հունիս/, փրև «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Երևան. 1974, հ. 6, էջ 154:

³⁹⁷ Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 95:

³⁹⁸ Թովուպյան Ն., նշվ. աշխ., էջ 214:

³⁹⁹ “L’illustration”, Paris, 5 avril, 1919.

կան իշխանությունների կողմից այս դեպքերի կապակցությամբ հարուկ սրեղծված ռազմական դատարանը ձերբակալել է հայկական կոտորածների մի շարք պարասխանաբուների, աշխարանքից ազատել հայերի նկատմամբ բռնություններ գործած բազմաթիվ պաշտոնյաների և 35 անձանց դատապարտել է մահվան: Մի քանի ոճրագործներ պարտվել են անգամ Սիրիայի սահմաններից դուրս: Դեպքերն ուսումնասիրելու նպատակով կազմված քննիչ հանձնաժողովում ընդգրկել են երկու անգլիացի, երկու արաբ, մեկ ֆրանսիացի և երկու հայ՝ Պ. Փափագյանը և Մ. Նաթանյանը՝ որպես Նայ ազգային խորհրդի ներկայացուցիչներ:

Դեպքերի օրը Նայ ազգային միությունը դիմել է Կեղի ֆրանսիական և անգլիական կառավարություններին՝ սպառնացող վերանգը կանխելու խնդրանքով: Խորհրդակցության և բանակցության ընթացքում անգլիական զորահրամանատարն առաջարկել է. «նոյնիսկ վրաններու փակ փոխադրելու հայերը, որպեսզի ի հարկին դիրին ըլլայ պաշտպանել զանոնք»:⁴⁰⁰ Վերջինիս այս առաջարկն, իհարկե, չափազանցություն էր, քանի որ հնարավոր չէր քաղաքում ապաստանած բոլոր հայերին փրկավորել վրանների փակ:

Մուհամմադ Բուրդ Ալին նշում է, որ բրիտանական ղեկավարը «մեղավորներին» ուղղված իր ելույթում ասել է. «Դուք ղեկավարներ եք և ղեկավարներն իրենց փոխությունն ի ցույց չեն դնում հասարակությանը: Մենք որևէ օրինական պարիժ չենք կարող ձեզ համար սահմանել, բայց այսուհետ դուք պետք է հերկեք, թե ովքեր են զենք կրում կամ փանը պահում, քանի դեռ արևելության մթնոլորտ է, և ժողովուրդը հիշում է այդ դեպքերը»:⁴⁰¹ Նա Նալեայի դեպքերը որակում է «հայկական աղեկ»:⁴⁰²

Նալեայի հայկական կոտորածի պարճառները հիմնականում քաղաքական էին, սակայն այն համարվել է քրեական հանցագործություն: Կայացվել են մահավճիռներ, մի խումբ ոճրագործներ ձերբակալվել են և գործն ավարտված է համարվել: Բրիտանական իշխանությունները պարբերաբար հրապարակել են պաշտոնական հայտարարություններ, որով ծանուցել են իրականացվող մահապարիժների մասին. «Նայկական ջարդին մասնակցելուն համար պարտեղազմական արեանի կողմ: դատապարտում է՝ ոմնր Շերիֆ Ակնայի և մանրավաճառ Արդ Ալ-Բեդիի մահավճիռը ընդ-

⁴⁰⁰ Կենճևան Ա., Սոցիալ-դեմոկրատ Նեջակեան կուսակցությունը և Կիլիկիան ինքնավարության արթը 1919-1921, Պէրոթ, 1958, էջ 8:

⁴⁰¹ محمد كرد علي، خطط الشام، دمشق، الجزء الثالث، 1983، ص 165.

Մուհամմադ Բուրդ Ալի, Շամի փրկագրությունը, հ. 3, 1883, էջ 165:

⁴⁰² Նշվ. աշխ., էջ 164:

հանոր հրամանադրության կողմ: վավերացված ըլլալով, այսօր՝ մայիսի 8-ին անոնք կախաղան հանուեցան»:⁴⁰³

Ավելի ուշ թերթը տեղեկացնում է, որ «փետրուարի 28-ի հայկական ջարդի հեղինակներէն 4 հոգի ևս մահուան դատապարտուած են Նալեայի մէջ և իրենց վճիռը գործադրուած է Պապ Ալ-Ֆարաճի հրապարակում»:⁴⁰⁴

Փետրվարի 28-ի ջարդարարության հետևանքով բանարարկված արարները վտրձել են ապարամբել և փախչել: Վերջիններս տեղի նահանգապետի հրամանով գնդակահարվել են: Միայն մի քանիսն են ողջ բռնվել ու զինաթափ արվել և ուղարկվել են Սուդանի բանտերը:⁴⁰⁵

Փարիզահայ հասարակական գործիչ Մարան գրնում է, որ այդ կոտորածն իր սկզբնական բնույթով «Ֆրանսիական հոգաբարության դեմ սարքված շարժում մը, որուն թելադրությունը միշտ Դամասկոսէն՝ մահմեդական Սուրիոյ այդ միջնաբերդէն կուգար, նույնիսկ հայկական կոտորածի մը տեղի տվաւ, որովհետև Փրանսա Սուրիա էր մտած հայ զինուորներով և հայերը կնակարվէին ֆրանսիական տիրապետության դրօշակակիրները»:⁴⁰⁶ Այս տեսակետն է կիսում նաև Ա. արք. Սյուրմէյանը. «Ջարդը կազմակերպուած էր շերիֆական ոստիկաններու և ոստիկան զինուորներու կողմէ ... ջարդը ծրագրուեցաւ Նալեայի մէջ նոյն օրերուն խոնուող հարիւր հազարէ: անլի հայ զաղթականներու ներկայութեանը իբր. դժգոհութիւն, լաւ հասկցած ըլլալով Նայոց Փրանսասիրութեան»:⁴⁰⁷ Այս տեսակետի մէջ կա որոշակի ճշմարտություն, սակայն միայն դրանով հնարավոր չի բացատրել նշված իրադարձությունները, իսկ մանդատի տարիներին ֆրանսիական կողմը կառչում էր դրանից և անընդհար քրիստոնյաներին վախեցնում էր իսլամական վտանգով:

Արևելյան լեզոնի հայ զինվորների մուտքը Սիրիա չէր կարող հայկական կոտորածների ուղղակի պատճառ համարվել, սակայն, ինչ խոսք, որոշ բացասական ընկալումներ առաջացել են արարների մութ՝ ազդելով նաև հայ-արաբական հարաբերությունների վրա: Բացի այդ Նալեայի արարները տեղեկացված էին, որ հայերը հավաքվում են քաղաքում՝ այնտեղից Կիլիկիա՝ իրենց հայրենիք մեկնելու համար, իսկ ինչ վերաբերում է շերիֆական զինվորներին, ապա նույն շերիֆականների հետ միասին են հայերն ազատագրել Նալեայը, Դամասկոսը, այն էլ ոչ վաղ անցյալում: Այնպես որ հա-

⁴⁰³ «Կիլիկիա», 14.05.1919:

⁴⁰⁴ «Կիլիկիա», 17.06.1919:

⁴⁰⁵ «Կիլիկիա», 23.05.1919:

⁴⁰⁶ Թովմոզյան Ն., նշվ. աշխ., էջ 216:

⁴⁰⁷ Սիրմեյան արք. Ա., Պապմութին ..., հ. Բ, էջ 960-961:

յերի ֆրանսաճանձեր լինելն այդ ժամանակահատվածում այդքան ցցուն չէր, որ հանգեցներ արաբների նմանօրինակ վարվելակերպին:

«Սիրիայի պարմություն» աշխարհության հեղինակ, պարմաբան Ալի Սուլթանը Նալեայի դեպքերի իրական պատճառ է համարում այն փաստը, որ բազմաթիվ հայ կամավորներ ծառայում էին Կիլիկիայում և գեղապինյա շրջաններում: Վերջիններս նաև Սիրիայի լեռնային շրջաններ գնալով՝ կողոպտում և սպանում էին արաբներին ու թուրքերին, որի հետևանքով «...արաբները մի քանակ թշնամանքով էին լցվել հայերի նկատմամբ»:⁴⁰⁸

Ալի Սուլթանը կիսում է Մարայի կարծիքը, ըստ որի Սիրիայում փորող հակաֆրանսիական տրամադրությունները և ֆրանսիական բանակում հայ կամավորների ծառայելու փաստը լրացուցիչ լարվածություն էր մտցնում հայ-արաբական հարաբերություններում: Նեղինակը դրա ապացույցն է համարում Նալեայից Բեյրութի ֆրանսիական հյուպատոսարան ուղարկված հեռագիրն, որ ասվում էր. «Խնդրում ենք թույլ տալ հայ կամավորներին չծառայել ֆրանսիական բանակում»:⁴⁰⁹ Սակայն արաբների հակաֆրանսիական տրամադրությունները չէին կարող հայկական կոտորածների պատճառ դառնալ: Ֆրանսիան՝ Սիրիայի նկատմամբ իր ծրագրերն արդարացնելու համար դեպքերից հետո է միայն փորձում օգտագործել նշված իրադարձությունը՝ Ֆեյսալի իշխանությունը վարկաբեկելու և հայ-արաբական հակասությունները սրելու համար:

Մուհամմադ Բուրդ Ալին Նալեայի դեպքերի համար երեք պատճառ է բերում: Ամին Սաիդ Ղարյաբը, ում Մուհամմադ Բուրդ Ալին վարահեյլի անձնավորություն է համարում, դեպքի մասին նրան տեղեկացրել է. Ադա-նայով Սիրիա վերադարձող արաբ զինվորներին թուրքական համազգեստով տեսնող հայերը, հիշելով իրենց հետ կարարված ողբերգությունը և մոռանալով նրանց արաբ լինելու փաստը, վերջիններիս հետ շատ դաժան էին վարվում: Արաբ զինվորները Նալեայ էին հասնում հայերի կողմից վիրավորված, բռնությունների ենթարկված: «Բնականաբար նման արաբները քաղաքում լուրեր էին տարածում, որ հայերը մեզ հետ վարվում են այնպես, ինչպես թուրքերն են իրենց հետ վարվել»:⁴¹⁰ Նման միջադեպերը դառնում են Նալեայի դեպքերի պատճառը:

Երկրորդ պատճառը հեղինակը համարում է Սիրիայում տեղակայված

⁴⁰⁸ . 114 ص ، 1920 - 1918، حکم فیصل بن حسین، تاریخ سوریه، علی سلطان،

Ալի Սուլթան, Սիրիայի պարմություն, /1918-1920/, էջ 114:

⁴⁰⁹ Նույն տեղում:

⁴¹⁰ محمد كرد علي، خطط الشام، الجزء الثالث، 1983، ص 164.

Մուհամմադ Բուրդ Ալի, Շամի տեղագրությունը, h. 3, 1883, էջ 164:

անգլիական զորահրամանատարության՝ հայ տարագիրներին կարևոր պաշտոններ տալու փաստը: Տեղի արարները հայ տարագիրներին զորձակալներ էին համարում: «Նայերն ավելի ինքնավարահ դարձան: Նրանց նախկին անօգնական վիճակը փոխարինվեց ազատ և բարեկեցիկ կյանքով, մեծամարացան, ինչը չընդունվեց արաբների կողմից ... Նրանք, բնականաբար, գայրոյթով էին նայում հայերին...»:⁴¹¹

Երրորդ պարճառը տնտեսական բնույթ ուներ. հայերին մի շարք ապրանքներ, կենցաղային իրեր ավելի մարջելի ու հասանելի էին, քան արաբներին: Անգլիական կողմը հայերին որոշակի գումարներ էր պրամադրում, նրանք կարող էին նույնիսկ սենյակի վարձ վալ, մինչդեռ արաբների համար նույն բանն ավելի թանկ էր: Հիմնականում հայերի համար գործում էին որոշակի գեղչեր: Այս փաստը նույնպես գայրացնում էր արաբներին:

Իսկ արաբների մասնակցությունը Նալեայի դեպքերին Մուհամմադ -Բուրդ Ալին բացատրում է հետևյալ հանգամանքով. «Արաբական իշխանությունները մասնակցում են այդ դեպքերին, բանի որ այդ տարածքում տեղի ուսրիկանության և զորքի մեջ կային նաև արաբներ»:⁴¹² Այսինքն, հեղինակը փաստում է, որ արաբներն ինքնաբերաբար են մասնակից դարձել դեպքերին: Դեպքի ժամանակ գոհված մուսուլման հալեպցիների թիվն, ըստ նրա, չի անցնում տասնից:

Մեր կարծիքով առավել հավաստի է այն վարկածը, որ Սիրիայում «աշխուժացած թուրքական զորձակալություններն էին, որ կազմակերպեցին, ղեկավարեցին և հիմնականում զորձադրեցին Նալեայի 1919թ. փետրվարի 28-ի հակահայ արյունոտ բռնությունը»:⁴¹³ Կամ «Նալեայի թուրք դավադիրները գլխավորեցին տեղաբնակ իրենց հայրենակիցների և արաբ խավարամիտ որոշ տարրերի խժոժություններն անգեն և անպաշտպան հայ գաղթականների դեմ»:⁴¹⁴ Եվ ականապես հայերի այն պնդումները, որ «զանգվածային ջարդը ղեռ սիրելի է մեր երդուալ թշնամիների համար»:⁴¹⁵ Այստեղ պետք է թուրքական կողմին դիտարկել նախաձեռնող ու հրահրող կողմ, իսկ իրադարձությունների վերլուծության ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել թուրքական, անգլիական, ֆրանսիական և արաբական կողմերի մասնակցության փաստը:

⁴¹¹ .164 ص 1983، الجزء الثالث، محمد كرد علي، خطط الشام،

Մուհամմադ -Բուրդ Ալի. Շամի տեղագրությունը, հ. 3, 1883, էջ 164:

⁴¹² Նշվ. աշխ., էջ 165:

⁴¹³ Նաջարյան Ե., Նայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայում. տե՛ս «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 6, էջ 144:

⁴¹⁴ Նշվ. աշխ., էջ 151:

⁴¹⁵ «Կիլիկիա», 14.03.1919:

Այդ ժամանակ ֆրանսիական կողմը պնդում էր, որ բրիտանական հրամանատարության թողվությամբ արարները կազմակերպել են հալեպահայերի ջարդը:

Նայ և օտար աղբյուրներում պահպանված նյութերի վերլուծությունները ցույց են տալիս, որ Նալեայի դեպքերը կազմում են Կիլիկիայի հայության դեմ ուղղված դավադրության մի մասը: Ամենևին պարահական չէր, որ դա փրկի է ունենում այն օրերին, երբ հայերը զանգվածաբար ներգաղթում էին Կիլիկիա: Թուրքական կողմը նպատակ էր հետապնդում խոչընդոտել հայերի վերադարձը Կիլիկիա և երկրորդ, սրեղծել հայ-արաբական լարված հարաբերություններ:

Անգլիական և ֆրանսիական զինվորական հրամանատարությունները հայերին հորդորում էին Կիլիկիա վերադառնալ: Դամասկոսի և հարակից շրջաններից ավելի քան քսան հազար հայության հայրենիք վերադառնալու ուժգին հոսանքը կանոնավորելու համար գործում էր Դամասկոսի Նայ ազգային միությունը, որը նախագահում էր Ա. Կենճյանը: Նա նույնպես իր հուշերում հասարարում է Նալեայի դեպքերի թուրքական գործակալների կողմից նախաձեռնված լինելու վարկածը և կապ է փոխում Կիլիկիայի ու Նալեայի դեպքերի միջև. «1919 փետրուարին Նալեայի մեջ ըստ թուրքական վաղեմի ունակութեան, հայերու ջարդը, կուզար Դամասկոսի փարսագիր հայութեան խանդավառութեան վրայ ջուր լցնելու, որքան որ ալ յիշեալ ջարդերն ու ուրիշ նման դեպքերը գսպող անգլիական և ֆրանսիական զինորական ուժերու վրայ վարահուրթինը մնար անխախտ»:⁴¹⁶

Անգլիական զորքերի՝ Միրիա մրենկուց հեպո Նալեայից հեռացող թուրք պետական պաշտոնյաներին փոխարինելու էին եկել «թուրք մրայնությամբ սնուած և թուրք դաստիարակությամբ զարգացած» արաբները, որոնք «մեծա մասամբ իթթիհաղին կպարկանեին»:⁴¹⁷ Միանգամայն հավանական է այն փաստակերթը, թե «գարշելի իթթիհաղը հոս ալ՝ Նալեայում խորունկ արմար ձգած է արաբ զանազան խավերուն մեջ և դյուրին էր հասկանալ, թե Թուրքիո մեջ փակավիհ գաղտնապես գործող իթթիհաղականները շար դյուրալ կրնային հարաբերության մեջ մրենլ իրենց Սուրիոյ կուսակիցներուն հեպ»:⁴¹⁸ Կասկած չկա, որ Նալեայում հայերին կտորտելու ծրագրի իրականացումը հանձնարարված էր Ազատայի թուրքական շրջանների ցուցումներով գործող արաբ իթթիհաղականներին: Նալեայի ոսրիկանապերը, ավագանու անդամների մեծ մասը պարկանում էին իթթիհաղա-

⁴¹⁶ Կենճեան Ա., նշվ. աշխ., էջ 8:

⁴¹⁷ Նաջարյան Ե., Նայ-արաբական փոխարարերությունները Միրիայում, էջ 152:

⁴¹⁸ Նույն փրկում:

կան արաբների թվին: Թուրքական կողմի հրահրման մասին է վկայում ֆրանսիական մամուլը. «Նալեայում մինչ այդ հայերի արյունն այդքան չէր թափվել թուրքերի կողմից հրահրված խռովությունների հետևանքով»:⁴¹⁹

Նալեայում, Կիլիկայում այդ ժամանակ լույս տեսնող թերթերի հրատարակումները վկայում էին Նալեայի դեպքերին նախորդ օրերին տիրող լարված մթնոլորտի մասին: Վերջինիս համար առիթ է եղել «Ալ-Արաբ» թերթի⁴²⁰ գլխավոր խմբագիր Սամի Ալ-Սարրաջի՝ փեյրվարի սկզբներին գրված «Նայը և արաբը» խորագրով հոդվածը, որը տպագրվել է նրա՝ Աղանա կապարած շրջագայությունից հետո: Հոդվածում հայերի դեմ գրպարտանքներ էին ներկայացված:⁴²¹ Այս հոդվածում Սամին փորձում է «սպացուցել, թե հայ կուսակցությունները, հայ չեթենները և հայ ժողովուրդը Թուրքիային դարձող արաբներուն նեղություններ տալ է գապ, գանոնը կսպանեն»:⁴²² Նալեայի հայ մամուլը, առաջինը՝ «Տարագիր»-ը հերքել է այդ գրպարտությունները: Նման մթնոլորտը սրելով վել էր շնորհիվ «Սամիի նման թրթա-ցած և թուրք դրամի սպասարկու արաբներու, ինչու չէ՛ պաշտօնական իսկ դեմքերու այդ ուղղութեամբ ջանքերի»:⁴²³

«Նայ ձայն»-ը նույնպես անդրադառնում է Սամի բեյի հոդվածին՝ փորձելով հերքել Սամիի հոդվածում տեղ գրած այն դժգոհությունը, «թե կը գանգաւի հայ զինուորներու կողմէն Արաբ ճամփորդներուն հանդէպ եղած անտեղիութիւններէն»: «Նայ ձայն»-ի փեյրվարի 23-ի համարում հերքում է տպագրվում, ըստ որի ոչ մի հայ նպարակ չի ունեցել արաբներին մեղադրել կամ վիրավորել, ընդհակառակը՝ «... լրագրութիւնը և թէ ժողովուրդը միշտ երախտագիտական զգացումներ արտահայտած են արաբ կառաարութեան և ազգին հանդէպ եւ իրենց այդ արտայայտութիւնները արձագանգ գրած են արտասահմանի մեջ ալ»:⁴²⁴

Դեպքերի նախորդ օրը «Նայ ձայն»-ում տպագրված «Նայ և արաբ եղբայրակցութիւնը» հոդվածի հեղինակ Ն. Արամյանը հավաստիացնում էր, որ Սամի բեյը, ով Աղանայից նոր էր վերադարձել, պետք է իր քաղաքագների հաբուկ հուրառությամբ զգար, որ «... Ինքը /Սամի բեյը՝ Ն. Մ./ կամայ թէ ակամայ իթթիհաղի գործիքը կըլլայ, երբ նոյնիսկ անգիտակցօրէն,

⁴¹⁹ “L’illustration”, 1919, 5 avril, 1919.

⁴²⁰ 1918թ. աշխանը իթթիհաղական արաբների կողմից կազմակերպվել էր «Նաղի Ալ-Արաբ» /«Արաբական ակումբ»/ ընկերությունը, որի օրգանն էր «Ալ-Արաբ» օրաթերթը:

⁴²¹ Նաջարյան Ե., Նայ-արաբական փոխհարաբերություններ Սիրիայում, էջ 154:

⁴²² «Կիլիկիա», 14.03.1919:

⁴²³ Նույն տեղում:

⁴²⁴ «Նայ ձայն», 27.02.1919:

գրջի մէկ սխալով հայո և արաբի միջև ցրտութիւն յառաջ բերել կուզէ»:⁴²⁵
Նաև կոչ է անում զոհ չդառնալ «իթթիհաղի անարգ դաւերուն և փոխանակ
զիրար մեղադրելու սխալ մեկնաբանելու ... իրարու թով գանք ու զիրար
լուսաւորենք՝ օգտուելու միմեանց առաւելութիւններէն»:⁴²⁶

Թերթում բացաբրություն է քրվում Սամի բեյի դժգոհությունը հարու-
ցած այն փաստին, ըստ որի հայ զինվորներն իրենց Ֆրանսիական դեկա-
վարներից ճամփորդ թուրքերին խուզարկելու հանձնարարականներ են
ստացել՝ նրանց զենքերն առգրավելու համար. բայց սխալմունք է եղել,
որի վերաբերյալ հողվածագիրն հավաստիացրել է. «...կը յանձնարարենք
այդ պարագան Նայ պաշտպանական մարմիններին, որ հայ զինորները
խուզարկութիւնների միջոցին կամ իրենց պարտականութիւնների կարա-
րումի մեջ գգուշատր ըլլան ու ցաւ և դժգոհութիւններ չի պարճաւոճն արաբ
եղբայրներուն, որոնք ամէն առիթներուն կը գովեն հայերը»:⁴²⁷

Դեպքերի ականաւրես Ն. Դիշոյիշյանը հաստատում է արաբների մաս-
նակցությունը. «Թուրքական գաղտնի գործակալները, օգտագործելով
քաղաքի ոչ աշխարավոր արաբ մասսաներին, հավաքել էին հին բերդի
մոտ՝ Չումա կոչվող շուկայում՝ իբր քննարկելու Սիրիայում անգլիականն,
թե՞ Ֆրանսիական խնամակալության հարցը, մինչդեռ հապուկ հրահան-
գից հետո, հավաքված խումանին ուղղում են հայերին կոտորելու և կողոպ-
տելու նրանց ունեցվածքը»:⁴²⁸

Չի բացառվում, որ Նալեպի խիստ փոքրաթիվ թուրքերից ոմանք մաս-
նակցած լինեն հայերի կոտորածներին, սակայն ճիշտ չի լինի բոլորին
համարել «Նալեպի և շրջակա բնակավայրերի հայաւրյաց թուրքեր», այն
դեպքում, երբ աղբյուրները թուրքեր են հիշարակում հայերի կոտորած-
ներին մասնակցելու մեղադրանքով դատարանի առաջ կանգնածների,
բանարկվածների կամ քստրվածների մի մասին: Ըիշոյ է, անգլիական
ռազմական դատարանը զանազան նկարագրումներով մերժել է լսել կոտոր-
ածին արաբ ոստիկանների, զինվորների մասնակցության վերաբերյալ
վկայությունները, սակայն նրանց մեղսակցության վերաբերյալ փաստերը
համապարասխանում էին իրականությանը: Նույնիսկ դեպքերից շարաք-
ներ անց «արաբ ոստիկանները, թաղերու մխթարները» գործնական քայ-
լեր են կատարել հայ տարագիրներին Նալեպից վարարելու համար»:⁴²⁹

⁴²⁵ «Նայ ծայն», 27.02.1919:

⁴²⁶ Նույն տեղում:

⁴²⁷ Նույն տեղում:

⁴²⁸ Դիշոյիշյան Ն., նշվ. աշխ., էջ 264:

⁴²⁹ «Կիլիկիա», 26.03.1919:

Նայ ականադրեսները, դեպքերի անմիջական մասնակիցները պնդում են Նալեպի դեպքերի թուրքական իշխանությունների կազմակերպման վարկածը, սակայն հստակ նշում են, որ ջարդերն իրականացվել են արաբների միջոցով: Ջարդերի ականադրես Առնակն իր հուշերում գրում է. «Ինչպիսիք 28-ին ուրբաթ առօրեան ջարդն էր, գոր վայրենի արաբներ իրենց ոստիկաններու գլխավորութիւնով գործի դրին ջարդուելու դարապարտուած խեղճ, աննեղ ու անրիքական հայերուն վրայ»:⁴³⁰

Ավելի ուշ պաշարվել է նաև քաղաքի գորանոցը: Արաբները հարձակում են գործել նաև Նալեպի հայկական որբանոցի վրա: Որբանոցի տղաներից շատերը փայտե հրացաններով ավելի քան 2 ժամ պաշտպանել էին որբանոցը: «Խուժանը, փայտե հրացանները իսկականի քրեղ ընդունելով սիրտ չէր արել շենքը խուժել»:⁴³¹

1919թ. փետրվարյան դեպքերից հետո շատ հայ երեխաներ, կորցնելով իրենց վարահույությունը, փորձել են փախչել: Որբերի շրջանում վարահույությունը վերականգնելու համար Ա. Շիրաճյանը, որբանոցի շենքում արաբական տոնի կապակցությամբ ընդունելություն է կազմակերպել: Շիրաճյանի խնդրանքով Էմիր Ֆեյսալը, ավելի քան հիսուն արաբ պաշտոնյաների ներկայությամբ, մոտ հազար որբերի, որոնց թվում է եղել նաև հեղինակը, «հավաստիացրեց, որ եղածը չի կարող կրկնվել, իսկ արաբները, նախկինում թուրքերի կողմից հավասարաչափ ճնշված լինելով, համակրում են հայերին և խոստանում իրենց ձեռքի քակ եղած միջոցներով օժանդակել հայ գաղթականներին, որբերին»:⁴³²

Սակայն ամենակարևորն այն է, որ արաբներն ընդունել են իրենց մեղքը և 1919թ. նոյեմբերին արաբական ավազանու ներկայացուցիչների առաջարկով ստեղծվել է «Նայ-արաբական բարեկամության կոմիտե», որի նպատակն էր անգլիական գործերի հեռանալուց հետո քաղաքում «շրջող վրդովեցուցիչ շշուկները քննել և թյուրիմացությունները փարսպել»:⁴³³ Այդ

⁴³⁰ Առնակ, Թուրքերու ճանկին մեջ 1916-1919, Էրևան, 2007, էջ 145:

⁴³¹ Դիշոյիշյան Ն., նշվ. աշխ., էջ 264:

⁴³² Նշվ. աշխ., էջ 265-266:

⁴³³ 1924թ. «Արև» թերթի ապրիլի 4-ի համարում այդ կոմիտեի ստեղծման կապակցությամբ Մ. Նաթանյանը գրել է. «Նալեպի մեջ օտար գրգռության քրեղի ունեցած դեպքին առաջին շվարումը անցնելեն ետք, կիիշեն, թե ինչպես, քրեղվույն արաբ և հայ վերին շրջանակները պարահամեն հուզված անկեղծորեն փափաքեցան մի անգամ ընդմիջար առաջին ամեն նմանօրինակ ցավադիք պարահարսներու... Անդին միևնույն ազնիվ ներշնչումով կազմվեցավ «Նայ-արաբ բարեկամության կոմիտե», որի միակ նպատակը ընտրված էր այդ երկու ժողովուրդներուն մեջ ակամա գոյացած թյուրիմացությունները փարսպել և գործն պրոպագանդայով մը ամրապնդել հայ-արաբական դարավոր բարեկամությունը: Տե՛ս Թ-ուիուզյան Ն., նշվ. աշխ., էջ 328:

կոմիսիայի անդրանիկ հավաքություն⁴³⁴ Տալեպի զինվորական կառավարչի քաղաքական գծով օգնական Նաջի Սուալդին հայտարարել է. «Տալեպն ու արաբները կրնան վարահ ըլլալ, որ իրենց մեկեն մյուսին որևէ վնաս չի կրնար ըլլալ, ու հայն իր փան մեջ կրնա հանգիստ քնանալ առանց իսլամն կասկած ունենալու, արաբը նույնպես հայեն կասկած թող չունենա»։ Ապա նշել է, որ փետրվարի 28-ի արյունահեղությունը «երկու կողմին համար ալ աղերաբեր եղալ: Այո, հայեր սպանվեցան, բայց արաբներն ալ կախվեցան ու շարերն ալ Սուդանի բանվերուն մեջ կհեծնեն»:⁴³⁵

Նաջի Ալ-Սուալդիի հայտարարությանը հավանություն փալով՝ ներկաները նրան ընդրել են «Տայ-արաբական բարեկամություն» կոմիսիայի նախագահ: Այնպես որ, թուրքերի կողմից հրահրված մի քանի արաբների՝ հայերի նկատմամբ բռնությունների իրագործման փաստը չի կարելի վերագրել Տալեպի ողջ ազգաբնակչությանը և վերջինիս մեղավոր ճանաչել:

Թեև հայերի կոտորածը կազմակերպվել էր Թուրքիայում և իրականացել արաբ իթթիհադալանների ձեռքով, բայց պատասխանատվության բաժինն ունեին նաև բրիտանական և ֆրանսիական կողմերը: Լարված քաղաքական իրադարձությունների ժամանակահատվածում՝ 1918-1919թթ. Կիլիկիայից մինչև Սիրիա գործող բրիտանական զինվորական իշխանությունները թիչ հավանական է, որ րեղյակ չլինեին Տալեպի հակահայկական դավադրության մասին, կամ առնվազն փրորող դժգոհության մթնոլորտին:

Ն.Դիշդիշյանն իր հուշերում անդրադառնում է անգլիական գորամասի հրամանատարության վարվելակերպին, որն իմանալով կոտորածի մասին, սկզբում նախաճաշի պարճատարանությամբ ձգձգել է դեպքի վայր մեկնելը, հետո էլ հեծելագորն իբր հրամանը ճիշտ չկատարելու պարճատով մի քանի անգամ կրկնել է րվել ձիերի վրա նսերել-իջնելը: «Տամբերությունից դուրս գալով՝ հեղիկ զինվորները, նաալով օգնության համար բանակարեղ ժամանամ հայերի աղերասնքին, առանց հրամանարարի շրապում էին քաղաք, և շնորհիվ նրանց օգնության՝ դաղարեցվում է կոտորածը»:⁴³⁶ Դեպքերի ականաբես Միջգավառական միության անդամ, Կիլիկիայի գաղթի կազմակերպիչներից Մ.Նաջարյանն անգլիական զինվորական միջամտության համար հերեյալ կերպ է արարահայրվել. «Տոս միայն կը

⁴³⁴ «Կիլիկիա», 30.11.1919թ.: Այդ հավաքույթ-թեյանեղանբ րեղի է ունեցել Սարուն Խանի հայկական որբանոցի սրահում՝ Տալեպի զինվորական կառավարիչ Զաֆար փաշայի նախագահությամբ: Տիմանկան թեման եղել է «արաբ և հայ երեւելիներու միջև գոյացած իրարհասկացողությունը ժողովրդական խավերուն մեջ ես րարամել»:

⁴³⁵ «Կիլիկիա», 30.11.1919:

⁴³⁶ Դիշդիշյան Ն., նշվ. աշխ., էջ 264:

շեշտերը, որ ազգաբարար ու փրկարար բանակ մը միայն կրցաւ իր հանդարտիկ նախաճաշէն վերջ շար ուշ օգնութեան փութալ ու շար մը հոգիներ ազարել լուրջ վրանգներէն և սարոյց մահէ»:⁴³⁷ Ամեն դեպքում, հանուն ճշմարտության պէտք է խոստովանենք, որ Նալեայում գոհված հայերի թիվն ավելին կլինէր, եթէ անգլիական կայազորը չմիջամտեր դեպքերին:

Փարիզի Խաղաղության վեհաժողովին մասնակցելու մեկնած Ֆեյսալը, դարապարտել է միջադեպը, ասելով, որ արաբներն ընդունակ չեն նման քայլի: Իր եղբորը՝ էմիր Ջեյդին ուղարկված հեռագրում Ֆեյսալը գրում է. «Դա արվել է փրկարարությամբ, թշնամությամբ և սրոր նպատակներով: Նման դեպքերն ապագայում հաջողություն չեն ունենա: Դրանք թշնամու գործակալների կողմից էին հրահրված»:⁴³⁸

Նալեայի դեպքերից որոշ ժամանակ անց Նուբար փաշան հարուկ պարգամով դիմել է Նալեայի առաջնորդարանին. «Այս փոխանցման շրջանին անհրաժեշտ է պահել խոհեմություն և արթնամտություն ... հեռագրալուրդ հաղորդեցիք Կիլիկիոյ, Դամասկոսի, Պէրյութի հայ ժողովուրդին և Նայ Լեզեոնի կամաւորներին»:⁴³⁹ Նա րեղեկացրել է նաև, որ «համաճայեական կառավարությունների մօտ դիմումներ կարարած ենք ու բացարձակ ապահովություն ստացած ենք, թէ նմանօրինակ դեպքերը այլևս չեն կրկնուի»:⁴³⁹

Այսպիսով, հայ տարագիրները մեկ անգամ ևս համոզվում են, որ անգլիական և ֆրանսիական գինևորական ուժերի ներկայությունը բավարար չէր իրենց անվերականգնելի և անարթնանալի համար, անգամ՝ առօրյա խաղաղ պայմաններում:

Նայ-արաբական փոխհարաբերությունները պարմության հետ իրենց անմիջական աղերսից անկախ, Նալեայի դեպքերն առավել ուշադիր և խորագնին պարզաբանման են արժանի: Նալեայի դեպքերը ճիշտ է, կարուկ չեն վարթարացրել հայ-արաբական հարաբերությունները, բայց, այնուամենայնիվ, որոշակի թշնամության և անվարահության մթնոլորտ են ստեղծել երկու ժողովուրդների հարաբերություններում, ինչը կարճ ժամանակահատվածում հարթվել է: Սակայն հայ-արաբական հարաբերություններում լարվածության ձևավորման վրանգը միշտ եղել է, որին կարող էին նպաստել անգլիական, ֆրանսիական և թուրքական կառավարությունները:

⁴³⁷ Նաճարեան Մ., Յուզագիրք..., էջ 29:

⁴³⁸ علي سلطان ، تاريخ سورية، حكم فيصل بن حسين، 1918- 1920 ، ص 114 .

Ալի Սուլթան, Սիրիայի պարմություն, /1918-1920/, էջ 114 :

⁴³⁹ «Կիլիկիա», 16.04.1919:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻ ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ /1920-1924ԹԹ./

4.1 ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Նայ փարագիրների գանգվածային ներկայությունը Սիրիայում տորանոր խնդիրներ էր առաջացնում: Վերջիններս սկզբից եթե պետք է ինտերգրվեին երկրի սոցիալական կյանքում, քանի որ բարեգործական ընկերությունների, միսիոներական կազմակերպությունների հովանավորությամբ երկար չէին կարող գոյարևել: Այս ենթազվիսում վերլուծվում է հայ փարագիրների ինտերգրումը Սիրիայի սոցիալական կյանքում ընդհուպ մինչև 1924թ.: Ներկայացվում է փարագիրների առջև ծառայած սոցիալական խնդիրների աստիճանական լուծումները, հայ-արաբական փոխադարձ աղապարացիան, ինտերգրման ճանապարհին հանդիպող խոչընդոտները, արաբ ժողովրդի ու կառավարության ձեռնարկած միջոցառումները և մի շարք հարակից այլ խնդիրներ:

Աստիճանաբար, հայ փարագիրները վերածվում են համայնքի, որը ձևավորում է իր կառավարման ինստիտուցիոն համակարգը: Նամայնքը դառնում է մի կառույց, որն ուներ իր նպատակը, խնդիրները և որոնց լուծմանը մասնակցում են ԿՅԱՆՔԻ ԽԱՐԻԿ ԽԱՐԻԿ ԿԱՐԿԱՆՈՂ ԱՆԽԱՐՆԵՐԸ:⁴⁴⁰ Փաստորեն, Նայոց ցեղասպանությունից հետո Սիրիա եկած հայերը 1920-ական թվականների կեսերին վերածնվելով են ԿՅԱՆՔԻ ԽԱՐԻԿ ԽԱՐԻԿ ԿԱՐԿԱՆՈՂ ԱՆԽԱՐՆԵՐԸ:⁴⁴¹

⁴⁴⁰ Гринштейн Х. Т., Поселение армянских беженцев в Сирин и Ливане в 1915-1939гг., Ереван, 1982/2, с. 13.

⁴⁴¹ Ներկայիս Սիրիայի փարաձրում հայերը բնակություն են հաստատել Տիգրան Մեծի օրոք, երբ պարսկական Ասորիքը /ներկայիս Սիրիա/ ընդգրկվում է հայկական պետության կազմի մեջ/մ.թ.ա. 1 դար/: 10-րդ դարում հայերը Սիրիայում հիմնել են Նայոց թեմ: Կլիպկիայի հայկական թագավորության անկումից հետո հայերի ստվար գանգվածներ հաստատվել են Սիրիայում: 14-րդ դարում Նախայի փոքրաթիվ հայ համայնքն առևտրական ակտիվ գործունեություն է ծավալել: 16-18դդ. Սիրիայի հայ համայնքը համալրվել է Ջողախից, Դարարաղից, Մեքասարիայից, Էրզրումից գաղթած հայերով: 18-րդ դարի սկզբներին Նախայն աստիճանաբար կորցրել է իր նշանակությունը միջազգային փարանցիկ առևտրի ոլորտում, Սիրիայի հայկական համայնքը րեբրեստակա թուլացել է, սկսվել է արտագաղթը: «Սորիական փարեցոյցի» 1923թ. ամփոփ վիճակագրության մեջ նշվում է, որ մինչև ցեղասպանության հետևանքով Սիրիայում հայ փարագիրների հայտնվելը Նախայն ունեցել է 13 հազար հայ բնակչություն, իսկ ամբողջ Սիրիայի հայ համայնքի թվաքանակը եղել է շուրջ 44 հազար: Տե՛ս «Սորիական փարեցոյց», Նախայ, 1924, էջ 235-238. Աճառյան Նր., Նայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, Նայ գաղթաշխարհի պատմություն, Երևան, 2003:

1915թ. հաջորդող առաջին տարիներին գործ ունենք տարագիրների հետ, իսկ հետագա տարիների ընթացքում վերջիններիս տարերային զանգվածը վերաճում է կազմակերպված համայնքի: Սփյուռքին նվիրված աշխատություններում համայնքին րբվում է հերևյալ ընդհանրական սահմանումը: Նամայնքներ են համարվում «արտագաղթի հերևանքով այլ պետություններում բնակվող և գործունեություն ծավալող խմբեր, որոնք պահում են հոգևոր և նյութական կապն իրենց հայրենիքի հետ»:⁴⁴² Նամայնքն այս պարագայում «միայն մարդկանց կոնգլոմերատը չէ, այլ սոցիալական օրգանիզմ, որն ունի մի ընդհանուր էթնիկ հենք»:⁴⁴³

Ազգագրագետ Լ. Աբրահամյանի կարծիքով Սփյուռքի առաջացման պարճառների հիմքում, որպես կանոն, ընկած են պարմական ողբերգությունները, դրա ապացույցն է նաև Նայոց ցեղասպանությունից հետո հայկական սփյուռքի ձևավորումը:⁴⁴⁴

Սփյուռքի տեսական հիմնահարցերով մասնագետ Գ. Շեֆերը հայկական սփյուռքը ներառում է «պարմություն ունեցող և պետության հետ կապեր պահպանող սփյուռքի»⁴⁴⁵ շարքում: Վերջինս, ըստ նրա տեսության, անտիկ կամ միջին շրջանում ձևավորված համայնքներն են, որոնք սերտ կապեր են հաստատել ավելի ուշ շրջանում սրեղծված ազգային պետությունների հետ:⁴⁴⁶

Ցանկացած համայնք անպայման ինտեգրվում է բնակություն հաստատված երկրի սոցիալական, տնտեսական, քաղաքական համակարգերում, դա բնականոն գործընթաց է, ինչպես նաև համայնքը բնորոշող առանձնահատկություն: Միևնույն ժամանակ համայնքի բնորոշ հատկանիշներից մեկն այն իրողությունն է, որ վերջինիս անդամները վարահ են, որ չեն դարձել և հնարավոր է, որ չդառնան իրենց ընդունող հասարակության լիիրավ անդամ, ուստի իրենց մի փոքր մեկուսացած ու օտար են զգում:⁴⁴⁷

⁴⁴² Dufoux St., նշվ. աշխ., էջ 21:

⁴⁴³ Дятлов В., Мелконян Э., Очерки социокультурной типологии. Армянская диаспора, Ереван, 2003, с. 12.

⁴⁴⁴ Абрамян Л., Армения и армянская диаспора: Расхождение и Встреча, 21-й Век, номер 2, 2005. стр. 143.

⁴⁴⁵ Sheffer G., նշվ. աշխ., էջ 75:

⁴⁴⁶ Գ. Շեֆերն առաջարկում է սփյուռքի դասակարգման հերևյալ սկզբունքը՝ օգտագործելով երկու հիմնական չափանիշ՝ հայրենիքի իրավական կարգավիճակը և սփյուռքի տարիքը: Իրավական կարգավիճակի հետ կապված՝ նա տալիս է պետականություն չունեցող սփյուռք և պետության հետ կապի մեջ գրեթե սփյուռք: Սփյուռքի ձևավորման ժամանակափուլի հետ կապված նա դասակարգում է պարմական-դասական սփյուռք, մողեոն սփյուռք և ձևավորման փուլում գրեթե սփյուռք հասկացությունները: Մանրամասն տեսն Sheffer G., նշվ. աշխ., էջ 73-75.

⁴⁴⁷ Дятлов В., Мелконян Э., укз. соч., с. 16.

Անդրադառնալով Սիրիայի հայ փարագիրներին, հարկ է նշել, որ նրանք ընդունող/երկրում անցնում են ինտեգրվելու մի քանի փուլեր: Հարկանշական է, որ սկզբնական շրջանում աշխատության մեջ առաջ քաշված հարցերն ու խնդիրները հիմնականում քննարկվում են արարների կողմից հայ փարագիրներին ցուցաբերվող օգնության, մինչդեռ 1920-ական թթ. սկզբից՝ հայ-արաբական համագործակցության և փոխօգնության համարեքսպում, զուգահեռ ներկայացվում են նաև ֆրանսիական մանդատային իշխանությունների ունեցած դերակատարությունն ու միջամտությունը Սիրիայում հայ փարագիրների ինտեգրման և հայ-արաբական փոխհարաբերությունների գործընթացում:

Անդրադառնալով հայ փարագիրների իրավիճակին՝ առաջին հերթին պետք է հաշվի առնել մի կարևոր փաստ նա, որ ցանկացած ազգային փոքրամասնության գոյավիճակ պայմանավորված է ընդունող երկրի սոցիալ-վերստական, քաղաքական իրավիճակով և մշակութային մի շարք առանձնահատկություններով: Առաջին հերթին պետք է հաշվի առնել, որ հայերը Սիրիայում հայտնվում են մի ժամանակաշրջանում, երբ դեռ Առաջին համաշխարհային պատերազմը չէր վերջացել, սով էր ու Սիրիան դեռ համարվում էր Օսմանյան կայսրության մաս: Բացի այդ, հայ փարագիրները ցեղասպանությունը վերապրելուց հետո առավել զգուշավոր էին դարձել ու անվտանգության հարցին լուրջ էին վերաբերում: Հայտնվելով Սիրիայում՝ նրանք հայտնվել էին նոր միջավայրում, որտեղ կային մի շարք էթնիկական փարբերակիչներ, որոնցից էին ոչ միայն կրոնը, այլ նաև լեզվական, մշակութային և այլ գործոններ: Տարբերակիչ հատկությունների այս համադրությունը, որը սրելով էր մուսուլմանական միջավայրը, սահմանագալիչ կարևոր նշանակություն է ունենում հայ փարագիրների համար՝ նպաստելով սեփական էթնոմշակութային անհատականության պահպանմանը:

Փաստորեն, նոր հասարակության մեջ փարագիրների ներգրավվումը ժամականավոր ու անցողիկ գործընթաց է, բայց նոր սրելովող հասարակության մեջ շար կարևոր է, որ լինի երկուստեք, փոխադարձ ադապտացիա: Տեղի բնակչությունը նույնպես չէր կարող իրեն լիովին անվտանգ զգալ՝ հաշվի առնելով այն փաստը, որ փարագիրները սկզբնական շրջանում նրանց համար անձանոթ, ինչու չէ՛ նաև վտանգավոր փարր էին:

Նոր հասարակության մեջ փարագիրներին հարկավոր էր կարգավիճակ՝ քաղաքացիություն, կեցության իրավունք, գրանցում, աշխատանքի թույլտվություն, անվտանգություն, ինչը պետական խնդիր էր: Նման խնդիրները չէին կարող լուծվել անհատի մակարդակով: Պարտահական չէ, որ փա-

րագիրների շրջանում աստիճանաբար ձևավորվում են պաշտոնական և ոչ պաշտոնական հասարակական կազմակերպություններ, որոնք բացի իրենց առջև դրված խնդիրներից, օգնում են մարդկանց ներգրավվել երկրի հասարակության մեջ, որը համայնքը փանում է դեպի ակտուալիզմ:⁴⁴⁸

Ամերիկացի սոցիոլոգ Ս. Դադը Սիրիայում ապաստանած հայ փարագիրների վերաբերյալ գրում է. «Երբ որ ժողովուրդի հսկայ զանգում մը կը ձգէ իր պապենական բնագաւառը և կը րեղաւորուի նոր երկրի մէջ՝ յոյժ խնդրական կը դառնայ կռահել, թէ ինչպիսի նոր փնտրեսական, ընկերային եւ քաղաքական հարցեր կրնան սրեղծուիլ երկրին մէջ, որ իրենց նոր բնակավայրը պիտի ըլլայ»:⁴⁴⁹ Նման դեպքում, ինչպես նշում է հեղինակը, արդյունքը կարող է դրական կամ բացասական լինել՝ կապված մի կողմից ներգաղթողների օգտակարության՝ րվյալ երկրին ծառայելու գործունի հետ, մյուս կողմից էլ նրանց ընդունող երկրի՝ վերջիններին օգտակարությունը գիտակցելու և իր երկրի շահերին ծառայեցնելու կարողության հետ: «Ինչ էլ որ ըլլայ արդիւնքը՝ պէտք է որ զանոնք նոր միջավայրին պարշաճեցնելու որոշ քաղաքականութիւն մը ընդգրկուի: Կամ այն է, որ ներգաղթողներու հոգաւարութիւնը պէտք է սրանձնուի եւ կամ թէ ժամանակի ընթացքին անոնք կը մարսուին եւ կիրացուին բնիկ փարբէն»:⁴⁵⁰

Ս. Դադի նշված բոլոր նկատառումներն այս ժամակահարվածում հայ-արաբական փոխհարաբերություններում առկա են՝ սկսած հայերի կարողությունների օգտագործումից մինչև կառավարական միջոցառումների ձեռնարկումը հայ փարագիրների վիճակը բարելավելու համար: Այսպես հայերի համար գրեթե բացառվել է րեղի բնակչությանը ծուլվելու հանգամանքը, որն ունի իր լուրջ հիմնավորումները:

Այսպես կարևոր է նաև րվյալ ժամանակահարվածի դեկավարների դիրքորոշումը, որոնք առավելագույնս պէտք է շահագրգռված լինեն փարագիրների պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովելու համար: Այս պարագայում Սիրիայում հայերված հայերի և երկրի դեկավարների հարաբերություններն ունենի որոշակի առանձնահատկություններ, քանի որ սկզբնական շրջանում դեռ երիտթուրքական իշխանություններն էին. Ֆեյսալի կառավարման րարիներին արդեն ձևավորվել էր ազգային փոքրամասնություններին ցուցաբերվող պնական աջակցության միտում: Ֆրանսիական մանդատի րարիներին նկատում ենք, որ հայերի հանդեպ քաղաքականությունը մի քանի անգամ փոփոխության է ենթարկվում, մինչև

⁴⁴⁸ Дятлов В., Мелконян Э., укр. соч., с. 29.

⁴⁴⁹ Վարժապետեան Ս. Յ., նշվ. աշխ., էջ 30:

⁴⁵⁰ Նույն րեղում:

հայ փարագիրներն իրենք արդեն աստիճանաբար կարողանում են վերագրենել իրենց ու կայանալ: Ընդհանուր հաշվով, ֆրանսիական մանդատային իշխանությունների բաղաբաղակալությունը հայ փարագիրների նկատմամբ ընդհանուր առմամբ կարելի է դրական համարել:

Նայ փարագիրները, հայտնվելով Սիրիայում, հավելյալ ճնշում էին գործադրում աշխատավարձերի չափերի վրա՝ անուղղակիորեն նպաստելով արաբների շրջանում գործազրկության աճին: Անապարի համակենտրոնացման ճամբարներից խուսափելու համար հայ փարագիրները պարբերաբար էին ցանկացած աշխատանքի: Նրանք, աստիճանաբար աշխատանքի նոր ասպարեզներում իրենց լավագույնս դրսևորելով, դժգոհությունների առիթ են փալիս փրկի արաբների շրջանում:

Դեռևս Օսմանյան կայսրության օրոք հայերը կարևոր դերակատարություն են ունեցել երկրի սոցիալ-վերեսական կյանքում: 1916թ. երբ հայերը գրեթե ամբողջությամբ փրկահանվել էին իրենց հայրենիքից, թուրքերը կանգնում են մի իրականության առջև. «Նայոց մեկնումին պարճառաւ, կեանքը անկարելի դարձամ էր: Բոլոր արիեսարները Նայոց ձեռքը ըլլալով իրենց մեկնումէն վերջ թուրք ժողովուրդը չէր կրնար տոյն իսկ կեանքի փարբական պահանջները գոհացնել»:⁴⁵¹

Ջեմալ Փաշան, հաշվի առնելով Թուրքիայի վերոնշյալ փորձը, հայ արհեստավորներին Դամասկոս էր ուղարկում՝ փրկում արհեստները զարգացնելու, շինարարությանը զարկ փալու համար: Օսմանյան բանակի համար կենսական նշանակություն ունեցող երկարթողային փոխադրությունը, երկարթողաշինական աշխատանքների ճնշող մեծամասնությունը նույնպես հայերն էին կատարում:

Արաբների փեսանկյունից միանգամայն հիմնավոր է թվում այն մտահոգությունը, որ աղքատության եզրին կանգնած հայերը փրկի արաբ աշխատավորների աշխատավարձն «անազնիվ» մրցակցության պայմաններում էլ ալկելի էին նվազեցնում: Տարագիր հայերն անցանկալի էին համարվում՝ «ծովը թափուկիք» ապրանք: Տեղական մամուլը երբեմն հայերին որակում էր «վնասակար մրցակիցներ» եւ «անհաապարիմ հիարեր»,⁴⁵² կար նաև այն կարծիքը, որ «Նայերը եկամ են եւ իրենց երկրին պէրէքերը փախցուցամ են»:⁴⁵³

Նայ փարագիրների կեցության և բնակության հարցերի մասին խոսելիս մի փաստ պետք է նկատել, որ Սիրիայում հայերը համախմբվելու մի փում ունեին: 1920-ական թվականներին փարագիրները կենտրոնացած

⁴⁵¹ Անպոկյան Ա., նշվ. աշխ., էջ 166-168:

⁴⁵² Կարժապետեան Ս. Յ., նշվ. աշխ., էջ 68:

⁴⁵³ Տարբոնան Վ., նշվ. աշխ., էջ 165:

էին Նալեպ, Դամասկոս, Ալեքսանդրեր քաղաքներում՝ ի հակադրություն գյուղական բնակավայրերի:

Նայ փարագիրների կենտրոնացված ապրելն ուներ իր հիմնավոր պատճառները, որը հիմնականում կապված էր անվտանգության հարցի հետ: Այդ պատճառով նրանք հակառակվում են ֆրանսիացիների՝ իրենց գյուղական վայրեր փոխափոխելու սկզբնական փորձերին: Նրանք առաջարկում են իրենց բնակեցնել ավելի անվտանգ վայրերում՝ Ալեքսանդրերի սանջակում, սակայն հայերը մերժում են ոչ միայն Եփրատի ու Նարավային Նաուրանի շրջանի վերաբնակեցումը, այլ անգամ Նալեպի հարակից շրջանների:⁴⁵⁴

Նայերը 1915թ. հայտնվելով Սիրիայում ձգտում էին հասնել փրկության և սոցիալական փոքր-ինչ կայունության՝ առաջնորդվելով ներհամայնքային համերաշխության մեխանիզմներով: Եվ պարտադրական չէ, որ շատ արագ ձևավորվում են արդյունավետ գործող, բազմաթիվ ենթակառուցվածքներով արհեստակցական միությունները, կրոնական, բարեգործական, մշակութային, սպորտային կազմակերպությունները, դպրոցները, առևտրական պալատները: Նայերի շրջանում նկատվում է ազգային ինքնությունը պահպանելու մեծ ձգտում, երկրորդ անգամ ծնունդ են առնում կուսակցությունները: Փոխօգնությունն այս համակարգի բաղկացուցիչ մասն է, «անգամ գործիքներքին սոցիալական վերահսկողության, կառավարման և կարգավորման համար»:⁴⁵⁵

Ֆեյսալի իշխանության փորձերին հայ փարագիրները փորձում էին սոցիալապես կայանալ, որին մեծապես նպաստում է վերջինիս ընդունած մի քանի որոշումները՝ պարպրերի հերածգման, բյուջեից որոշ գումարներ հայերին փրամադրելու վերաբերյալ: Բացի այդ, ինչ-որ չափով մեղմացել էր ցեղասպանությունը վերապրելու ցեցումը, նրանք սկսել էին հարմարվել ու յուրացնել կենցաղը, փիրապներել լեզվին: Վրանաքաղաքները վերածվել էին նրանց համար մշտական բնակության վայրի ու քչերն էին մտածում այդտեղից փոխափոխվելու մասին մի քանի պատճառով: Նախ՝ առանձին փոխափոխվելը նրանց համար ընդունելի փոքրերակ չէր, երկրորդ՝ փրկության այդ ճգնաժամի պայմաններում հայերը դեռ ի վիճակի չէին վճարել փոխափոխման ծախսերը և գյուղում բնակվել, որտեղ կապիտալ ունենալու դեպքում միայն նոր հեռանկարներ կարող էին ունենալ: Եվ ամենակարևորը, ոչ-ոք նրանց չէր սրիպում փոխափոխվել, այսինքն չկար կառավարական որևէ որոշում, որը կսրիպեր նրանց փոխափոխվել:

Ֆեյսալի իշխանության փորձերին հայ փարագիրները չէին կարող լուրջ

⁴⁵⁴ Гриншилде Х. Т., укр. соч., с.10.

⁴⁵⁵ Дятлов В., Мелконян Э., укр. соч., с. 33.

հաջողությունների հասնել Կրեմլի մեջ՝ նոր գործարաններ, արտադրություններ հիմնել: Այս շրջանում նրանք սահմանափակվում էին ամբողջ ապրուստի խնդիրները հոգալով՝ հիմնականում օրավարձով էին աշխատում կամ մանր առևտրով էին զբաղվում: Չնայած արդեն այս ժամանակահատվածում Կրեմլի դժգոհություններին անդրադառնում են Կրեմլի թերթերը: Նախապես «Աթ-Թակադոլում» թերթը բավականին խոր անդրադարձ ու վերլուծություն է կատարել նաև հայերի՝ Սիրիայում ունեցած ներդրմանն ու ընդգծել նրանց կատարած գործը: «Տարագիրների ազդեցությունը» հոդվածում կարդում ենք. «Ճշմարտությունից շեղված չենք լինի, եթե հայրենիք մեր երկրի որոշ բնակիչներին, որոնք դժգոհ են Աստուծոյի Կարազիբների մեզ մոտ գալուց, որի արդյունքում աշխատող ձեռքի աճ ունենք: Վերջինիս պակասը կար մեր երկրում... Տարագիրներից շարժվել արդյունաբերական աշխատանքներում փորձ ունեն, աշխուժացնում են աշխատաշուկան: Եթե չլինեին հայ Կարազիբները, որոնք ցանկում են, հեծում, ապա շարժողը անմշակ կմնային»:⁴⁵⁶

Բացի այդ, արարները դժվար էին համակերպվում այն փաստին, որ հայերը կարող էին հաջողությունների հասնել առևտրի բնագավառում՝ համարելով դա իրենց մենաշնորհը: 1924թ. «Սուրիահայ Կարազիբներ» նշվում է. «Սուրիա այժմ իր մեջ կը պահե 150 հազարի մօտ Կարազիբ և Կրեմլիցի հայություն, որոնք թե Կրեմլիցի և թե Ֆրանսական կառավարությունը հիտախտը ընթացք մը կը ցուցնեն և հայերն ալ լաւագոյն յարաբերութիւններու մեջ են անոնց հետ, մասնաւորապէս եթէ երկրագործութեամբ պարապելով Սուրիոյ հողը օգտագործելին և առևտրական գործը Կրեմլիցի թողուին»:⁴⁵⁷

Նայ Կարազիբների՝ սոցիալական ոլորտում արձանագրված հաջողությունների փաստին են անդրադարձել ժամանակակից արաբ պատմաբանները՝ բնեկրկնելով դրա պարզապես: Վերջիններս հայ Կարազիբների էթնիկ վարքագծի մեջ նկատում են իրեն արագ վերագրելու, համակերպելու և դրան գուցահեռ ազգային ինքնությունը պահելու միտում: Սոցիալական ոլորտում բավականին կարճ ժամանակամիջոցում նրանք զգալի հաջողությունների են հասնում, ինչը նաև սիրիացի ժողովրդի դրական վերաբերմունքի արդյունք էր: Չնայած հայերը սրիակված էին աշխատել օրվա ապրուստի համար, բայց դրան գուցահեռ հիմնում էին դպրոցներ, մշակութային հաստատություններ և այլն: «Նայ Կարազիբները գործում էին Կարազիբ բնագավառներում՝ գուցահեռաբար ու արդյունավետ: Իրենց պահում են առողջ բանականություն ունեցող

صفحات و وثائقية من جريدة التقدّم الحلبية ...، ص 185. 456

Նախապես «Աթ-Թակադոլում» թերթի վավերագիր էջերը..., էջ 185:

457 «Սուրիահայ Կարազիբներ», 1924, Ա տարի, էջ 295:

մարդու նման, մի երկրում, որն իրենց հոգաբարություն է ցուցաբերել»:⁴⁵⁸

Մուսա Պրենաը հայ Կարազգիւրների համար նշում է երկու կարևոր հասկանիշ, առանց որոնց դժվար կլիներ հաղթահարել ցեղասպանության բարդույթը: Հայկական էթնոհոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելով՝ նա եզրակացնում է, որ հայի Կրեական ունի ցեղային երկու բացառիկ հատկություն. առաջինը՝ «ընտելացումի հատկութիւնն է, երկրորդը՝ կենսունակութեան»:⁴⁵⁹ Այս երկու հատկություններն են պայմանավորում հայկական լինելիությունը:

Այսպիսի Կրեական երկրներում, ուր հերագայում կազմավորվում, իսկ որոշ Կրեական էլ վերակազմավորվում է հայկական սփյուռքը, Մ. Պրենաի կարծիքով «պետք չկայ ընտելացումի սպառնացներ Կրեայ»:⁴⁶⁰ Հեղինակն անժխտաբար է համարում նաև հայ ազգի կենսունակությունը, որը նա դրսևորում է կյանքի գործունեության բոլոր իրավիճակներում:

Հայ Կարազգիւրների համար Ն. Միգլիորինոն⁴⁶¹ նույնպես նշում է մի քանի բնորոշիչ հատկություններ՝ առաջին հերթին ընդգծելով նրանց վճռականությունն ու ձգտումը Սիրիայում իրենց Հայաստանը կամ հայկականը վերականգնելու ուղղությամբ: Հայրնվելով էականորեն Կրեականի, մասամբ նաև թշնամական միջավայրում՝ Կարազգիւրները փոխօգնության էին ձգտում դժվարությունները և ճգնաժամերը հաղթահարելու համար: Հայ Կարազգիւրների մոտ «վերականգնելու վճռականությունը բխում էր առկա համայնքի ուժեղ համախմբվածությունից ու այն փաստի գիտակցումից, որ ցեղասպանությունն, իրոք, կարող է ոչնչացնել հայկական մշակույթը»:⁴⁶²

Հայ Կարազգիւրների սոցիալական իրավիճակի բարելավման համար հարկ է մեջբերել Օսման Աթ-Թուրքի դիվարկումը. «Երբ նրանք ուրբ դրեցին մեր հողի վրա, սևփական ձեռքերից բացի ոչինչ չունեին: Նրանք իրենց կարարած ծանր աշխատանքով վատարակեցին իրենց ապրուստը: Եվ այդ դժվարությունների հետ մեկտեղ նրանք հասարակության մեջ իրենց հարգալի Կրեական զբաղեցրեցին. մասնակցեցին երկրում արտադրության գար-

⁴⁵⁸ سمير عربش، أرمينيا، أرض وشعب، بيروت، 1991، ص 213.

Մամիր Արբաշ, Հայաստան, հող և ժողովուրդ, Բեյրութ, 1991, էջ 213:

⁴⁵⁹ Պրենա Մ., Հայկական լինելիությունը. Կրեական «Ազգակ», 19.08.1967:

⁴⁶⁰ Նույն Կրեական:

⁴⁶¹ Ն. Միգլիորինոն գիտական աստիճան է սպառել Մեծ Բրիտանիայի էքզերթի համալսարանի արաբական և իսլամական հետազոտությունների ինստիտուտում: Նա զբաղվում է Սիրիայի, Լիբանանի և արաբական աշխարհի էթնոմշակութային հարցերով:

⁴⁶² Migliorino N., նշվ. աշխ., էջ 47:

գացմանը, րնպետության մակարդակի աճին»:⁴⁶³

Բացառությամբ Կիլիկիայի մի քանի շրջաններից եկած հայերի, մյուսները հիմնականում թշվառ վիճակում էին հասել Սիրիա: «Նայերն այսպեղ հասարարվում են դարարկության և ունայնության մեջ»:⁴⁶⁴ Միայն սեփական աշխարանքն էր նրանց օրվա աարուսրն ապահովում: Նայերը կարողանում են դուրս գալ փարագրի, ցեղասպանության գոհի կարգավիճակից ու աարիճանաբար ինքեգրվել սոցիալական կյանքում՝ դառնալով Սիրիայի րնքեսական կյանքի կարևոր օղակներից մեկը: Ներագրողների մեծ մասը հայ փարագիրների վերոնշյալ հարկանիշներն են համարում նրանց վերապրելու և փարածաշրջանի ամենակենսունակ ու ծաղկող համայնքներից մեկը դառնալու նախապայմանը:⁴⁶⁵ Ուսումնասիրողներից շարերը փասարում են, որ հայ փարագիրների ինքեգրումը Սիրիայում, ի փարքերություն Լիբանանի, «ավելի սերքաճած էր ու ավելի արագ րնմպերով էր իրականանում»:⁴⁶⁶

Ուսումնասիրվող ժամանակահարվածում հայ փարագիրների համար միշար առկա է եղել վրանաքաղաքներից րեղափոխվելու խնդիրը, որոնց առկայությունը փարագիրների համար ուներ իր դրական և բացասական կողմերը: Տարագիրներն այդպեղ մնում էին երբեմն կամավոր, երբեմն էլ՝ սրիպողաբար, բայց պարզ է, որ խոսքը չքավորների մասին էր: Գաղթականների գրասենյակի սիրիական ներկայացուցիչ Ջորջ Բուռնիեն վկայում է, որ արդեն 1926թ. վրանաքաղաքների բնակիչները կարող էին փոխաղբրվել քաղաք, բայց դեռ նախընրրում էին մնալ այդպեղ՝ փող խնայելու համար: Պերք է հաշվի առնել, որ այդ շրջանում գաղթականներն աարում էին ավելի բարվոր վրանաքաղաքներում: 1925թ. դրությամբ 100-ից 33.9 րոկոսը գրաղվում էր ասեղնագործությամբ, 25.9 րոկոսն առնրրով ու բանվորությամբ:⁴⁶⁷ Չնայած հայ րնքագիրները չէին խուսափում աշխարանքից, սակայն ծանր րնքեսական վիճակը լուրջ խոչընդորներ էր սրեղծում նան նրանց համար: Իսկ վրանաքաղաքներում ապրելով՝ հայ փարագիրներն,

⁴⁶³ عثمان الترك، صفحات من تاريخ الامة الارمنية، حلب، 1960، ص 284.

Օսման Աթ-Թուրք, էջվ. աշխ., էջ 284:

⁴⁶⁴ تيارى كوشو يت، بحثا عن مكان، اندماخ الازمن الاقتصادى فى لبنان، ص 245، أرمز 1917-1939
Թիարի Կոշույեթ, Նայերի րնքեսական ինքեգրումը Լիբանանում, րն՝ս «Նայերը 1917-1937» էջ 245:

⁴⁶⁵ Дятлов В., Мелконян Э., укз. соч., с. 109.

⁴⁶⁶ فاهى طاشجيان، من مخيمات لاجئين الى احياء حضرية، ص 125، أرمز 1917-1939.
Թաշճյան Վ., Գաղթականական-վրանաքաղաքից դեպի հարուկ քաղամասեր, րն՝ս «Նայերը 1917-1939», էջ 125:

⁴⁶⁷ Կրիեշիլրս Թ., Նայ Գաղթականներու րեղաորումը Նայեպի մեջ 1920-1939, րն՝ս «Գեղարդ», Բ գիրք, էջ 262:

խկապես, կարող էին գումար խնայել, սակայն այդ իրավիճակը երկար չի փրկում:

Սկզբնական ժամանակահատվածում իշխանություններն արտոնել էին հայ փարագիրներին հող հարկացնել, որտեղ և սրեղծվել էին վրանաքաղաքները, բայց այդ հողերը պարկանում էին հալեպցի հողատերերին: Վերջիններս ժամանակի ընթացքում սկսում են իրենց հողերը հեք պահանջել: «...հայերը կ'ապրելին հոն առանց վարձք վճարելու և հողատերը նախապես վարձք պահանջած էր, բայց ֆրանսիական կառավարութիւնը արգելք եղած էր»:⁴⁶⁸ Հողատերերի պահանջների արդյունքում հայ փարագիրները պետք է նրանց հողի վարձ ու ջրի փութք վճարեին, բայց նրանց «արտոնված չէր այդ հողերի վրա փուն կառուցել»:⁴⁶⁹ Ամենայն հավանականությամբ, հայ փարագիրներն այդ վճարումները հողատերերին չեն արել՝ ֆրանսիական իշխանության պաշտպանությունն ունենալով, երբեմն էլ՝ սոցիալական ծանր վիճակի պատճառով: Այս ընթացքում վրանաքաղաքներն աստիճանաբար վերածվել էին հյուղակների, և փարագիրները՝ անկախ սոցիալական կարգավիճակից, չէին փորձում այդտեղից դուրս գալ: Բնական է, կառավարությունը երկար չէր կարող սպիպել հողատերերին հայ փարագիրներին իրենց հողերի վրա պահել, քանի որ դա կարող էր հանգեցնել հայերի հեք փրկի արար բնակչության հարսերությունների վարթարացմանը: Նման թաղամասերը նաև լուրջ առողջապահական խնդիրներ էին սրեղծում: Ֆրանսիական կառավարությունը փորձում էր հայ փարագիրներին հասկացնել, որ այս իրավիճակը երկար չի կարող շարունակվել, իսկ հայերն էլ փորձում էին որքան հնարավոր է ժամանակ շահել:

Սիրիայում գրեկող հայ փարագիրների վիճակի վերաբերյալ Ազգերի լիգային հասցեագրված Մ. Կարլի 1924թ. գեկուցագրում նույնպես անդրադարձ է կատարվում փարագիրների բնակության խնդրին և նշվում. «Շնորհիվ իրենց կառուցելու ջիղին, հայերն արագ կարողացել են աղյուսով, ցեխով կառուցել փանիքով փներ, ներկայումս անցկացնում են նաև ջրարարներ ու ճանապարհներ»:⁴⁷⁰

Մ. Կարլը հայկական վրանաքաղաքների վիճակը բավարար է գնահատում, միաժամանակ իր ուսումնասիրությունների հիման վրա եզրակացնում. «Կառավարության և մասնավոր նախաձեռնությունների համագործակցված ու համարեղ գործողությունների դեպքում կարելի էր շար

⁴⁶⁸ Կրիշիլիս Թ., նշվ. աշխ., էջ 262-263:

⁴⁶⁹ Վարժապետյան Ս. Յ., նշվ. աշխ., էջ 40:

⁴⁷⁰ League of Nations, Scheme for the settlement of Armenian Refugees, General Survey and Principal Documents, 1927, Publications of the League of Nations, Geneva, p. 77.

ավելի լավ պայդունքների հասնել»:⁴⁷¹

Հարկ է նշել, որ հայ Կարագիրները միշտ նախընտրում էին կենտրոնացված ապրել՝ պայմանավորված էթնիկ և տնտեսական գործոնների փոխկապակցվածությամբ: Էթնիկ գործոնն ուներ երկու մակարդակ. առաջին մակարդակում այն Կարածվում էր համայնքի վրա ամբողջությամբ, երկրորդ մակարդակում գործում էր համերկության սկզբունքը: Հայ Կարագիրների ապրելակերպն ու վարքագիծը, որն ուղղված էր կենտրոնացվածությանը, պայմանավորված էր նաև տնտեսական գործոնով:

Ֆրանսիական կառավարությունը մրավախություն ուներ հայ Կարագիրների՝ մեծ քաղաքների, թեկուզ և ծայրամասերում համախմբված բնակություն հաստատելու հեռանկարի շուրջ:⁴⁷² Նախ, չափազանց կենտրոնացումը երբեմն ավելի էր խորացնում սոցիալական դժվարությունները:

Իրավիճակն ավելի է բարդանում, երբ 1921թ. հոկտեմբերի 20-ին Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագրով Ֆրանսիան պարտավորվում էր երկու ամսվա ընթացքում հեռանալ Կիլիկիայից: Պայմանագրի 6-րդ հոդվածը, որով Թուրքիան խոստանում էր հարգել «փոքրամասնությունների իրավունքները», արդեն չէր կարող վստահություն ներշնչել Կիլիկիայի քրիստոնյա ազգաբնակչությանը, հարկապես հայերին և հույներին: Փաստորեն, Կիլիկիա մեկնած հայերը կրկին անցնում են Կարագրության ճանապարհը դեպի Սիրիա: Ֆրանսիական կողմը միջոցներ էր ձեռնարկում արտագաղթը կասեցնելու համար: Նոյեմբերի 8-ին Ֆրանսիայի Բարձրագույն կոմիսար, Արևելյան բանակի ընդհանուր ղեկավար գեներալ Գուրոն համոզում էր Կիլիկիայի ազգաբնակչությանը վստահել պայմանագրով իրենց տված իրավունքներին ու մնալ տեղերում, բայց գործընթացը դուրս էր եկել վերահսկողությունից ու Կարաբայերեն շարունակվում էր:

Սկզբնական շրջանում Ֆրանսիական իշխանությունները մերժում են Սիրիայում ընդունել Կիլիկիայից արտագաղթողներին, անգամ հրաժարվում էին նավեր տրամադրել հայերին, որպեսզի նրանց դուրս բերեն այդտեղից: Միայն միջազգային հասարակական ճնշման տակ համաձայնում են վերջիններիս ընդունել Սիրիայում: Շուրջով Ֆրանսիական իշխանությունները գաղթականների տեղավորման համար միջոցներ էին ձեռնարկում, որպեսզի Հայեան ու այլ հայաշատ քաղաքները չխճողվեն նորեկներով: Սկզբում

⁴⁷¹ League of Nations..., p. 77-78.

⁴⁷² Ֆրանսիական կառավարությունը մրավախություն ուներ, որ հայերի՝ ճամբարներում կենտրոնացած բնակվելը կարող է նպաստել նաև կոմունիստական տրամադրությունների աշխուժացմանը:

Բարձրագույն կոմիսարությունը ցանկանում էր հայ գաղթականներին կենտրոնացնել թուրք-սիրիական սահմանագծից հեռու շրջաններում՝ թուրքական կողմին սիրաշահելու համար: Ռոբեր դը Քենը՝ Բարձր կոմիսարության պաշտոնակատարը, հրաման էր րվել ֆրանսիացի սպաներին՝ փարագիրներին փեղավորելիս առաջնահերթությունը րալ հարավային շրջաններին: Մինչդեռ, հայրն է, որ հայ փարագիրները նախապարվությունը րալիս էին քաղաքային բնակավայրերին: 1922թ. հունվարին Դամասկոսում արդեն հասարարվել էին 6000 հայեր: Նալեպը և Նաման նույնպես հարմար էին այդ րեսակերից: Դյորթ-Յուի մոտ 14 հազար փարագիրների մի մասն ապարարնել էր Ալեքսանդրերի ճայրամասի «արևմրյան գաղթակայանում»՝ Նալեպ-Բեյլան ճանապարհի երկու կողմերում՝ չորսից-հինգ հազար հայերով, իսկ մյուս մասն էլ՝ «արևելյան գաղթակայանում»՝ 7-8 հազար գաղթականներով: Նրանք բնակվում էին իշխանությունների օգնությամբ կառուցված րնակներում, որրեղ րիրող վար րնրեսական պայմանների պարճատով Ալեքսանդրերի շրջանից 2500 մարդ փոխադրվում է Լաթաքիայի շրջան և րեղավորվում Տարբուսում, Բանիասում և այլ բնակավայրերում:

Լաթաքիայի Նայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ Ներսես Վարդ. Տոլապճյանի՝ Սահակ կաթողիկոսին հասցեագրված 1922թ. հունվարի 3-ի նամակում կարդում ենք. «Տարաբաղղ փախարականների հարագարների մի մասը՝ 2500-ի մօտ Լաիողիկեի օրար ափունքը հասած էին... սնունց կառավարութիւնը զինուորներու օգնութեամբ ցամաք հանեցինք և քաղաքի քանի րեղեր րիղատրած ենք. թե կառավարութիւնը, թե րեղացիք կը վարահեցնին, որ այս երկրի մէջ ժողովուրդը աւելի հանգիստ պիտի սպրի, քան ուրիշ երկրներ»:⁴⁷³

Նալեպի «Աթ-Թակաղղում» թերթն իր 1922թ. «Նայ փարագիրները Նալեպում» խորագրի րակ գրում է. «Շարունակվում է հայերի ու հույների գաղթն Անարողիայից դեպի Սիրիա արդեն հայրնի դեպրերի պարճատով»: Թերթը րեղեկացնում է, որ ֆրանսիական կառավարությունը մեծ ուշադրություն է դարճնում հայ փարագիրներին ապարան րալու և նրանց բուճման համար միջոցատումներ կազմակերպելու գորճին: Վերջիններիս ժամանակավոր կեցության համար հարկացվել են Խան Ալ-Թաթին և Խան Ալ-Բուլի վայրերը: «Բարճրագույն կոմիսարի պահանջով գումարներ են րրամաղրվել հայ փարագիրներին րներ վարճելու, ինչպես նաև նրանց համար սնունղ հայթայթելու համար»:⁴⁷⁴

⁴⁷³ ՆԱԱ, ֆ. 421, ց. 9, գ. 4, թ. 1:

⁴⁷⁴ صفحات و وثائقية من جريدة التقدم الحلبية ...، ص 177-178.

Նալեպի «Աթ-Թակաղղում» թերթի վավերագրի էջերը... ևջ 177-178:

Թերթն իր էջերում պարբերաբար անդրադառնում էր հայ փարագիրների խնդիրներին ու փեղեկացնում փեղական ու ֆրանսիական իշխանությունների կողմից վերջիններիս ցուցաբերվող օգնության մասին: «Տարագիրների զբաղմունքը» հոդվածում նշվում է. «Տեղական կառավարությունը և Ֆրանսիական պարվիրակությունը, փեղի բնակչությունը մարդասիրական վերաբերմունք են ցուցաբերում այդ թշվառների նկատմամբ»,⁴⁷⁵ ինչպես նաև 1923թ. կրկին նշվում է. «Կառավարությունը, բարեգործական ընկերությունները, անհատները ջանքեր են գործադրում թեթևացնելու հայ փարագիրների վիճակը»:⁴⁷⁶

Գիլիկիայի դեպքերը ևս մեկ անգամ ապացուցեցին, որ հայ փարագիրների՝ Արևմտյան Նայասրան վերադառնալու հավանականությունը բացառվում է: Այնպես որ, Սիրիայում ապաստանած հայերը պետք է փեղում փորձեին ինքնահասարակել ու առաջ գնալ: Սփեղծված նոր իրավիճակում փոխվում է հայ փարագիրների՝ Սիրիայում մնալու ձևաչափը: Նրանք սկսում են մշտական բնակության մասին մտածել, որը խթանում է նրանց ներգրավվածությունը Սիրիայի սոցիալ-փնդեսական և արդյունաբերական կյանքում: Այս իրողությունը ևս մեկ փաստ էր, որը լարում էր մրցնում հայ-արաբական փոխհարաբերություններում:

Նարկ է նշել, որ Առաջին աշխարհամարտից հետո Նալեայի մեքենաշինական, մեքաղագործական, կաշվի ու կոշիկի, ակնեղենի, հյուրանոցային, ժամագործական և այլ ձեռնարկությունների 20-50 փոկոսի սեփականատերերը հայեր էին: Ավելի նշանակալից էր հայերի դերն առողջապահության ոլորտում:⁴⁷⁷ Նայերի ձեռքում էին կենտրոնացած նաև ճարտարապետությունը, լուսանկարչությունը, գեղարվեստական բացիկների արտադրությունը, երաժշտական գործիքների, նվագարանների և ձայնապնակների առևտուրը:⁴⁷⁸

Նայ արհեստավորները զգալիորեն զարգացնում են արհեստագործությունը, հարկկապես, գորգագործությունը, որը գրեթե նորություն էր Սիրիայում: Մինչ այդ Սիրիայում կային մի քանի գորգագործական արհեստանոցներ, որոնք հիմնականում արտադրում էին բիլիմ կամ այսպես կոչված քրդական գորգեր: Իսկ հայերը կարճ ժամանակահատվածում կարողանում են գորգագործությունը բարձր մակարդակի հասցնել:

⁴⁷⁵ 179 صفحات و وثائقية من جريدة التقدم الحلبية ...، ص 179

Նալեայի «Ար-Ռ-ակադրում» թերթի վավերագիր էջերը... էջ 179:

⁴⁷⁶ Նշվ. աշխ., էջ 186-187:

⁴⁷⁷ Նաջարյան Ե., Նայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայում, նշվ. աշխ., էջ 136:

⁴⁷⁸ Նույն փեղում:

Բրիտանացի Յ. Բարթն իր գեկուցագրում փալխ է հալեպում հայ փարագիրների աշխատանքային ներգրավվածությունն ըստ մասնագիտությունների՝ նշելով. «Հալեպում 8 հազարը գրադվում էին ասեղնագործությամբ ու գորգագործությամբ, 6 հազարը բանվորներ ու ծառայողներ էին, 5377-ն առևտրականներ և 623-ը բժիշկներ, արամնաբույժներ, դեղագործներ և ուսուցիչներ: Ծուրջ 5 հազար երեխաներ դպրոց էին հաճախում»:⁴⁷⁹

Հայ փարագիրները կարևոր դեր են կատարում պաշտ⁴⁸⁰ գործվածքի արտադրման մեջ: Հայերը հալեպում մեծ թափով առաջ են փանում այդ արտադրությունը, որի հիմնական մասն արտահանվում էր Թուրքիա:

Հայ կանայք մեծ հաջողությունների էին հասել նաև ասեղնագործության բնագավառում, ինչը նրանց մենաշնորհն էր: Կ. Եփիեի ջանքերով հիմնըվել էին ասեղնագործական փերեր և հայ կանանց ասեղնագործություններն արտահանվում էին: Հարկ է նշել, որ իշխանությունները մաքսափութից ազատել էին ասեղնագործության համար անհրաժեշտ նյութերի ներմուծումը, իսկ արտահանվող ապրանքներից զանձվում էր ինքնարժեքի մեկ հարյուրերորդականը, ինչը նպաստում էր ասեղնագործության հերազազարգացմանը:⁴⁸¹ Այսպիսով, հայ փարագիրների՝ արհեստներին զերագանցապես փիրապերելու փաստը «դառնում են նրանց ֆինանսական հիմնական աղբյուրը»:⁴⁸²

Ս. Դադի վերոնշյալ փեղեկագիրը մանրամասն ներկայացնում է այն առավելությունները, որոնք բերել են եկվոր հայերը Սիրիային. նրանք մեծ թափ են հաղորդում շինարարությանը, քաղաքների դիմագիծը սկսվում է փոխվել: Նա նշում է, որ հայ փարագիրները խթանում են երկրի փնփնասական կյանքը. «Անուրանալի իրականութիւն է, թէ: աժան ձեռային աշխատանքը մեծ շահ կ'ապահովէ երկրին: Սուր մրցակցութիւնը նմանապէս հրապարկէն բշեց անկարող արհեստարուները եւ որակը բարձարցուց: Այս կացութենէն ի վերջոյ շահողը դուրս եղաւ երկիրը»:⁴⁸³

Սիրիայի փնփնասական կյանքում աշխույժ գործունեություն սկսեց ծավալել «Նշարթվա» հյուսվածքեղենի ընկերությունը, որը հիմնվել է փիգրանակերպիցիներ՝ Նշան Փալանջյանի, հարություն Որբերյանի և Վահան

⁴⁷⁹ Burt J., նշվ. աշխ., էջ 109:

⁴⁸⁰ Այլաջան հարով գործվածք է, որն օգտագործվել է արևելյան հասարակ գեկսփեր կարելու համար:

⁴⁸¹ Թուփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 186:

⁴⁸² 1939-1917-ը من 244، مسيرة الارمني من كيليكا لجا الى لبنان، ص

Դապիկյան Դ., Մի հայի գաղթի ճանապարհը Կիլիկիայից Լիբանան, փեն «Հայերը 1917-1939», էջ 224:

⁴⁸³ Վարժապետյան Ս. Յ., նշվ. աշխ., էջ 44:

Աճնյանի ջանքերով, Նալեպի Սուլեյմանիե թաղամասում: Ընկերության հիմնադրման թվի մասին սրույզ տեղակայություններ չկան: Մակայն, ամենայն հավանականությամբ, այն բացվել է մինչև 1925թ.: Գործարանը համարվել է առաջնակարգ արդյունաբերական ձեռնարկություն՝ վայելելով բացառիկ վարկ՝ իր որակյալ արտադրանքով:

Տայ փարագիրներն առաջարարներ են եղել ավրոմեքենաների սպասարկման և նորոգման բնագավառներում: Տայ վարպետները «մեկնակեր հանդիսացան բազմաթիւ նոր վարպետներու ինքնայայտութեան»:⁴⁸⁴ Ոլորփի առաջին վարպետներից է եղել Ուրֆացի Յավերյանը, ով 1912թ. գերմանացիների նախաձեռնությամբ Սիրիա-Իրաք երկաթգծի շինարարության վրա է հմրացել, անգամ նրան է հանձնվել Եփրատ գետի վրա կառուցված շոգեկաթի փորձարկումը: Մեդրակ և Միսակ Նալբանդյան եղբայրները նույնպես մեծ ներդրում են ունեցել այս բնագավառում՝ 1924թ. հիմնելով սեփական արհեստանոցը: Տ. Թ-ոքմաջյանը Նալեպում հիմնել է մարտկոցների վերալիցքավորման առաջին արհեստանոցը:

Տայերը Սիրիայում բազմաթիվ նորամուծություններ են մտցրել, որոնք վերջիններին մենաշնորհն են եղել այդ ժամանակահատվածում: Նասրոցագործության, եվրոպական ոճի հագուստի դերձակության ոլորտում հայերը նույնպես նախաձեռնողներ են եղել: 1919թ.-1930թթ. հայ կազմարարներից է եղել Գարեգին Տարագաճյանը, ով 1919թ. Սալիբե թաղամասում իր բնակարանն արհեստանոց է դարձրել: Գեղազարդելու արվեստի մեջ վարպետացել է նաև Նովհանես Բասմաճյանը:⁴⁸⁵ Նալեպում հաց թխելը հայերի և հարկապես սասունցիների մենաշնորհն է եղել: Բաղաթի բոլոր փոսպաններին տեղացիներն անվանում էին սուսանիներ՝ սասունցիներ: Նովհանես Դաբբաղի /Դաբբաղյան/ 1906թ. Նալեպում հիմնած կաշեգործարանը մինչև 1921թ. միակն էր Սիրիայում և Լիբանանում: Նրա արտադրանքը բազմիցս արժանացել է միջազգային փառքեր ցուցահանդեսների մրցանակների: Նշենք նաև, որ Նալեպի Մազումյան եղբայրներին պարկանող «Օթել Պարոնը» և Ալթունյան հիվանդանոցը միակ շենքերն էին, որոնք 1920-21թթ. էլեկտրականություն են ունեցել:

Սիրիայի արաբները գնահատել են հայ արհեստավորների վարպետությունը, վարահեղիությունն ու ձեռներեցությունը: Տայ փարագիրների վարպետությանն ու Սիրիայի տնտեսական կյանքում նրանց ներդրմանն է անդրադարձել արաբ գրող, հասարակական գործիչ Ուալիդ Իվալաին. «Կարևոր է,

⁴⁸⁴ Զառիկեան Յովհանես, Մեքենագործությունը Նալեպի մեջ և Առաջին հայ վարպետները, փն՝ «Գեղարդ», 1976-1978 միացեալ թիւ, Նալեպ, 1978, գիրք Բ, էջ 299:

⁴⁸⁵ Նուռեան Շ., Կազմարարության արուեստը և Նալեպի հայ կազմարարները, փն՝ «Գեղարդ», գիրք Բ, էջ 336:

վերբացումն ու հիմնումը:⁴⁸⁹

Հայրենակցական միությունները հրապարակում էին իրենց հայրենի գավառների, քաղաքների ու գյուղերի պարմությունը: Նրանց կարարած դրական աշխատանքների թվին են դասվում նաև փարսիներ շարունակ պահպանվող րպագիր պարբերականները: Ինչպես հայրենակցական միությունները, այնպես էլ մշակութային միությունները և ակումբները շնորհակալ աշխատանք են կատարել սփյուռքահայությանը ձուլման վարակից փրկելու համար:⁴⁹⁰

Հասարակական կյանքում իրենց յուրահատուկ տեղն ունեին մարգական միությունները, որոնց նպատակը ոչ միայն պարանիսների ու երիտասարդների կոփումն էր, այլ փարբեր խավերի համախմբումը: Մինչ 1915թ. Հայկազում գործել է «Աղբյուր մարմնամարզական միությունը»՝ իր ֆուտբոլի, արվեստիկայի խմբերով: Հարկ է նշել մի հեղափոխությունը՝ հայկական նահանգապետը, ներկա լինելով հայկական դպրոցներում մարզական խաղերին, փրկելություններ հավաքելով նրանց գործունեության մասին, 1919թ. Ազգային-Քաղաքային Ժողովի արենապետից խնդրում է արական վարժարաններին նույնպես տրամադրել մարմնամարզության ուսուցիչ: Այսպիսով, Հայկազյան Վարժարանի մարմնակրթարանի ուսուցիչ Լևոն Աբգարյանը դարձել է մարմնակրթության առաջին ուսուցիչը Հայկազի Սուլթանիյե /այժմ Մամուր/ վարժարանում:⁴⁹¹ Սիրիայում մարգական կազմակերպություններից ավելի ուշ իրենց գործունեությամբ և կազմակերպվածությամբ առանձնանում էին երկուսը՝ Հայ մարմնակրթական միությունը /ստեղծվել է 1921թ. Հայկազում/ և Հայ մարմնամարզական ընդ-

⁴⁸⁹ 1867-1868թթ. Հայկազում լույս է տեսել օսմաներեն «Ճռաթ» եռօրյա թերթը, որն արարելենի և արաբաբառ օսմաներենի հեղ ունեցել է հայաբառ թուրքերենի բաժին: Յուրապատկությունը վերապրելուց հետո հայ փարագիրները կարողացել են հիմնել նոր րպարաններ, րպագրել թերթեր ու ամսագրեր: Այդ ժամանակ րպագրվել են «Հայ ձայն» /1918-1919/, «Տարագիր» /1918-1919/, «Եփրատ» /1919/, «Սուրիական սուրհակոյակ» /1922/, «Սուրիական մամուր» /1922-1927/ թերթերը, ինչպես նաև «Մեր ուղի» /1923/ շաբաթաթերթերը: Մանրամասն տեսնելու համար՝ Մարտինյան Ն., Վարժապետներն Յ., Հայկազ, 1973; Shemmajian V., The Press of Armenian Genocide Survivors in Syria /1916-1919/ տեսնելու համար՝ «Հայկազյան Հայագիտական հանդես», Պեյրուս, 2004, էջ 211-233:

⁴⁹⁰ Հայկազի հայրենակցական միություններից էր «Ուրֆայի վերածնունդ միությունը», որը հիմնվել էր 1921թ. «Ուրֆացիներու երիտասարդաց միություն» անունով: Ակտիվ գործունեություն են ծավալել նաև Հայկազի «Սերապիոյ վերաշինաց միությունը», «Մարաշի հայրենակցական միությունը» /1921թ.: 1923թ. Հայկազում հիմնվել է «Բիլիսի կրթասիրաց երիտասարդական միությունը»: Ակտիվ գործունեություն էին ծավալում արաբկիրցիների, այնթափցիների, խարբերոցիների, բալուցիների և մալաթիացիների հայրենակցական միությունները:

⁴⁹¹ Սապունճեան Զ., ՄՄԼՄ-ն Հայկազի մեջ, տեսնելու համար՝ «Գեղարդ», գիրք Բ, էջ 421:

հանուր միությունը /սրեղծվել է 1925թ./:⁴⁹²

Նայ փարագիրների սոցիալապես կայանալուն, րնրեսության ոլորտում մենաշնորհներ ձեռք բերելուն զուգահեռ հայ փարագիրների նկատմամբ նշված ժամանակահատվածում որոշակի դժգոհություններ են առաջ գալիս Սիրիայի քաղաքային բնակչության շրջանում, այն պարճառաբանությամբ, թե նրանք բեռ են դարձել իրենց երկրի համար: Չնայած սիրիական մամուլում րպագրվել են նաև հակառակ կարծիքներ: Նալեպի «Աթ-Թ-ակադդում» թերթն այդ կապակցությամբ գրում է. «Եթե մի քիչ խիղճ ունեք, կօգնեք դժբախտ փարագիրներին, հնարավորին չափով կթեթևացնեք նրանց դժբախտությունը: Նայերին փարբեր րեղերից /հայրենակիցներ, ընկերներ, բարեգործական ընկերություններ/ ֆինանսական օգնություն են ուղարկում, որը մեր երկրում է ծախսվում, թեթևացնում ֆինանսական սղությունը ... Այնպես որ, դժգոհության որևէ գիրակից պարճառ չենք րեսնում, անգամ եթե մեր շահերը հաշվի առնենք, ապա թույլ կրանք նրանց մեզ մութ մնալ»:⁴⁹³

Այս հողվածում հարուկ անդրադարձ է արվում հայերի ներկայությունից դժգոհ խավին. «... դժգոհ մարդկանց հեղ ուզում ենք խոսել զուր ֆինանսական րեսակեպից՝ առանց զգացմունքների և փաստում ենք, որ փարագիրները բեռ չեն մեր երկրի համար, անգամ նրանց ներկայությունն օգրակար է»:⁴⁹⁴

Նման դժգոհություններն իրենց արճագանքն են գրել նաև Սիրիայի Դաշնային խորհրդի⁴⁹⁵ 1924թ. հունվարի նիստում, ուր քննարկման էր դրվել հայ փարագիրների հարցը և առաջարկվել էր Նալեպի, Դամասկոսի և մյուս քաղաքների ճամբարների փարագիրներին վերաբնակեցնել Ալեքսանդրերի ներքին շրջաններում: Նիստում հնչել են դրական և բացասական կարծիքներ: Նամայի պարգամավոր Ռաշիդ Բարազին առաջարկել է արգելել հայ փարագիրների մուրքն այն պարճառաբանությամբ, թե հայերի թիվը Սիրիայում հասել է 130 հազարի, այն դեպքում երբ սիրիացի փարագիրների թիվն օրար երկրներում կազմում է 120 հազար: Սակայն այն հարցին, թե արյո՞ք հայ փարագիրների մուրքն է սրիպել սիրիացիներին մեկնել իրենց երկրից, պարգա-

⁴⁹² 1922թ. Դամասկոսում Կարապետ Գավաֆյանի նախաձեռնությամբ սրեղծվել են «Վահագն», «Շարք» պարսենական միությունները, ավելի ուշ՝ «Արճիվ», «Մասիս», «Դրո», «Կայճակ» խմբերը, որոնք միավորվելով սրեղծել են Դամասկոսի մասեաճյուղը:

⁴⁹³ صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية...، ص 187.

Նալեպի «Աթ-Թ-ակադդում» թերթի վավերագիր էջերը...، էջ 187:

⁴⁹⁴ Նույն րեղում:

⁴⁹⁵ 1922թ. հունիսի 28-ին Ֆրանսիական գլխավոր կոմիսար Գուրոն հարուկ դեկրետով սրեղծում է «Սիրիական ֆեդերացիա», որի մեջ մրբնում են Դամասկոսի, Նալեպի և Ալավիների պրությունները: Նախագահ է ընրրվում Սուրիի Բարաբարը: 1924թ. դեկտեմբերին Գլխավոր կոմիսար Վեյգանը լուճարել է Դաշնային ֆեդերացիան:

մավորը ժխտական պարասխան է փվել: Այս իրադարձությունների ընթացքին անդրադարձել է: «Աթ-Ֆակադդում»-ը՝ գրելով. «Իրավունքը, հարուցումը, ազգայնականությունը պահանջում են ուժեղ համախոհներ, որպեսզի մրաձեն, թե ինչպես Սիրիայից գնացող հայրենակիցներին պահեն իրենց երկրում և ոչ թե առանց մրաձելու արգելեն օտարների մուտքը երկիր ... Կարազիրները չեն փոխում երկրի ժողովրդագրական պարկերը»: Դամասկոսի պարզամավոր Քարիբ Քահային նույնպես երոյթում արքահայտել է իր դժգոհությունը, մինչդեռ Քալեպի պարզամավոր Մելիմ Չեմբերթը, Դաշնային խորհրդի նախագահ Սուրիի Բարաքաթը փորձել են հիմնավորել, որ նշված փաստարկները չեն համապարասխանում իրականությանը և երկրի շահերին: Նրանք փաստում են, որ Սիրիան շար հարցերում օգտվել է, հայերը նպաստել են փրկեսության վերակենդանացմանը և զարգացմանը:

Հողվածի վերջում հեղինակը հորդորում է սթափ մտքենալ խնդրին, կոչ է անում աջակցություն ցույց տալ հայ Կարազիրներին: «Մեր ժողովուրդը հայրնի է իր մեծահոգությամբ, բարձր բարոյականությամբ և դա վիճելի չէ: Եվ ասենք, որ հայ Կարազիրները երկրին օգտակար են եղել և ոչ թե վնասակար»:⁴⁹⁶ Այնուամենայնիվ, Դաշնային խորհուրդը մերժում է հայ երկրագործներին վերաբնակեցնելու ծրագիրը և միաժամանակ արգելում նոր գաղթականների մուտքը Սիրիա: Անգամ Սիրիայից Հիջազ մեկնած պարվիրությունն անհրաժեշտ է համարել Հուսեյն թագավորին փրկեկացնել Սիրիայի Դաշնային խորհրդի՝ հայ գաղթականներին չընդունելու որոշման մասին:

Տարվ է նշել, որ նույն ժամանակահատվածում հայ Կարազիրների շրջանում Խորհրդային Նայսարան ներգաղթի միտումներ էին նկատվում:⁴⁹⁷ Ընդ որում, մինչև 1924թ. Սիրիայում հայ Կարազիրներն արդեն մեծ թիվ էին կազմում ու Սիրիա ներգաղթողների հոսքը գրեթե դադարել էր:

Բայց այդ ամենով հանդերձ, հարկ է փաստել, որ հայ Կարազիրների բն-

⁴⁹⁶ صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية ...، ص 185-186.

Քալեպի «Աթ-Ֆակադդում» թերթի վավերագիր էջերը... էջ 188-186:

⁴⁹⁷ Խորհրդային Նայսարան ներգաղթողների վերաբերյալ հարուկ օրենք է սահմանվում 1925թ. հունվարի 19-ին՝ Նախարարների խորհրդի նիստի 8-րդ նիստում: 16-րդ հոլովածով: Ըստ սահմանված օրենքի ներգաղթողները պետք է գրկվեին սեփականության և շահագործման բոլոր իրավունքներից սիրիական հողի վրա: Ներքին նախարարության պաշտոնական հայտարարությամբ հանձնարարվում է վերացնել գաղթողների անվանացուցակները դիվան-փոմարից: Այս որոշմանն ու վերջինիս արձագանքներին է անդրադառնում «Աթ-Ֆակադդում» թերթը: Սիրիայի կառավարությունը համաձայն էր հայերի հայրենադարձությանը, սակայն մեկնումի ժամանակ և հերագայում բարդություններից խուսափելու համար, որոշվում է իրավական և նյութական բոլոր կապերը խզել մեկնող հայերի և Սիրիայի միջև: Մանրամասն տե՛ս

صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية، ص 301

Քալեպի «Աթ-Ֆակադդում» թերթի վավերագիր էջերը... էջ 301:

րած դրական փեղաշարժերը երկրի փոփոխությունում և նրանց հաջող փորձերը՝ ներգրավվելու Սիրիայի սոցիալ-փոփոխական կյանքում, հանգեցնում են վերջիններիս վիճակի բարելավմանը: 1924թ. հայ փարագիրների սոցիալական, փոփոխական, իրավական վիճակի փոփոխություններն ակնհայտ էին: Դա է վկայում «Աթ-Ֆակադում» թերթի հոդվածը. «Տեղական և ֆրանսիական կառավարությունը, բարեսիրտ փեղաջինները պարտավորվեցին իրենց վրա վերցնել հայ փարագիրների կեցության հարցի լուծումը ... որքան մեծ է փարբերությունը հայ փարագիրների այժմյան և պարբերազմի ժամանակաշրջանի վիճակի միջև»:⁴⁹⁸

Կրիլիկայի դեպքերից հետո առավել ևս հայ փարագիրները «ամեն բան: անելի գերադաս համարելով ապահովության եւ խաղաղ աշխատանքին խնդիրը, որուն առաջ Սուրիոյ Արաբ կառավարության և մասնատու ֆրանսական մանդատի հոգաբար իշխանության ցոյց տուած հիւրընկալ եւ մարդասէր ասպնջականութիւնը զինքը թողուած են յաւել տրախարապարտ, որը կարելի է փոխարինել միայն լուրջ ու շրջահայեաց ոգիով մը, խաղաղ ու կարգապահ կեանքով մը»:⁴⁹⁹

Այսպիսով, Սիրիայում 1915թ. հայ փարագիրների հայտնվելը նոր փոփոխություններ է մտցնում Սիրիայի սոցիալ-փոփոխական կյանքում, առաջընթաց է գրանցվում փոփոխության մի շարք ոլորտներում: Բացի այդ, մինչ այդ գոյություն ունեցող հայ համայնքը վերափոխման է ենթարկվում: Աստիճանաբար, 1920-ական թվականներին ձևավորվում են երեք հիմնական սոցիալական շերտեր: Առաջին խավն այն հայ փարագիրներն էին, որոնց միակ ունեցվածքն իրենց աշխատանքն էր. փղամարդիկ՝ շինարարական ոլորտում, կանայք՝ փոփոխության մեջ: Երկրորդ խումբը փարագիրների այն հարվածն էր, որը կարողացել էր խուսափել ճամբարային կյանքից և բնակվում էր քաղաքում՝ վարձակալած բնակարաններում: Նրանք կարող էին սեփական փոքր գործ ունենալ: Համեմատաբար բարվոք վիճակում էին այն հայերը, ովքեր օտարերկրյա կազմակերպություններում կամ պերական ապարարում էին աշխատում: Երրորդ խավը կազմված էր բացառապես բնիկ հայերից՝ «արման կադիմ» /հին հայեր/, որոնք հիմնականում սոցիալապես ապահովված էին:

Համայնքի առջև ծառայած հիմնախնդիրներից առավել կարևոր էր ազգային ինքնագիրակցության, մշակույթի և լեզվի պահպանման խնդիր-

498 . 184 ص... من جريدة التقدم الحلبية

Հալեպի «Աթ-Ֆակադում» թերթի վավերագիր էջերը... էջ 184:

499 Գ.Ապպլենճեան Գ. Սուրիա, քաղաքական, կրօնա-պարմական, կրթական եւ փոփոխական փոփոխութեով քնն «Տարթ», փարբերոյց, կրօնա-բանասիրական-գրական. Բ փարի, 1926. էջ 277:

րը, որն իր վրա էր վերցրել եկեղեցին: Ցեղասպանությունը վերապրելու փաստը նոր պահանջներ էր դնում. ոչ միայն պահպանել նախորդ շրջանի մշակութային և հոգևոր արժեքները, այլ նաև սրբեղծել նորը և ժառանգել սերունդներին: Այս փաստը համայնքը սահմանող և բնութագրող կարևոր որակումներից է:⁵⁰⁰

Սիրիայում հայ փարագիրների սոցիալական կայացման համար կարևոր նշանակություն ունեն հրավական կարգավիճակի հարցը: Բաղաբացիություն չունենալը կապված էր բազմաթիվ քաղաքական և սոցիալ-փոփոխական դժվարությունների հետ: Զրկվելով Թուրքիայի քաղաքացիությունից ու ձեռք չբերելով այն երկրների քաղաքացիությունը, որտեղ հայտնվել էին՝ նրանք ակամայից հայտնվել էին փարագրի կարգավիճակում. չէին կարող օգտվել քաղաքացիության իրավունքից, այդ թվում այնպիսի կենսական բնագավառներում, ինչպիսիք են աշխարհային և ապրուստի միջոցներ հայթայթելը, ուսումը, փեղաշարժվելը, սեփականություն ունենալու իրավունքը և այլն:⁵⁰¹ Այսինքն նրանք գրեթե են «ավելի քիչ շահավետ դրության մեջ, քան փվյալ երկրի քաղաքացիները»:⁵⁰² Հայ փարագիրների իրավունքները Սիրիայում ամրագրվում են օրենքով, որն ավելի էր հստակեցնում նրանց իրավունքները:

1920թ. օգոստոսի 10-ի Մերի պայմանագրի չորրորդ գլուխը վերաբերում էր փոքրամասնությունների իրավունքներին և 141-րդ հոդվածում Թուրքիան հանձն է առնում «ապահովել թուրքահպատակների ամբողջական ու կարարյալ պաշտպանությունը՝ առանց ծնունդի, ազգության, լեզվի և կրոնի խտրականության»:⁵⁰³

Սկզբում հայ փարագիրները հայրենիք վերադառնալու հույսեր ունեին, այնպես որ Սիրիայում իրավական կարգավիճակի ամրագրում չէին ակնկալում, չնայած 1919թ. հունվարին Սիրիայի գլխավոր կոնգրեսի ընդունած օրենքում նշվում էր, որ ոչ-խլամ համայնքները դապարանի առջև պիտի պահպանեն իրենց դաբալական իրավունքները:⁵⁰⁴

Նևրագայում՝ 1920թ. հոկտեմբերի 10-ից գործող Մանդատի փաստա-

⁵⁰⁰ Абрамян Л., Армения и армянская диаспора: Расхождение и встреча, «21-й Век», номер 2, 2005. стр. 137.

⁵⁰¹ Հակոբյան Ն. Վ., Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական և իրավական հիմքերը, Երևան, 2002, էջ 390:

⁵⁰² Նույն փեղում:

⁵⁰³ Torigyan Sh., The Armenian Question and International Law, Beirut, 1973, p. 18, Տին նաև Գույումճևան Շ., Քննություն 1941-ի Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ «Կանոնագրության», Պէյրուք, 1955, էջ 38:

⁵⁰⁴ Թովուզյան Ն., նշվ. աշխ., էջ 177:

թղթի⁵⁰⁵ առաջին հոդվածի համաձայն մանդատային երկիրը՝ Ֆրանսիան, պետք է երեք փարվա ընթացքում ամբողջական օրենսգիրք ստեղծեր, որտեղ պետք է հաշվի առնվեին Սիրիայի և Լիբանանի բոլոր ժողովուրդների իրավունքներն ու շահերը: Սիրիան և Լիբանանը պետք է անկախ լինեին և կարևոր էր տեղական ինքնավարությունը խրախուսող դրույթը:⁵⁰⁶ Մանդատի փաստաթղթի 6-րդ հոդվածով պետք է դատական ոլորտում հասարակներ հավասարագոր իրավիճակ՝ տեղի բնիկ ժողովրդի և ներգաղթողների միջև, որոնք երկուստեք պետք է ունենային իրավական կատարյալ երաշխիքներ: Բոլոր ժողովուրդների անձնական ու կրոնական իրավունքները պետք է լիակատար լինեին: 8-րդ հոդվածով Ֆրանսիական մանդատը երաշխավորում էր խղճի կատարյալ ազատություն: Խրախուսվում էր հանրային կրթությունը, ընդ որում յուրաքանչյուր համայնք իրավունք ուներ ունենալ իր սեփական դպրոցը՝ համաձայնեցնելով վերջինիս գործունեությունը կրթական ընդհանուր բնույթ ունեցող պահանջների հետ:⁵⁰⁷

Ազգերի լիգան անփոփոխ է պահում Թուրքիայում և նրանից անջարված արաբական երկրներում գործող կրոնադավանական համայնքների իրավական կարգավիճակը: 1923թ. հուլիսին կնքված Լոզանի պայմանագրի 42-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր նախկինի պես ճանաչել կրոնադավանական համայնքների ներքին ինքնավարությունը՝ ամբողջությամբ պահպանել եկեղեցական, դպրոցական, դատական բնույթի այն բոլոր իրավունքներն ու արտոնությունները, որոնք նրանց շնորհվել էին սուլթանական հրովարակներով և հրամանագրերով: Դրանք անփոփոխ թողնվեցին մանդատային իշխանությունների կողմից, իսկ հետո էլ՝ ներառվեցին Սիրիայի հիմնական օրենքի՝ սահմանադրության մեջ:

Նայ փարագիրների կարգավիճակի լուրջ փոփոխությունների հիմքում ընկած է նաև 1923թ. հուլիսի Լոզանի պայմանագիրը, որի 30-րդ հոդվածում նշված էր. «Թուրքական այն հպարակները, ովքեր ապրում են ներկա պայմանագրով Թուրքիայից անջարվող փարածքներում, պետք է դառնան ipso-facto⁵⁰⁸ և տեղական օրենքների համաձայն այն պետության քա-

⁵⁰⁵ Մանդատի փաստաթղթի ամբողջական տեքստը տես
محمد كرد علي، خطط الشام، الجزء الثالث، ص 245-250

Մուհամմադ Բուրդ Ալի, Շամի տեղագրությունը, հ. 3, 245-250:

⁵⁰⁶ Իհարկե, Ֆրանսիան չէր կարող առաջնորդվել այս դրույթով, քանի որ սկզբից ներ Սիրիայում սկսվել էին հակաֆրանսիական հուզումները, որոնք երբեմն ավարտվում էին բախումներով:

⁵⁰⁷ محمد كرد علي، خطط الشام، الجزء الثالث، ص 247

Մուհամմադ Բուրդ Ալի, Շամի տեղագրությունը, հ. 3, էջ 247:

⁵⁰⁸ Ipso-facto իրավաբանական տերմին է, որը լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ փաստից կլենելով, փաստի հիման վրա:

դաքացիները, որոնց այդ փարաձքները փոխանցվում են»:⁵⁰⁹

Նույն պայմանագրի 32-րդ հոդվածում նշվում է. «18 փարեկանից բարձր այն անձինք, ովքեր բնակվում են ներկա պայմանագրով Թուրքիայից անջատվող փարաձքներում և էթնիկ առումով փարբերվում են այդ փարաձքի մեծամասնությունից, պայմանագիրը ուժի մեջ մտնելուց երկու փարվա ընթացքում իրավունք են ստանում ընդունել այն պետության քաղաքացիությունը, որի բնակչության մեծամասնությունը նույն էթնիկ խմբին է պատկանում: Վերջինս էլ ենթակա է ավյալ պետության համաձայնությանը»:⁵¹⁰

Նայ փարագիրների պարագայում սա կարող էր վերաբերել Խորհրդային Նայաստանին:

Նայ փարագիրներին իրավական կարգավիճակ փայտ հարցին հերամուր էր լինում Ազգերի լիգայի գաղթականության հարցերով բարձրագույն կոմիսար նորվեգացի Ֆ. Նանսենը: Նրա նախաձեռնությամբ մի քանի փարի շարունակ հայ փարագիրների հարցը բննարկման առարկա էր Ազգերի լիգայի նիստերում և նրա գանազան հանձնաժողովներում: Գաղթականությանն այդ անորոշ կարգավիճակից հանելու համար հայկական Ազգային պարվիրակության նորընտիր նախագահ Գ. Նորաբունյանը դիմում է Ազգերի լիգային՝ 320 հազար հայ փարագիրներին միջազգային ճանաչում ունեցող «Նանսենյան անձնագրերով»⁵¹¹ ապահովելու խնդրանքով: «Նանսենյան անձնագրեր» փայտ որոշումն ընդունվել էր 1922թ. հունիսին Նանսենի նախաձեռնությամբ Ժնևում հրավիրված կոնֆերանսում: 1923թ. սեպտեմբերի 3-ին Ազգերի լիգայի խորհուրդը հատուկ որոշում է ընդունում և դիմում է Նանսենին՝ հայ փարագիրներին անձնագրեր փրամադրելու գործընթացով հերեվողականորեն զբաղվելու խնդրանքով: Ազգերի լիգան նաև հայտարարում է, որ իր վերջնական նպատակն է հայ փարագիրներին մշրական բնակության վայր փրումադրել ու մշրական աշխարանքով ապահովել՝ վերջ դնելով ժա-

⁵⁰⁹ Migliorino N., նշվ. աշխ., էջ 54:

⁵¹⁰ Նույն փեղում:

⁵¹¹ «Նանսենյան անձնագիրը» անձնագրին փոխարինող ժամանակավոր վկայական էր, որը փրվում էր Առաջին համաշխարհային պարերազմից հերո փախարականների ու քաղաքացիություն չունեցող մարդկանց: Ջիևաշխանի փոխարեն անձնագրում ամրացված էր Ֆ. Նանսենի դիմանկարով նամականիշ՝ "Societe des Nations"/Ազգերի լիգա/ գրություն: Այն փրվում էր երկու լեզուներով՝ ֆրանսերեն և ավյալ երկրի լեզվով: Այդ անձնագիրը սրացած անձինք օգրվում էին կոնֆերանսի մասնակից երկրներում բնակվելու, ազար փեղաշարժվելու իրավունքից, նրանց նկարմամբ դադարում էին գործել քաղաքացիություն չունեցողների համար գործող սահմանափակումները: Անձնագիրը կարելի էր ձեռք բերել 5 ֆրանկով: Դրանից սրացված նկամուրը Նանսենն օգրագործում էր առավել կարիքավոր գաղթականների համար: Մանրամասն փն՝ Մ. Արզումանյան, Նանսենը և Նայաստանը, Երևան, 1977, էջ 113-114:

մանակավոր օգնության անհրաժեշտությանը:⁵¹²

Ներագայում, Ազգերի լիգայի խորհուրդը 1924թ. հունիսի 12-ի որոշմամբ հաստատում է Նանսենի նախաձեռնությունը՝ հայ գաղթականներին ինքնության վկայագրեր տալու վերաբերյալ:⁵¹³ Այսպիսով, ցեղասպանությունից փրկված շուրջ 320 հազար հայ տարագիրների Ազգերի լիգայի անդամ 52 երկրներում տրվում են «Նանսենյան անձնագրեր»:

1924թ. օգոստոսի 1-ին հրապարակվում է Սիրիայի քաղաքացիության օրենքը: Հինգ տարի անընդմեջ Սիրիայում բնակվող անձանց շնորհվում էր քաղաքացիության իրավունք, որով վերջ էր տրվում նախկին օսմանահալափակ հայ գաղթականների անորոշ իրավական դրությանը:⁵¹⁴ Այժմ նրանք կարողանում են օգտվել համայնքային իրավունքներից ու արտոնություններից, սրանում էին կրթական հաստատություններ ունենալու առավելություն, հավասար իրավունքներ դատարանում, ազատ տեղաշարժվելու իրավունք, տնտեսական ազատություն, վարչական, կառավարական քաղաքական դիրքերի հասանելիություն:

Այսպիսով, հայ տարագիրները քաղաքացիական կարգավիճակ են ստանում՝ դադարելով կրել տարագրի պիտակը: 1946թ. Հալեպի նահանգապետ Էմիր Մուսրաֆա Շահարին անդրադարձել է Սիրիայում հայ տարագիրների անցած ճանապարհին՝ նշելով. «Երբ հայերը եկան Շամի երկիր, պարտերազմի տարիներն էին ու տեղի բնակիչները երկկողմ դժվար կացության մեջ էին հայտնվել՝ մի կողմից կարեկցությունը հայ ժողովրդի հանդեպ ... և այն վախը, որ մեր ծանր պայմաններում գրնվող երկրին նրանք կարող են քաղաքական և տնտեսական դժվարություններ հարուցել: Բայց ահա անցել է քառորդ դար և նրանք Սիրիան իրենց երկրորդ հայրենիքն են համարում, մասնակցում մեր ուրախությանը, կիսում մեր վիշտը»:⁵¹⁵

Քաղաքացիություն ստանալու փաստն առաջին հերթին վերաբերում էր քաղաքական ոլորտին, քանի որ հայերն այսուհետ ընտրելու իրավունք էին ստանում: Քաղաքացիություն ստանալու փաստը սոցիալական ոլորտում կորուկ առաջընթաց չէր կարող արձանագրել, բայց, այնուամենայնիվ,

⁵¹² Հայ դատի նվիրյալը, Ֆրիտյոֆ Նանսեն, Փաստաթղթերի ժողովածու, Երևան, 2005, էջ 22-23:

⁵¹³ Նանսենը դիմում է Ազգերի լիգայի անդամ-պետություններին՝ դրական լուծում տալու այդ հարցին: Անհրաժեշտության դեպքում առաջարկում է այդ հարցի շուրջ հարուկ կոնֆերանս հրավիրել: Սեպտեմբերի 9-ին Նանսենը գեկուցում է, որ բազմաթիվ պետություններ արդեն տրվել են իրենց համաձայնությունը, ուստի, կոնֆերանս գումարելու հարկ չի լինում:

⁵¹⁴ Թովուզյան Հ., նշվ. աշխ., էջ 178:

⁵¹⁵ صالح زهر الدين، أصالة العرب والوفاء الأزماني، ص 418

Սալեհ Զահիր Ադ-Դին, Արաբների անկեղծությունն ու ..., էջ 418:

քաղաքացիության հանգամանքը հայերի համար կարևոր խթան էր իրենց իրավունքները պաշտպանելու և սոցիալապես կայանալու գործընթացում:

1915-1924 թթ. ընթացքում Սիրիայում հաստատված հայ փարագիրների թվական ավելաները բավականին փոփոխական են: Դժվար է այդ ժամանակահատվածի համար հայ փարագիրների թվական ավելաները ճշտել: Նախ և առաջ դա պայմանավորված է այն փաստով, որ ցեղասպանությանը հաջորդած առաջին փարիներին տեղաշարժերը շար են եղել, բացի այդ կլիմայական պայմանները, փարածված համաճարակներն օր օրի նվազեցրել են հայ փարագիրների թիվը:

Փաստորեն, 1916թ. համեմատությամբ Սիրիա տեղահանված 486 հազար հայ փարագիրների⁵¹⁶ թիվը զգալիորեն նվազում է՝ 1918թ. հոկտեմբերի դրությամբ հասնելով 142 հազարի, ընդ որում՝ Նալեպոմ ու հյուսիսային Սիրիայում 75 հազար, Դամասկոսում ու Նուրանի շրջանում՝ 50 հազար, Նամա-Նոմում, Կենտրոնական Սիրիայում՝ 10 հազար, Լաթաքիա-Քեսաբի շրջանում՝ 4500, Ալեքսանդրետում և Բեյլանում՝ 2500:⁵¹⁷

1919-1920թթ. Կիլիկիա են մեկնել Նալեպի շրջանից 50 հազար, Դամասկոսից 45 հազար հայեր:⁵¹⁸ 1922-1923թթ. Կիլիկիայի հայաթափումից հետո Սիրիայի հայությունը ներկայացնում էր հերթյալ պարկերը. Նալեպ և հյուսիսային Սիրիա՝ 65 հազար, Ալեքսանդրետ՝ 15.250, Դամասկոս՝ 12.500, Բեյլան-Անարիթ, Մուսա լեռ՝ 10.500, Լաթաքիա, Քեսաբ՝ 6500, Նամա-Նոմ, Կենտրոնական Սիրիա՝ 1.500: Ընդհանուր՝ 111 250:⁵¹⁹

1922թ. փետրվարի 4-ի նամակում Սահակ կաթողիկոսը հայտնում է Եգիպտոսի Նայոց Առաջնորդ Թորգոմ Գուշակյան արքեպիսկոպոսին, որ Կիլիկիայից Սիրիա⁵²⁰ հասնող հայերի թիվը հասել է 45 հազարի: Նույն թվականի օգոստոսի 10-ին կաթողիկոսը «Նայասարանի կոչնակ» շարաթարթրթի խմբագիր Խ. Կ. Պենենյանին տեղեկացնում է, որ Նալեպում կենտրոնացել են 50 հազար փարագիրներ, Դամասկոսում՝ 12 հազար, Ալեքսանդրետում՝ 8 հազար:⁵²¹

1924թ. օգոստոսի 5-ի Կիլիկիո Տան Սահակ կաթողիկոսի՝ ֆրանսիական Բարձրագույն կոմիսար Վեյգանին գրած տեղեկագրում Սիրիայում հայ

⁵¹⁶ United States official records on Armenian Genocide 1915-1917, p. 490.

⁵¹⁷ Եղիայան Բ., Նշվ. աշխ., էջ 245:

⁵¹⁸ Նշվ. աշխ., էջ 246:

⁵¹⁹ Նշվ. աշխ., էջ 248:

⁵²⁰ Կաթողիկոսը Սիրիա անելով այստեղ նկարի է ունեցել Մեծ Սիրիան, որի մեջ մտնում էր նաև Լիբանանը, ուր հաստատվել էին մոտ 6 հազար հայեր:

⁵²¹ Տեմիրճեան Եպիս. Վ., Գառազանագիրք Լիբանանի ու Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութանց, Անթիլիաս, 1980, հ. Ա, էջ 311:

փարագիրների թվաքանակի մասին բերվում են հետևյալ տվյալները.

Տայեա և հյուսիսային Սիրիա՝ 55 000,

Ալեքսանդրեպ-Բեյլան՝ 7 200,

Դամասկոս՝ 13 հազար,

Տամա, Տոմս՝ 1 500,

Անրիոք, Քեսաբ, Սուեյդիյա և Լաթաքիա՝ 13 000:⁵²²

Այսպիսով, 1918-1924թթ. Սիրիայում հայերի թիվը նվազել է շուրջ քառասուն տոկոսով՝ 150 հազարից հասնելով 90 հազարի:

Նարեկանշական է, որ զուգահեռաբար հայերի արտագաղթ Կոնստանդնուպոլիս և հարևան երկրներ էլ ներկայումս Սիրիայից: Այս փաստը պայմանավորված էր երկրի սոցիալ-տնտեսական ծանր վիճակով և քաղաքական մի շարք գործոններով: Կիլիկիայի դեպքերից հետո հայերը վստահ չէին, որ ֆրանսիական մանդատը կարող էր երաշխավորել իրենց ֆիզիկական գոյությունը:

Այսպիսով, հայ փարագիրների սոցիալական իրավիճակի դրական փոփոխությունները կարելի է բացատրել մի քանի հանգամանքներով. նախ հայերը Սիրիայում հայտնվելու առաջին փորձերին ամենևին էլ ցանկություն չունեին ինքնգրվելու Սիրիայի կյանքում: Սկզբնական շրջանում Սիրիայում իրավագուրդ չէին ունենում, օտար և ժամանակավոր էին իրենց զգում ու դրան համապատասխան էր վերջիններիս գործելակերպը: Երկրորդ, նրանց համար առաջին հերթին կարևոր էր լուծել վերապրելու խնդիրը: Երկրորդ փորձը քաղաքական դեպքերին փարագիրների հիմնական զանգվածը ներգրավվածություն չունեին: Նրանք համակենտրոնացման ճամբարներում պայքարում էին իրենց առօրյա խնդիրների լուծման համար: Երրորդ, որ ցեղասպանությունը վերապրելու փաստը նրանց դեռ որոշակի ժամանակ հոգեբանական կաշկանդված վիճակում էր պահում: Այս իրավիճակը, ինչպես նշեցինք, վերաբերում էր հիմնականում 1915-1918թթ., որից հետո հայ փարագիրների մոտ ոգևորվածություն է նկատվում՝ Ֆեյսալի իշխանության զայուց հետո, իսկ ֆրանսիական մանդատի շրջանում Կիլիկիայի դեպքերից հետո հայ փարագիրների այն զանգվածը, որը վերադառնում է Սիրիա, արդեն այսպիսի հասարակություն ձևավորելու ունենում: Վերջիններս նշված ժամանակահատվածում կարողանում են սոցիալապես կայանալ և աստիճանաբար իրենց Սիրիայի լիիրավ քաղաքացիներ համարել:

⁵²² Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 282:

4.2 ՆԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅՈՒՆՔՈՒՄ

1915թ. Տայոց ցեղասպանությունից հետո Սիրիայում ապաստանած հայերը, աստիճանաբար, ինչպես նշվեց նախորդ ենթագլխում, կարողանում են վերագրվել իրենց՝ ինտեգրվելով Սիրիայի սոցիալական կյանքում: Խնդիրն այլ էր քաղաքական ոլորտում, քանի որ եթե փարագիրները, ստիպված էին գրեթե անմիջապես ինտեգրվել սոցիալական կյանքում, ապա քաղաքական կյանքում հայ փարագիրներին ժամանակ էր հարկավոր իրավիճակին համակերպվելու, քաղաքական դաշտը և նրա կանոնները յուրացնելու համար: Ներկաբար, հայ փարագիրների քաղաքական ոլորտում ակտիվություն ցուցաբերելու մասին կարելի է խոսել միայն 1920-ական թվականների սկզբից:

Սիրիացի մտավորական Սամիր Արբաշն իր «Ինչո՞ւ են հայերը հեռացել քաղաքական և զինվորական կյանքից» հոդվածում մի քանի պատճառներ է բերում հայ փարագիրների նման վարվելակերպը բացատրելու համար: Դրանցից առաջինը ցեղասպանությունը վերապրելու, հայրենիքը, հարազատներին կորցնելու փաստն էր: Այնուամենայնիվ, հեղինակը եզրակացնում է, որ դրանք ժամանակավոր բնույթ էին կրում և հայ փարագիրները կարողանում են այդ դժվարությունները հաղթահարել:⁵²³

Նարկ է նշել, որ մինչև 20-րդ դարի սկզբները Սիրիայում ներհամայնքային կառավարման համար մեծ դեր է ունեցել եկեղեցին: Չնայած 19-րդ դարի վերջում ձևավորվում են նոր ակումբներ, առևտրական պալատներ, բարեգործական ընկերություններ, արհեստակցական միություններ և քաղաքական կուսակցություններ, սակայն դրանք միշտ լուսանցքում են եղել ու կարևոր դեր, որպես կանոն, չեն ունեցել:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո հայկական սիյուրքում քաղաքական կուսակցություններն իրենց ազդեցության ոլորտով և ունեցած դերով մոտեցան եկեղեցուն: Տայերը ցուցաբերեցին փարագիրներից կազմված համայնքի համար հազվագյուտ քաղաքական կազմակերպվածություն:⁵²⁴

Դրա պատճառը 1915թ. ցեղասպանությունից հետո Կոնստանդնուպոլսում արմատական փոփոխություններն էին, երբ փարագիրների թիվը գերազանցում էր Կոնստանդնուպոլսի բնակչության թվին, որը հանգեցնում է համայնքի ներսում ոչ միայն քանակական, այլ որակական փոփոխությունների:

⁵²³ سمير عريش، لماذا ابتعد الارمن عن الحياة السياسية والعسكرية، ص 127- 129. أراط، عدد خاص، مجازر الارمن، صرخة دائمة في وجه الضمير العالمي، بيروت 1995.

Սամիր Արբաշ, Ինչո՞ւ են հայերը հեռացել քաղաքական և ռազմական կյանքի «Արարար», բացառիկ, 1995, էջ 127- 129:

⁵²⁴ Дятлов В., Мелконян Э., узк. соч., с. 110.

Հին կլանային կառույցներն աստիճանաբար կորցնում են իրենց ազդեցությունը: Բացի այդ, փարագիրները, կորցնելով նախկին կենսաձևը, դժվարությամբ էին համակերպվում դեկավարման նոր կառույցներին:

Աստիճանաբար փարագիրների զանգվածը կերպափոխվում է կազմակերպված, նախաձեռնող, կենսունակ, դինամիկ համայնքի, որը ձգվում է ոչ միայն պահպանել ազգային ինքնությունը, այլև ներդրում ունենալ Նայ-կական հարցի լուծման խնդրում:

Միաժամանակ այս գործընթացում չի կարելի թերագնահատել եկեղեցու դերը, որն իր բուն գործառույթների հետ մեկտեղ համարելով էր փարագիրների հավաքագրման, օգնություն փրամադրելու, ազգային արժեքների պահպանման աշխարհները: Եկեղեցու առաջնորդները բավականաչափ ազդեցիկ էին համայնքային խորհուրդներում, բարեգործական և մշակութային կազմակերպություններում: Հիմնական խնդիրների լուծման մեջ եկեղեցու դիրքորոշումը վճռորոշ էր:

1920-ական թվականների սկզբներին Սիրիայի քաղաքական կյանքում նոր զարգացումներ են փեղի ունենում. 1920թ. ապրիլին Սան-Ռեմոյի կոնֆերանսը, Նայասփանի խորհրդայնացումը, 1921թ. Անկարայի պայմանագրի կնքումը նոր փոփոխություններ են առաջ բերում Սիրիայում հասարակված հայերի շրջանում: Չնայած Ֆրանսիան սկզբից կեթ ռազմական դրություն էր մրցրել Սիրիայում, բայց մանդատի հասարակումից դժգոհ ժողովուրդն ազգային-ազատագրական պայքար է սկսում. ապստամբություններ են բռնկվում Նախկում, Լաթաքիայում, Նաուրանի շրջանում և այլուր: Սիրիայում Ֆրանսիայի Գերագույն կոմիսար Սառոայլը 1925թ. ֆրանսիական մամուլում մի հոդված է րպագրել, որտեղ փեղեկացրել է. «Միայն 1922թ. Սիրիայում արարներն ապստամբել են 35 անգամ, որի արդյունքում ֆրանսիական բանակը հինգ հազար զոհ է փվել»:⁵²⁵

Սրբեղծված քաղաքական պայմաններում ակտիվ գործունեություն են ծավալում հայ ազգային քաղաքական կուսակցությունները՝ իրենց հայրենակիցների վրա ազդելու, և որն ավելի կարևոր է, արարական կողմի հետ համագործակցելու համար: Կուսակցությունների առավել ակտիվ գործիչներն իրենց բարեգործական, երիտասարդական և այլ կազմակերպությունների միջոցով կարողանում էին կազմակերպել նաև համայնքի սոցիալական կյանքը: Նրանք կարողանում էին ճիշտ կերպով ներկայացնել իրենց համայնքի խնդիրները իշխանություններին և լուծում րպալ իրենց հուզող շար խնդիրների: Նրանք միշտ գուզահեռ երկխոսության մեջ էին եկեղեցու հետ՝ որպես իրավահավասար

⁵²⁵ Санд А., укз. соч., с. 108-109.

կառույցի՝ հայկական համայնքի խնդիրների լուծման համար:⁵²⁶ Իհարկե, մի կարճ ժամանակահատված որոշակի լարվածություն է գրանցվում կուսակցությունների և Սահակ կաթողիկոսի հարաբերություններում, որը հետագայում հարթվում է:

Կուսակցությունների շուրջ են ձևավորվում որոշակի գործառույթներ ունեցող ներհամայնքային ենթակառուցվածքները, որոնք աստիճանաբար իշխանության հզոր մեխանիզմների են վերաճում: Նարկ է նշել, որ հայ փարագիրները կուսակցական նշանակալի փորձառություն ունեին մինչև Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելը. նրանք Արևմտյան Նայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում ակտիվ գործունեություն էին ծավալել:

Սիրիայում ակտիվ գործունեություն ծավալող հայ ազգային կուսակցությունները հեքցեղասպանական ժամանակաշրջանում գործունեությունը վերսկսելուն պես արդեն փարակարծություններ ունեին: Քաղաքական բևեռացումը կարարվում է մի կողմից Սոցիալ-դեմոկրատ հնչակյան և Ռամկավար ազգայական կուսակցությունների, մյուս կողմից էլ Նայ Նեղափոխական Դաշնակցության միջև: Ննչակյան քաղաքական գործիչ Մ. Աղազարյանն այսպես է բնութագրում փեղի քաղաքական ուղղությունները. «Կուսակցական հակամարտ ծրագիրները երկուսն են՝ կեղրոնախոյս և կեղրոնաձիգ, որոնք ոչ մեկ առնչություն ունին փեղական պահանջներուն հետք»:⁵²⁷

Արար պարմաբան Օսման Աթ-Թուրքը նույնպես անդրադառնում է Սիրիայում հայ քաղաքական կուսակցությունների գործունեությանը. նշելով, որ նրանց հայացքները հակասական են:⁵²⁸

Սիրիայում առավել ակտիվ էր Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը: 1919թ. մարտի 13-ին հիմնված «Նալեպի ուսումնական միությունը» գործում է մինչև 1923թ. մայիս 29-ը, որից հետո վերանվանվում «Նալեպի Ուսանողական Միություն»: «Նալեպի մեջ Ննչակեան շունչը փիրապետող է հայ գաղթականության վրայ: Շարքերը չեն սխալի նրբ Նալեպը Ննչակեան բերդ կ'որակին»:⁵²⁹ 1922թ. Փետրվարի 13-ին կազմվում է Ննչակյան կուսակցության Դամասկոսի ուսումնական միությունը:

⁵²⁶ Дятлов В., Мелконян Э., укз. соч., с. 112.

⁵²⁷ Աղազարյան Մ., Սսի վերջին սրտուկալը և իր մեղապար գառառականը, Պեյրոթ, 1926, էջ 21:

⁵²⁸ عثمان الترك، صفحات من تاريخ الامة الارمنية، حلب، ص 284

Օսման Աթ-Թուրք, նշվ. աշխ., էջ 284:

⁵²⁹ Յուշարձան նուիրում սոցիալ-դեմոկրատ Ննչակեան կուսակցութեան բառաստանակին, Բարիզ, 1930, էջ 272:

Դամասկոսի Նհալյան ակնառու գործիչը Մկրտիչ Սուրբասյանն էր՝ Ջեյթունի ապստամբող 6 հնչակյաններից մեկը:

Կուսակցության անդամները մեծ ոգևորություն էին ցուցաբերում քաղաքական կյանքում. «Կեանքը կը եռար Դամասկոսի մեջ, ժողովներ, առանց դադարի գրել, վիճիլ խօսիլ. սիսա մեր բաժինը, շրջան մը, որ Դամասկոսի գիւրակից նրիւրասարդութիւնը փոթորկեց»:⁵³⁰ Իրենց գործունեության արդյունքում կրանք կարողանում են 12 զբրով գրադարան հիմնել, որը կարճ ժամանակ հետո դառնում է Դամասկոսի ամենամեծ գրադարանը:

1920թ. Հայաստանի խորհրդայնացման փաստը փարակարծություններ է մտցնում հայ քաղաքական կուսակցությունների միջև, որոնք աստիճանաբար ավելի լարվում էին: Նհալյան կուսակցությունը ձգտում էր հասնել կրան, որ սկյուռքում Հայաստանի խորհրդայնացումը դիտվի ամբողջ ազգի համար մեծ ձեռքբերում: Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը 1924թ. 8-րդ համագումարի որոշումով հայտարարում է. «Սոցիալ-դեմոկրատ կուսակցությունն անվերապահորեն կկանգնի Խորհրդային Հայաստանի կողքին, կջանա կապել գաղութահայ աշխատավորությանը բարոյական, գաղափարական ու փրկեսական կապերով Մայր Հայրենիքին»:⁵³¹

Նհալյան կուսակցությունը Խորհրդային Հայաստանի իրավակարգի վերաբերյալ հայտարարում է. «Սովետական Հայաստանի ինքնավարութիւնը ներկայ ըմբռնումով համապարասխանում է քաղաքական անկախութեանը, որով հայկական Հարցը այսպէս թէ: այնպէս լուծուած պէտք է նկատել»:⁵³²

Խորհրդային սոցիալիստական հասարակարգը չէր համապարասխանում Ռամկավար ազատական կուսակցության⁵³³ ժողովրդավարական սկզբունքներին: Այնուամենայնիվ, 1922թ. Ռամկավար ազատական կուսակցության ընդհանուր ժողովը որոշում է. «Մեր ուժերը փրամադրել հայկական կառավարությանը, Հայաստանի փրկեսական և բարոյական վերաշինությանը: Աշխարհի արգիլել ամեն փրեսակ արկածախնդրության, որ կրնա վրասնել ժողովորդին և պետության գոյությունը»:⁵³⁴

⁵³⁰ Յուշարձան նուիրում սոցիալ-դեմոկրատ Նհալկան կուսակցութեան քառասունամեակին, էջ 272:

⁵³¹ Թովուլյան Հ., նշվ. աշխ., էջ 204:

⁵³² Իզմիրլեան Ա., Հայ ժողովորդի քաղաքական ճակատագիրը. անցնալին և ներկայիս, Պէյրութ, 1964, էջ 262:

⁵³³ Ռամկավար ազատական կուսակցությունը հիմնվել է 1921թ. Կ.Պոլսում՝ Սահմանադրական ռամկավար կուսակցության, վերակազմյալ հնչակյանների /Ազատական կուսակցության/, Հայ ժողովրդական կուսակցության սկյուռքում գրեմբող անդամների և հասարակությունների ներկայացուցիչների կողմից:

⁵³⁴ Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 204:

Ռամկավար ազգաբնակչության կուսակցության 1923թ. շրջանային Պարզամալորական Գ-ժողովում հալոսկ բանաձև է ընդունվել, որտեղ «Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ» մասի Ե կետով «ժողովը միանգամայն յարմար կը րեանէ, որ բոլոր մասնեղական երկիրներու մէջ ապրող հայերը ամէն բարօք յարաբերութիւններ մշակեն բնիկ փարքին հետ»:⁵³⁵

1923թ. սկզբներին ստորագրված շրջաբերականի երրորդ կետով, որը կրում է «Մենք օտար երկրի մեջ» խորագիրը, գրված է. «Հայ կուսակցութիւններու գործունէութիւնը օտար հողի վրայ հարկադրաբար սահմանափակուած է մշակութային եւ ազգապահպան աշխատանքի մէջ: Պէտք է զգուշանանք մեզ հիւրասիրող երկրին քաղաքական գործերուն միջամբարել: Կառավարութեան հանդէպ օրինապահ եւ ժողովուրդին վերաբերմամբ քաղաքավար գրնուինք: Մեր ընկերները այս ուղղութեամբ պէտք է բարի օրինակ ըլլան ուրիշներու»:⁵³⁶

Դարելով Ռամկավար ազգաբնակչության նման որոշումներից ու կոչերից՝ կարելի է ենթադրել, որ այս կուսակցությունը գործում էր չեզոք դիրքերից ու կողմնակից էր հայ-արաբական հարաբերություններում առաջացած խոչընդոտների հարթմանն ու հորդորում էր հայ փարագիրներին չլարել հարաբերությունները րեղի արաբ ժողովրդի հետ:

Լոզանի կոնֆերանսից հետո՝ 1924թ. հունվարի 14-ին, ռամկավարները որդեգրում են «Խորհրդային Հայաստանի հետ» ուղղությունը:⁵³⁷ Ռամկավարները կոչ են անում սիյուրբահայությանը «կարելի ամեն միջոցներով ուժ փայ Սովետական Հայաստանին»:⁵³⁸

Այս երկու կուսակցությունների դիրքորոշումը Խորհրդային Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականության վրա որևէ ազդեցություն չունեին և չէին կարող ունենալ, քանի որ, նախ, երկու կուսակցություններն էլ սիյուրբում էին և Հայաստանում երանք քաղաքական և հասարակական գործոն դառնալու որևէ հնարավորություններ չունեին:

Ռամկավարներն ու հնչակյանները համարվում էին մի ուղղությամբ գործող կուսակցություններ, այսինքն՝ «իրապարակ կուզան իրենց կեդրոնաձիգ ծրագրով և կը ներուին պայքարի: Դեպի պերականացում, միութիւն եւ կապ Հայաստանի. հեռու արեամբեան խաբխրող դիսանագիպութիւններ»:⁵³⁹

⁵³⁵ Դավթյան Կ., Ռամկավար-Ազգաբնակչության կուսակցության պարմություն. 1921-1940, Երևան, 1999, էջ 69:

⁵³⁶ Նշվ. աշխ., էջ 72-73:

⁵³⁷ Իզմիրյան Կ., նշվ. աշխ., էջ 262:

⁵³⁸ Թովուդյան Ն., նշվ. աշխ., էջ 205:

⁵³⁹ Աղազարեան Մ., նշվ. աշխ., էջ 23:

Այլ էր Նայ Նեղափոխական Դաշնակցություն կուսակցության քաղաքական ուղին: Չնայած կուսակցության արևմտյան հասրվածը Նայոց ցեղասպանությունից հետո մեծ կորուստներ էր ունեցել, բայց շարունակում է իր քաղաքական ուղին. նրանք ոչ մի կերպ չէին հաշտվում Նայասարանի խորհրդայնացման փաստի հետ և համոզված էին, որ վաղ թե ուշ Նայասարանի բոլշևիկյան կառավարությունը պետք է փախալվի:

1923թ. ապրիլին Վիեննայում Նայ հեղափոխական դաշնակցությունը որոշում է. «Ներկայ պայմաններու մէջ պէտք է շարունակել քաղաքական պայքարը խորհրդային բեժիմի դէմ: Նայ ժողովուրդը պիտի ջանայ իր սեպհական գործը սերտորէն կապել Մերձադր Արևելքի բոլոր ազգերու ազափագրական շարժմանց հետ»:⁵⁴⁰

Առաջ բերելով «Անհայրենիք պետության» գաղափարը՝ Դաշնակցությունը ցանկանում էր սփյուռքահայությանը կազմակերպել որպես քաղաքական ուրույն միավոր և հակադրել խորհրդային Նայասարանին:

Դաշնակցականներն առաջ էին քաշում մեկուսացման քաղաքականությունը՝ բերելով հետևյալ հիմնավորումը «... գաղութ իր ապրած շրջանակին մէջ պիտի մեկուսանայ, չպիտի ըլլայ քաղաքացի իր ապրած երկրին, այս անջարումով միանալու համար ազգային, իր ազգայնութեան համապատասխան կազմակերպութեան, որ պէտք է ճանաչցուի նաև Ազգերու դաշնակցութեան կողմէ»:⁵⁴¹

Դաշնակցությունը փորձում էր այդ ծրագիրն իրականացնել համագաղութային համագումարի միջոցով, սակայն Նկչակյան և Ռամկավար ազափական կուսակցությունները, չցանկանալով հակախորհրդային պայքարում ընդգրկվել, մերժում են մասնակցել դաշնակցության ծրագրած համագումարին:

Իհարկե, հարկ ենք համարում նշել, որ դաշնակցականներն իրենց հայտարարած «մեկուսացման» քաղաքականությունը որոշակի վերապահումներով էին իրականացնում. անգամ Սիրիական խորհրդարանում դաշնակցականներն են առաջին պարզամալորն ունեցել:⁵⁴²

Դաշնակցականները հաճախ մյուս կուսակցությունների և րեղի արարների կողմից ընկալվում էին ֆրանսիական մանդատային իշխանությունների կողմնակիցներ, «Ֆրանսիական դիվանագիտության ձեռքին գործիք»

⁵⁴⁰ Իգմիդդեան Կ., նշվ. աշխ., էջ 264:

⁵⁴¹ Նշվ. աշխ., էջ 114:

⁵⁴² 1923թ. դաշնակցական Ավերիս Ինճեհիկյանը պաշտոն է գրադեցրել Սիրիայի Դաշնային պետական խորհրդում, 1926թ. դաշնակցական Նարեկ Աբրահամյանը պարզամալոր է ընտրվել Սիրիայի սահմանադիր ժողովում:

ներ.. կոթնամ անոր՝ հաջողամ էին դիրքեր գրավել»:⁵⁴³ Հարկ է նշել, որ դաշնակցական գործիչները նույն մեղադրանքն ուղղում էին մյուս կուսակցությունների անդամներին:

Թերևս, չի կարելի բացառել դաշնակցական գործիչների ու ֆրանսիական մանդատային իշխանությունների համագործակցությունը, որը տոբ լարվածության հիմք կարող էր դառնալ՝ հայ-արաբա-ֆրանսիական առանց այն էլ լարված հարաբերություններում: Նրանք ֆրանսիական մանդատային իշխանություններին համարում էին արաբական միջավայրում իրենց անվտանգության երաշխավորները և ամեն ինչ անում էին իրենց մրավախությունները փարագիրներին փեղեկացնելու համար: ««Լաղը, եթե Սուրիոյ վրայէն ֆրանսական հոգաբարութիւնը վերանայ, մեզի համար վրանգը զլուխ ցցամ պիտի ըլլայ: Այն արեն հաւանական է, որ Թ-ուրքերը մեզի դէմ գրգռեն Սուրիոյ «Լաթանիները»»:⁵⁴⁴

Այսպիսով, Սիրիայում ազգային քաղաքական կյանքն ընթանում էր երկու հակադիր կողմերի պայքարի պայմաններում: Նրանց փարսաձայնությունները սկսվում էին Խորհրդային Հայաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Նրանք բաժանվել էին երկու մասի՝ Նւջակյաններն ու Ռամկավարները կազմել էին Ազգային բյուրը՝ Հայաստանի օգնության կոմիտե անվան փակ, և պայքարում էին Դաշնակցության դեմ: Վերջինս էլ խստիվ ըննադատում էր Բյուրի վարքագիծն այն պարճառաբանությամբ, թե փեղական իշխանությունների մոտ հայ ժողովուրդը ձեռք է բերում «կասկածելի և անվստահելի փարթը» որակումը:⁵⁴⁵ Նրանք այն կարծիքին էին, որ «Սուրիոյ մէջ հոգաբարութեան հակառակ մաս մը կայ, բայց ամբողջ Սուրիան ասոնցմէ չի բաղկանար: Սուրիոյ երեսելիները հոգաբարութեան ներկայացուցիչներուն հեղ շփման մէջ գրնուելով, յարաբերութիւնները սկսած են լաւ ձեւ մը սրանալ»:⁵⁴⁶ Այնպես որ, հայ-արաբական հարաբերություններում որոշակի լարում առաջացնող Դաշնակցականները պնդում են հայ-արաբական բարիդրացիական փոխհարաբերությունների փաստը: Անգամ մի քիչ մեծամտություն կարող է դիպրվել, բայց Ն. Ադրալյանը քաղաքական ոլորտում հայերի բարձր պաշտոններ զբաղեցնելու փաստը այլ դիտանկյունից է ներկայացնում. «Հայերուն պարմական համբաւ մը ունենալը գիտեն մեր արաբ հայրենակիցները: Բարձր բօմիսերութիւնը եթե մեզի կարևոր պաշտօններ կու տայ, սպոր շահը անելի կը պարկանի Սու-

⁵⁴³ Թովուզյան Հ., նշվ. աշխ., էջ 209:

⁵⁴⁴ Նիկոլ Ա., Սուրիա և մենք, Գահիրե, 1932, էջ 13:

⁵⁴⁵ Իզմիրլեան Կ., նշվ. աշխ., էջ 268:

⁵⁴⁶ Ադրալ Ն., նշվ. աշխ., էջ 15:

րիոյ վարչութեան զարգացումին»:⁵⁴⁷ Եզրակացնելով՝ նշում է. «Սուրիան մեզի պէտք է, մենք ալ Սուրիացիներուն պէտք և օգտակար ենք: Ասիկա գնահատող սուրիացիները շար են և հերզիտերն կը շարանան»:⁵⁴⁸

Այդ ժամանակ գործում էին հայկական փարքեր հասարակական կազմակերպություններ, բարեգործական միություններ և այս բոլոր միությունների ու մարմինների շուրջ պայքար էին մղում ազգային կուսակցությունները: Նայ ազգային միությունը,⁵⁴⁹ որը մանդատային իշխանությունների կողմից ճանաչվել էր Սիրիայի հայ գաղթականության պաշտօնական ներկայացուցիչ, կուսակցական պայքարի հերնանքով դադարեցնում է իր գործունեությունը: 1922-1923թթ. հնչակյան և ռամկավար գործիչները դուրս են գալիս միության կազմից ու այն քայքայվում է:⁵⁵⁰

Սիրիայում գործող Նայ օգնության կոմիտեն հակասություններ ուներ Դաշնակցություն կուսակցության հետ: 1923թ. ՆՕԿ-ի արտասահմանյան ճյուղերի աշխատանքների վերաբերյալ փեղեկագրում կարդում ենք. «Սիրիա և Միջագետք. այս շրջանը խիստ կարևոր է... այստեղ խմբված կա բավականին նշանակալի քանակությամբ հայ յերիփասարդություն: Այս ճարպիկ կերպով դաշնակցությունն աշխատում է ձգել յերիփասարդությանն իր ազդեցության փակ՝ մտածելով այնտեղից հանել իր աշխատանքի համար նորանոր կադրեր, դժբախտաբար մասամբ հաջողած է, որովհետև իր դիմաց հակազդեցություն չի գտնում կամ շար թույլ է»:⁵⁵¹

Սահակ կաթողիկոսը նպարակ ուներ ստեղծել այնպիսի թեմական իշխանություններ, որոնցում ներկայացված լինեն բոլոր շահագրգռված կողմերը, սակայն նրա այս նախաձեռնությունը դրական որևէ փոփոխության չի հանգեցնում: Անգամ 1923թ. հուլիսի 1-ին Նալեպում կայանալիք գավառական ժողովի ընտրությունները կաթողիկոսը հերածգում է՝ հնարավոր բախումներից խուսափելու համար: Այստեղ մթնոլորը լարված էր ոչ միայն դաշնակցականների ու հնչակյանների ընտրապայքարի, այլև փեղացի հայերի անհանդուրժողականության հերնանքով: Վերջիններս մերժում էին ազգային-թեմական իշխանությանը գաղթականների մասնակցության իրավունքը, առարկելով, որ նրանք Սիրիայի քաղաքացիներ չեն: Դաշնակ-

⁵⁴⁷ Ադրալ Ն., նշվ. աշխ., էջ 24:

⁵⁴⁸ Նույն փեղում:

⁵⁴⁹ ՆԱՄ-ը կազմված էր միջկուսակցական, միջհարանվանական հիմունքներով. մեկական աթոռ ունեին առաքելականները, հայ կաթողիկեներն ու բողոքական համայնքները, մեկական՝ Նչակյան, Ռամկավար-ազգայական և Դաշնակցություն կուսակցությունները և մեկական բարեգործականը:

⁵⁵⁰ Թուփուզյան Ն., նշվ. աշխ., էջ 208-209:

⁵⁵¹ ՆԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 395, թ. 13:

ցականները բողոքում և պայքար են սկսում կաթողիկոսի դեմ: Միջկուսակցական հարաբերություններն այնքան են լարվում, որ գավառական ընտրությունների ժամանակ հիշեցման կարգով թողցիկներ են փարածվում. «Ինչեք ըրին եւ ինչեք պիպի ընեն դաշնակցականները անգամ մը որ թուրուդ առնեն» խորագրով, որտեղ մյուս երկու կուսակցությունները փորձում էին ընտրագանգվածներին լարել Դաշնակցականների դեմ՝ առաջին կերով վկայակոչելով Կաթողիկոսի դեմ նրանց սկսած պայքարը. «Սահակ Բ կաթողիկոսի անձին դեմ յարձակեցան ամենագոնեիկ լեզուով: Անոր հայրապետական դիրքը ուզեցին ուրևահարել... և սպառնացին»:⁵⁵² Գավառական ընտրությունները Մ. Աղազարյանը որակում է «մեռած, զուռած ու կեղծուած»:⁵⁵³

Փաստորեն, 1920-ական թվականների սկզբներին Սիրիայում փրորոջ քաղաքական անցուղարձի, հայ ազգային կուսակցությունների գործելանոճի հետևանքով համայնքի ներսում թուլանում էր փոխըմբռնումը:⁵⁵⁴

Միջկուսակցական հարաբերությունները լարված էին, չնայած եղել են դեպքեր, երբ կոնկրետ հարցերի շուրջ կուսակցությունները միավորվել են: Սիրիայում և, ընդհանրապես, ցեղասպանությունը վերապրելուց հետո առավել բան երբեք անհրաժեշտ էր քաղաքական կուսակցությունների ու հոսանքների միասնականությունը: Դրա համար հարկավոր էր գործող քաղաքական կուսակցությունների միջև հասարակել քաղաքակիրթ հարաբերություններ, փոխհամաձայնեցված գործողությունների ծրագիր: Չնայած գործող երեք կուսակցությունները շարք դեպքերում կոչ էին անում համագործակցել ու միավորվել: Սակայն, միավորումը միշտ չէ, որ սրացվում էր: Դաշնակցականների 10-րդ ընդհանուր ժողովը նույնպես հանգել է այն եզրակացության, որ աշխատանքները պետք է ընթանան կուսակցական, զուգահեռ նաև համակուսակցական ճանապարհով: Իրենց աշխատանքների գլխավոր կերերը նրանք համարում են Սիրիան, Տունաստանը, Ֆրանսիան, որտեղ հայության «բեկորները գերմարդկային ճիգերով պայքար են փանում փարբեր բնույթ ու կերպարանք կրող մի շարք վրանգների դեմ»:⁵⁵⁵

Այս ամենն իրականացնելը փեղի կուսակցական գործիչների համար բավականին բարդ էր: Դրանից բուժում էին առաջին հերթին փարագիրները, որոնց համար ղեկավար էր կողմնորոշվել: Առաջին հերթին կուսակցությունները, իրենց ծրագրերն իրականացնելու ընթացքում պետք է «նկարի առ-

⁵⁵² Աղազարյան Մ., նշվ. աշխ., էջ 55:

⁵⁵³ Նշվ. աշխ., էջ 67:

⁵⁵⁴ Նշվ. աշխ., էջ 33:

⁵⁵⁵ Նաասարդեան Վ., Դաշնակցութեան քաղաքական ուղին, Գահիրե, 1925, էջ 92:

նեն ժամանակի և շրջանի պահանջները և փափկությունները և ըստ այդմ բարեփոխության ենթակեն իրենց ընդգրկած ծրագիրը»:⁵⁵⁶

Հայ տարագիրները, որոնք ցեղասպանությունից հետո հայտնվել էին Սիրիայում, չէին կարող ինքնուրույն և մեկուսացած լինել, ինչպես պնդում էին դաշնակցական գործիչները: Տեսականորեն հնարավոր չէ, որ որևէ ազգային փոքրամասնություն կարողանա ինտեգրվել ընդունող պետության փոստական կյանքում, բայց, միաժամանակ, չներգրավվել վերջինիս ներքաղաքական անցողարձին: Շատ դեպքերում հայերն ինքնաբերաբար էին մասնակից դառնում ժամանակի քաղաքական իրադարձություններին: Չեզոքություն պահպանելը միշտ չէ, որ սրացվում էր, քանի որ երկու կողմերն էլ՝ արաբական և ֆրանսիական, փորձում էին հայերին իրենց աջակիցները դարձնել: Սկզբնական շրջանում, երբ հայերը կորցրել էին ամեն ինչ, ցանկության դեպքում էլ չէին կարող քաղաքականապես ակտիվ լինել: Ժամանակի բոլոր հասարակական, բարեգործական կազմակերպությունները զբաղվում էին կարիքավորներին անհրաժեշտ օգնություն ցուցաբերելով, սակայն 1920-ականներին արդեն դժվար էր հեռու մնալ քաղաքական իրադարձություններից: Հայերը միշտ հայտնվում էին երկընտրանքի առջև: 1918-1920թթ. հայ տարագիրները, ականաբար լինելով արաբ ժողովրդի բարյացակամ վերաբերմունքին, աջակցում էին Ֆեյսալին՝ Օսմանյան կայսրության դեմ մղվող պայքարում, դրան զուգահեռ՝ հայերը սրելով էին Արևելյան լեզեռնը՝ ֆրանսիական կողմի աջակցությամբ, իսկ Ֆրանսիան ձգտում էր Սիրիայում իր իշխանությունը հաստատել: Սրացվում է, որ հայերը գտնվում էին երկու հակադիր դաշտերում, որն արդեն հայերի հեղինակության, անվտանգության համար վտանգավոր էր դառնում:

Հայ տարագիրները քաղաքական ոլորտում միայն ազգային կուսակցությունների գործունեությամբ չեն սահմանափակվում: Նրանք դուրս են գալիս ներհամայնքային գործունեության շրջանակներից: Համագործակցելով արաբ համախոհների հետ՝ նրանք Սիրիայում հիմնում են կոմունիստական կուսակցությունը:

Տարագիրների հետագա գործունեության և Սիրիայում արդեն իրենց կեցության, քաղաքական գործունեության խնդիրներում կողմնորոշելու համար կարևոր էր 1921թ. Անկարայի պայմանագրի կնքման փաստը: Ռուսաստանում տեղի ունեցած Ղոկտեմբերյան հեղաշրջումն ու բոլշևիկների իշխանության գալը նույնպես մեծ ազդեցություն են ունենում Սիրիայում հայերի և արաբների քաղաքական հայացքների վրա: Դեպքերի այս ընթացքը նոր փոփոխություններ է առաջ բերում Սիրիայում հաստատված հայերի շրջանում, որոնք անմի-

⁵⁵⁶ «Եվրոար», 07.12.1927:

ջականորեն անդրադառնում են հայերի քաղաքական հայացքների վրա: Այդ ժամանակահատվածի համար ապագա կոմունիստական խմբի ղեկավար Ն. Մաղեյանը գրում է. «Կիլիկիայի ֆրանսիական օկուպացիայի ժամանակ հայ-թուրքական թշնամությունը հասավ իր ապոգեային»:⁵⁵⁷

Դեռևս 1920-ական թվականների սկզբին Միրիայում գործում էին կոմունիստական խմբակներ, ընդ որում հայկական և արաբական կողմերը գործում էին անջատ-անջատ: Հայ և արաբ կոմունիստների համագործակցության արդյունքում փարաձաշրջանում նոր քաղաքական կուսակցություն է ձևավորվում:

Դեռևս 1922թ. Բեյրութում գործում էր Սոցիալ-դեմոկրատ հնչակյան ուսանողների միությունը, որը չնայած այդպես կոչվելուն, համարյա կապ չունեի Հնչակյան կուսակցության հետ և համարվում էր կոմունիստական ինքերեսացիոնալի կողմնակիցը: Ն. Մաղեյանի նախաձեռնությամբ 1923թ. սկզբին Հնչակյան կուսակցության երիտասարդական կազմակերպությունում ստեղծվում է «կոմունիստական բջիջը», որի հիմքի վրա 1924թ. առաջանում է «Սպարաբակ» կոմունիստական խումբը: Դա նոր երևույթ էր Միրիայի քաղաքական կյանքում: Միրիա-լիբանանյան հայ համայնքի համար նրա գործունեությունը լուսանցքային էր: Սակայն, այնուամենայնիվ, գոյություն ունեին որոշակի նախադրյալներ, որոնք կարող էին դեռևս թույլ կոմունիստական միությունները Միրիայում և Լիբանանում հայ բնակչության համար ռեալ քաղաքական կյանքի վերածել:

Քաղաքական գործիչները փարբեր գնահատականներ են րադիս այդ փաստին: Հայկական կոմունիստական ուղղության առաջացումը Միրիա-Լիբանանյան միջավայրում ազգությամբ ռուս արաբագետ, քաղաքագետ Գ. Կոսաչը որակում է պրոսիրիական կողմնորոշման նոր ձև:⁵⁵⁸ Ներազայում Ն. Մաղեյանը նշում է, որ Խորհրդային Հայաստանը կապող օղակ է՝ յուրացնելու Նոկրեմբերյան հեղափոխության սկզբունքները, վերջիններիս փարաձման հիման վրա էլ նրանք հնարավոր էին համարում Միրիայում և Լիբանանում արաբ ժողովրդի հետ համարելը պայքարում հասնել ազգային անկախության:⁵⁵⁹

Պրոսիրիական կողմնորոշումը նոր մուրեցում էր պահանջում: Այդ մասին հայ կոմունիստներին բացահայտ առում էին Խորհրդային Ռուսաստանից և Հայաստանից: Անդրկովկասյան երկրային կոմիսրեի առաջին քարպուղար Ա. Մյասնիկյանը 1924թ. գրել է. «Հայաստանի սահմաններից դուրս ապրում է 1 մլն հայ ... այդ փարագիբ հայերը հիասթափված են ազգայնական քաղա-

⁵⁵⁷ Косач Г., Красный флаг над Ближним Востоком? М., 2001, с. 310.

⁵⁵⁸ Նույն փեղում:

⁵⁵⁹ Նույն փեղում:

քականությունից, ասիական ջարդերից»։ Իրավիճակի շրկման համար նա առաջարկում է. «պետք է ուղղել քաղաքական գիծը և հրաժարվել այդ սխալի հեղինակներից՝ դաշնակցականներից ու հայկական ազգայնականությունից»։⁵⁶⁰ Ա. Մյասնիկյանի այս խոսքերը կարող են դիտվել նաև հայ փարագիրներին ուղղված կոչ, որը ճանապարհ պիտի հարթեր նրանց ապաստան փված երկրի կյանք մտնելու համար։

Նայերի պրոսիրիական կողմնորոշումը՝ ներկայացված կոմունիզմի ձևով, իր մեջ ակնարկ անգամ չունեւր ռեալ ու կենսունակ այլընտրանքի, որի շնորհիվ Նայկական հարցը նոր ընթացք պիտի ստանար։ Գոյություն ուներ նաև Խորհրդային Նայաստանը, որի շուրջ կարելի էր համախմբել Սիրիայի և Լիբանանի հայ բնակչությանը։ Սկզբնական շրջանում Սիրիայի և Լիբանանի հայ կոմունիստներն այդ ուղղությամբ էին աշխատում, սակայն դա իրարեւանական չէր, քանի որ Խորհրդային Նայաստանը չէր հավակնում դառնալ համահայկական կապերի, սփյուռքահայության քաղաքական գործունեության ինքնուրույն գործունը։ Այս պայմաններն էին, որ առաջին հերթին անհնար էին դարձնում կոմունիստների ազդեցության ավելացումը սեփական ժողովրդի շրջանում։

Կոմունիստները պնդում էին, որ հայ և արաբ ժողովուրդները պետք է համարեղ պայքար մղեն օտար փիրապետության դեմ, դաշնակցականներն այդ համագործակցությունը մի ժամանակահատված փետնում էին հայերի ու արաբ մարտիկների հետ։ Այս միությունը մեկնաբանվում էր որպես համաքրիստոնեական միություն, որը պետք է Լիբանանի ինքնուրույն կարգավիճակն ապահովեր իբր «թշնամական» միջավայրում։⁵⁶¹

Սիրիայի հայ կոմունիստները նախաձեռնողի դերն են ստանձնում միավորելու Կոմունիստական կուսակցությունը։ Չնայած փրամաբանական է, որ երկու խմբերն էլ ինչ-որ չափով պահպանում էին իրենց ինքնավարությունը, այնուամենայնիվ, նրանց միավորումը պարահական չէր և մի քանի փարի է փուում։ 1925թ. մայիսին հայ և արաբ կոմունիստները որոշում են կայացնում հիմնել Սիրիայի Կոմունիստական կուսակցությունը։ Կազմվում է Կենտրոնական կոմիտե, որի քարտուղար է դառնում Յ. Յագրեկը, անդամներ՝ Ֆ. Շիմային, Ն. Մադեյանը, Ն. Բոյաջյանը և այլոր։ Սկզբնական շրջանում հայերն ակնառու դեր էին կարարում կուսակցության ղեկավար օղակներում, սակայն, հերագայում, իրենց դիրքերը գիջում են արաբներին։ Նույնը վերաբերում է նաև թվական հարաբերակցությանը. հայերը

⁵⁶⁰ Косач Г., укз. соч., с. 312.

⁵⁶¹ Նշվ. աշխ., էջ 315:

գերակշռություն ունեին կոմունիստական կուսակցության հիմնադրման, կազմավորման փորձերին, սակայն հայ-արաբական խմբակների միավորումից հետո հարաբերակցությունը փոխվում է ի օգուտ արաբների:

Տարկ է նշել, որ Կոմունիստական կուսակցությունը Սիրիայի ազապագրական պայքարում կարևոր դեր է ունեցել:⁵⁶² Արաբ կոմունիստների հետ միավորվելով՝ հայ կոմունիստները ռեալ հնարավորություն ունեին իրենց համարելու Կոմունիստական կուսակցության քաղաքացիական քաղաքացույցի փոխարին: Այս իրողությունն արաբներին թույլ էր տալիս Սիրիայի հայ համայնքին համարել իրենց երկրի լիիրավ անդամ: Այնինչ հայ ազգային կուսակցությունները հայերի ներկայությունը փարսիստական ժամանակավոր էին համարում, իսկ այդ երկրները ժամանակավոր բնակավայր էին իրենց հայրենիք՝ Արևմտյան Հայաստան և Կիլիկիա վերադառնալու ճանապարհին:

